









1 OCT 2009

# ՀԱՅՈՑ

## ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

(Ժողովրդական հրատարակութիւն)



ՀԱՅՈՑ Ռ.

(1155—1485)

50 R.

ԿԱՐԱԳԱՐԱԳԻ 6

Յ. ՄԱՆԱԳԵԱՆ և Յ. ԱԶԱԽԵԱՆ

Հ-6625 Խ.  
№ 6185 տ.

Պ. Ա. Դ. Ա. Ր. Շ. Ա. Պ. Տ.

Տպարան Մայր Արքունի Ս. Եջմիածնի

1902



235  
Մ-24

ԱՅ

# ՀԱՅՈՑ

## ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

(Ժողովրդական հրատարակութիւն)

№ 6185 Տ.

№ 6185 մ.

ՀՐՑՈՐ Ը.

(1155—1485)

ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. ՄԱՐՏՈՒ Ս.

Ա. ԽԻԹԻՒ Ե. ՄՐԱԳԲԱԳՅԱ ԿԱՐՈՒՂԻԿՈՍԻ

Ա. ՄԵՆՈՅ Հ. Ա. ՅՈՒ

Կազմեցին

Տ. ՄԱՆՄՆԴԵԱՆ Ե. Յ. ԱԶԱԽԵԱՆ




Տպարան Մայր Արքունի Ս. Էջմիածնի

1902

Дозволено цензурою 6 Июня 1902 г. г. Тифлисъ.



5236  
38



ՀՐԱՄԱՆԵԼՈՒԹԵԱՆ

նի

Ա. ԷԶՄԻԱԽՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ


16 րդ

նի

ԳՐԵՐԻ ԳԻՒՏԻ

15 րդ ԳԱՐԱԴԱՐԱ ԱՊՐԻՆ





ՏԱՅԱՅ ՆՈՐ ԱԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Ներկաց հատորը Ա. մասն է մեր «Հայոց նոր վկանելը» աշխատութեան ժողովրդական հրատարակութեան, ուր ամփոփուած են որբերի վկացարանութեանց ընագորեքը միայն։ Բնագրերի ձեռագրական տարբերութիւնները, այդ ձեռագրերի մասին տեղեկութիւններ, որբերի վկայութեան թուականի և նոցա հեղինակներին վերաբերեալ քննութիւններ ևն՝ ընթերցողը կը դանէ մեր աշխատութեան գիտական հրատարակութեան մէջ, որ շուտով լոյս կը տեսնէ Մայր Աթոռի տպարանից։



ՀԱՅՈՑ  
ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ





# Ի.

ԹԻՊԴԱՐՈՍ ԸԲԵԳՐՅ ՍԵՐԱՍԵՅԻ

† ԱԴ=1155



ուրբն Թէոդորոս աբեղայն էր ի քաղաքէն Սեբաստիոյ, կուսակրօն աբեղայ՝ ի մանկութենէ սուրբ և անարտա վարուք, ժուժկալ ի պահս և յազօթս, յամս Ալիբասանայ գաղանաբարոյ բռնաւորին Թուրքաց, որ էր յազգէն Դանիշմանայ, այր արիւնարու և մոլեալ քան զշուն կատաղի ընդդէմ քրիստոնէից։ Առ որ մատուցեալ ոմանց չարաբարոյ անօրինաց և ասեն թէ՝ «Ոմն Թորոս անուն աբեղայ ի Հայոց՝ նզովէ և անիծանէ, անարդէ և թշնամանէ զքեզ զօրհանապաղ, վասն զի զհայր նորա և զաղգայինսն սպաներ դու, և անարդէ զօրինադիրն մեր Մահմետ և զօրէնս նորա»։

Եւ նա հրամայեաց ունել զնա և ածել առաջի իւր. և իբրև կացուցին զնա առաջի, սկսաւ շոգոքորթել ՚զնա պատրողական բանիւք, զի ուրասցի զՔրիստոս, և լինիցի Տաճիկ՝ օրինօքն Մահմետի։ Զի էր աբեղայն Թորոս մանուկ

տիօք և յոյժ գեղեցիկ տեսլեամբ, ճոխ և վայելուչ հասակաւ. վասն որոյ ջանայր պատրել զնա ամիրայն. խոստանայր նմա պարգես և պատիւս, յաւադութիւն հասուցանել զնա, թէ լսող լիցի նմա և ուրանայ դիրիստոս. ապա թէ ոչ գանս և բանտո, տանջանս և չարչարանս և դառն մահ:

Ասէ սուրբն. «Ես քրիստոնեայ եմ և արեղայ, որ պաշտեմ զՀայր Աստուած, անեղ և անմահ, և զԲանն Հօր զՈրդին Միածին, անժամանակաբար ծնեալ ի Հօրէ և զՀոգին Սուրբ, Աստուած ծշմարիտ, էակից Հօր և փառակից Որդւոյն Միածնի, բղիսեալ ի Հօրէ անհատաբար, Աստուած յԱստուածոյ, լոյս ի լուսոյ և կեանք ի կենաց, անձինք երեք և բնութիւն միւ Այս է իմ հաւատո յամենասուրբ Երրորդութիւնն, ի Հայր և յՈրդի և յամենասուրբ Հոգին, ի միասնական աստուածութիւնն և այլ հաւատոց կամ կարդաց և կրօնից ոչ ցանկամ, ոչ խնդրեմ և ոչ առնում:»

Յայնժամ հրամայեաց բռնաւորն հարկանել զըերան նորա, թէ «Զիանդի իշխեցեր ասել զայդ առաջի իմ, թէ Աստուած որդի ունի. վասն որոյ հրամայեմ այժմ սոլանանել զըեզ, որպէս զհայրն քո և զազդականսն, զորս վասն այդք բանի սպանի:»

Ասէ աբեղայն. «Երանի թէ հանդիպէր ինձ այն մահն վասն Քրիստոսի. զի այն կեանք է ինձ և մեռանելն շահ:»

Ասէ ամիրայն. «Ես շուտով հասուցից զըեղ ցանկութեան քո:»

Եւ զայն օր արկին զնա ի բանտ և եղին զոտան ի կոճեղ: Եւ սուրբն անդադար սազմոսէր և միշտ աղաչէր զԱստուած հասանել մարտիրոսութեան: Եւ որքան էր ի բանտին, յղէր առ նա ամիրայն արս իմաստունս, զի թերեւս կարասցեն խախտել զնա: Եւ նոքա բազում անդամ երթեալ խօսեցան և ոչ կարացին թուլացուցանել զնա: ի հաւատոցն Քրիստոսի: Եւ ամիրայն հրամայեաց դահճացն սուսերամերկ և քարշելով տանել զնա ի մզկիթն իւրեանց: Եւ նա սազմոսէր և ասէր. «Զդիացն իմ ուղիղ արա:

ինձ, Տէր, ըստ բանի քում և մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք»

Եւ հասեալ ի դուռն մզկիթին, ոչ կամէր մտանել ի ներքս, այլ անկաւ առ դրանն և դաւանէր զ՞րիստոս Աստուած։ Եւ նորա հարկանէին զնա սրօք և բրօք և բռնաշդատէին մտանել ի մզկիթն։

Եւ նա անկեալ յերկիր՝ արհամարհէր զտունն զայն և զազօթս նոցա։ Եւ յոչ մտանելն ի մզկիթն՝ չարաչար տանշեցին զնա և տարեալ արկին ի բանտ։

Եւ լուեալ արքեպիսկոպոսն Սեբաստիոյ Տէր Գրիգոր և գրեաց առ նա քաջալերութիւնս և բանս մխիթարականս, յօժարութեամբ մեռանել վասն անուանն Քրիստոսի։ Եւ յետ աւուրց ինչ հանեալ ի բանտէն՝ կացուցին զնա առաջի ամիրային։ Եւ սկսաւ ամիրայն խոստանալ նմա մեծամեծ պարգևս և իշխանութիւնս, թէ ուրասցի զ՞րիստոս և դարձցի յօրէնսն Մահմետի և թլփատեսցի։ Եւ նա զայն ամենայն պարգևսն առ ոչինչ համարեցաւ առ սէրն Քրիստոսի։

Եւ ամիրայն ետ զնա ի դատաւորն Թօոտոս, որ յառաջն քրիստոնեայ էր և ապա տաճկացեալ։ Եւ նա ևս ջանաց բազում բանիւք խախտել զսուրբն ի հաւատոցն Քրիստոսի, և ոչ կարաց։

Այլ մանաւանդ աբեղայն նախատէր զնա՝ ուրացող Քրիստոսի և անհաւատ տաելով և թքանէր յերեսս նորա։ Ինդ որ բարկացեալ Թօոտոս ետ զնա ի ձեռս դահճացն, սպանանել ի մէջ քաջաքին Սեբաստիոյ։ Եւ անողորմ դահճճն ընկեցին զնա յերկիր և ոտիւք հարկանէին զսուրբն աբացի, մինչև քականցան ամենայն յօդուածք մարմնոյ նորա և ապա յերիս մասունս հատին զնա սրով։ Եւ այնպէս թաւալեալ յարիւնն իւր կատարեցաւ ի Քրիստոս և աւանդեաց զհողին իւր առ Աստուած՝ Յունիսի 22, աբեղայն Թորոս՝ որդին Դոհարինեայ։

Եւ իշխան մի քրիստոնեայ Սարգիս անուն ինդպեաց ի սուլտանէն զմարմին սրբոյն և առեալ տարաւ ի վանս սուրբ Նշանին և անդ թաղեաց պատուով։



## 2.

ԴԱՀԱՐԻՆԵԼ ՍԵՐԵՍԵՑԻ

† ՈՒ հրանից իր = 155



ատուական վկայն Քրիստոսի սուրբն  
Գոհարինէ և եղբարքն իւր Ուա-  
տիոս, Ծամիդէս և Տուկիոս՝ էին  
յերկրէն Սերաստիոյ, ազգաւ Հայ-  
եւ հայր սոցա Դաւիթ գերեալ եղե-  
ի տաճկաց և գարձաւ ի կրօնս նո-  
ցա յոչ կամաց, ընդ նմին և անդ-  
րանիկ որդին իւր։ Խոկ կինն Դաւթի  
մնաց հաստատուն ի հաւատո Քրիստոսի և մնոյց զորդիան իւր  
բարեպաշտութեամբ։ Եւ ի չափ հասեալ՝ վասն արիութեանն  
իւրեանց զինուորեցան բունաւորին Տաճկաց Ալիբասանայ,  
որ էր յազգէն Դանիշմանաց և տիրէր քաղաքին Սերաս-  
տիոյ և ամենայն կողմանցն Պոնտոսի, այր գաղանարոյ  
և արիւնարբու և առաւել մոլեալ ընդդէմ քրիստոնէից-  
Որոյ առաջի չարախոսեցին ոմանկը զսուրբ Գոհարինեանկըն  
և ասեն, «Նոքա որդիք են տաճկի և թողեալ զօրէնսն  
Մահմետի և կան քրիստոնէութեամբ. գարշին ի կերակ-  
րոց մերոց և ոչ գան ի մղկիթն ընդ մեղ յաղօթս մեր։»

Եւ նա հրամայեաց կոչել զնոսա առաջի իւր. և գնացեալ զինուորացն կոչեցին զնոսա ստիտով երթալ առաջի ամիրային: Եւ նոյա գիտացեալ զգաղտնի նետաձգութիւն չարին՝ ողջունեցին զընտանիս իւրեանց և զնացին խնդութեամբ. և ասեն ցմիմեանս. «Զօգուտն մեր Աստուած հոգասցէ» Եւ կացեալ առաջի ամիրային, և նա եհարց զնոսա վասն քրիստոնէութեանն. իսկ աւագ եղբայրն որ ընդհօրն տաճկացեալ էր, ոչ եթող տալ սրբոցն պատասխանի, այլ ինքն ասէր ցամիրայն. «Հաւատ զոր դու պաշտես, և մեք զնոյն պաշտեմք» Եւ նա արձակեաց զնոսա: Եւ զնացին տրտմութեամբ ի տունս իւրեանց, զի ոչ խոստովանեցան զ՞րիստոս. և մեզադրէին եզրօրն՝ զի ոչ եթող նոցա խոստովանել զքրիստոնէութիւնն իւրեանց. և ապաշաւէին զայն լարով և կոծելով: Եւ Ռատիսս զնացեալ ի վանքն Սուրբ Նշանին, եղեւ կրօնաւոր: Եւ յետ աւուրց դարձեալ մատնեցին զնոսա ամիրային, թէ «Որքան արձակեցեր զնոսա, առաւել անարդեն զհաւատոս մեր և զօրէնս»:

Եւ զնաց Ալիբասան ամիրայն յեկեղեաց գաւառն ի կամախ և յեզնկայն, և առ անտի բազում աւար և գերիս և եկեալ ի Սեբաստիա, բանակեցաւ առ ափն Ալիս գետոյն. և առաքեաց զոմն ի չարախօսացն սրբոց և այլ զօրականս ընդ նմա, ածել զնոսա առաջի իւր:

Եւ զնացեալ կալան զերանելիսն և կապեալ շղթայիւք ածին առաջի բոնաւորին ի բանակն: Եւ եհարց զնոսա վասն հաւատոցն: Եւ սուրբն Ռատիսս համարձակեալ ասաց. «Մեք քրիստոնեայք եմք և զ՞րիստոս Աստուած հաւատամիք» Եւ նա հրամայեաց հարկանել զբերան նորա և հատանել զլեզուն: Եւ նա գոհանայր զԱստուծոյ ի հարկանելն, բայց զլեզուն ոչ հատին: Եւ հարցեալ զմին մի ի սրբոցն և նոքա յայտնապէս խոստովանեցան զ՞րիստոս Աստուած և որդի Աստուծոյ: Եւ այլ բազում և պէսպէս հարցուածս արարեալ և պարզես խոստացեալ, ոչ կարաց հաւանեցուցանել զնոսա կամաց իւրոց. և հրամայեաց փուրել զերկիր և թաղել զ՞ոհարինէ մինչև ցմէջըն և նետաւ-

ձիդ լինել ի նա բաղմութեան գօրացն։

Եւ մինչդեռ պատրաստէին զայն, եկեալ բերին զինսուորքն զկանայս և զմանկտիս նոցա՝ ընչիւք և ստացուածովք իւրեանց. և նոքա լային առ միմիանս սաստիկ գժովի։

Եւ ազակեցին իշխանքն զբոնաւորն ներել նոցա, զիթերևս գարձցին վասն գթոյ կանանցն և տղայոցն, կամ ի սէր ընչիցն և ստացուածոցն։

Եւ իբրև թուլացոյց նոցա, և նոքա համբուրեալ զմիւմեանս, քաջալերէին հաստատուն կալ ի հաւատս Քրիստոսի. ընդ որ բարկացեալ ամիբրայն՝ հրամայեաց զԴոհարինէ հեղձամզձուկ առնել ի ջուր հեղեղատին, իսկ զԾուկիս և զՄամիդէս ածել առաջի իւր. և զՄատիս կապեցին փուկովք և հարկանէին։

Եւ ասէ ամիբրայն ցԾուկիս և ցԾամիդէս. «Այդ ամենայն ստացուածքդ զոր տեսանէք և այլ բաղումս յաւելից ի վերայ և ձեղ լիցի, եթէ լսէք ինձ. և զԴոհարինէ եզբայրն ձեր փառաւորեցից իշխանութեամբ. և զՄատիս թողից ըստ կամաց իւրոց կեալ»։

Եւ նոքա ասեն. «Այդ ամենայն քեզ լիցի. և թէ թուզուս զմեզ կեալ քրիստոնէութեամբ, ծառայեսցուք քեզ միամտութեամբ. ապա թէ ոչ այլ իրօք մի հարցաներ զմեզ, մեք քրիստոնեայք եմք և դու զոր ինչ կամիս առնել արմա»։

Յայնժամ հրամայեաց ջայլութիւք տանջել զնոսա յերկար։ Եւ ետ ածել զԴոհարինէ և զՄատիս։ Եւ էին երեսքն Ռատիսիս և ամենայն մարմինն արիւնուշտ յոզորածեծն առնելոյ. և Դոհարինէ նուազեալ ամենսին, ի ջրահեղձն առնելոյ զնա»։

Ասէ բոնաւորն. «Ճեսանէք. զի ոչ լուարուք ինձ, պատահեցին ձեզ այդ ամենայն տանջանքդ. և Քրիստոսն ձեր ոչ կարաց փրկել զձեզ»։ Եւ ետ բերել առաջի նոցա զինչս նոցա, զկանայսն և զորդիսն և զամենայն ստացուածս նոցա, և բաշխեաց իշխանաց իւրոց և զօրականաց։ Եւ նոքա լային առ միմեանս և զինքեանս Աստուծոյ յանձն առնէին»։

Ընդ որ բարկացեալ ամիրայն, եհան զսուրն իւր և ետ  
ի դահիճն, ասելով. «Համ զգլուխ դոցա և մի խնայեր.  
և նախ զՄատիոսին, զի նա եղեւ պատճառ կորստեան  
վատաբախացդ»

Եւ տարեալ ի տեղի կատարման, հատին զգլուխ չու-  
րից եղբարցն, որք գոհանալով զԱստուծոյ կատարեցան  
ի Քրիստոս՝ բարի հաւատով ի Հայր և յՈրդի և յամենա-  
սուրբ Հոգին Աստուծութեան իսկ որք անդ հանդիպեցան հա-  
ւատացեալք, առին զմարմինս նոցա, ի նոյն յարեալ զսուրբ  
գլուխան, պատեցին մաքուր կտաւօք և թաղեցին ի մարդ-  
ճակին, ի տեղւոջն՝ յորում կատարեցան, մերձ ի ճանա-  
պարհն քառակուսիւ Եւ տօն մեծ կատարեցին զօրն զայն,  
որ օր իմ էր հրոտից ամսոյ:

Կատարեցան սուրբ Գոհարինեանկըն՝ ի թուիս Հայոց  
ի ՈՊ ամին, ի Սեբաստիա քաղաքին:





## Յ.

ԽՈՍՔՈՎ. ԳԵՆՉԵԿԵՑԻ

† Այստեղ արագ գ—1167 յունիս 10 թշ.



Ժամանակս ըռնակալութեանն Ղեմաց-  
ւոց՝ յորում վազ սորեմն բարձեալ էր թա-  
գաւորութիւնն Հայոց ի սպառսպուռ, և  
անտերուչք շրջէին մնացորդք իշխանաց՝  
որ ընդ բնաւ աշխարհս վարատեալք՝ ոչ  
հնազանդելով միմեանց, մանաւանդ այնու-  
քիկ՝ որ բնակեալ էին յամուրս աշխարհին  
Արցախայ, աւազակաբար կելով ի լերինս  
և ի զերծ տեղիս և յանցս ճանապարհաց նստելով, առ-  
նուին կապուտ կողոպուտ յամենայն ազգաց՝ յորս յաղթեն  
կարէին և նեղութիւն ոչ սակաւ հասուցանէին քրիս-  
տոնէից, հարկս խնդրելով, զոր ի գէպ է այժմ և մեղ  
ասել. Ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան և առաջնորդ-  
որ հովուէ և այլն:

Զայնակցէ մարդարէն ողբոցս. Առնոյր առնէր ոք զգլուխս իմ ի շտեմարանս ջուրց և զաչս իմ աղբիւրս արտասուաց, զի նստեալ լայի ի տուէ և ի գիշերի զժշուառութիւն աղդիս մերում և զցրուեալն ընդ ամենայն աղդս, վաճառակուր լեալ և ոչ կացեալք ի կայի, այլ ըստ նմանութեան ալեաց ի մրրիաց ծովու յօւղեալք և ոչ հասեալք ի նստահանգիստ, քանդի ինքեանք զայն ախորժեցին, վասն առաւել նենդաժետութեանն և կրծլի պիղծ բարուց իւրեանց, որք լաւ համարէին ի ստրկութեան կալ ամենայն աղդաց, քան թէ հնազանդել միմեանց և կեալ յազատութեան։ Վասն այսորիկ նեղեցան և տառապեցան յանօրէն և յամբարիշտ աղդաց, յորդւոց Քետուրայ և Խոմայելի և յեղեմացւոց, որոց առաւել ծանր էր քան զերկաթ լուծ անբոյ նոցա ի վերայ քրիստովնէից, մանաւանդ յաշխարհին Պօնտացւոց, որ վասն առաւել հարկատահանջութեանն վաճառէին զորդիս իւրեանց և տային ի գինս փրկանաց անձանց. և բազում էր ամպրոպ խոռովութեան ամենայն ուստեր յամենայն տեղիս։ Քանդի զաստուածածաշէն եկեղեցիս, որ փոխանակ դրախտին տուան մեզ, տապալէին, զվանօրայս ի հիմանց քակէին, զմատրունս վկայիցն անասնոց տեղի պատրաստէին, զպատուական արս անարդէին եւ իմաստունքն յոշինչ համարեալ լինէին և բազումք ի քրիստովնէից թուլանային ի հաւատոց, ըստ յառաջադրյն գուշակելոյն Պաւլոսի, եթէ «Ո ժամանակս յետինս քականացին մարդիկ ի հաւատոց և հայեսցին յայսս մոլորութեան»։ Նաև թագաւորն Վրաց՝ որ էր սահմանակից տանն Աղուանից, կամեցաւ անբնակ առնել զաշխարհն ի մարդոյ և յանասնոյ, մանաւանդ զբերրի և զարդաւանդերին Ռւտէացւոց յաւեր գարձուցանէր։ Եւ այս լինէր վասն ծովացեալ մեղաց մերոց, որք ոչ վարեցաք ըստ իրաւանց և ըստ արդարութեան, քանդի հայրապետք արծաթով առնէին ձեռնադրութիւն, նոյնպէս քահանայապետք և քահանայք, որպէս ասաց Եսայի, քահանայն և մարդարէն յիմարեցան, և յայնչափ յանդդնութիւն հասին, մինչ զի

և մարդիկ աշխարհական՝ որ ոչ ունեին զօծումն քահանայութեան, այլ և կանայք նոցա վերատեսուչք լինեին եկեղեցեաց, և ամենայն ոք համարձակ գործէր զչարիս և ոչ ուստեք երկիւղ և ոչ յանդիմանութիւն:

Յայսպիսում ժամանակի յանկարծակի ծագեաց իբրև զաստղ մեծապայծառ նոր վկայն Քրիստոսի Խոստրով։ Բայց օրինակ վկայութեան նորա է այսպիսի։

Եր սուրբն Խոստրով քրիստովնեայ, ի քրիստովնեայ ծնողաց, յաշխարհին Առանայ, հուպ ի քաղաքն՝ որ կոչի Գանձակ, և տակաւին մանուկ գոլով ուշիմ և հանդարտ կայր զգուշական կենօք։ Իսկ բարիատեացն սատանայ՝ որ մարտեաւ ընդ Աղամայ ի ձեռն կնոջն, յարոյց պատերազմ ի վերայ պատանւոյն՝ այսպիսի օրինակաւ։

Այր մի ի փաքունց և յաննշանից պարսիկ, որ ընակեալ էր ի գաւառին Առանայ, առ սահմանոք ժառանգութեան քաղաքին մեծին Գանձակայ, ի գիւղի միում Արխանաշին կոչեցեալ։ Կէսքն ի նոցանէ քրիստովնեայը էին և կէսքն հեթանոսք, բարեկամք և սիրելիք գոլով միմեանց ըստ մարմնոյց Եւ ուներ պարսիկն աւատերս և գստերս, այլ յայլմէ ծնեալք ի կնոջ։ Իսկ մի յորդւոց նորա ցանկացեալ քեռն իւրում՝ որ ոչ էին համամայր, որ և բռնադատեալ զաղչիկն չնացաւ. և ի յղանակն երկեաւ յոյժ, մի գուցէ խմացին ծնողքն և սպանցեն։

Բայց զի յառաջադոյն տոփեալ էր նա պատանւոյն Խոստրովու, զի էր ամենագեղեցիկ տեսլեամբ, խարտեաշ հերով, կարմիր և սպիտակ գունով, և զի էին գրացիք միմեանց, և միշտ տեսանէր ի մտանելն և յելանել, և լինէր յորժամ հանդիպէր մանկանն առանձինն, բանս պատիրս փաղաքելով խօսէր ընդ նմա, զի թերեւս կարասցէ գլորել զնա, զի մի յայտնեսցին գործք նոցա չարութեանն և սպանցին։ Եւ զայս առնէր ոչ մի անդամ, այլ բաղում անդամ Իսկ պատանւոյն սրբասիրի և ողջախոհի, ոչ խօսորեալ ամենակին ի բանս աղջկանն, այլ կայր և հանդիսանայր ընդդէմ չարին, որպէս Յովսէփն այն ի հնումն կամ ևս վեհագոյն

ասել՝ եթէ ոչ յանդգնութիւն իցէ։ Քանզի նա յետ այնը առաքինութեան՝ ընդ ամուսնութեան օրինօք եմուտ և մանակունս ծնաւ զեփրեմ և զՄանասէ։ այլ սա զայժմու ժամանակիս զանցուցեալ արութեամբ, եմուտ ի ստադիոնն, առնելով զբրաբիոնն յաղթութեան։

Իսկ իրեւ գիտաց հայր աղջկանն, եթէ յզի է դուստրն նորա ի չնութենէ, ի խոշտանգանս արկաներ զդուստրն և հարցանէր. «Ո՞վ բռնադատեաց զքեզ. ասա ինձ» իսկ դուստրն սատանայի և հին զենն, որ ըստ իւրաքանչ չիւր ժամանակաց բազում չարեաց պատճառ եղեւ մարդկան ազգի, զրպարտեաց զմանուկն Խոստրով՝ կարծելով եթէ այնու պատճառաւ ազատիցի և զկամս ցանկութեանն լցցէ, զի խոշտանգեալ ուրասցի և առցէ զնա ի կնութիւն։ Վասն այսորիկ մատնի դատաւորին բարեյաղթ վկայն Քրիստոսի Խոստրով՝ Եւ հրամայեաց արկանել զնա ի բանտ. և կացեալ ի բանտին ամսօրեայ աւուրս՝ սակաւապիտութեամբ անսուազ անցուցանելով և օրհնելով զԱստուած։

Ետ հրաման գատաւորն զկնի աւուրցն այնոցիկ հանել զնա ի բանտէն. և եկեալ ծնօղք սրբոյն՝ առաջի արկանէին զալիս, զծերութիւն, զհոգեխառն մնունդն՝ որով զնա մնուցին։ Եւ մայրն ասէ. «Ոլզրմեան թշուառացեալ մօրս և մի մատնիր ի ձեռս արիւնարբու գազանայն» Նոյնպէս և հայրն ազիտորմ արտասուօք և հառաջանօք ասէր. «Յանձն առ, սրդեակ, առաջի ատենին և միայն զերծիր ի տանջանացդ և ի մահուանէդ։ Եւ տարցուր զքեզ յաշխարհն վրաց և անդ համարձակութեամբ պաշտեա զՔրիստոս։»

Իսկ նորա ի բաց գարձուցեալ զերեսն, ոչ ընդունէր զասացեալսն ի նոյցանէն։ Եւ իրեւ գիտացին զհաստատուն և զանյոզդողգելի միտս մանկանն, ի բաց գնացին լալով։ Եւ զայս լուեալ գատաւորն, ասէ. «Ներեսցուք սմա սակաւ աւուրս, զի թերեւս խրատեալ եկեսցէ յուղզութիւն» Եւ գարձեալ հրամայեաց արկանել ի բանտ. և խորհէր թէ զինչ արասցէ սրբոյն։ Եւ կացեալ ի բանտին այլ ևս աւուրս ութ, ոչ եկեր և ոչ արբ յաւուրսն յայնոսիկ. և ի կատարել աւուրցն

այնոցիկ, հրաման ետ և ածին առաջի դատաւորին:

Խօսել սկսաւ դատաւորն և ասէ. «Խնստրով, մի մոլորիք տարապարտուց, դարձիր և հաւանեա, և տացքեղ ոսկի բազում և զաղջիկն զայն ի կնութիւն և այլ ևս մեծութիւն: Ապա թէ ոչ կամիցիս լսել ինձ, բազում և անհնարին տանաջանքը չարչարեցից գքեղ»

Սուրբն ասէ. «Պարգեք քո ընդ քեղ լիցին ի կորուստ. ես Քրիստոսի հաւանեալ եմ իմում թագաւորին՝ որ արար գերկինս և գերկիր, զծով և զամենայն որ ի նոսա»

Դատաւորն ասէ. «Խնայեա ի մանկութիւնդ քո և արազոր ասեմ քեղ. լեր ընդ մեզ, և որդի իմ կոչեսցիս և կեաց. ապա թէ ոչ ապականեմ զգեղ քո վայելուչ»

Սուրբն Խոստրով ասէ. «Ասացի քեղ և դարձեալ ասեմ՝ եթէ ոչ եմ լսելոց ձերոց յօդապատիր խարէութեանցդ. զի թէ վաղ և թէ անագան՝ սակայն մեռանելոց եմ»

Դատաւորն ասէ. «Հրով այրեցից զքեղ՝ եթէ ոչ դարձցիս յայդպիսի յամառութեանց»

Խոստրով ասէ. «Ոչ կարես այնպիսի հուր պատրաստել՝ զոր Քրիստոս պատրաստեալ է մեղաւորաց և այնոցիկ՝ որ իբրեւ զձեզդ իցեն ամբարիշտը»

Դատաւորն ասէ. «Գոնեա հաւանեա Մահմետի՝ որ զայս աշխարհս ետ մեզ և անդ զգրախան»

Սուրբն ասէ. «Զկենդանին ուրանալ տաս ինձ և մահականացուաց երկիր պագանել, որ ինքեանք մոլորեցան և զձեղ մոլորեցուցին յուղիղ ճանապարհէն»

Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց երկուց զինուորաց կապել զերանելին ձեռս յետս և դնել անուր երկաթի ի պարանոց նորա և շրջեցուցանել ընդ քաղաքն ի տեսիլ ռամկին: Եւ բազումք ի հեթանոսաց զարմանային ընդ համարձակութիւն և ընդ անփոփոխելի միտս որբոյն, և թէ որպէս մնութի յուսով մեռանի: Զկնի այսորիկ եհատ ի վերայ նորա դատաւորն վճիռ՝ զի քարկոծ լիցի, դիտացեալ զհաստատուն միտս նորա: Եւ առեալ զնա ամբոխին՝ հանին արտաքոյ քաղաքին ընդ կողմն հիւսիսոյ՝ ի տեղի

մի քարուտ, առ եղերը գետոյն ցամաքելոյ։ Այլ և քրիստովնեայը որ էին ի բաղաքին, եկեղելս առնէին զմիմեամբք թագնաբար, զի տեսանեն զնահատակութիւն սրբոյ վկային։ Եւ իբրև ածին զերանելին ի տեղին՝ ուր հանդերձեան էր կատարիլ, խօսել սկսան գարձեալ ըստ հրամանի դատաւորին և ասեն ցառւրբն, «Մի յամառիր իբրև զմանուկ, այլ լուր մեզ և արա զկամս դատաւորին։ և մեք աշղաչեմք՝ զի ներեսցէ քեզ, միայն հաւանեա գենիս մերում և թողցէ քեզ զամենայն անարդանսն, զոր յաճախեցեր առաջի նորա։»

Ասէ սուրբն, «Ո՞ւմ արգեօք տայք ինձ երկիրապագանել, կախարդին և մոլորականին և մեռեալ շանն։» Եւ մրմուեալ իբրև զգազանս վայրենիս և կրճտեալ զատամունս իւրեանց ի վերայ նորա, գան հարկանէին զնա յանխնայ և կապեալ զնա ընդ ծառոյ միոյ թթենոյ, բայց յառաջ քան զկապելն ծունք կրկնեալ կայր յաղօթս և ասէր, «Զքեզ Քրիստոս փառաւորեմ հանդերձ Հարը և ամենասուրբ Հոգւովու։»

Եւ բարբարոսացն գրգռեալ զմիմեանս, քարաձիգ լինէին ի սուրբն, և կայր երանելին իբրև զգառն ի մէջ գայլոց, ոչ ոք էր որ ողորմէր և ոչ ոք որ ի թիկոնս հասանէր, այլ ամենեքեան յեկացն և ի բնակացն Պարսից՝ իբրև շունք կատաղեալք՝ թափէին ի նա զնետս յանդիմանութեան։

Եւ ի թանձրութենէ բարանցն՝ որ իբրև զտեզատարափս զեզուին ի վերայ սրբոյն, ջախջախեալ առ հասարակութիւն և յօդքն քակտեալ ի միմեանց, և պատառ պատառ մարմինքն յերկիր անկանէին։ Եւ սուրբն աւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ, ըստ գրեցելումն, «Ոդիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են։»

Եւ ապա յետ այսորիկ հրաման ետ բռնաւորն և եգին առասան ի պարանոց երանելոյն, և ետ քարշել ընդ հրապարակս արտաքոյ քաղաքին փողոցացն քրիստովնէից՝ իբրև յաղթութիւն մեծ զիրսն համարելով։ Իսկ զկնի այսորիկ

Եմուտ սատանայ ի սիրտ բռնաւորացն, զի հրով այրեսցեն դմարմինս երանելոյն, և ընկեցեալ ի հուրն՝ ոչ այրեցաւ եւ ի գիշերին յայնմիկ եկեալ ծնողք սրբոյն՝ բարձին դնշխարս վկային և եղին ի հասարակաց գերեզմանս քրիստովնէից գեղջն, անդիտանալով զարժանիս վկային, միանդամայն և զարհուրելով ի բռնաւորացն:

Իսկ զինի անցելոց երկուց ամաց՝ փսխեցաւ ի մատուռն ի նոյն տեղւոջ գերեզմանացն, և ի փոխել նորտ ականատես եղաք՝ զի ոչ էր այրեալ կապանք ձեռացն, և ոչ մաղ մի ի գլխոյն ծախեալ. որ և նշխարք վկային յերկաքանչիւր տեղիսն առնէր բժշկութիւնս բազումն ի փառս Աստուծոյ Վասն զի զփառաւորիչս իւր փառաւորէ Աստուծած աստ և ի հանդերձելումն:

Բայց եկեսցուք և ի տեսիլ սրանչելի լուսոյն՝ որ երեեցաւ ի վերայ նշխարաց սրբոյ վկային. երեեալ ոչ հաւատացելոց միայն, այլ և անհաւատիցն, ոչ մի անդամ, այլ և երկիցս. և է օրինակ առաջնոյն այսպիսի:

Սովոր իսկ էին Պարսիկք գեղջն յաւուրս պահոց իւրեանց բերել աղօթակոչ՝ զի ի գիշերի ձայնիւ զարթուսցէ զնոսա յաղօթո, նմանապէս և ի տուընջեան ժողովիցէ: Եւ եկեալ մշակն անօրէնութեան՝ գայլն արաբացի ի գեւզն՝ ուր էր հանգստարան սրբոյն Խոստրովու, և յարուցեալ ի գիշերի միում՝ կամեցեալ զուրացութեանն բարբառն հնչեցուցանել առ նոսա, ելանէ ի տեղի մի բարձրաւանդակ և տեսանէ նշան սքանչելի ի վերայ գերեզմանի սուրբ վկային լոյս սաստիկ՝ որ առաւել զանցանէր զլուսաւորութեամբ արեգականն. և յահէն ըմբռնեալ ոչ կարէր ամենելին խօսել, այլ անկեալ գնէր կիսամեռ, մինչեւ ցառաւոտն: Եւ ի վաղիւն եկեալ գտին զնա, զի կայր անշունչ իրրե զմեռեալ Ապա հարցանէին զնա Պարսկաստանեայըն՝ եթէ «Ի գիշերիս յայսմիկ ընդէր ոչ յարեար և զմեղ յարուցեր. զի վասն այնորիկ կոչեցաք զբեզ՝ զի աղօթս արասցես և զմեղ յորդորեսցես»:

Իսկնա հազիւ ուրեմն ուշարերեալ կաց պատմեաց զտեսիլ

դիշերոյն, և նոքա յոյժ զարմացան և երթեալ պատմեցին գատաւորին։ Եւ գատաւորն սաստեալ ի վերայ նոցա, զի մի յայսնեացեն զարանչելի տեսիլն մեծ զոր տեսին։ Եւ առաքէր զմի ոմն ի ծառայից իւրոց, զանխլաբար պատուէր տուեալ զի մի ոք գիտասցէ։ Եւ եկեալ ծառայն ըստ հրամանի գատաւորին հսկէր զգիշերն ամենայն։ և տեսանէ ի մէջ զիշերի լոյս համապայծառ ի վերուստ փայլեալ ի վերայ հանգստարանի սրբոյն։ և յահի եղեալ և ի դողման, ոչ զօրէր նայել ընդ ճառագայթս լուսոյն՝ որ երկեցաւն։ և ի փաղիւն ահիւ և գողութեամբ երթեալ ի քաղաքն՝ պատմեաց զաեսիլն մեծասքանչ և զարմանալի։ Իսկ պիղծ և անօրէն գատաւորն զլանալ կամեցաւ զարանչելի մեծութիւնն՝ զոր լուաւ ի ծառայէն, նոյնպէս և զառաջինն՝ զոր ի բաղմաց լուաւ։

Յետ այսորիկ ոմանք յանհաւատից ըստ պատահման հատին զծառն, յորում կապեցաւ սուրբ վկայն, զի այրես ցեն։ «Եւ տեսեալ քահանայի միոյ՝ ետ փոխանակ փայտ յայրել և առ, և զիարծիս առեալ ոչ տային, և պատճառաւ հաւանեցուցանէր, և ուրախ ևս լինէր, զի և յառաջ իսկ կամէր և ոչ իշխէր, և այս ի Տեառնէ պատահէր։ Եւ տարեալ եղ ի գաւիթս եկեղեցւոյն և բաղում բժշկութիւն առնէր կեզե նորին յառաջ և զինի հատանելոյն, բաղումք և յանհաւատիցն առնուին ի բժշկութիւն։ Զինի ինչ առուրց անցանելոյ՝ տեսեալ ի հեռաստանէ հաւատացեալք լոյս իջեալ ի վերայ գաւիթին, և եկեալ պատմէին քահանային։ և այքք ի հաւատացելոց տեսիլս պատմէին որ մերձ էին յեկեղեցին, եթէ ասէր ի տեսլեան գիշերոյ եթէ «Զիս խաչ ձեացուցեալ օրհնեցէք և անուն դիք սուրբ Ստեփանոս» Եւ լուեալ զայս քահանայն՝ անյապազ կատարէր և զկոփուածս փայտին զբաւանդակն առնուին ի բժշկութիւն, ուրովք ոչ սակաւ բժշկութիւն կատարէր Տէր ի փառս իւր և ի գովութիւն վկային, կուրաց և այլոց ախտից։

Իսկ զզրպարտիչ վկային՝ զկինն պիղծ գատասպարտեաց Տէր աստէն ըստ արժանի իւրոյն գործոյ. քանզի ծնաւ

ծնունդ այլանդակ, խառն ինչ մարդոյ և գաղանի և ի նմին  
սատակի, որով և ծանուցաւ բազմաց հաւատացելոց և ան-  
հաւատից արդարադատութիւնն Աստուծոյ: Եւ այլքն ևս  
չարաչար կրեցին անցս ազգատոհմ նորուն կնոջ, ոմանք ի  
գիւէ լլիեալը և այլք բնաւին բարձեալ եղեն մահուամբ  
և ոչ մնաց և ոչ ոք յազգատոհմէ նորին:

Կատարեցաւ սուրբ վկայի Քրիստոսի յաշխարհին Առա-  
նայ, ի մայրաքաղաքին որ կոչի Գանձակ, ի թուականին  
ՌժԶ, յամսեանն Արաց, յերորդ աւուր, ի գլուխ յիսնե-  
րեկի պահոց վարդավառին, ի թագաւորութեանն Յունաց  
Կեռ Մանուիլի և յիշխանութեանն Հայոց Թորոսի, որ էր  
պատուեալ կեստրոսական պատուով ի թագաւորէն Յունաց,  
և ի Վրաց Գէորգէ, և յիշխանապետութեանն Հասանայ՝  
որդւոյ Վախթանգայ՝ կողմանցն Խաչենոյ, ի հայրապետու-  
թեանն Տեառն Գրիգորիսի և Ներսիսի հարազատ եղարց  
Հայոց մեծաց, և տանն Աղուանից Տեառն Ստեփանոսի, և  
Տէր Յոհանիսի եպիսկոպոսի քաղաքին Գանձակայ, և յիշ-  
խանապետութեանն Արևելից Ելտկուղին, և ի թագաւո-  
րութեանն Եղեմացւոց և Պարսից Ասլանշահի. իսկ ի մեղ  
թագաւորելոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, որում  
վայելեն փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և  
յաւիտեանս յաւիտենից, ամեն:

Միիթարայ վարդապետի մականուն կոչեցեալ Գոշ,  
Ներքողեան  
ասացեալ ի առ վկայա կոչեցեալ Խոստրով:

Զուարճանան ժողովուրդք նմանապէս ի յիշատակ կա-  
նուխ և անագան վկայից, զի մի է հաւաքումն հեռաւու-  
րութեան ժամանակին, որ առ Տէր մերն: Քանզի յանցեալ  
և ի ներկայ և յապառնի այլայլի, այլ ոչ զախրապէսն փա-  
փագ: Վասն զի բնաւորապէս և ոչ պատահմամբ զնա  
ստացեալ ունիմք. ըստ որում ոչ հուր և ոչ սուր և ոչ այլ  
ինչ ներհակ՝ հատանել զնա ի զանազան կարէ ժամանակի,

զի յստացողէ աղաւաղին է և արծարծինը եա և ոչ գիտէ  
ընտրել երեսս իբր ճոխի և աղքատի, առն և կնոջ, մանկան  
և ծերոյ, կուսի և երիտասարդի. այլ զիւրն գտեալ ար-  
ժանի բնակէ և ի նոսին ներդործէ. ապականչօքն զօրանայ  
և ի խափանիչմն սրանչելի լինի. ի վեր քան զկարիս ամ-  
բառնայ մարմնոյ, անհայր ուսուցանէ և անմայր. զմի և եթ  
գիտել որ պատճառն է բնաւից. խնդայ ընդ շարչարանս,  
մեծարէ զիիշտո, կերակրի նախատանօք, ուրախանայ հա-  
լածանօք, ճոխանայ աղքատութեամբ, բերկրի տնանկու-  
թեամբ, մեռանի կենդանի, յառնէ մեռեալ, ատէ զաշխարհ,  
դարշի որ ի նմա, խոկայ ի տուէ, հսկէ ի գիշերի, զար-  
թուցանէ զանձն, հեղու զարտասուս, հաստատի հաւատով,  
մխիթարի յուսով, զօրանայ սիրով, գոչէ արիապէս և ելա-  
նէ նահատակ. պատրաստ զանձն ունի և սպասէ ժամու.  
հայցէ աղօթիւք պատահիլ պատերազմին, և եթէ մարտ  
ճակատու ոչ իցէ՝ մարտադիրն նախայօժար պատէ կամօք.  
ի գէպ ժամանակի յօրինէ գործօք և կրկնապատիլ հատուցէ  
վարձս, և եթէ լուեալ հալածիչըն ի նորին լինին զօրու-  
թենէ, սակայն յառաջ զարժանիմն ձգէ հանդիսին. վարէ  
զթագուցեալն իբր հոգմով հրոյ զբոց սէրն. պատճա-  
ռանաւ փորձանաց նահատակս ցուցանէ, որովք ի խոր  
զարմատն ձգէ, իբր տունի ի սաստկութենէ շարժեալ հող-  
մոյ: Եւ որպէս ի հանդերձից օժանդակութեամբ ոմանկը այ-  
լոյ մերկանան ձեռօք, նմանապէս և ի մարմնոյ նոքա, հա-  
կառակօք զհակառակն գործեն նման ծեառն. հալածեալը  
լինին ոչ յաշխարհէ միայն, այլ և ի մարմնոյ, զի երանու-  
թեանն արժանասցին. ծանեան անփոփոխ զերանութիւնն,  
որպէս զնորին իսկ զտուողն. վասն այնր և իւրաքանչիւրըն  
զնոսա ծնան ժամանակէ: Եւ որպէս առաջնիքն յիշատակօք  
նորոգին միշտ, նմանապէս և նորըն պատուելով ընդ առա-  
ջնոն առ ի մէնջ փառաւորին տօնիւք. և զոր օրինակ առ-  
ռաջն է չարչարանօք խաչի վկայ ծէր և զենման նորա  
միշտ յեկեղեցի լինի խորհուրդ, նորոգ զնոյն ցուցանելով,  
այսպէս նորք և հինք արժանացեալը վկայութեան, միով

կոչին և զարդարին անուամբ։ Յաղագո որոյ և մեք զմերս  
կոչեմք պսակաւոր վկայ նոր, և ընդ հինսն մեծարեմք տօ-  
նիւ, զիստրով ասեմք մանուկ և հանդիսաւոր նահատակ,  
զարքայանունն և զիքոզն կոչմանն, զերեւլին գաւառաւ  
և զպանծալին աշխարհաւ, զնշանաւորն և բնակութեամբ,  
զդեզեցիկն հասակաւ, զառոյզն մարմնով, զպատանին տիօք,  
զշառաւեզն քաջ յարմատոց բարեաց Եւ զի թեպէտ գովու-  
թիւն վկայից յերկրէ և ի մարմնոյ զպատճառն ոչ ունի,  
այլ զի ի միասին նմա ամենայն եկին, յարմարեցաք սա-  
կաւոք։ Եւ գարձեալ մերձ զանկաւորն դիցուք, պատ-  
ուականն յանարգաց, մեծն ի փոքունց, երևելին յաննշա-  
նից, փարթամն յազքատաց, ճոխն ի խոնարհաց, փառա-  
ւորն յանփառից, մեծատունն ի տնանգաց, իմաստունն ի  
տգիտաց, արին ի հեղգաց, պարկեշտն ի վաւաշոտից, ար-  
թունն ի քնէածաց, զուարթունն ի թմրեցելոց, լուսակորն  
ի խաւարելոց, ամփոփեալն ի ցնդելոց, արդարն յանիրա-  
ւաց, ընարեալն ի բիւրուց, զօրաւորն ի տկարաց, խրախու-  
սեալն ի միամարտից ծուլից, սպառազէնն ի զենընկեցաց,  
ծաղիկն ի ձմերանի, ակն ի վիմաց, մարգարիտն յաւազից,  
բարեբախտիկն ի վատարախտից, զնողն ագարակին և ի  
նմա ծածկեցելոյ դանձին, ստացողն անդին մարգարտին,  
խաչակիրն Քրիստոսի, նախանձաւորն Տեառն վկայիցն,  
դտողն ճանապարհին անյայտ բազմաժամանակեայ եղելոյ,  
աշակերտն Տեառն միամիտ։

Զաս տեսեալ բանսարկուն նախանձի անդիտանալով  
զկատարածն, թոյլ և կոչման տայ չնորհ, զծածկեալն յայտ-  
նել զհամբերութիւնն. ի ձեռն դիմն առնու զէն չարն, կար-  
ծելով նմանապէս յազթել, ամաչի գնայ ունայն։ Զմի եղ-  
զորոգայթ և յերկուս կարծէր յազթել. փշրի որոգայթն,  
դատարկանայ խորհուրդն։ Կինն էր թակարթ և յազթել  
կարծէր պոռնկութեամբ և ուրացմամբ. պարտի յայսմ. փո-  
խի յայլ, զբարտել զնահատակն տայ. հրապարակալուր  
զիրն առնէ. մատնի և ի բանտ մտանէ. հարցափորձի, խոստ-  
մունս բազումն ընդունի, ի վեր քան զբնաւն ելանէ պատ-

րանս, զմի և եթ փութացուցանել, եթէ անպարտ ի զրապարա-  
տութեանց է, զի մի տգեղն ծածկիցի անուամբ սքանչե-  
լին վկայութեան, քանդի առաջի զնշմարտութիւն ուրանալ  
եղին և զկեալ, գիւրապատիր զմանկութեան կարծեն զժա-  
մանակ, ներեն զզանալ, իսկ նա կրթութեան առնու պատ-  
ճառու զմիջոց աւուրցն, խորհի զբազումն առաքինացեալս  
մանկունս և վկայեալս, զոր ոչ ուսաւ ի գրոց, ուսաւ հոդ-  
ւոյի Զմանկունս, ով գուք, թերեւս ի դէպ էր ասել դատա-  
ւորին չարի, կարծէք յազմիլ յախտից, այդ ձերոց օրիւ-  
նացդ է և ոչ քրիստովնէից, զոր և ոչ յարութիւն առանց  
հեշտութեան խոստովանիք առանց ախտից և ոչ ծերք ձեր  
սզնախորհանան և երիտասարդք ձեր պարծանս զհեշտու-  
թիւն փարկանին, այլ մեղ մաքրութիւն առաւել պատուի  
և մահ վասն հաւատոց տօնիւ Մայր վկայի անվարժ և ան-  
տեղեակ հայրն դրոց, հարկաւորեն ստիպեն, «Յանիւք, որդ-  
եակ, ասա և աղատեալ կալ զնշմարտութիւն ուր և կամիս»

իսկ նա ուսեալ հոդւով զհրամանն Տետան ոչ ուրա-  
նալ բանիւ առաջի մարդկան, զի մի առաջի Հօր ուրասցի  
և նա, ոչ ընդունի, ի բաց զերեսս դարձուցանէ, սաստէ  
և ի ձեռաց ոչ կերակրի նոցա: Եւ եթէ զդրոց նոցա ոչ  
երկրորդէ, զնոյն զօրութեամբ ցուցանէ, «Զիարդ զձեր ի  
կորուստ զմնունդ դարձուցանէք, ոչ ապաքէն Քրիստոսի  
հաւատացեալք՝ դուք նմա և նորին հաւատոց զիս ընձայե-  
ցայք, զիարդ և մողար մասնէք օրինաց: Զննողաց պարտին  
որդիք ժառանգել զաւանդ, զոր ի ձէնջ ընկալայ, ոչ ուրա-  
նամ դհաւատ, զի մի նախատինք ձեզ եղէց: Եթէ կարծիք  
ինչ էին մերոց կրօնից, ի դէպ էր խնդրող ճշմարտին լինել.  
բայց արդ յամենայն ազգաց վկայի աներկբայ և հաստա-  
տուն մերս լինել, նաև նոյն ի հալածչացս վկայի և ի  
խրամն յայտնի, զի ի մահուանէ զերծանիլ ուսուցանեն,  
ոչ զչար ինչ թողուլ օրէնս և առնուլ բարիւ Ոչ կարեմ ի  
սաստ անկանել օրինացն, և տեղի տալ չարախօսացն զձէնջ  
և մեռանել: Ամօթ մեծ է ինձ ընդ հասակակիցս, ի հրա-  
պարակի նախատիլ, զիարդ սրտի տարայց խոցման, յորս

ժամ՝ գհաւատացեալ եղբարս յեկեզեցի ժողովեալ տեսանիցեմ և զիս մերժեալ։ Հնազանդիլ ծնողաց խրատու, առողջից օրէնք ուսուցանեն և ոչ հիւանդաց. նոյն և ի Տեառնէ յայտ է, զի թողուլ զայնպիսի ծնողսն հրամայէ։ Պատուելի էլիք ինձ մինչև ցայս վայր, այսուհետեւ զառաջինն պատուեմ պատճառ զԱստուած։ Հեռի կացէք յինէն՝ որ հեռացուցանել զիս ի Տեառնէ խորհիք. ի բաց գնացէք, որ ոչ զզօրութիւն գիտէք պատուիրանաց. զի նա մարդասիրութեամբ է պատճառ և գուք հարկիւ ընութեամբ. վասն որոյ անփոփոխ լիցի պատիւն։ Ո՞ւր զնորայն մոռացայց զշարչարանսն վասն մերւ ի ձէնջ ի դէպ էր ինձ խրատիլ ի համբերութիւն, այլ դուք լքանիլ ուսուցանէք։ Զիարդ ոչ մօրն նմանիս եւթանց մանկանցն՝ որ առ Մակաբայեցիսն. զի փոխանակ միոյ եւթն եռ ի մահ իրբի զօրինակ բաղմաց. միթէ չէին նորա խանդաղատանք և կամ որդիատեաց էր մայր. այլ զի խրատեալ գիտէք յօրինացն, եթէ մահ վասն Աստուածոյ անմահութիւն է։ Եւ թէ առանց գլորութեան զայս ոչ գիտէք, միթէ ի տօնի ոչ լուայք քառասուն վկայիցն, եթէ զինչ ասաց կամ զինչ գործեաց մանկանն Մեղիտոնի մայր։ Մահ միայն զերեկիս կարծէք չար, այլ այս պատճառ բարեաց առ Աստուած է. և մեռելութիւն աներեսոյթ հոգւոյ կենօք յաւիտենից մահ է։ Խնայէք յիս իրբ որդեսէրք, զիամրդ ոչ իմանայք, եթէ չար և ատելութիւն է մեծ ծնողաց զորդւոյ ոչ կամիլ զկորուստ, ապա ընտրել արժան է, զի այս կարծեցեալ կորուստ՝ յաւիտենից է գիւտ, և գիւտս այս՝ անվախճան կորուստ։ Բնդէք զբարին յաշազէք զիմ։ Նախանձ և ոչ մի ինչ է ծնողաց։ Զայն ինչ ընկալայ, զոր ի ձէնջ ոչ ուսայ, գտի որում ակն ոչ ունէի։ Բնկալայ, ո՞ւ ի վեր է քան զարժանն իմ։ ճանապարհ ցուցաւ ինձ բարի. ի սրաիս գիտութիւնս աղաղակէ՝ մի յապաղել, եթէ հեղդաման երբ ապա զսա գտից։ Ալրելի աշակերտաց շնորհս է։ Եթէ կայր յօդի իմ այսմ տենչանք՝ մինչև ցարդ ոչ գիտէի, այժմ բորբոքացաւ իրբ հուր և ոչ ապա ինձ հանդիստ, ճանեայ ճշմարիտ զսէք Տեառն յիս լինել. եթէ

ողջակիզօք և պատարագօք հայցել մինչեւ ցայժմ էի  
շահամէր, թող թէ ընաւին ոչ երի . . . . . տաս  
• էի  
• թենէ  
• ձր  
• դոր  
• բազմաց  
կանխաւ պատահեաց, որոց նախանձն մերձ էր, և կրթու-  
թիւն յաճախ, ոչ են զարմանկք, այլ այս է հիանալի, զի ոչ  
զոր տեսի վկայ և զօրացուցիչ, այլ և հակառակ որպէս  
և գուք թոյլ տուք ինձ մեռանել յաղագս նորա, որ վասն  
իմ մեռաւ, և չարչարել յաղագս Զարչարեցելոյն, թէպէտ  
հաւասարել ոչ է ծառայիցս ծեառն, սակայն զյօժարու-  
թիւն ցուցանելի է: Ծնդունի, զի բարերար է, և յիւրան  
ևս յաւելու վառաց. վասն իւր առնէ զիմս, որ առնէ  
այժմ: Հաստատէին և զմիտս հաւատացելոց, եթէ մինչ  
ի կատարած ընդ մեզ է. պատուէ զժամանակս ի ձեռս  
իմ. ոչ տայ թոյլ մոռանալ զհանդէս վկայութեան. ճշմար-  
տէ զպատմութիւնս յաղագս նահատակաց, առատ զինքն  
ցուցանէ և պատրաստ ի բաշխել բարիա: Մի զայժմու-  
տեսանիցէք զվիշտս և խոռվիցիք, այլ ի կատարած անդք  
նայիցիք:

Փոխանակ բանտիս՝ դրախտն, և ընդ կապանացս՝ ար-  
ձակումն ի մեղաց, քաղցին՝ հացն կենաց, և ծարաւին՝  
ջուր մշտաբուխ. ընդ ապականութեամն մարմնոյս ծաղկի  
անապականութիւնն, ընդ վախճաննելի կենացս՝ անվախճանն:  
եթէ գուք անդիտանայք, յինէն ոչ է ծածկեալ. լուարուք  
յայտնապէս՝ ոչ պատրիմ: Զբազում հասակակիցս տեսի  
մեռեալ վայրապար. հարկաւոր առաջի կայ մեռանել, ըն-  
դէր կամաւոր ոչ գործեցից և պսակեցայց»

Եւ լուեալ զայս զնացին խնդութեամբ և տրտմու-  
թեամբ՝ երկրումը բաժանեալ. յաղթին ի բնութենէ կա-  
րեաց, սգան գառնապէս առաջի աչաց զժահն տեսանելով  
որդւոյն սիրելոյ, մխիթարին ի կատարածի՝ ուսեալք զպա-

տիւ վկայից։ Բայց և հալածացն ցաւին ոգիքն, զի ի մեռ  
ուեալ զյոյս նոցա ունել ասաց և վկայեաց, եթէ «Կենդառ  
նի է Բանն Աստուծոյ, կենդանի է և մարմնով, և գալոց է  
նա գատել վկենդանիս և զմեռեալս, վասն որոյ ոչ ուսաւ  
նամ և զպատիր ձեր ընդունիմ զբան և հաւանիմ մոլար  
ձեր օրինացդ և զհետ գամ հետին մահու, զի այդ է  
անուն մոլորեցուցչին ձերոյ։»

Եւ զայս լուեալ հատանէ վճիռ գատաւորն քարկոծ  
լինելոյ։ Եւ պատճառ զի ամենեքեան հաղորդեսցին արշ  
դարոյն մահու և պասկեսցին, և զայս խակ քարոզն ազաւ  
զակեր։ Այլ սակայն խորհուրդ է և այս վկայից, որոց  
կամ է բազում անգամ վասն Տեառն մեռանել։ Կամօք  
բազմացն իբրու բազում անգամ մեռանին։ Կապի և ընդ-  
տունիս ի բժշկութիւն ճաշարեցելոյն ի փայտի։ Ընդունի զքաւ  
բանցն բազմութիւն նման նախավկային, ազօթէ, թէւ  
ոչ յայտնի, սակայն ի սրափ, ըստ սրում տեսանէ Տէր։  
Հաւատալի է, թէ և ոչ տռանց վերին տեսչութեան յայն-  
պիտում ժամանակի վկայը լինին, և հաստատէ զայս ըստ  
նախն երկնից առաջի վկային, այլ ըստ պատշաճի յայտնին  
կամ ծածկին։ Եւ եթէ նման այս պատշաճաց և մեզ ոչ  
յայտնեցաւ, Տեառն զիտելի է։ Աւանդէ զհագին ի ձեռս  
Աստուծոյ, ննջէ զքուն քազցրութեան, զուարճանան հրեշ-  
տակը, բերկին սուրբք, յնծան հաւատացեալք, պարտի  
բանսարկուն, ամաչեն գեք, զահի հարկանին հալածիչքն,  
սակայն յայլ յեղանակ փոխին շարժեալք ի շար հոգւոյն-  
ծափի հրով ի նախատինս հաւատացելոց, և զի մի պատ-  
ուեսցին նշխարք պատուական վկային՝ ընդ հուր անցանի  
անծախելին՝ նման երից մանկանցն, զի և ոչ ի հերսն մեր-  
ձեցաւ և ոչ զկապանս ելոյծ։ Դիտեն պատկառել և տա-  
բերք ի կշտամբանս յանդգնելոցն, զի այնմ, որ զհուրն  
շիջոց ընտութեան, շիջաւ իրաւացի և հուրն, և զի յայտ  
լիցի, եթէ հուրն հանդերձեալ զարդարս լուսաւորէ և կիզու-  
զմեղաւորս։ Եւ քանզի սուրբք հրովին որ ի Տեառնէ արկաւ

միշտ բոլըռքեալ են, որով և ամենայն շիջան ի հուր, ան-  
մատոյց շիջաննելի լինին հրոյ, անշիջանելեաւն ձուլեալը-  
եւ զի յանդ ելեալ մեղմանան դործօղը չարի, բայց չա-  
րագոյնք քան զչարսն անյագ են: Վասն այնորիկ ընդ ա-  
մենայն օրինակս անցուցին տանջանաց. ընդ կապանս,  
ընդ բանտ, ընդ քաղց, և ընդ ծարաւ, ընդ բանս անար-  
դանաց, ընդ քարկածանս մահու: Ծնդ քարշանս զինի մա-  
հու, ընդ հուր ի կատարածի, հաղիւ ապա լոեալ գա-  
գարեցին: Բազում անդամ ի սրբոց մահու հանդարտ .

ի խս .

թթ .

մեր .

ան .

ուն .

բար .

զգեստ, զի զինի մահու ոչ յանդգնին: Նահանջին ապա այնու-  
հետեւ պատկառեալը յանծախութենէ հրոյ: Համայն և յագին  
չարանախանձիցն կամքէ: Ի հանդիստ և զբաջն փոխեն վկայ,  
զանխլանալով ի քարկածչայն ծնողըն, ի սեպհականն իւր-  
եանց տեղի ի հասարակ հաւատացելոցն դնելով շիրիմս,  
անդիտանան զօրինակ . . . . . . . . . . . . . . . . .





## 4.

ՅԱՎԱԽԻՓ ԳՅՒՆԵՑԻ

† Ոժք ահեղի ի=1170 հոկտեմբեր 24 շր.



աւուրս անիշխանութեան մերոյ աղդի,  
ինուազեալ ժամանակիս՝ յորում էր թիւ  
համարու թուականութեանս Հայոց Ոժ  
և Թ, յամն աստուածապատիւ և ներանձ  
նեան չնորհազարդեալ Հայրապետին Հայոց  
տեառն ներսիսի, և ի թագաւորութեան  
վրաց Դէորդեայ, յորում ժամանակի բռնա-  
նայր հարստահարութիւնն Սկիւթացւոց և  
մեծապէս չարչարանօք նեզեալ լինէին ազգք քրիստովնէից  
աղդի աղդի անիրաւութեամբ յամբարիշտ և յանօրէն աղդէն  
թուրքաց և առաւելապէս ևս ի ժամանակ՝ մեծ ախրոխստ

և յաղթող ի մարտ պատերազմի և մեծիմաց ի հնարս հայժայժանաց անօրէն օրէնսդրին խւրեանց՝ մեծահարկի և անուանի եղեալ յազգու խւրեանց ամիրապետն մեծ՝ կոչ չեցեալն Ելտկուզ։ Սա բռնացեալ տիրեաց բազում աշխարհաց, այր բարեմիտ եւ խաղաղաբարար. և յաւուրս սորա բազում խաղաղութիւն եղեւ աշխարհաց։

Իսկ որք անհնաղանդ էին կամաց նորա՝ նուաճել ջանայր ընդ իշխանութեամբ խւր. և յոլովք մարտիրոսաւ կան հանդիսիւ շարչարեալք ի ձեռաց նորա, մեռան վասն սիրոյն Քրիստոսի. ընդ որս էր և այս ճշմարիտ վկայ Բանին Աստուծոյ, յաղագս որոյ պատմեմքս իսկ։

Արդ պարտ է մեղ նախ գիտել և զայն թէ ուստի սակամ յորմէ աղգէ եկեալ յաշխարհս մեր՝ զայսալիսի նաշատակութիւնս կրեաց։

Այս ոմն Սևուշ կոչեցեալ՝ աղգաւ պարսիկ՝ հատուածեալ յազգէ խւրմէ, բնակէ ի գիւղ մի նորաշէնք կոչեցեալ, որ է ի թուրբար դաշտի, ի սահմանս կոտայից նահանգի, մերձ առ գետն Հուրաստան, ընդ իշխանութեամբ Խոստրովակերտ քաղաքին՝ որ այժմ կոչի Դուին. որ յարբունս հասեալ մանկան միոյ յորդոց սորա՝ ի տիս համբակութեան անուանէր զանուն նորա Բուպագը, և ուայ զնա ի վարժանս, զի ուսցի զուսումն դենին խւրեանց Եւ նորա կացեալ անդ աւուրս բազում՝ տեսանէր զգործս զազութեան և այլանդակութեան. և գարշեալ ի նոցանէ՝ փախտական լինէր անդէն ի տունս խւրեանց Եւ յայնմահետէ թերացեալ գոյր ի գենէ հարց խւրոց և սնանէր ի մէջ քրիստոնէից, և վարժէր ոչ իրին զմանուկ սիրելով զթատերաց խազս կամ զպարս գինարբուաց, այլ ի բաց փախչէր ի նոցանէ, գիտելով մնութի և ունայն զայն և երգս սատանայականս Եւ իրին հասանէր ի տիս աւսարշ դական հասակին, վերնական ձրիւք ազդմամբ սուրբ Հոգւոյն, փափագմամբ մեծաւ և ջերմեռանդն ըղձիւք տենչայր կարգի քրիստովնէից՝ տեսանելով օր ըստ օրէ ծաղկեալ բարեմաշտութեամբ։ Նաև ի քրիստոսասէր արանց խրա-

տէր և վարժէր և ուսանէր զկարգ քրիստովնէից՝ Եւս առ ուսւել յառնէ միովէ բարեպաշտէ Սարգիս կոչեցեալ՝ որ կայր ի տունս նոցա մշակաբար Քանզի նա եղեւ պատճառ դարձի նորա և կելոյց Եւ ինքն հնազանդ և հլու էր առ մենայն ասացելոց նորա, իբրև դերկիր՝ որ բուսացանէ զսերմանեալն ի նմա:

Եւ ցանկայր հասանել կարգի քրիստովնէից՝ թողլով զհայրենական գենսն՝ զոր ունէր Եւ աւուրս բազում սոյն պէս կացեալ, ոչ կարէր ժուժել եռանդման հոգւոյն՝ որ եռայր ի նմա վերնական ծրիւք, քանզի կեալ ընդ ծնողս իւր և պաշտել զհաւասս քրիստովնէից՝ խոսափանելով զՔրիստոս Աստուած և որդի Աստուծոյ, ոչ իշխէր, զիտելով զի անհնար էր նմա զայն առնել, այլ ի մտի եղեալ գնալ հեռանալ յաշխարհ հեռաւոր, պանդխոտանալ անդ և պաշտել զհաւասս ճշմարիտ և դաւանել յայտնապէս զՔրիստոս Աստուած ճշմարիտ և որդի Աստուծոյ Եւ եկեալ ի տանէն իւրեանց դատարկաձեռն և ունայն յամենայն ընչից, միայն զՔրիստոս առնելով յոյս և տեղի ապաւինի. զմտաւ ածեալ զայն՝ թէ Մերկ եկաք յաշխարհ և մերկան դամ անդրէն դառնալոց եմք, և եթէ Ունիմք կերակուր և հանդերձ՝ և այնու շատացուք:

Երթայ այնուհետեւ ի յաշխարհն վասպուրական, ի Տոսպ գաւառ, ի գիւղն Առեստոյ, յորում մանր աղձկունքն ելանեն. և անտի հասանէ ի դաշտն Բաղենից՝ որ է մերձ յանառիկ դղեակն՝ որ կոչի Ամուկ: Հայր նորա հետամուտ եղեալ հասանէ յայնմ տեղւոջ, յազգմանէ չարին՝ որ ոչ կամի զիրկութիւն մարդկան, այլ զկորուսս: Եւ բազում ողոքական և աղերսալի բանիւք դարձուցանէր զնա խարս մամբ, ասելով. «Եկ, որդեակ, դարձցուք ի տուն մեր և դու կեաց որպէս կամ է քո, և մի տարաչխարհիկ և օտարաւ մահ լինիր, և մի զրկեր զմեզ ի տեսութենէդ քումմէ»:

Եւ նորա պարզմտութեամբ հաւատացեալ բանի նորա, կարծելով ճշմարիտ դոլ զատացեալսն, դասնայ ընդ նմա, և եկեալ ի տունս իւրեանց՝ զպատրուակեալն վասն նորա

չար խորհուրդ յայտնէր և գնէր շղթայս երկաթիս յոտս և ի ձեռս նորա, զի էր այր չար, և պնդագոյնս ի կրօնս գենին իւրեանց։ Ապա կոչէ զմնլար օրինացն իւրեանց զառաջնորդս, զի թերեւս հնար դացեն դարձուցանել զնա և գենս իւրեանց։

Եւ նորա բազում ողոքական բանս խօսէին առելով. «Որդեակ, մի թողուր զուղիղ գենս մեր և լինիր նախատինք և ձաղանձը ազգիս մերում։ Եւ մի տար տարապարտուց հեղուկ զարիւն քո և մի թողուր զպատգամաւորն մեր՝ որ զայս բարութիւն շնորհեալ է մեղ և անդ զդրախտին վայելչութիւնն։ Քանզի ամենեցուն մեք տիրեմք և բռնութիւն մեր զօրացեալ է ի վերայ ամենեցուն։ Մի լսեր քրիստովնէիցն՝ որ կամին կորուսանել զքեզ, յիշեալ զգորս և զեզբարս քո, զի գեռ մանուկ ես և չես ձանձրացեալ վայելչութեամբ աշխարհիւր»։

Իսկ նորա պատասխանեալ ասէ. «Ձեմ՝ անիմաստ՝ թեպէտ և մանուկ եմ, զի Դանիէլ երկոտասան ամաց գոլով՝ զծերս յանդիմանեաց. և Յովսէփ ի նոյն տիս, իմաստութեամբ իւրով տիրեաց ամենայն իշխանութեան Փարաւոնին։ Եւ քան զծեղ ևս տեղեկագոյն եմ՝ ձերոց առասպելաբանութեանցդ, զի սուտ և սնուողիք են»։

Եւ նորա ասեն ցնա. «Մի վոխելանար և նման մանկանց բարբառեր, զի չես իմաստուն և հանճարեղ քան զառաջնորդս մեր, որք զայս կարդ օրինաց ետուն մեղ»։

Իսկ երանելին ասէ ցնոսա. «Ես ի մանկութեան տիսն իմում կացեալ եմ յուսումն դպրութեան ձերոյ. և իրիւ տեսի զվարդապետս օրինաց ձերոց ի գործս աղտեղիս զազրութեան, փախեայ ի նոցանէ. արդ յայսպիսի կրօնս մուծանեք զիս. չեմ լսելոց կորստական խրատուցդ ձերոց»։

Իբրև գիտացին նորա զյամառ կամս նորա, և թէ չէ լսելոց բանիցն նոցա, կամեցան ջուրս յուռթել և տալ նմաըմպել. թերեւս յիմարեալ դարձցին. Եւ նորա կնքեալ նշանաւ խաչին, ոչինչ աղդէր նմա».

Յայնժամ հայր իւր և եղբարքն բրածեծս առնէին զնա և բազում բանս նախատանաց խօսէին և ասէին. «Մի լինիր կորուստ անձին քո և մեղ»: Եւ նա ժուժկալեալ տառնէր համբերութեամբ բազմաւ՝ ունելով դյոյս իւր առ Աստուած: Եւ նոքա նովին կապանօք պահեն զնա աւուրս բազումաւ:

Եւ իբրև ոչինչ գտանէր ելս իրացն, յայնժամ ումանք ի մերձաւոր սիրելեաց իւրոց ի տգէտ քահանայից, ասեն ցնա՝ թէ «Վերին երեսօք յանձն առ զկամս դոցա կատարել և արձակիլ յայգպիսի կապանաց. և երթ ուր և կամիս կրօնաւորեա զկրօնս քրիստովնէից»: Եւ նոքա ճշմարիտ կարծեցեալ զբանս նոցա՝ յանձն առ կատարել զկամս նոցա և դառնալ յառաջին հաւատն՝ զոր ունէր:

Եւ նոքա ուրախացեալ արձակեցին զնա. և իբրև առուրք ինչ անցին, յիշեաց զդաւանութիւն ուխտին՝ զոր յառ ուաշն ընկալեալ էր, թէ ընդէր խարեցայ իբրև զպարզամիտ օք: Եւ ելեալ գաղտազողի դնալ ի գաւառն Մազազայ, որ է Բջնի, ի վանս Խշանի, որ է ի մէջ երկուց լերանց բարձրագունից՝ պարփակեալ անտառախիտ ծառօք, առ այր ոմն միանձնացեալ՝ որ առաւել փայլէր յաշխարհիս մերում, մաքուր վարիսք, ճգնաւորական հանդիսիւ, քահանայական շնորհիւ զարգարեալ, Սարդիս կոչեցեալ, խրատ իմն գտանել ի նմանէ, եթէ որպէս վարեսցէ զկեանս իւր և կամ ուր երթեալ դազարեսցէ: Եւ ուսեալ ի նմանէ, երթայ այնուհետեւ ի գաւառն Սեորդեաց, ի գերադրական և ի հոչակաւոր ուխտսն ի Հազբատ և ի Սանահինն: Եւ անդկեայր ճշմարիտ հաւատով՝ անուանելով զանուն իւր Յովսէփ: Գրէ առ ծնողո իւր և յայտնի առնէ զհաւատսն՝ զոր ունէր առ Քրիստոս, ասելով թէ «Ես քրիստոնեայ եմ»:

Եւ կեցեալ անդ ամս երկուս՝ յայժ տառապանօք և նեզութեամբ անցուցանէր զանցաւոր կենցաղս, ոչ ունելով թոշակս մարմնականս և հանդերձս: Եւ որպէս է անդթութիւն և անցաւակցութիւն ազգիս մերում, զի ոչ գթամք զորովալի գթով յայնպիսիսն և ոչ խնամ տանիմք հոգեորին և մարմ-

նաւորին, սոյնպէս և սա անտես լեռալ ի նոցաննէ և ոչ ողորմութիւն գտեալ. քանզի այսպէս ասէին. «Միթէ պարծանքը մեր են դարձ ձեր յայս կրօնս» Եւ թուի ինձ թէ և այս ևս ի չարէն և ի բարխատեացն սատանայէ լինէր, զի նեղեսցի և դարձցի յետա»

Եւ նորա բազում ժուժկալութեամբ տարեալ սովու և մերկութեան և այլ անհնարին անհանգստութեան. զի մանուկ դողով տիսվը և անսովոր այնպիսի կրից, թեպէտ և այս ամենայն դայր ի վերայ նորա, այլ նա ոչ նեղաւ սրտեալ ձանձրանայր. և ոչ ելանէր տրտունջ ի բերան նորա, սակա ճշմարիտ և ջերմեռանովն սիրոյն՝ զոր ունէր առ Քրիստոս Գիտելով թէ կեանքս այս սնուտի է և անցաւոր, անզրաւականին ցանկայր և յաւիտենականին, լսելով օր ըստ օրէ զվարս սրբոցն և զճդնութիւն նահատակաց. նաև զայս ևս լսէր յարանց գիտնականաց՝ թէ «Երթ ի տեղին՝ ուր յեւ տոյ ուրացող եղեր և անդ հաստատեա զհաւատող զոր ունիս»»

Երթայ այնուհետեւ ի վանս Մակարու, որ է նոյն գաւառ Աւորդեաց, զի ի պատմադրաց միենոյն կոչին սոքա. և անդ ևս չգտեալ հանգիստ, զի հաց անդամ չուտէին ընդ նմա՝ իբրև զիսարերայ համարեալ»

Ապա դէմ եղեալ գայ ի գաւառն Շիրակ, ի վանս Հասիբինոյ՝ որ է յոտն Արագածոյ՝ ի հիւսիսոյ կողմանէ, յուրում էին արք երկիւզածք և պատուիրանապահը յոյժ, կամեւ ցեալ կեալ անդ. և բարխատեացն չար և զնոսա գրգռեաց. բանզի ասէին ցնտ. «Մի կար աստ, այլ երթ, գնա ի մէնջ, զի մի վիսանեսցուք»»

Ապա գայ հասանէ յաշխարհս Հայոց՝ յԱյրարատ գաւառս, ի Սաղմոսավանս, որ է յոտն Արագածու՝ ի խորածորն՝ ընդ որ Քասաղ գետ հոսի, խոռոշացեալ ահագնաւ ձայն թնդմամբ, մերձ առ մեծ ըլուրն Շրիշեայ. Եւ ընակիչք տեղւոյն սիրապէս ընկալեալ, այլ ահարել եղեալ ասեն գնալ, «զի մի կորիցուք դու և մեք յազդէ քումմէ յայլաւ սեռից» Եւ անդ ևս չգտեալ հանգիստ, բանզի բանսարկուն

շար և անդր ևս հասանէր յարուցանել հաղածանս նմառ Զի և սա երկրորդ վահան երեցաւ յաւուրս մեր Ապա իշխանէ ի մենաստանն մեծ Յոհաննու կոչեցեալ վանս, որ է նոյն Ռտն Արագածու՝ ի վերայ Քաստղ գետոյք Եւ Խորհուրդ իմն գեղեցիկ ի վերին տուչութենէ անտի զմտաւ ածէր՝ երթալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, տեսանել զտեղի ծննդեանն Քրիստոսի և զիաչելութեանն և զյարութեանն և զայլ ևս սրբութեանցն, և մխիթարել և լուսաւորիլ:

Եւ երթեալ նախ ի լեառն Սուկաւեթ, զսուրբ նահատական և զճգնաւորսն զայնոսիկ բարեխօս ինքեան և օգնական ճանապարհին իւրում ունել:

Ապա երթեալ զփափաք ցանկութեան իւրոյ նոյյր, ոչինչ ունելով որով զպէտս վճարէր, բայց զտուիչն ամենայն բարեաց Եւ իբրև գառնայր, զմտաւ ածէր զայս ի վերին խնամոց անտի, թէ «Զեմ կատարեալ ի հաւատս՝ եթէ ոչ երթեալ ի տեղի ուրացութեանն՝ անդ խոստովանեցից յայտնապէս զՔրիստոս Աստուած և որդի Աստուծոյ»:

Եւ իբրև եկին ի գիւղն նորաշէնք կոչեցեալ՝ ի տունն իւրեանց՝ ի ժամ գիշերին, և հայր իւր մեռեալ էր իբրև տեսին զնա մայր իւր և եղբարքն՝ զարմացան, զահի հարան և ասեն, «Որդին մեր է Բուպաքր» Եւ նա ասէ, «Զեմ Բուպաքր, այլ Յովսէփ, ճշմարիտ քրիստովնեայ եմ և քրիստոսունակ և խոստովանող նորին» Եւ նոքա ասեն ցնա, «Այդպիսի հաւատով գոլով քո՛ ընդէր թաքնաբար մտեր այսր, զի լուիցեն ազգք մեր և կորուսցեն զքեզ հանդերձ մեօք, արդ՝ գնա յանապատ տեղիս և կեաց անդ նովին հաւատովզ, և մեք հոգասցուք զպէտս քո մարմնականս» Իսկ նորա պատասխանեալ ասէ, «Ոչ կացից թաքնաբար, այլ զհաւատն՝ զոր ի սմին տեղւոջ ուրացեալ գտայ, յայտնապէս առաջի ամենեցուն յանձն առից, կամ մեռայց, կամ կեցից Աստուծով, զի վասն այնորիկ եւ կեալ եմ»:

Իսկ նոքա կոչեն զքահանայ ոմն Սարգիս՝ զի հաւա-

նեցուացէ զնա զնալ ուրեք. և նորա բազում բանս խօսեացեալ նմա, ասելով թէ «Ոչ խնդրէ զայդ ի քէն Աստուած, և ոչ ոք ի մարդկանէ մեղադիր լինի այդմ» Խոկ նա ոչ առնոցը յանձն տսելով. «Չեմ լսելոց բանից ձերոց» Ապա եղաբայր նորա երկուցեալ ազդ առնէ վերակացուի գեղջն, եթէ «Եղբայր իմ» որ ապստամբեալ զնաց ի մէնջ, արդ եկեալ է կրօնաւոր ձեւով և քրիստոնեայ կերպիւ»

Խոկ նորա կալեալ զնա զնէ ի տան բանտին, ազդ առնելով դլխաւորի գեղջն՝ որ էր ի Դուխն քաղաքի, որում անտւն Սրջահան կոչեն։ Եւնորա եկեալ փութանակի ի գիւղն յայն, նստեալ ի տան քրիստոնէի, կոչէ զնա առնկն։ Եւ իբրև ածին զնա զառաջետւ, նշան տերունական խաշին կանդնեալ կայր ի տանն յայնմիկ. խոկ նա երիս ծունը կրկնեալ և ապա առէ ցնա. «Ոմիրայ, բարի եկիր, խաղաղութիւն ընդ այն.» (զի էր այր չարաբարոյ և ժանտ)։ Ասէ ցնա. «Ծնդէր ոչ նախ ինձ երկրպագեցեր» Եւ նա առէ ցնա. «Վասն զի քրիստոնեայ եմ և քրիստոնէին այնպէս պարտ է առնել» Ասէ բանաւորն. «Ծնդէր թողեր զհայրենի դենն քո և մոլորեալ եղեր»

Խոկ Յովսէփ բացեալ զբերան իւր ասէ. «Ո՛չ եմ մոլորեալ, և ոչ եմ թողեալ զհայրենի հաւատն. այլ ի մոլորութենէ դարձայ և զհաւատն հայրենի զոր ոչ ունէի՝ գտի։ Արդ առաջի քո եմ, զոր ինչ կամ է քո, արա»

Խոկ նորա ընդ դինիս մտեալ զգիշերն ամենայն և դինեղինեալ արբեցութեամբ՝ կոչէ զնա առ ինքն. և սուսեր մերկացուցեալ կամեցեալ սպանանել զնա։ Ապա ազդ լինէր գեղջն և նորա մեծաձայն ճշխք անդք հասանէին. և բազում աղերսանօք աղաչէին զնա թէ մի այդպիսի արիւն հեղուլ ի միջի մերում և մի զբարկութիւն Տեառն շարժել ի վերայ մեր։ Եւ հազիւ դադարեցուցանէին զնա։

Ապա ի վաղիւ անդը դնէ անուր ի պարանոց նորա՝ տանել ի քաղաքն Դուխն։ Եւ իբրև եհաս ի նորադաւիթ

գիւղն, քրիստոնեայքն ելեալ ընդ առաջ նորա, արգելին զնա յայնմ գիշերի, թերևս զերծուցեն զնա, և խոստանան տալ զգին նորա և թողուլ զնա. և նա բռնադատեալ ի նոցանէ՝ յանձն առնոյր: Եւ նովին կապանօք տանի զնա ի Դուքին և դնէ զնա ի բանտի՝ աւուրս ութ. զի էր ամիսն Արաց՝ յորում արեգակն տապէր զամենայն մաեղիու Ապա երթեալ քրիստոնէիցն՝ տան զկէս գնոց նորա՝ հանելով զնա ի տանէ բանտին: Իսկ սուրբն ոչ կամեցեալ՝ ասէ ցնոսա. «Մի գնէք զիս, զի զարիւն իմ ետու փոխանակ արեանն Քրիստոսի, մի արգելուր զիս ի գեղեցիկ առաջարկութենէս և մի զինչս քրիստոնէից տայր ի գինս իմ»:

Իսկ նոցա ոչ լուեալ նմա՝ արձակեցին զնա. և իբրև աւուրք ինչ անցին, կամեցան շրջեցուցանել զնա և զգինն նորա ժողովել: Իսկ սրբոյն ոչ կամեցեալ՝ ասէ ցնոսա. «Ծն գէր զրկէք զքրիստոնեայսդ՝ տալով ի գինս իմ. զի ես ոչ վասն այդորիկ եկի, այլ զի իմով արեամբս գնեցից զարքայութիւնն Աստուծոյ» Եւ երթայ գարձեալ ի տուն բանտին՝ ուր յառաջն էր, ազդ առնելով Սրջահանին այն: Եւ նորա ասեն ցնա, թէ «Բուլապքը կայ առկուրս» Իսկ նորա ելեալ արտաքս՝ հարցանէր ցնա. «Վասն էր եկեալ ես այսր» Նա պատասխանեալ ասէ. «Եթէ կամ է քեզ, թող զիս նովին հաւատովս և մի զրկեր զաղքատս վասն իմ: Ապա թէ ոչ՝ զոր ինչ կամ է քո, արտ» Եւ նորա սրտմտեալ յոյժիբրև զչար գաղան, բրածեծ արարեալ զնա չարաչար գանիւ, դնէ կոճեզ ի յոտս նորա և շղթայս երկաթիս ի պարանց նոց նորա, պահելով ի տան բանտին: Եւ վարժեալ երանելի նահատակն զինքն աղօթիւք և պահօք պնդութեան, ոչինչ ճաշակելով ի տունս նոցա. այլ և բազում բանիւք նախատէր զնոսա և զառաջնորդս նոցա, առասպել վարկանելու զելով զկրօնս նոցա: Իսկ նոցա զչարեալ՝ երկիցս ծակեցին զքիթս նորա և անսուր անցուցեալ շրջեցուցանէին ընդ դուրս իւրեանց՝ նման ուղտու՝ նովին կապանօք: Եւ նա գահանալով զծեառնէ, տանէր ժուժկալութեամբ: Եւ կացեալ յայնմ բանտի ամիսս երկու, կին ոմն հաւատացեալ տա-

նէր նմա աւուրն նկանակ մի, զկէս նորա ուտէր և զայլն տայլը ցնա ասելով. «Տուր զայդ յազբատա» Եւ այնպէս մեծաւ տառապանօք անցուցանէր զաւուրմն զայն:

Եւ իբրև եկն ամիրապետն մեծ Աթապակ կոչեցեալ ի յուշ տանն մեծ Հայոց ի Դուին քաղաք, և բնակէ մերձ ինա, ի տեղի մի Խորու կոչեցեալ՝ ամբոխասաստ բազմութեամբ, և խաժաւ մուժ ժողովք: Յայնժամ Սրջահանն ծանուցանէ ամիրապետին մեծի վասն նորա, և նա հրամայէ առաջի իւր տանել: Եւ զնեն զնա ի գրաստու, զի յոյժ ներգևեալ գոյր ի չարաշար կրից անտի: Եւ իբրև ածին կացուցին զնա առաջի, և նա սազմոսէր. «Աստուած, յօդնել ինձ նայեաց և Տէր, յընկերել ինձ փութա, առ քեզ, Տէր, Տէր, են աչք իմ, ի քեզ յուսացայ:» Եւ կուտեցաւ ամենայն ամբոխ զօրուն ի տեղին յայն՝ տեսանել զնահատակութիւն սրբոն:

Ասէ ցնա ամիրապետն մեծ. «Հայր և մայր քո պարսիկ գոն և պաշտօնեայ մերոյ պատգամաւորին. դու յումի՛ հարկեալ կամ նեղեալ յայդպիսի հաւատս դարձար կամ զայդպիսի ձև դգեցար. արդ, լուր ինձ և մի ընդդիմանար հրամանաց իմոց:»

Իսկ նա ոչինչ տայր պատասխանի, այլ միայն զնշանն տերունական անդադար դրաշմէր յերեսս իւր:

Ասէ ամիրապետն մեծ. «Զահի հարեալ երկեաւ ի մէնջ առաջի իմ,» իսկ Սրջահանն՝ որ պահէր զնա, ասէ ցամիրապետն. «Ոչ եթէ երկեաւ, այլ չառնէ արժանի պատասխանւոյ, զի բազում աւուրք են որ կայ առ իս ի բանտի և ի չարչարանս, և ոչինչ լուայ ես ի դմանէ բանս թուլութեան. հրամայեա սպանանել:»

Ապա հրամայէ դարձուցանել և բերել զնա առաջի իւր: Ասէ ցնա դարձեալ ամիրապետն. «Մի կար յայդպիսի կամս և տարապարտ մեռանիր. հաւանեան ինձ, և ես տաց զգիւղն քո հայրենի ի ժառանգութիւն քեզ:» Եւ զնէ առաջինորա սոկի բազում: Իսկ երանելին Յովսէփ առէ ցնա. «Ես ոչ յումեքէ բռնադատեալ և ոչ հարկեալ, այլ ինկնին կամօք իմովք եկի ի տեղիս յայս.

ոսկիդ այդ և մեծութիւն զոր խոստանաս, արհամարհեալ է առաջի իմ. եթէ զամենացն աշխարհ և զբաւառ՝ որ է ընդ իշխանութեամբ քո՝ առա ինձ, չեմ փոխանակելոյ ընդ այսմ հաւատոյ, զոր ունիմ Եթէ քաղցր են կամք քո առ իս, թող զիտ նովին հաւատովքս, ապա թէ ոչ՝ զոսկիդ զայդ տուր սպանողաց իմոց»

Ասէ ամիբապեան մեծ. «Ամենեքեան հրամանաց իմոց հնազանդ են. և դու ընդդիմանաս. և նախատես զառաջնորդն մեր»

Պատասխանի ետ սուրբն և ասէ ցնա. «Իմ երթեալ է յերուսաղէմ և տեսեալ զտեղի ծննդեանն և զտեղի չարչարանացն և զյարութեանն և զհամբարձմանն և զայլ հահագետացն տեղի և զգերեզման։ Իսկ զպատգամաւորին ձերոյ ոչ ուրեք տեսի կամ դախ»

Ապա հրամայէ բազմութեան այլասեռ զօրուն՝ որ Մջան փակեալ շուրջ կային զնովաւ, սալանանել զնա և քարկութել. Եւ նորա իրեւ զգազան արխանարբու մրմուեալ կը ճատէին զատամիւնս իւրեանց. Եւ կալեալ զձեռանէ նորա ասաի և անտի ընթացուցանէին ի տեղի սպանմանն. Իսկ երանելի վկայն ոչ դադարէր յառելոյ զաղմոս զայս. «Լասն քո մեռանիմք զօրհանեալագ, վասն քո հեղում զարիւն իմ՝ որպէս Դու վասն իմ։» Եւ նորա հարկանէին զնա, ոմն ձեռամք, ոմն փայտիւ, և բազում բանս նախատանաց ասէին. Իսկ նու ասէր. «Ճէր, մի համարիր սոցա մեղս, զի ոչ դիտեն դինչ խօսին»

Եւ եղբայր նորա անկեալ յոտս նորա, բազում աղաջանօք և արտասուօք ասելով. «Մի տար սպանմանել զբեզ. առ այժմ յանձն առ զհրամանս դոցա կատարել և յետոյ որպէս կամ է քո կեաց» Իսկ սուրբն խոժուռեալ ասէ ցեղբայր իւր. «Երթ յետո. հակառակ իմ եւ. մի զրկեր զիս ի մարտիրոսական նահատակութենէս. Զի Փրկին հրամայեաց թէ՝ մր ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ՝ որ յերկինս է»

Եւ իրեւ սակաւ հեռացուցին, խաղիանն այն՝ որ պնդեալ

ունէր զաջոյ ձեռն նորա, հարկանէ դամնակաւ զձախ կուշա նորա, և պատառեալ հերձաւ մինչև յաջուն, իսկ նորա յերեսս անկեալ թաւալէր յարխն իւր։ Ապա որ շուրջն կային՝ հարկանէին զնա, ոմն սրով, ոմն քարիւ և մեռեւ բախ սոկերօք, և զոր ինչ անկանէր ի ձեռս նոցա՝ արկանէին ի վերայ նորաւ Եւ հատեալ զգլուխն մորթեցին՝ զի տարցեն յաշխարհն իւրեանց՝ ինչս ժողովելոյ վասն։

Եւ սրբոյն աւանդեալ զհոգին ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ, ըստ այնմ, թէ «Հոգիք արդարոց ի ձեռս Աստուծոյ են»։ Եւ եղբայր նորա բրեալ սակաւ մի զաւեղին, թաղէ զմարմին սրբոյն համոդերձ գլխովն։

Եւ ի գիշերին յայնմիկ արհաւերք եղեալ իր սրումամբ և թնդիւն զօրացն, զի այնք որ շուրջ ընակեալ էին՝ զգեշերն ամենայն սրտարեկեալը անքուն լինէին։ Եւ մարդասիրին Աստուծոյ վառաւորեալ զփառաւորին իւր՝ բանալով զհաստատութիւնն, և լոյս կամարաձե ի վերայ նորա իջեալ՝ առ ի պարծանս վկային և յանդիմանութիւն անհաւասարիցն։

Իսկ նոցա տեսեալ զարմացան սխրացեալը, երթեալը առ դատաւորն իւրեանց և առաջնորդն՝ հարցանէին թէ «Զինչ էնուրն այն, այսինքն լոյս, որ էջ ի վերայ նորաւ» Եւ ասէ ցնոսա, թէ «Զքարինսն և զմեռելոտի սոկերսն՝ զոր եւ տուք ի վերայ նորա, պատուէ Աստուած։ և վասն այնիր էջ լոյսն, որչափ զձեղ որ սպանողք էք» Իսկ կէպն ասէին թէ «Մշհետ է, լոյս աստուածութեանն այրէ զնաւ»

Կատարեցաւ սուրբն Յօվսէփ բարի խոստովանութեամբ ի Հայր և յմրդի և ի Հոգին սուրբ, յամեւանն ահկի, որ օր քսան էր՝ յաւուք շաբաթու՝ յիններորդ ժամու՝ ի տեղին որ Միջոց կոչի, առ եղբ գետոյն Երասխայ մեծի, մերձ առ սուն լերինն մեծի Մասեաց, հանդէպ Ալտաշատ քաղաքի և դղեակ բերդի, ուր է վիրապն մեծ, որ է տեղի շարջարանաց սրբոյն Գրիգորի, քանդի և սա ստուդ է շարջարանաց նորաւ»

Արդ՝ ով եղբարք քրիստոսասէրք, նահատակութիւն

սորա զարմանալի է. քանզի բաղում մարտիրոսք եղեն յառաջ, առաւել ևս ի Հայս, զի ծաղկեալ և զարդարեալ գոյլը աշխարհս Հայոց արեամբ նոցա. զի նոքա պատկեր և ապացոյց ունէին զայլսն. զի զոմանս պսակեալս տեսանէին, յոմննց վերայ լոյս կամարաձև երեեալ և զոմանս պատուեալ յԱստուծոյ և ի մարդկանէ, և այս ևս յորդորէր զնոսա:

Բայց սա ոչ ի տան Աստուծոյ մնեալ և ոչ գրովք սրբովք դարմանեալ և ոչ զայլս տեսեալ, այսպիսի նահատակութեամբ կատարեցաւ. որ և զարմացոյց զզօրս վերինս եւ քանզի աշխարհս Հայոց ի վաղնջուց երաշտացեալ և ծարաւի գոյր ցօղոյ արեան մարտիրոսաց, արդ զովացեալ արբեցաւ արեամբ սորա:

Արդ՝ որք ջերմեւանդն գթով և յուսով մեծաւ և բաղձամամբ սիրոյ և ճշմարիտ հաւատով կատարեն զտօն վկայից Աստուծոյ, եղիցին վկայ առանց չարչարանաց, առանց սրոյ՝ նոցին պսակացն արժանացեալք: Արդ՝ յուսացեալք ի Տէր՝ ի ձեռն սոցին բարեխօսութեան՝ հայցեցէք ի Քրիստոսէ զթողութիւն մեղ մեղուցելոցս, և Քրիստոս ձեզ և մեղ ողորմեսցի. ամէն:

Թէ որպէս վերաիրիշումն եղեւ նշխարաց նորս  
եռ որպէս եղեալ կայ:

Այր ոմն Սարդիս կոչեցեալ՝ որդի Զաւախի, ի համբակութեան տիսն իւրոյ գարձեալ եղեւ ի հայրենական գենէն իւրմէ, ի հաւատս ճշմարիտս, խոստվանելով զՔրիստոս Աստուծած և որդի Աստուծոյ, մնեալ յանապատի և ուսեալ զուսումն աստուածեղէն, և արժանացեալ չնորհիքահանայութեան և առաջնորդութեան եկեղեցւոյ Աստուծոյ: Նաև սա կոչեցեալ եղեւ ի հանդէս մարտիրոսական մրցանաց ի Շահի Արմանէն, որ տիրէր գաւառին Բզնուն-

եաց և այլոց բազմաց, և աւուրս ինչ արդելեալ ի տան  
բանտի և պատգամն յդեալ առ նա, խոստանայ ինչս բա-  
զումն և մեծութիւնս, հաւասար առնել անձին իւրոյ, եթէ  
արացէ զկամս նորա, ապա թէ ոչ ի փայտ մահու բարձ-  
րացուցանել սպառնայր»:

Եւ նորա պատասխանեալ ասէ. «Եթէ զամենայն աշ-  
խարհիս մեծութիւնս տաս ինձ, յայսմ՝ հաւատոյ ոչ կացից  
յետո, և որով մահու կամ է քո, առաջի քո եմ, կատար-  
եա զկամս քո» Զի էր այր քաջասիրտ և կորովախօս, ոչոք  
կարէր պատասխանել նմա»:

Եւ արհաւիրք եղեալ կնոջ ամիրապետին, վասն այնու-  
րիկ արձակեալ եղեւ ի ձեռն միջնորդի՝ կալի հաւատս իւր-  
եւ այլ ևս նեղութիւն կրեալ վասն ուղղի հաւատոցն»:

Սա իբրև լոււաւ զնահատակութիւնն սրբոյն Յովսեփայ,  
փութանակի ընթացաւ անդրէն ի բանակին, և իբրև աւուրք  
ինչ անցին, խնդրեաց յամիրապետէն մեծէ զմարմին վկա-  
յին; իսկ նա ասէ. «Ընդէր մահ նիւթես անձին քում. զի  
թէ զայդ արացես, զնոյն մահ և գու կրեսցես»:

Ապա կացեալ նորա ի բանակին աւուրս քսան, և զմա-  
հու երկիւրդ ի բաց եղեալ՝ կամեցեալ թագնաբար գողանալ.  
առեալ ընդ իւր արս երկուս և հանեալ զնա ի հողոյ  
անտի, կամեցեալ սրբել զնա: Յայնժամ իմացեալ այլասե-  
ռիցն, արս վեց հեծեալս յերիվարս ձիընթացս սուսե-  
րամերկ դան ի վերայ նոցա, իսկ արքն որ ընդ նմա էին,  
ի փախուստ դառնային՝ հեծեալ յերիվարս իւրեանց: Իսկ  
նա քաջասրտեալ և սկնդեալ զերիվարն՝ կայր հաստատուն  
ի տեղւոջն, և զի էր հասարակ գիշեր և լուսինն ուռճա-  
ցեալ լուսով իւրով լուսաւորէր զամենեսեան, եւ իբրև մօ-  
տեցին, ձեռնհաս և նա խօսեցաւ ի լեզուս պարսիկա-  
Յայնժամ անտեսութիւն անկեալ զաջօք նոցա, անդէն ի  
փախուստ դառնային, այնպէս զի ոչ ընկեր զընկերի հետ  
գտանէր: Ապա արքն փախուցեալք իբրև տեսին զայն նշան,  
գարձան յետո: Եւ եղեալ ի գրաստու՝ ընդ մէջ բանակին  
զամենայն գիշերն տանէին աներկիւզաբար: Եւ այնպէս ի

նախախնամութենէ Աստուծոյ աջողեալ, որ ոչ ոք ի նոցաւնէ դիտէր թէ զի՞նչ է զոր բարձեալ տանին Եւ զգիշերն զայն գնացեալ տանէին զնա յուխտն հռչակաւոր ի Հաւուցաթառ։ Ապա հանգուցանէ զնա ի տեղի մի բարձրաւանդակ որ Խաչողն կոչեն, յարեւմտից կողմանէ հանդէպ դիւղաքաղաքին Դառնու, ի պահպանութիւն գաւառին այնմիկ Եւ զգլուխ սրբոյն թողեալ յեկեղեցւոյն, զի ի ձեռն նորին բարեխօսութեան դժացեալ մարդասէրն Աստուած՝ ողորմեացի իւրաց հաւատացելոց, և նմա փառք յաւիտեան, ամէն։

Պահթի քահանայի ի սքանչելի վկայն Քրիստոսի Յովհակի պատաճի, որ յԵղարաւոյ Աահանգին, Անքրոդակրան գովեստի բան։

Պարտապան եմ պատուասիրել առ քեզ, ըստ նազելի և պարկեցտագեղ պատուոյ գերագունիդ իմաստնոյ, և ինձ յոյժ աստուածուաոյց սիրով մերձաւորիդ, զգօրութիւն աստուածային Հոգւոյն և զանուն միիմարական յանձին կրողի, վկայասէր մտօք զգաղնջուցն ի ձէնչ խնդիրս լնուլ, դառնոգանութիւնս գովեստից Վասն զի, մասնաւորիլ ի ճշմարիտն ձայնէ ուսաք ի հասարակութիւն նմանակցութեան՝ զյօժարութիւնն զոր՝ խնդրողիդ յաւէտ չնորհ ունել՝ իրաւացի է, եթէ դիպեսցի պատեհաբար ինչ խմանալ և ասել. և գրուագս գովեստից ընդ պատմութեան նորին գովելի կենացն և նահատակութեանն յարահիւսել Սակայն ի սաստեկագոյն լինիմ յերկիւղի. գուցէ այլայլութիւն մտաց և ապազօր զգայարանացս գոլոյ՝ յարժանւոյն զրիպեցայց ասից վասն որոյ անագան յայստուկ ածայ հաւանութիւնն, լծակցեալ ընդ վկայասէր անձին քում՝ և զիմս յօժարութիւնն Եւ քանզի դու ինքն օրով ունիսդ՝ բաւական քան զմեդէիր յաւէտ հրաշացուցանել զհանգունակիցն հրեշտակաց՝

ի մարմնի անդ խոնարհութեան, այլ զի իրաւացի վարկար ըստ պատմութեանն ճշգրտաբանութեան՝ և դգովեստիցն մեղ լնուլ պարտու, հաւանութիւն յանձին ունիմ՝ անստերիւր սիրոյ ախորժիւք. քանզի և հոգիք մարդարէից՝ մարդարէից հնազանդել օրինադրեցան՝ յԱռաքելոյ. և սիրոյ հաստատութիւն՝ ընդարձակ է ի համարձակութիւն, վասն զիշանելոյ սիրողին՝ ի սիրեցելոյն վատասրտութիւն։

Ուստի իրաւացի վարկայ սկսանել ի գրուատիս գովեստից մեծապանծ և նորազարդ վկային Աստուծոյ, և ինձ ի տեսիլ աչաց ժամանեցելոյ, իսկապէս և անըստգիւտ սիրովին Քրիստոսի՝ Յովսեփիայ՝ Քանզի միշտ նոչոգ քրիստոսագիրիզին մրցական՝ յորդորականաւն ընդ մեզ գոլով ձայնիւ, որ յաղթեացն ախոյենին, և իշխանութեամբ ի վերայ ընթանալ և կոխել զգլուխ վիշապին հրամայէ։

Յայսոսիկ մրցմունս մատաղ հասակաւ և համեստ ժուժակալութեամբ կրթէր զանձն՝ երանելիս մեր պսակաւոր, պահօք և ազօթիւք, խարազնազգեստ և բոկագնաց թափառելով շրջել ի հանդստանոցս քրիստոնէից, և առ արս երեւելիս յիմաստու և յառաքինի երկս, թերեւս օժիտու իւրոյ առաջարկութեանն հաւաքեսցէ ի պիտանեացն առանց։

Իսկ բարիատեացն և պատերազմօղն սիրելեացն Աստուծոյ՝ զանազանս նմա պատրաստէր փորձութիւնս ի մարդկանէ, այսանութեան բանիւք և ապտակաւ և լուսալով, իբր թէ զաղփաղլիուն և անհաստատ է մանկութիւն, և անտար՝ այնպիսի խստակրօն վարուց։ Սակայն նա յայոմ հասակի զկատարելագունիւքն զանցանէր համեստութեամբ, և յարբունս հասակին նովին ժամանեալ հրահանդիւք, յորում աստուածային օրէնքն՝ ի մարտ զիսրայելի նորահասակին մուծանէր, և սա ի նոյն սկըսմանէ կատարեալ ցուցանի նահատակ ի կրկիսի երկնաւոր հանդիսագրին։ Այլ նոքա ի կատարման տիոցն հրամայէին վատահանալ ի մարտակռուութիւնն. իսկ սա ի մանկականն աստեաց՝ ոչ ի հրահանդողէ յաւէտ՝ այլ անձամբ և հոգեոր յորդորա-

մամբ՝ զանձն իւր մղէ ի մրցարանն. և ոչ եթէ դիպուածով իւկը միոյ և կամ երկուց պատահմանց ի դիմի հարեալ քաջ և անուանի լեալ գովեստ ընկալաւ, այլ կրթութիւն մտաց ի մանկութենէ զհանդիսին իւրոյ արարեալ ասպարէզ, նովիմբ ի ստագիտն մտանէ վերջին. վասնորոյ առաւել նկարագրաւս ցուցանի:

Վասնորոյ և խրախսացեալըս մեք ի տօնի աստ, որպէս ընդ կենդանւոյ խօսելով՝ ազերսաբանեսցուք, հայել ի մեզ գուարթութեամբ, և ընդունել զյօժարութիւնս՝ ի նմանակցութիւն իւրոյն հանդիսաւոր նահատակութեան. և կոչելով զնա յանուանէ՝ ասասցուք. Ո՞վ ամենապանծալի պարկշտագեղդ Յեպաէփ, մերձ կացեալդ հասարակացն կենագործի Տեառն մերոյ, բարեխօսեա վասն սրբոյ եկեղեցւոյ զոր սիրեցեր, և յորմէ ծնար զանախտաբար ծնունդ, առ որ ունիսդ համարձակութիւն. զի ազատեացի յամպարիչան ձեռնարկութեանց այլասեռից, և ի տատանմանէ խոռվական ամրոխից՝ անդորրասցի վերստին, հօտապետօք և հօտերէց վերակացուովք, նուիրակատար քահանայիւք, և բովանդակի խել զարդուք զարդարեցելովք, որպէս զի երթիցեն ելանել յառաջին պայծառութեանն լուութիւն, յոր խարսխեցաւն ի սկսմանէ մերոյ լուսաւորութեանն, որ ի ձեռն սրբոյ խոսանվանովին և առաքելաշնորհն Դրիգորի զարդարեցաւ. յորում նահանգի և գու՝ զխոստովանողականն ընկալար զբաժակ: Եւ զոր խոսացաւն տալ խաղաղութիւն Փրկիչն՝ հասարակաց իւրոյն ծանօթից և սիրելեաց, վերստին չնորհեցէ որոց ակն ունին նմա ի փրկութիւն. զի զհասարակացն և զառանձնապէմնի վերայ եկեալ ուրեք պատահարս՝ բարեսէր կամօքն ի բաց դարձուսցէ. զհիւանդութիւնս կրկնապատիկմ՝ զհոգեկանն և զըստ մարմնոյ, ամենահնար բուժարանաւն ապաքինեսցէ. և զյառաջատեալմն ի մանկութենէ ի կրօնս կատարման առաքինավաստակ երկոց՝ զօրացուսցէ ի դիմամարտութիւն չարասիրին, և մարմնաւ կանացն կամաց և կրից. որպէս զի և ըստ քումդ անսագը.

տանելոյ սիրոյ և կրօնից՝ համարձակիցին առաջի կալ  
կենարարին, քոյով միջնորդութեամբ աղերսել ընդ-քեզ, և  
ասել. Տէր մեր և Աստուած, Յիսուս Քրիստոս, կերպարան  
անսկզբնականն Հօր, անտարափոխ նոյնութիւն ըստ բնու-  
թեան, և պատկեր մերոյ ազգիս մարդասէր տնօրէնու-  
թեամբ. Խնայեա ողորմութեամբ քով և գթա ի վերայ հօտի  
քո մատնելոյ ի ձեռս ամբարշտաց. և դարձո զգերութիւն  
ազգի մերոյ, որպէս երբեմն զիսրայելին. Բարձ զլուծ ծա-  
ռայութեան ի պարանոցէ մերմէ, ըստ որում արարերն, և  
դու ինքնին թագաւորեա ի վերայ մեր, որով իւիք և ախոր-  
ժեսցես. Դադարեցն զամպոպն խոռվական, և ամաչեցո  
զխոռվարարն ի սկզբանէ, զչար արբանեակն չարասիրին ընդ-  
կրուկն դարձո. և սպառազինեա ամրակրու զինու զզօրա-  
կանս քո, վատնել զբանակս նոր Ամազեկայ և Քանանու,  
որպէս Յեսու, Յարակաւ և Գեղէոնիւ, Սամուելիւ, Դաւթաւ  
և Եղեկիայիւ. վասն զի երկարեաց ողբովք պանդխտանալս  
մեր ի վրանս կերպարու. զոր ոչ ի քէն վարկանիմք, Տէր  
բարեսէր, այլ զի դառնացուցաք զբարեգործդք. Եւ այժմ  
սովորաբար ի խնդիր ել, հովուապետ զօրեղ, ամայի ի վե-  
րակացուաց եղելոցս, և դիտ զմոլորականզս յանայցելի  
լերինս և խորափիտս սուզեալս. կամ զխոցեալսն յաւա-  
զակաց և ի ճանապարհ անկեալ անողում կոխողաց, բարձ  
ի վերայ ուսոց և կամ ի գրաստին՝ զորմէ ասացերն, և  
տար ի տունն զոր շինեցեր՝ քոյովդ մարմնանալով. զի աւան-  
դապահէր կենարար պատուիրանի քո՝ դարմանեացեն զնա,  
առ ի պահպանութիւն խորհրդական օծմանն՝ որ ի քէն.  
և ուրախ արա գինով բանին՝ զոր արբուցեր ի սուրբ խո-  
րանէ քումէ. Յորմէ ապաքինեալ ի յոդնակի փորձու-  
թեանցն՝ տօնեսցուք զտօն սիրելեաց քոց վկայիցն երանե-  
լեաց. յորոց մի է և այսր աւուր կոչնատէրս Յովսէփ. որոյ  
բարեխօսութեամբ հանդիպել արժանասցուք քեզ՝ ի տաճարի  
սրբութեան քո. և սովաւ հանդերձ՝ յերանաւէտ կեանսդ  
հաւատակը մտանել, յանլուելի և յիմանալի փառաբան-  
չացդ կայեանս

## 5.

ՍԵՐԳԻՎ ԽԵԽԵՆ ԽԵԶԵԿԵՑԻ

† ՈԼԱ. = 1182 մարտ 26 ուր.

**Ի**նոյն ամիս (ՈԼԱ) Սարդիս ոմն Խաչենեցի կայր ի Դանձակ և առնոյր խարաճ. և ոմն պարսիկ ի յաւագ ուրբաթուն խաչեաց զնա ընդ պարիսազն ասելով. «Խաչակից լեր Քրիստոսին քում.» զոր լուեալ իշխանք նորա՝ տարան առ ինքեանս զպարսիկն և չարամահ սպանին:





## 6.

ՅՈՐԴՅԱՆԻՆ ՎԿԱՑ ԹՈՒԻՔ

† 01.0. = 1182 մարտ

Ի սյն աւուրս (աւագ ուրբաթ) և Յորդանան ոմնի  
ի տաճիկ տոհմէ վկայեաց մեծ հանդիսիւ ի Կարնոյ քա-  
ղաք, և եգան նշանալք նորա ընդ Յովսեփայ և ընդ Սա-  
հակայ ազգականին խրոյ:





## ԹԵՇԻՐՈՒՌՈՒ ԿԵՍԵՐԵՑԻ

† ԱՅԴ մարերի ժք=1204 մայիս 18 դւ.



րիստոսածիր և առատաբուզիս ողորմութեան չնորհք Հոգւոյն սրբոյ՝ զոր  
միշտ և հանապաղըստ իւրաքանչիւր  
ժամանակի առատածեռնեալ տնօս-  
րինէ յեկեղեցիս իւր, զոր հաստա-  
տեաց ի վերայ առաքելական վիմի  
հաւատոյ, և կանգնեաց անյոզդողդ-  
ի յեօթմանց սեանց, և ոչ երբեք  
նուազեցուցանէ կամ պակասեցուցանէ առ իւր ստեղ-  
ծեալքս, մանաւանդ առ այնք որք ի սկզբանէ հաճոյացան  
կամաց նորա և կատարիչք եղեն խորհրդոց նորին. և հաս-  
տատապէս առնէ նշանս և պանչելիս յաւուրս և ի գարս  
և ի ժամանակս հանապաղօր, որով և արար ի սկզբանէ և  
առնելոց է մինչև ի գալուստ իւրոյ տէրութեանն, որպէս  
և երեցոյց ի դարուց դարս որք են գծագրեալք և ձեւա-  
ցեալք ի տառս աստուածայինս: Արդ ի գալ Բանին Աս-  
տուծոյ և ի ծագել առ մեղ արեգականն արդարութեան,  
որ և զինի ի մեղ թագաւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի  
Քրիստոսի, յորժամ ի մարմին թանձրացեալ անմարմինն  
Աստուած՝ լնկնայօժար կամօք առ ի մերս կենցաղավարիւր  
բնութիւն, ըստ մարդարէին, զատ և որիշ ի մեղաց. և յետ

չարչարանաց նորին և աշխարհակեցոյց յարութեանն և նորահրաշ համբարձմանն կատարելով առ սուրբս և սիրեալս անուանն իւրոյ, և առ վկայս իւրոյ մարմնառիկ անօսրէնութեանն, որք արխաբար յօժարութեամբ բարձին զիսաչս խաչելոյն և ընթացեալք զհետ կոչողին ձայնի՝ եղեն խաչակիցք Որդւոյն Աստուծոյ՝ Քանզի ի բացուստ գիտմամբ տեսանելով զփառս Յանին և զբարեբաստութիւն խոստացեալ անհատ պարզեին, զանասելի գեղեցկութիւնն, զանձերանալի կեանան, զանարտում ուրախութիւնն, զանթառամ պսակն և որ սոցին նման, զոր և ոչ ոք ի մոտառաց զննել կարասցէ և կամ բանիւ ընդ թուով արկանել զհամար վկայիցն, որք կամաւ և առաքինաջան նահատակութեամբ հասին աւետեացն Հօր, երանելի յուսոյն ակն ունելով՝ անձամբ զանձինս ի խաչ հանին կարեօք և ցանկութեամբ հանդերձ. կրելով յինքեանս ըստ Առաքելոյ՝ զբազմազան և զյորհակի կիրս չարչարանաց, համբերելով նեղութեանց և լիկանաց, քաղցոյ և ծարաւոյ, ցրտոյ և մերկութեան, գելարանաց և կապանաց, ստանալով զյաւիտենական կեանսմն, պսակելով ի Հօրէն լուսոյ և ժառանակելով զանտրտում ուրախութիւնսն:

Սրդ ի սոյն իսկ ժամանակի, և ընդ նուազել շրջալեռութեան կենցաղոյս, ի յետնել աւուրցս, ի ժամանակս վերջինս, եղեւ նշանս և սքանչելիքս այս ի միջի մերում. զոր եթէ կամեցեալ նախախնամութեանն Աստուծոյ ծաղկաձև պսակել սուրբ զեկեղեցի և զուարճալից առնել զմանկունս նոր Սիոնի, և բարձրացուցանել զեղջիւր սուրբ եկեղեցւոյ. զոր տեսանելով վարատեցելոցն և յերկուացելոցն ի հօտէն Քրիստոսի՝ զարթիցեն ի մահահանդիստ քնոյն, զղասացին և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն. աւետարանական գաւանմամբ հաստատեսցին ի հաւատս սուրբս և ի խոստովանութիւն սրբոյ Երրորդութեանն: Եւ այս գործիւր ի բառնալ արդարոց և ընդ վերանալ ընտրելոց Աստուծոյ, և ընդ սերանալ և ի բազմանալ ազդի չարեաց ի վերայ Երկրի զոր սերմանեաց չար որու-

մանցն ուրբանողն ովդին կորստեան և մշակն անօրէնութեան:

Ընդ ժամանակո բռնակալութեան մեծի արքային Տաճկաստանի Սուլիման Շահ Սուլտան Մուլգնատնին, որ բազում հանդէս ըանութեան և յազթութեան պատերազմի ցուցեալ յաւուրս ժամանակաց իւրաց, և յաչս յօքունց մեծարեալ ահ արկանելով ամենայն թագաւորաց տիեզերաց: Աս որդի գոլով մեծ և յազթուզ ինքնակալ Խլիճ Ասլան Սուլտանին, ուստի գրաւեալ սորա ընդ իշխանութեամբ տէրութեանն իւրոյ զկողմանս հիւսիսոյ, սկսեալ ի Կեսարացւոց մայրաքաղաքէն մինչև ի մեծն Բիւզանդիոն, որ այժմ կոչի Կոստանդինոպոլիս, ունելով ընդ իշխանութեամբ զՊոնտոս և զՄերաստիա և զամենայն զԵմենտացւոց և զՏրապիզոնացւոց զտէրութիւնն, և հասեալ մինչև ի մեծ և ի հոչակաւոր քաղաքն Թէոդորովիս՝ որ կոչի Կարնոյ քաղաք, նուաճեաց ընդ գաւազանաւ զԵկեղեաց և զԴարանաց, արկ ընդ ձեռամբ զիշխանն Ծոփաց, փութացաւ մինչև ի լայնանիստ քաղաքն Մելիտենի, մերձ ի սահմանսն Եղեսացւոց. Համարձակեցաց ասել թէ և զամենայն աշխարհ, տիրելով ի վերայ ամենայն հայրենական աշխարհաց իւրոց: Եւ արդ այսոցիկ այսպէս եղելոց, յաւուրս սորա յերկրորդում ամի տէրութեան իւրոյ յայտնեցաւ մեծ և պահչելի, պանծալի և հոչակաւոր վկայն Քրիստոսի, երանեալ նահատակն սուրբն Թէոդորոս:

Աս ծնեալ լինէր ի գաւառի Դամրայ՝ յաշխարհն Կապադովկացւոց, ի քաղաքին Կեսարացւոց, որ է աթոռ Հայրապետական և թագաւորական, և ամենայն քաղաքաց Յունաց գահերիցագոյն, յօքունս ունելով յինքեան արեգակունս՝ զհոյլս վկայիցն սրբոց, որ ջահաբորբոք լուսով պայծառացուցանեն զԵկեղեցիս քրիստոնէից. զՄերկիւտիոս ասեմ և զԴորդիսս, և զմեծն Բասիլիոս, առ որս մի ի նուցանէ է տեսանել զյօքներանեան վկայն Քրիստոսի զսուրբն Թէոդորոս, արդ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ օրհնեալ նախասացեալ քաղաքն Կեսարիա՝ որ զայսպիսի ջահունս

և զարեղակունս մնուցանէր։ Բայց ի հանդէս պատմութեան եկեսցուք քաջ և յաղթող վկայիս, և զսորայս քաղաքավարութիւն գրուատական բանիւք պանծալի երևեցուցուք. այլ գուք մաքրեցէք զլսելիս յօնկնդրութիւն համբերատար ժուժկալութեան սրբոյն հաճատակին։ Արդ սա որ այսպահն երանութեան արժանաւորեալ, ի տղայական տիոց և ի մայրական խանձարրոց հրահանդեալ և կրթեալ օրինոք և մարդարէիսք և աւետարանական կաթամբն սնեալ՝ ըստ չնորհաց սրբոյ աւաղանին, զարգանալով ըստ աճման հաստակի մինչև յարբունս երիտասարդութեան հասեալ, գնալով յօրինս Տեառն և խոկալով ի պատուիրանս նորա ի տուէ և ի գիշերի. և ապա ըստ սարասի հասարակաց ընութեանս զուղաւորի պարկեշտ ամուսնութեամբ, ներգործելով արուեստս ինչ զոր առնէր՝ այնու հատուցեալ վճարէին զպէտս կենաց իւրեանց, ըստ մարդարէին, թէ՝ Զվաստակս ձեռաց քոց կերիցես։ Սպա ի միաս եզեալ երանելոյն ի հնարս մտանէր թէ զիարդ և կամ որով աղագաւ կարասցէ զաղքատութիւն մարմեոյն ի դերի կացուցանել, ըստ սովորութեան ընութեանս յառաջիկայն հակամիտէր։ Բայց է աղքատութիւն որ պարունակեալ ունի յինքեան ըազմազան փարթամութիւն, և է փարթամութիւն որ ունի յինքեան զնորին հակառակին, թուի թէ մի գոլով սա յայնց աղքատացելոցն՝ զոր աստուածեանն բան յաշխարհակեցոյց քարոզութեանն երանական բանին աշխանացոյց տոելով. Երանի պղբատաց հոգւով։

Սա երթեալ առ մի ոմն ի քաղաքացեացն ասելով. «Ճուրինձ փոխ գահեկանս ոսկեց և արծաթոյ, օգնական լինելով իմոյ թշուառութեանս», իսկ նա յօժարութեամբ ետ նմառչափ խնդրեաց ինչ ի նմանէ. և առեալ նորա գնաց և անդ վատնեաց, որպէս ինձ թուի, թէ զանցաւորո վաճառեաց՝ զարքայութեանն ստանալով զանդ երանութիւնն, զդրախտին վայելչութիւնն, զգրգանս գոգոյ հայրապետին Աբրահամու. Ո՞վ հրաշիցո. սոկին առ հողն խոնարհէր, և որ բարձրեալն էր զդանձն անմահական՝ առ այն որ ունէր

զգոյս ապականացուշ Եւ իբրև մերձեցաւ ժամանակ հաւատուցանելոյ զարիտուր փոխարինին՝ զոր նա ոչ ունէր հաւատուցանել, և որ պարտոյ տէրն էր՝ նեղէր կեղէր դարձուցանել անդրէն զպարտոն. և նա ոչ կարէր. Ապա առեալ տանէր առ դատաւոր քաղաքին, որ էր կարգեալ արքունական հրամանաւ դատիչ և իրաւարար ի վերայ ամենայն դաւառացն: Եւ իբրև յուղի անկեալ գնացին՝ պատմեաց զիրսն ստուգապէս ներհակն դատաւորին, և նա հրամայեաց ամենայն իրօք հաստուցանել անդրէն զգարձն: Եւ իբրև ելին յերեսաց դատաւորին՝ կալեալ զնա չար ծառայակցին նեղէր զնա խեղդելով. իսկ թէոդորոս զերծեալ ի ձեռաց նորա դարձեալ միւսանգամ անկանէր յապարանս դատաւորին. և անդանօր ուրանայր զըրիստոնէական հաւասն զար ունէր, և ճողոսպրեալ զերծանէր առ ժամայն յառնէն որ նեղէր զնա: Ապա այնուհետեւ գնացեալ ի յարկս իւր և նայն ժամայն ուշաբերեալ յիշեաց զտէրունական բանն որ տէ, թէ՝ Որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօրն իմոյ և հրեշտակաց սրբոց: Խորհուրդո բարիոք զմտաւ ածելով՝ սորջացեալ տիրապէս և ի զշջումն եկեալ հաւաստապէս, անկանէր ի վերայ երեսաց իւրոց յերկիր, լայր դառնապէս և արտասուէր ոլորմաբար, ապաշաւելով զիուրուստ անձին իւրոյ. և եկեալ ի զարհուրումն՝ շքեղանայր դէմք երեսաց նորս որպէս երանեալ և քաջ վկայն Քրիստոսի սուրբն Յակովիկ, որ կատարեցաւ արեամի ի փառս Աստուծոյ:

Յարուցեալ այնուհետեւ խոյս ետ ի տեղւոջէ անտի, յուղի անկեալ գնաց ի քաղաքիկ մի փաքրիկ՝ որ էր մերձի սահմանս Յունաց, որ ըստ հայական անսայթաք սիզուբայիցն կոչի Շնորհաւոր, և ըստ խամայէլեան խաղտալուր լեզուին Խիրշահր. և անդանօր զտեղի առեալ բնակէր, ի ծածուկ ունելով զհաւատն հայրենատուր և ամբիծ որ առ Քրիստոս. և անդ կացեալ ապաշխարէր մեծաւ զզջմամբ: Յայնժամ ի սադրելոյ չարին և ի հակառակութենէ չար կամաց բանսարկուին՝ որ հանապազ մարտնչի.

ընդ որդիս մարդկան, յարուցանէր ի վերայ նորա փորձութիւնս։ Այս ոմն ի քաղաքէն Կեսարու ի գասուց անօրինացն՝ գնացեալ ի նախասացեալ քաղաքն յայն, և հանդիպմամբ պատահեալ մեծին այնորիկ և ցանկալի առն Աստուծոյ, և ի տեսլենէն ծանեաւ զնա, և ըմբռնեալ զամեներջանիկ վկայն Քրիստոսի խօսել սկսաւ և ասէ ցնա. «Ո՞չ գու այն եռ որ ուրացար զՔրիստոսն քո և ի բաց կացեր ի ճշմարտութենէ անտի նորա, և եղեր ուրացող և պաշտօնատար մերոց օրինացն. և այժմ տեսանեմ զքեզ զի ունիս զառաջին հաւատան և զկարգմն քրիստոնէից, և պատուես զնա յօժարութեամբ, ուրանալով զմեր կրօնան և քամնահելով զհաւատան յոր սկսարն»։ Քանզի լուեալ էին զդարձ սրբոյն և ոչ գիտէին թէ ուր իցէ զի կալցեն և սպանցեն զնա։ Իսկ անպարտելի վկայն Քրիստոսի աներկիւղ համարձակութեամբ խոստովան եղև զծշմարտութիւնն և ոչ ուրացաւ, ասելով յայտնապէս. «Եյս, ես եմ որ խարէութեամբ չարին պարտեցայ և յանցաւոր գտայ առ Տէրն իմ Յիսուս Քրիստոս, որ է արարիչ երկնի և երկրի, երևելեաց և աներեւութից, որ միայն ունի զանմահութիւն ընակեալ ի լոյս անմատոյց, զիարդ ուրանայի զնա որով ճանաչէի զնա յորովայնէ մօր իմոյ. զնա միայն պաշտեմ և նմա երկլպագեցի ի մանկութենէ իմմէ. բայց այժմ զզջացեալ ծանեայ զծշմարտութիւնն և գարձայ ունել զհաւատան իմ որ առ նա»։ Յայնժամ սրտմտութեամբ և բարկութեամբ ցասուցեալ այրն այն՝ ոչ կամեցաւ թողուլ զնա, այլ անդէն ըմբռնեալ տանէր զնա եղերանօք առ զօրագլուխ քաղաքին, որ արքունական հրամանաւ ընկալեալ ունէր զվերակացութիւն քաղաքին, և պատմեաց նմա զամենայն։ Զայս իբրև լուաւ քաղաքապետն այն՝ բարկացեալ հրամայեաց ձաղածանակ առնել և շրջեցուցանել զնա արհամարհանօք և անարդանօք ընդ փողոց քաղաքին ի տեսս ամենայն ռամկին։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի զայն ամենայն ինչ քեան փառս և պատիւ համարելով՝ տանէր ժուժկալութեամբ։ Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց արկանել զուրբն ի բանտի առուրս ինչ։

Իսկ յետ աւուրցն անցանելոյ հանեալ տայր ի ձեռս  
դահճացն ամանջել զերանելին. և զինի չարչարանացն հրաման  
տայր կապանօք և գառն նեղութեամբ խաղացուցանել ի  
քաղաքն Կեսարիա առ մեծ արքայն։ Եւ յորժամ մուծին  
ի քաղաքն՝ նոյնժամայն արկին ի բանտ զերանելին։ Իսկ  
ի վաղուեան աւուրն ի ծագել արեգականն՝ ընթացեալ  
պատմեցին արքային զանցս սրբոյ վկային։ Իսկ նա իբրև  
լուաւ հրամայեաց փոյթ ընտ փոյթ ածել զառաշեաւ. և  
ի մոտանել սրբոյն հայեցաւ ի նա արքայն մեծաւ ցամամբ,  
և ասէ ցնա. «Այր դու, յիբաւի ասեն զքէն եթէ տաճիկ  
եղեր, և այժմ յետո դարձեալ ունիս զկարգս և զաղանդս  
քրիստոնէից, և պատուես զօրէնս նազովացւոյն, պաշաես  
զաստուած զսմն զոր Յիսուսն անուանեն, որ յինքեան  
արդէն չարչարեալ և խաչեալ՝ մեռանէր զչարագործաց  
մահն, և զմերս դեն թողեալ քամահես արհամարհանօք.  
ասդ հրամայեմ քեզ առանց ամենայն պատճառի ունել  
զմերս սահմանեալ կրօնա, և թողուլ զմոտի և զընդունայն  
կարդ քրիստոնէից»։

Յայնժամամ անպարտելի վկայն Քրիստոսի մեծաւ հա-  
մարձակութեամբ երաց զշնորհալից ըերանն՝ ասելով. «Ես,  
ով թագաւոր, քրիստոնեայ եմ և ծառայ Քրիստոսի, այլ  
և ի զաւակէ քրիստոնէից, և ոչ երբեք ուրեք լուսպ եթէ  
եղեալ է յաղգատոհմի խմում ի մասինդ յայդմիկ՝ յորում  
դուզ ասացեր, և ոչ ես եղէց յաւիտեան. այլ միոյն միայն  
Աստուծոյն իմայ Յիսուսի Քրիստոսի՝ որ մեռան վասն մեր  
և մահուամբն իւրով կենդանացոյց զազգս մարդկան։ Յըդ-  
ի սկզբանէ ի նա եմք հաւատացեալ, և ազգաց յաղգս զնա  
ունիմք փրկիչ և կեցուցիչ. Նմա պարտ է ծառայել և նմին  
միայն գտանել հպատակ. մի և մի լիցի ուրանալ ինձ զծէրն  
իմ և զՅատուածն ճշմարիտ՝ որ է տէր կենաց և մահու։  
Կրկնեաց դարձեալ արքայն և ասէ ցսուրբն. «Մի այդպէս  
կայցես ի նմին յամառութեան և ընդդիմանար իմոց հրա-  
մանացս, ապա թէ ոչ՝ քարամբք քարկոծ հրամայեմ առնել  
զքեզ և բառնալ ի քաղցր կենացու։» Պատասխանի ետ սուրբն

Աստուծոյ և ասէ. «Դիտեն այսուհետեւ, ով արքայ, զի ես ոչ եմ եղեալ ի մտի խմում երկնչել ի սպառնալեաց քոց, և ոչ ունիմ խորհուրդ և առաջարկութիւն կամաց ուրանալ զ՞րիստոսն իմ, և լինել պաշտօնաւար սուտապատիք և խաբեբայ կրօնիցն ձերոց, այլ պատրաստ եմ՝ յօժարական կամք յանձն առնուլ զչարչարանու և զնեղութիւնս վասն անուան ծեռոյ Յիսուսի Քրիստոսի, որ վասն իմ յանձն առ զչարչարանս խաչի և մտհու. արդ մի յապաղեր, այլ զոր ինչ առներոց ես արտ վաղվաղակի»։

Եւ մըմուեալ արքային հրամայեաց բռամբք հարկանել զբերան սրբոյ վկոյին այնքան, մինչև թափել ատամանցն ի նոդաց նորա. և ես տանել զնա առ գատաւորն ասելով. «Քննեա զդա որպէս և կամիս թէ յօրմէ ազգէ է, և վարեսցիս ընդ դմա ըստ հաճոյից քոց»։ Իսկ նորա առեալ տարան զնա ըստ հրամանի ինքնակալին, և ի մտանելոն նորա առ գատաւորն ծանեաւ զնա վաղվաղակի և ասէ. «Ո՞չ դու էիր որ երբեմն եկիր առաջի իմ և ուրացար զ՞րիստոսն քո և զհաւատն հայրենի, և այնր աղաղաւ աղատեցար յառնեն յայնմանէ՝ որում պարտելի զամկս դահեկանացն, և ես ընկալայ զբեզ որպէս զրդի հարազատ և զեղբայր սիրելի, և պատուեալ մեծարեցի արձակելով զբեզ. արդ ուստի դաս, և զի՞նչ է զոր լսեմս զըէն. ծշմարիտ են եթէ սուտ, ասա վաղվաղակի, քանզի ի քէն կամիմ ուսանել զդիսարդն»։ Իսկ պահնչելի այրն Աստուծոյ և մեծ վկայի Քրիստոսի բարձր ձայնիւ սկսաւ առաջի բաղմամբոխ հրապարակին և յոքնախումբ ռամիլին աղաղակել համարձակապէս լի արտասուօք իլուր ամենեցուն, և ասէ. «Քրիստոնեայ եմ ըստ չորհի աւաղանին և ծառայ խաչելոյն Աստուծոյ, և արդ մի լիցի ինձ ուրանալ զնա, այլ խոստովանիմ զնա Աստուած և տէր և թագաւոր, իշխան և փրկիչ, և յանձն առնում զամենայն հարուածս տանջանաց՝ վասն աւմենասուրը անուանն նորա. այլ և խնդութեամբ մեռանիմ՝ զի կացից առաջի նորա զուարթերեսօք, զի թէպէտ և յանցաւոր գտայ առ Տէրն իմ՝ յառաջադոյն առաջի քոյոյդ ատենի,

այլ յուսամ և ակն ունիմ՝ դատանել և առնուլ ի նմանէ զթողութիւն յանցանաց ի ձեռն հեղման արեան խոյ. ահա լուար, ով դատաւոր, զամենայն յինէն ճշմարտութեամբ»:

Ետ պատասխանի դատաւորն և ասէ ցնա. «Ո՛րդեակ իմ, մի ընդդիմանար խրատու իմոյ, յիշեա զդաշինս ուխտին՝ զոր հաստատեցեր առաջի իմոյս ատենի, ես վերստին ընկալայց զքեղ և տաց քեզ դանձս սոկոյ և արծաթոյ՝ առ ի բաւականութիւն պիտայից կենաց անձին քում, և պատուեալ մեծարեսցիս յամեննեցունց ի մէնջ ի մեծամեծաց և ի փոքունց, և լինիս երեւլի ի դրան արքունի. որովհետեւ ընծայեցեր զքեղ միոյն Աստուծոյ, և կամք քո ուրացար զանուն քրիստոնէութեան՝ մերոյս անսալով կրօնից. արդորդեակ, մի փոխելանար և փոխիր յայնմ բարի խորհրդոյն, մատնելով ի կորուստ զհասակ մանկութեան քո» Զայս և որ սոցին նման բանս պատրոզականս խօսէր դատաւորն ի լսելիս սրբոյ վկային, կարծելով հաւաննեցուցանել զնա. իսկ ամենագով սուրբն խցեալ զականջս իւր՝ ամենին ոչ ընդունէր զասացեալսն առ ի նմանէ, այլ միայն համարձակաձայն բարբառեալ առէր. «Ո՞հ դատաւոր, խոստանալով ինձ ոսկի և արծաթ և մեծարանս և պատիւ ընդունէլ յարշքունուս, այդուիկ կամելով հաւաննեցուցանել զիս քոյին կորստական և սուտապատիր բանիցդ, թողուլ զիս հարկեցուցանես զճանապարհն ուղիղ՝ որ տանի ի կեանան յաւիտենից, ուր դանձն անապական է և արքայութիւնն անվախճան, և լսել քոյին մոլար խրատու. վասն որոյ և ես իսկ արտասուեմ զկորուստ անձանց ձերոց, և զլիսաւոր կուրութեան իմանալի աշաց ձերոց. ուստի մնայ և պահի ձեղ հօւրն անշէջ և որդն անքուն, որպէս ասաց Տէրն»: Յայնժամ՝ դարձեալ վկային ոյժ առեալ ի Հոգւոյն սրբայ երդմամբ կամեցաւ հտատատել զբանն, և ասէ. «Երդուեալ իմ յերկինս և յերկիր և յարարիչ նոցին և ի հաստիչ, զի որպէս ոչ է նոցա հնար ելանել ընդ կարդս սահմանի իւրեանց, նմանապէս և ես ոչ ևս քիս փոխելոց յիմոց

բարիոք խորհրդածութեանց. արդ զոր ինչ առնելոց ես  
արա վաղվաղակի, զի ես պատրաստ եմ ի մեռանել որպէս  
ասացի»։ Եւ ամբարիշտ դատաւորն լցեալ ցամամամբ, ետ  
դնա ի ձեռս չարագե դահճացն հարկանել և տանջել դնա  
յերկար։ Խոկ սպասաւորք չարին գանեալ քարամբք գիղակս  
նորա, մինչև ջախջախեալ խորտակեցան մսուրք բերանոյ  
նորա, առ որս վարդատեսակ արիւնն կայլակացեալ հոս  
մամբ ոռոգանէր դերկիրն. և անկեալ կայր առաջի նոցա  
իբրեւ զմեռեալ։ Խոկ նոցա մերկացեալ ի նմանէ զհան-  
դերձիկն զոր ունէր, և առիգածեալ սրբոյն՝ տանէին ի  
բանտն և սպահեին զգուշութեամբ։ Խոկ երանելի վկայն  
Քրիստոսի մտանելով ի բանտն՝ զամենայն գիշերն հանէր  
ի գլուխ յազօթման Աստուծոյ, բերկրալից սրաիւ և ան-  
տրտում ուրախութեամբ գոհանայր ի վերայ անպատում  
պարզեացն Աստուծոյ, որ արժանի արար չարչարիլ վասն  
նորա. ցնծայր և օրհնէր զԱստուած, և այնպէս կայր բա-  
զում չարչարանօք ի խուարչտին բանտին զօրէն փեսայի  
յառագաստի։ Եւ իբրեւ այդ եղեւ, ածեալ լինէր զառա-  
նեաւ սուրբն հանդերձ կապանօք առաջի գատաւորին յա-  
պարանս նորա. Խոկ դատաւորն իբրեւ ետես զբարեյազմ-  
վկայն Քրիստոսի խօսել սկսաւ ցնա և առէ. «Իմաստնա-  
ցար, սրգեակ իմ Թէոդորէ. այժմ գիտեմ զի փոխեալ  
ես ի չար խորհրդոցն զոր ունէիր ի յանցելում աւուրն.  
ահա տեսանես, թէ որչափ դժուարին է նեղութիւնք  
մարմնոյ կամ երկիւղ մահու, վասն որոյ և ես խոկ ապա-  
շաւեմ զերիկեան աւուրն զոր սրամտութեամբ և բարկու-  
թեամբ յանցեայ առ քեզ. և այժմ ամաչեմ ի քէն, և  
աղաշելով իննդրեմ թողուլ հայրական ալեացս զտանջանսն՝  
զոր առ քեզ ներգործեցի. յաղթեալ ի ցասմանէ սրտիս  
ոչ կարացի համբերել քոյոց տիսմար և տղայական բա-  
րուցդ և երիտասարդական համարձակութեանդ։ Արդ է  
բաց գիցես այժմ առ ի քէն զտմարդի և զանօգուտ  
կամսն զոր ընկալար ի ձեռն խրատու քրիստոնէից, քանզի  
գիտեմ ես ամենայն իրօք թէ նոքա հրապուրեցին զքեզ

կալ հակառակ մերոցս կրօնից. արդ լուր ինձ և դարձ վերստին և վայելեացես ի բազում բարութիւնս ի կեանս աշխարհիս այսորիիկ. և ոչ միայն այս, այլ լիցիս հաճոյացեալ յաշս ամենեցուն և սիրեցեալ ի դուռն արքունի. ահա ասացի քեզ մեղմով զամենայն, բայց զօդուտ անձին քո դու քեզէն ընտրեցեաւ:

Իսկ երանելի վկայն Քրիստոսի ասէ ցդատաւորն. «Լուայ զասացեալսդ առ ի քէն զանօդտակարսդ իմ և զանպիտանսդ, որ առ ժամանակ մի է և ապա փութով լուծանի. մի արդեօք ոչ լուար գու յինէն առաջի քո և ամենայն առենիու երեկ յանցելում աւուրն, որպէս երդուայ Աստուծով իմով, ոչ փոխիլ ի հաստատուն յուսոյն իմոյ զոր ունիմ առ Քրիստոս ի մանկութենէ իմմէ. ապա եթէ մոռացեալ իսկ է քո, դարձեալ կրկնեմ և երեքինեմ և զոյն ածեմ ի յիշատակ անդանդաղ և յօժարական կամօք, զի հաւատն իմ և յոյսն զոր ունիմ առ Տէրն իմ՝ անխախտելի է և հաստատուն. զի գիւրին է շարժել կամ փոփոխել լերինս բարձրացեալ» որ կայ հանդէպ մեր, քան թէ յիմոց մտացս փոփոխել և կամ ի բաց կալ ի հաւատոցս և ի յուսոյն որ առ Քրիստոս. արդ գու որպէս և կամիս արագապէս կատարեա զկամս հրամանաց քոյ ի վերայ իմ։ Եւ նոյնժամայն բարձր ձայնիւ գոչեաց փառաւոր և սքանչելի վկայն Քրիստոսի ի լուր ամենեցուն և ասէ. «Քրիստոս Որդի Աստուծոյ, որ ի հայրական ծոցոյ խոնարհեցար առ ազգս մարդկան և առեր մարմին ի սրբոյ կուսէն, ծնար անձառապէս և առանց արատոյ. և զկանխատեսութիւն մարդարէիցն կատարելով եկիր ի Յորդանան, գառնդ Աստուծոյ՝ որ բառնաս զմեղս աշխարհի, և նոյնժամայն տեսեալ ցելեալ զերկինս մեծի Կարապետին քո, և Հոգին Աստուծոյ զի իջանէր ի վերայ փառակցիւ իւրոյ. որ զամենայն յանձն առեր վասն մեր բայց ի մեղաց, և խաչիւ և արեամբ ազատեցեր զմեղ ի ծառայութենէ մեղաց. խոստովանիմ զքեզ Աստուծ կատարեալ մի յերսորդութենէդ, համագոյակից և փառակից,

պատուակից և իշխանակից Հօր և Հոգւոյդ սրբոյ, խոս-  
տովանեա և զիս, Տէր, առաջի Հօր քոյ և հրեշտակաց  
որբոց, որպէս խոստացեր, մի յանարժանութիւնս իմ  
հայեսցիս, ոյլ դժմա յիս, և մի անտես առներ գծառայս  
ըս, և կատարեա զընթացս իմ ըստ կամաց քոց բարեսի-  
րաց, զի զու միայն ևս փառաց և պատուոյ արժանի. և  
քեզ փառք յաւիտեանս, ամէն»:

Իսկ անօրէն դատաւորն ևս առաւել լցեալ սրտմտու-  
թեամբ և բարկութեամբ՝ յարձակեաց ի վերայ սրբոյն  
զողասաւորսն անօրէնութեան, և անտանելի տանջանքը  
չարչարէին զամեներջանիկ նահատակն Քրիստոսի, մինչեւ  
բաղմաց իսկ ասել թէ մեռաւ. և քարչեալ ընդ փողոցամէջ  
բաղաքին՝ ունելով զհերաց գլխոյ, և տարեալ ընկեցին  
զնա ի բանտին. որ և անդ լինէր զաւուքս երիս: Իսկ  
երանեալ վկայն կոչեցեալ զայր ո՞ն քահանայ ծմարտա-  
խօս և իրաւաբան, բարեպաշտօն և երկիւզած յԱստուծոյ,  
որում անուն էր Գէորգէոս, որ իբրև լուսաւ՝ յօժարական  
կամքը ելին առ նա, և առէ սուրբն. «Ո՞հ տէր իմ Գէորգէ-  
ոս, յարուցեալ երթուլյէս ի վանսն հայրապետին մերոյ,  
առ եպիսկոպոսապետն և տէրն իմ Անանիաս, և պատ-  
մեոցես նմա զամենայն անցս աղետաիցս և զկիրս չարչա-  
րանաց անձին իմոյ, և աղաչեա զնա աղօթս առնել ի  
վերայ իմ, թերիս արժանի եղէց առնուլ յանձն զմար-  
տիրոսական նահատակաւթիւն»: Եւ ապա ողջունեալք ի  
միմենց՝ առաքեաց զքահանույն, և ինքն անդէն յարու-  
ցեալ կայզ յազօթս. իսկ նախասացեալ քահանայն եկեալ  
փութանակի առ կաթողիկոսն Հայոց՝ պատմեաց նմա  
զամենայն իրսն սառուդութեամբ: Իսկ նա ըստ ընածին  
բուսոյ բարուցն և ըստ առաքինասէր կամացն զոր ունէր  
առ որս և այրիս և առ անայցելուս, ևս առաւել առ  
այնոսիկ որ վասն հաւատոց արեամբ չափ նահատակէին,  
որպէս և առ սուրբ վիայիւս է տեսանել. զոր իբրև լուսա-  
զասացեալսն առ նա ի քահանայէն վասն սրբոյն՝ յարու-  
ցեալ իսկոյն եմուտ ի սենեակ իւր հանդերձ սուրբ եպիս-

կոպոսօք և ուղղափառ վարդապետօք և ամենայն եկեղեցական ուժատիւն, և անկեալ յերկիր ի վերայ երեսաց իւրեանց՝ ազօթս մատուցանէին առաջի Աստուծոյ հանգերձ ջերմեռանդն արտասառօք զաշս ի յերկինս համբարձեալ յօդնականութիւն զնահատակադիրն կոչէին՝ ապրեցուցանել զծառայն իւր զսուրբն Թէոդորոս, ասելով երգս ինչ ի սաղմոսէն միաբանական ձայնիւ. Աստուծած յօդնել ինձ նայեաց, և Տէր յընկերել ինձ փութա. և դարձեալ Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի. և թէ՝ Տէր լուր ազօթից իմոց, և դարձեալ Բաղում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր։ Եւ անդ կացեալ յազօթս իբրու ժամս երխս, դարձեալ անդրէն վերառաքեն զնախասացեալ քահանայն Դէորդէոս առ քաջամարտիկ վկայն ի բանտին, և բանս բազումն միսիթարականս զինի նորա. և նա յարուցեալ գնաց և պատմեաց զամենայն յորդորական զբանն և զօրինակ համբերութեան զառ ի սրբոյ հայրապետէն ասացեալան. զոր լուեալ սրբոյ վկային ևս առաւել հաստատեալ ի հաւատս անշարժ յուսոյն որ ի Քրիստոս, և քահանային երկրպագեալ սրբոյն՝ դարձաւ անդրէն առ քահանայապետն։ Իոկ կաթուղիկոսին հրամայեալ նոյն քահանայի առնուլ կերակրուր ինչ ի պէտս մարմնոյ երանելոյն՝ տանել ի բանտն, մտեալ ի ներքս առ նա՝ տայր նմա ուտել. զոր առեալ եկեր առաջի նորա. և առաջ յարուցեալ երկրպին միաբան կացին յազօթս և կնքեալ զինքեանս նշանաւ խային նստան. և աստուածուսոյց քահանայն սկսաւ երկրորդել նմա զոր ինչ գրեալ է ի գիրս աստուածայինս, զնահատակութիւնս բազմաշարչար վկայիցն Աստուծոյ, զնեղութիւնս արդարոցն, զհամբերատար ժուժկալութիւնս սրբոցն, և զհամդէս նախամարտիկ արանցն ընտրելոց ի Քրիստոս, զլիկանն, զձազանն, զխաշն, զեղէզն. նաև քարոզէր նմա ի հին և ի նոր կտակարանաց։ Իոկ սուրբն և ամենասուրբն ունկնդրութեամբ լսէր նմա և զուարթութեամբ ուրախանայր, ցանկայր և փափաքէր հասանել երանաւէտ կոչմանն

և անթառամ պատկացն։ Խոկ քահանային համբուրեալ զսուրբն՝ յանձն արարեալ զնա ամրածածուկ աջոյն Աստուծոյ Հօր, և ինքն դարձեալ վերստին առ եղիսկոպոսապեան։ Խոկ կաթուղիկոսին զաւուրս վեց զայս այսպէս նախախնամեալ հոգաբարձութեամբ, առաքելով զքահանայն միշտ առ նա որպէս ցուցաք յառաջադոյն։

Եւ ապա զինի աւուրցն վեցից յղեր դատաւորն ի բանտն առ սուրբն ի պատուաւորաց խրոց ի մեծամեծ աւագանոյն, ի գիտնականացն և յընթերցողացն իւրեանց առասպելաբար ուսմանցն, խօսել ընդ նմա բանս ինչ պատրողականս, թերեւս կարացեն ածել ի հաւան զընտիր նահատակն։ Եւ մտեալ ամպարշտացն առ նա ի բանտին, տային զողջոյնն մահացու և նստէլն առաջի նորա, խօս մել սկսան և ասեն ցնա, «Բնդէր կաս և մնաս ի դմին յամառութեան և նստիս ի խաւարչտին տեղւող»՝ մատնելով զանձն քո ի մահ, անտես առնելով զիեանս քո, վասն ո՞ւմ առնես զայդ և կամ վասն որպէ յուսոյ համբերերես այդպիսի լիանաց և անհանդուրժելի չարչարանաց, լուր մեզ և ընկեա ի քէն զընդունայն խորհուրդու կամաց քոց, և յարուցեալ ուղեկից լեր մեղ, զի զնասցուք առ դիմաւոր մերոյ օրինացն և ընկալցիս բազում ընծայս և պարդես ի նմանէ և ի մէնջ ամենեցուն, և զերծեալ ապրեսցիս ի տանջանացդ յորում կասդ»։ Եւ այսպիսի օրինակաւ բազում բանս հրապուրանաց ասէլն առ սուրբ վկայն խափանել կամելով զնա յառաջի եղեալ ճանապարհէն, այլ նա քանզի աստուածային հրով սիրոյն բորբոքեալ էր՝ ամենելին ոչ այլ ինչ առներ պատասխանի առ նա եկելոցն, բայց միայն զայս բան ասելով, թէ՝ «Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ» ըստ վերստին ծննդեան աւագանին, և ճշմարիտ խօստովանող աստուածութեանն Քրիստոսին է եպիսկոպոսի կարացին շարժել և խախտել զիարձրութիւն հաստատուն հաւատոյ նորա և տկարացան առ ի վանել զամուրս նորա, յարուցեալ այնուհետեւ ամօթալից գնացին ի տեղւողէ անտիւ և Խոկ ի միւտում աւուրն խոր-

հուրդ՝ առեալ գատաւոյն՝ առաքէր առ սուրբն զայլս  
ոմանս յընչաւէտ և ի գոյաւոր իշխանացն՝ քերելով ընդ-  
ինքեանսո ոսկի և արծաթ և հանդերձո աղնիւս և մեծա-  
գինս, և մուեալ դնէին զայն ամենայն առ սոսս սրբոյն, և  
ըստ օրինակի առաջնոցն բանիցն խօսէին առ նա: Յայն-  
ժամ ամենայն երանութեանց արժանաւոր վկայն Քրիս-  
տոսի տեսանէր իմանալի ակամի հոգւոյն զարկուած և  
զփորձանս բանսարկուին, զոր ածէր ի վերայ ինքեան ի  
ձեռն չար սպասաւորացն անօրինին, արհամարհեալ զնոսա-  
ցրուէր և ի բաց մերժէր զպարգևս ընծայից նոցա զոր  
բերեան էին նմա, և թքեալ քամահէր մղելով ի նոսա  
զկորստական ձիրն նոցա. և միայն զայս բան ազազակէր,  
թէ՝ «Քրիստոնեայ եմ, քրիստոնեայ, ինչք ձեր և խոս-  
տումն պարզեաց ձերոց ընդ ձեղ լիցի ի կորուստն յա-  
ւիտենից»:

Եւ իրեւ տեսին զանսասանէլի զանդութիւնն հաւա-  
տոյ նորին, գնացին և նոքա ամօթալից դիմօք զօրէն յա-  
ռաջադպոյն եկելցն: Ապա զկնի աւուրց ութեասանց  
անցանելոյ՝ վաստակեցան պարտեցան չար սպառադէնքն  
մարտնչելով ընդ սրբոյ վկային: Այլ և յետ այսչափ ան-  
տանելի չար և դառն տանջանացն զոր անցուցին անօ-  
րէնքն ընդ սուրբ մարմին երանելոյն, հատին ի վերայ  
նորա զվճիռ մահու այսպիսի օրինակաւ. «Զթէոդորոս այր  
ժամստ և ապարառան՝ ազգաւ և տոհմիւ և քաղաքավա-  
րութեամբ ի գաւառէս Գամբաց, և զկերպարանն և զձե-  
ռնելով զաղբատութեան, չքաւորութեան ազագաւ ի բաց  
կացեալ ի հայրենատուր հաւատոցն և այժմ անդրագար-  
ձեալ պաշտէ զԱստուած ոմն զխաչեան՝ զոր Յիսուսն  
անուանեն, և որ ոչ միով իւիք կարացաք զմիտս նորա  
շընել կամ շարժել յետս՝ յառաջի եղեալ ճանապարհէն,  
ոչ ամենայն մեծութեամբ աշխարհիս և ոչ բնաւ համօրէն  
տանջանարանեօք զոր արկաք ի վերայ նորա. այսուհետե-  
հրամայէ մեր գատողական ատեանս կախել զնա կապա-  
նօք ընդ փայտն մահապարտաց, և քարկոծ առնել ամե-

Նայն բազմութեամբ դշարաբաստ մարմին նորա»։ Յայնժամ  
անօրէն գահինքն ըստ հրամանի դասաւորին եկեալը ի  
բանան առ սուրբն, ոկան ողպամոք բանիոք առել ցերա-  
նելին. «Ճես, ահաւասիկ հատաւ ի վերայ քո վծիո մահու,  
արդ զոր ինչ կամիս և առնելոց եռ՝ ասա մեզ վազվա-  
զակի»։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի ասէ ցնոսա. «Արդ զոր  
յառաջադոյն ասացի ընդ ձեզ և զնոյն գարձեալ վերստին  
առեմ, եթէ բանից ձերոց ամենելին եռ ոչ եմ լսելոց.  
քանզի ի սմին յայսմ գիշերի տեսանէի յանուրջս զծերն  
իմ Քրիստոս ունելով ի ձեռին խրում թագ իմն թազա-  
ւորական և պատկ արքունական. ձայն եղեւ առ իս ասե-  
լով. Թէոգորէ, եկ, առ զբարիսնն կենաց ի ձեռաց  
պսակագուստ, արդ իմ տեսեալ զայն ամենայն՝ ըղձալի  
տենչմամբ իութամ գնալ առ նա, զի ընկալայց զվարձո  
փաստակոց իմոց. Արդ աղաջեմ զձեզ, մի խափան առնեք  
ընթացից իմոց առ ցանկալին անձին իմոյ, և մի կացը  
ներհակ ճանապարհիս՝ որ ի կեանս անապականս կարա-  
պետէ»։ Իսկ նոցա համեալ զնա յարգելարանէն, առեալ  
տանէին ձեռս յետո կապեալս ի տեղի կատարման աս-  
պարիսի նահատակութեանն, և ամենայն բազմութիւնն  
քազաքին Կեսարացւոց ընթացեալ երթային զինի սրբոյն  
ի տեսարանն, և մինչդեռ համեին զնա ընդ դուռն քա-  
զաքին՝ պատահեալ նմա ի ճանապարհի անդ երկրորդ ար-  
քային և ասէ ցնա. «Այլ դու, ընդէր մեռանիս ի տարա-  
պարուոց և ընդ վայր. այժմ առա բան ինչ հայհոյու-  
թեան, և անցեալ գնասցես պաշտելով զոր ինչ և կա-  
մեցիս»։ Իսկ քաջամտրտիկ և անպարտելի զինուորն Քրիս-  
տոսի ամենելին ոչ ետ նմա պատասխանի, այլ ի ձայն  
բարձր աղայակեաց առելով. «Քրիստոս որդի Առուծոյ՝ որ  
ընակեալդ ես ի բարձունո, և անքուն ակն քո զննեալ  
տեսանէ զսիրտ որդւոց մարդկան. որ քննես զգաղտնիս  
խորոց ամենեցուն, ինովեմ ի քէն և աղաջեմ, անքնին և  
ինքնազօր յամենայնի, հայեաց ի նուաստութիւն մարմնոյ  
իմոց և զաներեսյթ զօրութիւն Հոգւոյդ որբոյ առաքեա-

յօգնութիւն տառապեալ անձին իմոյ, և արժանաւորեա  
զանարժանութիւնս իմ հասանել անսահման մեծութեանս  
այսորիկ և գրիլ ի պարս վկայիցն որք հրաւիրեալ են  
յընթրիս անմահ փեսայիդ. և հեղմամբ արեան իմոյ չնորշ  
հեա զթողութիւն յանցանաց իմոց, և քեզ փառք յաւիւ  
տեանս, ամէն»

Սրդ մինչդեռ սուրբ վկայն զայս առանձինն աղօթս  
մատուցանէր Աստուծոյ, յանկարծակի հարեալ դահճին  
զսուրբն՝ մղէր փութացուցանելով զնա ի տեղի նահատա-  
կութեանն, և սուրբն գարձեալ սկսաւ աղօթել այսպէս.  
«Որդի Աստուծոյ և Տէր ամենակալ, փառաւորեալ և հզօր  
յամենայնի, անսահման և անքնին մեծութիւն, զոր ոչ  
արարածոց տանին բնութիւնք և ոչ հրեղինաց ոգիքն  
նկատեն զանակնարկելի կամս աստուածութեան քո, և  
չիք սահման գթութեան և ողորմութեան քո, քանզի ամե-  
նայնի դու ես Տէր՝ որ ի բարձրութիւնս և ի խորութիւնս.  
զի քոյով հրամանաւդ կառավարին արարածք և ակնար-  
կութեամբ քոյով խնամարկին և առկայանան յիւրեանց  
կայանս։ Սրդ ես անարժան ծառայս ոչ անյօյս եղեալ  
յիմմէ փրկութենէ, և ոչ վհատի սիրո իմ յամենապութ-  
ողորմութեանց քոց, զի ամենայն կենցաղական իրաց փո-  
խանակ՝ զքեզ սիրեցի, զքեզ ընտրեցի, և քեզ հաճեցայ  
և ամենայն փափագանօք և բաղձանօք յօժարեցի հասանել  
անմահ բարեաց քոց։ Սրդ որովհետեւ կանգնեցեր զան-  
կեալ և վերածեր ի կեանս անմահս, և կացուցեր զիս ի  
հանդէս վկայական ասպարիսիս, արդ մի ի բացէ առներ  
յինէն զողորմութիւն քո, և մի տար ասլականիչ դայլոյն  
մտանել յանդաստանս քո, զի դու միայն ես փառաց և  
պատույ արժանի. և քեզ փառք յաւիտեանս։ ամէն»

Սրդ մինչդեռ սուրբն զայս աղօթս մատուցանէր Աս-  
տուծոյ՝ յախուռն յարձակմամբ յարեան ի վերայ նորա  
սպասաւորքն անօրէնութեան, և ըմբռնեալ զնա տարան  
ի տեղի կատարմանն մերձ ի փայտն մահու՝ զոր կանգնեալ  
էին ի սպանումն դողոց և աւազակաց ի մէջ բազմակոյտ

Հրապարակին, յորս հաւաքեալ լինէին ի կազմանց կողմանց արանց և կանանց հաւատացելոց և անհաւատից, իբրև զմաներամազ փոշի սքախառն օդով բերեալ լինէին ի տեղեաց տեղեաց ի տեսիլ նահատակութեան սրբոյն։ Ուրախութեամբ ցնծայր և կաքաւելով հրճուէր յանկալին զուարթնոց ի հանդէսն յայն, մարտ եղեալ մաքառէր հոգւովն երիտասարդ մանուկն և փափաքելին լուսերամիցն։ Յանժամ ուժգնակի քարշմամբ բերեալ լինէր ի սպասաւորացն մերձ ի փայտն նահատակն քրիստոպաղ գեաց, և պնդեալ զնա ընդ փայտին յոտից մինչեւ զլանչոն։ Խոկ անօրէն դահիճն մերձ եղեալ առ սուրբն՝ ասէ. «Ասաքանս ինչ հայհոյութեան և ապրեացիս ի մահուանէդ, և յետ այնորիկ երթ արա զկամն հաճոյից քոց»։ Խոկ ջատագովն ճշմարտութեան սուրբ վկայն Քրիստոսի լցեալ զրերան իւր խխով՝ եթուք յերեսս անօրինին, և նա անդրէն դարձեալ անսամօթալար զնոյն բանս խօսեցաւ և ասէ. «Երդուեալ ի կեանս արքային՝ եթէ ոչ լուիցես խրատու իմոյ՝ փութով բառնամ զբեզ ի կենացս»։ Ասէ ցնա սուրբն. «Դառնասցի քեզ աչք արքային քո եթէ ոչ արագապէս կատարեացես զկամն չարութեան քո առ իո»։ Յայնժամ երիցս անիծեալ և թշուառական դահիճն հարեալ ուժգնակի տապարաւ զգագաթն սրբոյն, և նոյնժամայն շեշտակի ճեղբեալ մինչեւ յունկն նորա. և այլ ոմն հարեալ վիմաւ զիմբս աչաց նորա՝ և տեսանողականն կախէր զերեսօք նորա։ Խոկ մեծ վկայն Քրիստոսի, սուրբն Թէոդորոս, ձայն բարձեալ առ նոսա ասելով. «Ներեցէր ինձ սակաւիկ միւ»։ Եւ նորա ունկնդիր եղեալ անսացին՝ կարծելով ժերեսս զզջացաւ վասն սաստիկ հարուածոցն։ Սուրբն ասէ. «Երդմնեցուցանեմ զեեզ ի կեանս արքային ձերզ, զի թոյլ տալով ինսայեսչիք մեալով միւսոյ աչաց իմոց, որպէս զի տեսից զյօշումն և զչարաչար քանցումն մարմնոյ իմոց, և այնու ցնծացեալ ուրախ եղէց ի փրկութեան իմոց զոր տուաւ ինձ ի Տեառնէ Աստուծոյ»։ Խոկ ամպարիշտ դահճացն անարդեցին զերանելեաւն և տսեն, «Մեր կարծէսը

թէ զզջանալով քո դարձցիս ի քոյին յամառութեանցդ, վասն այնօրիկ ներեցաք քեզ»։ Եւ անդէն վերացուցեալ դահճին եհար վաղակաւորաւն զճակատ երանելոյն և ի բաց եհան զսկաւուակն ի գլխոյ անտի, և սուրբ վկայն աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ. «Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, ընկալ զիս որ վասն անուանդ քո մեռուանիմ»։ Եւ նոյնժամայն հանդերձ կապանօքն շրջեցաւ փայտն ընդ արևելս կոյս, քանզի կանգնեալ կայր ընդ հարաւ. ընդ որ հիացեալ զարմանային ի նա ամենեքեան ի վերայ սրանչելեացն եզելոց։ Եւ յորժամ դարձաւ յարելս ամենադով սուրբն՝ յաղօթս եկաց այսպէս. «Դոհանամ զքէն, Տէր Յիսուս Քրիստոս, պիրիչ և ստեղծիչ աշխարհի, որ յազագս դատապարտութեան բանական բնութեանս առաքեցար ի հայրական ծոցոյ ի խնդիր մեղ մոլորելոցս, և զինքնազօր աստուածութիւնդ խոնարհեցուցեր ընդ մահու լծով, և զբազուկ քո զաշխարհակեցոյց տարածեցեր ի վերայ կենդանարմատ փայտին, և ի հարուածոյ տիգին ոչ դարձուցեր զթիկունս քո, և ոչ զկերպարանդ Հօր ի թքոյն և յապտակէնս. արեեր և զբացախն խառնեալ ընդ լեզի և զկողահոս աղբիւր աստուածային արեանդ բացեր լուանալով զվերսն Աղամայ, և զմուրհակս պարտեաց ամենայն մարդկան պատառեցեր ի վերայ խաշին, և աշխարհակեցոյց մահուամբդ քո փրկեցեր զմեղ ի մեռելութենէ մեղաց։ Եւ եթէ անսահման և անկանակ աստուածութիւնդ կրեաց զսյս ամենայն վասն մեր, որչափ ևս առաւել հողեղինի և ընդ մեղօք բնակեալ ընութեանս պարտիմք հեղուկ զարիւնս մեր վասն աստուածային արեանդ, ևս առաւել իմոյ նուաստութեանս, զոր եթէ բիւր և զանազան վիշտք և չարչարանք կրէր յիմում մարմնի, առաւել ևս պիտոյ էր վասն անբաւ բարերարութեանդ քո որ առ իս. դարձեալ թէ ամենայն երկնաւոր խմբաւորութեանցն բարբառն էր ի բերանի իմում՝ իբր արդեօք այնու ամենայնիւ կարէի պատմել զանձառ տնօրէնութիւնդ քո, կամ օրհնութիւն և դոհութիւն ամեռ

նորհնեալ աստուածութեանդ քո վերառաքել, եթէ յորքան  
և յորպիսի անօրէնութենէ հաներ զիս, և յանբաւ և  
յանճառ երանութեան մերձեցուցեր, և արդ այսուհետեւ  
ըստ . . . ։

Եւ մինչդեռ շունչ նորա ի նմա էր, և մատուցանէր  
աղօթս, հարին զնա յամենայն կողմանց սուսերօք և քա-  
րամքը և փայտիւք, և նա ուրախութեամբ աւանդեաց  
զոգին։

Յետ այսորիկ ի ցոլանալ պայծառ լուսոյ ի վերայ  
մարմնոյ սրբոյն՝ յարհաւիրս անկեալ դահճացն՝ խոյս եւ  
տուն անտի, և Շահուղինատին իմացեալ զեղեալսն՝ հրա-  
ման ետ Անանիայի հայրապետի փուլթով բառնալ և թաղել  
զնաւ Եւ զնացեալ բարձին զսուրբն և ամփոփեցին պատ-  
ուսվ յարժանաւոր տեղւոջ. և արար Աստուած բաղում  
սքանչելիս ի գերեզմանի նորա ի վերայ հիւանդաց և ախ-  
տաժետաց։ Եւ եղեւ փառաւոր նահատակութիւն երա-  
նելոյն յամի Տեառն 1204 և ի թուին Հայոց Ոթկ, ի  
մայիսի 18, յաւուր երեքշաբաթի, յեօթներորդ ամի թա-  
գաւորութեան Լևոնի տրքայի Հայոց և յերկրորդ ամի  
Ռուգնատինայ։



մ ապրիլ և օգոստ զննեածքան հայրակ և  
առաջնորդ առա և արձաւութեա ու անվանաց առանք

ու մարտունի և այդ ամս և այս առաջնորդ առ  
այս և պաշտ առ բանակու օրութեա ամբ այս առաջ  
առաջնորդ առ պատահական առ և առ անուայ և պահա

**8.**

**ՏԵՐ ԸՆԹԱՅԻ ՔՐԵՇՆԵՍ ԿԵԶՐՈՒՑԻ**

† սթէ = 1208

**Թ**ուական ՈԾԻ. Ես Գ . . . ս աշակերտ Մարգարէի  
քահանայի միայնաւորի կանգնեցի զխաչս պահապան գե-  
րեզմանի սորտ և եղբօր իմում Առաքելին. աղաչեմ յի-  
շել յաղօթս ձեր . . . զվարդապետս, զՊօզոս, և զԱնդրէաս  
և ծնողսն իմ. և զտէր Առաքելն որ նահատակեցաւ ի  
կեշրոր քաղաքի զանազան տանջանօք:





ՕՒ

9.

ԳԹԻԳԱԲ ԿԵԶՐՈՒՑԻ

† ԱՀԱ—1222

Աստուած ողորմի Գրիգորոյ. ամէն:

Ար նահատակեցաւ ի կեչրոր քաղաքի, որք երկրապատէք Քրիստոսի սուրբ նշանիս՝ յիշեսջիք զմեղ որ կայք առաջի սօրա. Ծուխն Հայոց Ոչն։



10.

ԳՐԻԳՈՐ ՀԵՂԲԵԿԵՑՆ ԽԸՆՔԵՆԵՑԻ

† ԱՀԲ=1223



կնի այսորիկ իբրև ժամանակ ինչ անց  
ցին ի վերայ, այլ զօր ել ի Հոնաց,  
զոր Խուշախն անուանեն. և եկեալ  
ընդ աշխարհն վրաց առ թագաւորն  
Լաշայ, և առ հաղարապետն իւանէ,  
զի տացեն նոցա տեղի ընակութեան,  
և նոքա ծառայեսցեն նոցա միամտու-  
թեամբ: Իսկ նոքա ոչ առին յանձն  
լինել նոցա ասպնջական: Եւ նոքա դէմ եղեալ գնացին  
առ ընակիչսն Դանձակ քաղաքի. և նոքա յօժարութեամբ  
ընկալան, քանզի էին ի մեծ նեղութեան ի զօրացն վրաց,  
որք աւերէին զաշխարհո նոցա, և գերէին զմարդ և զա-  
նասուն, ետուն նոցա տեղի ընակութեան ի սահմանս քա-  
ղաքին. օգնէին և այլ կերակրօք և ըմպելեօք. զի նոքօք  
կայցեն ընդդէմ թագաւորութեանն վրաց: Իսկ զօրքն  
Հոնաց դաղարեալք անդ և դետեղեալք, զօրաժողով եղեւ  
իւանէ և զիմեաց ի վերայ նոցա հպարտութեամբ. մե-  
ծամեծս վրայր ընաջինջ առնել զնոսա և զքաղաքն, ի

բազմութիւն դօրացն յուսացեալ՝ և ոչ յԱստուած, որ տայ  
յաղթութիւն ում և կամիշ իբրև հարան ընդ միմեանս,  
ելին խուժքն հանգստեամբ յորջից իւրեանց, և զվաստա-  
կեալ և զլքեալ զօրսն Վրաց ի բերան սրոյ արկեալ, և  
զբազում ձերբակալ արարեալ, և զմնացորդն փախու-  
ցեալ, և մեծ բեկումն եղև յաւուր յայնմիկ զօրուն քրիս-  
տոնէից, և այնքան թողան ի ձեռանէ Աստուծոյ, մինչ զի  
մի վատ այր զբազում քաջ արս և անուանիս եղեալ ի  
պատերազմունս, իբրև հովիւ դհօտ առաջի անցուցեալ  
բերէին, զի երարձ Տէր զօդնութիւն ի սրոյ նոցա, և ոչ  
ընկալաւ զնոսա ի պատերազմի. բերէին զարս պատուա-  
կանս և վաճառէին ընդ դոյզն հանդերձից կամ՞ ընդ  
կերակրոյ. և Պարսիցն զնեալ զնոսա՝ անհնարին նեղու-  
թեամբ կեղէին զկեանս նոցա. և այնքան պահանջէին ի  
նոցանէ կշիռս սոկոյ և արծաթոյ, մինչև անհնարին լինել  
հատուցանել, և բազումք մեռան անդէն ի բանտի:

Անդ ըմբռնեցան ընդ այլսն և Թրիգոր որդի Հաղ-  
բակայ՝ եղբայր Վասակայ քաջի, և Պապաքն՝ նորուն եղ-  
բօր որդի, զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաքն,  
Մկոտէմ, Հասան զոր Պոօչն կոչէին, արք քաջք և անուա-  
նիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն Տաճկաց:  
ԶՊապաքն սպանին ի պատերազմին, իսկ զԹրիգոր ձերբա-  
կալ արարեալ, նեղէին բազում խօշտանգօք, զի ուրասցի  
զՔրիստոս, և նա ոչ առ յահճն, այլ առաւել ևս անարդէր  
զմոլար օրէնսդիրն նոցա զՄահմետ, և զգարշելի օրէնս  
նոցա, և բարկացեալ նոցա՝ քարշեցին զնա մերկ ի վերայ  
երկրի, և փշով քանցեցին զամենայն մարմինս նոցա. և  
այնքան տանջեցին զնա, մինչև ի գանելն աւանդեաց զո-  
դի իւր, և ընկալաւ ի Քրիստոսէ զվկայական պսակն: Սոքա  
դաւառաւ Խաչենեցիք էին, յերևելի աղքէ, հաւատով  
քրիստոնեայր ուզգափառը, և աղգաւ Հայ:



## II.

### ՍՏԵՓԵՆՈՍ ՎԵՆԵՑՅԵՐ

† 29 = 1257



Թուականին հայոց 22 եկին յարեւլից տաստի մեծ ղանն էր, և ղանի որդիք՝ ամէն գուման մի հեծելով, և մի գումանն էր Լիւ Եւ Են անուանք նոցա այս, առաջին և մեծն ի նոցանէ՝ Հոյլաւու, որ էր եղբայր Մանկուզանին. Երկը բորդ՝ Խուլն, որ և զինքն եղբայր Աստուծոյ ամէր, և ոչ ամաչէր. Երրորդն՝ Բալախէն. չորրորդն՝ Տուտարն. հինգերորդն՝ Թագուղարն. վեցերորդն՝ Ղատա ղանն. եօթներորդն՝ Բօրազանն. և էին սոքա անհնազանդք միմեանց և յոյժ աներկիղք և մարդակերք:

Իսկ դան՝ որ եկին, ամէն կառօք եկին և կառօք արջէին, մինչ զի զլետոն և զբլուրս հարդէին աշխարհաւն

արևելից վասն հեշտ գնալոյ կառացն և սայլիցն իսկ այն գլխաւորն, որ զինքն եղբայր Աստուծոյ ասէր՝ եկն ընդ մէջ երկրին, և կոխեաց անողորմաբար դտառապետ քրիստոնեայոն, և զփայտէ խաչն, ուր և գտանէին ի ճանապարհու և ի լերինս կանգնեալ զամէնն այրէին, և ոչինչ իրօք ոչ յագենային, այլ զվանորայան որ կային յերկիրն, ուր և գտանէին առաւել ես կոխէին, ուտելով և ըմբելով, և զպատռական քահանայան կախէին և ծեծէին անողորմաբար:

Իսկ գլխաւոր մի ի Խուլին հեծելէն գնաց ի վանք մի որ ասի Գերեթին, և էր հայր վանից ալեոր ծեր յոյժ, ընտրեալ, սուրբ և առաքինի և ամենայն վարիւք և բարի գործովք՝ կատարեալ, Ստեփաննոս անուն, և նա յորժամ ետես զգլիսաւոր Տաթարին, որ գնայր առնա ի վանքն էառ գինի ամանով ինչ և զնաց ընդդէմ Տաթրին և բռնեաց տղղու, որպէս սովորութիւն է Տաթարին: Եւ ապա յետ այնորիկ տարեալ ի վանքն, և նստուցեալ հանդերձ այլ հեծելոքն, որ կային զինի գլխաւորին, և զենեաց ոչխար, և երաց այլ գինի, և յաղեցոյց ուտելով և ըմպելով զամէնն մինչ զի ըռին կարէին դադարել ի ձիանն: Եւ յերեկոյն արբեալ գնացին ի տունս իւրեանց, զի հուպ առ վանքն էր տուն Տաթարին: Իսկ յորժամ հասին ի տունս իւրեանց և ննջեցին զգիշերն, ընդ առաւոտն զարթուցեալ՝ տեսին զգլիսաւորն հիւանդյոյժ, և յորժամ հարցին, թէ վասն ինչ պատճառի է հիւանդութիւնդ՝ ասաց գլխաւորն, թէ երէցն դեղեաց զիս յերեկոյն: Եւ էր անմեղ երէցն. բայց վասն խարաբ և յանցագ ուտելոյն և ըմպելոյն իւրեանց այնպէս հանդիպեցաւ:

Եւ առ ժամոյն ուղարկեցին և կապանօք տարան զհրաշալի ծերն՝ զհայրն Ստեփաննոս, և յետ շատ հարց և փորձի և նոցա ոչ աւատալոյ՝ ի չորից կողմանց փայտ ցցեցին, և ողրկեցին անողորմաբար զամպարտն ի յայն բանն, ի գետնոյն բարձր իբրև կանգնաւ չափ, և ապա

Հուր վառեալ ի ներքոյ այրեցին, և խորովեցին զամենայն մարմինն նորա մինչև աւանդեաց զհոգին հրաշալի ծերն Ստեփաննոս Եւ յայտնապէս նշան և սիւն լուսոյ տեսին ի վերայ երանելի հօրն Ստեփաննոսի, որ այնպէս անմեղ և ի զուր նահատակեցաւ և ընդ սրբոց մարտիրոսացն պսակեցաւ:

Իսկ պեղծ և անողորժ գլխաւորն այն զատ ի ցաւէն, որ ունէր հարեալ ի գիւէ, մինչ զի կատաղեալ ուտէր զպիղծ մարմինն իւր, և այնպիսի չարչարանք և դառն հարուածով սատակեցաւ, նոյնպէս և ամենայն բանակն անկան ի չար ախտ, և բազումք սատակեցան ի նոյանէ:





## 12.

ԶԵԼՈՅ ԽԵԽԵՆ ԵՒ ՏԵՐ ԽԸՆԵՆՑ

† օձ = 1261



ոկ զբարեսպաշտ և զառաքինի իշխանն Զալալ  
նեղէր անհնարին կտտանօք, բազում հարկս պա-  
հանչեսպի ի նմանէ՝ առաւել քան զկարն, եղեալ փայտ ի  
պարանոց նորա, և երկաթ՝ յոտս նորա։ Եւ զայս առներ  
ընդ նմա վասն առաւել քրիստոնէութեան նորա, զի  
թշնամիք էին ամենայն Տաճկահաւատքն, որը յորդորէին  
զերդունն ի սպանութիւն նորա, զի ասէին, թէ սա առա-  
ւել թշնամի է գենիս մերոյ և օրինաց. զի և Արդունն  
ևս Տաճկակրօն էր. և առեալ ասրաւ զնա ի Ղազուինն  
ևսկ նա գոհութեամբ տանէր ամենայնի, զի յոյժ տեղեալ  
էր աստուածային դրոց, և պահող, և ազօթական, և  
պարկեշտ ի կերակուր և յըմպելի, և ցանկայր մարտիրո-  
սական մահուան։ Եսկ դուստր Զալալին, Ռուզուքան  
անունն, որ կին լեռալ էր Պօրա նուինին՝ որդւոյ Զարմազուին,  
առաջին գլխաւոսի Թաթարին, գնաց առ Տօղուս Խա-  
թունն՝ կին Հուլաւույին, զի թափեսցէ զհայր իւր ի ձեւ-  
ուաց Արդունին. Եւ գիտացեալ անօրէն Ռոտիկանին՝ առա-  
քեաց վաղվաղակի դահիճո և ի գիշերի ետ սպանանել

զսուբը և զարդար այրն, և երթեալ անօրէն դահճացն՝  
անդամ անդամ յօշեցին զնա ըստ նմանութեան սուրբ  
վկային Յակովբայ, նորին չարչարանացն հաղորդեալ, և  
պսակի նորուն արժանացեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ  
մերոյ:

Այսպէս կատարեցաւ այրն անարատ և աստուածաւ  
պաշտ, զընթացն կատարելով, և զհաւատս պահեալ,  
յԶՓ թուականին հայոց Եւ առաքեաց որդի նորա Աթաւ  
պակն արս հաւատարիմա և Ետ գողանալ զնշարս հօր  
իւրոյ, զի ընկեցեալ կայր ի ջրհոր մի ցամաք, զի պար-  
սիկն որ ի տան իւրում ունէր զնա ի կապանս, տեսեալ  
աստուածայինս ի վերայ նորա, զի իբրեւ սպան զնա,  
իշեալ լոյս սաստիկ ի վերայ, խնամարկեալ ընկէց զնա ի  
ջրհորն, զի յետ աւուրց թաղեսցէ զնա պատուով: Նա  
եցոյց խնդրողացն զմարմինն նորա, և պատմեաց զսքան-  
չելի երեսումն. և նոցա ժողովեալ խնդրութեամբ, և բար-  
ձեալ տարան զնա ի տուն իւր և թաղեցին ի վահքն  
Գանձասար՝ ի գերեզմանս հարց իւրոց: Այլ և բերողք  
նշխարացն տեսին ի ճանապարհի զնոյն տեսիլ լուսոյն ի  
վերայ նշխարացն:





## 13.

ԴՐԻԳՈՐ ԲԵԼՈՒԹԻ, ՍԻՄԵՈՆ ԵՒ ԿՐԵԱՅ

† ԶԼՅ հոռի դ = 1290 փետր. 10 ուր.



ամի ԷՃՂԹ թուականութեանս հայոց  
տումարի ես նուաստ ծառայ ծառայիցն  
Աստուծոյ՝ Դաւիթ երէց, ի քաղաքէս  
Բալուայ, սկիզբն արարից պատմել զանցս  
աղետիցն, որ ի յազդէն Խսմայէլացւոցն  
կրեաց քրիստոսագաւան և քաջ ըաբունաւ  
պետն Դրիգոր ի քաղաքին Խարբերդ. որ  
զշարչարանս և զնահատակութիւնն տանջաւ  
նաց զսրբոյն Դրիգորի Լուսաւորչին և զսրբոյն Ստեփանոսի  
նախավկային բերէր զօրինակ համբերութեամբն իւրովէ  
Այս սուրբ վարդապետս Դրիգոր էր ի քաղաքէն Բալուայ,  
բարեսէր և աստուածապաշտ ծնողաց զաւակ, ուսեալ  
զԱստուածաշունչ դչին և զնոր կտակարանսն և առեալ

զպատիւ և զաստիճան քահանայութեան, հեղ և խոնարհ վարուք, բնակէր ի մէջ աշխարհի, որպէս յանապատիւ:

Եւ կացեալ ընդ ամուսնոյն իւրոյ ամս Յ և փոխեցաւ յաշխարհէս ամուսինն իւր: Թէպէտ օրինօք էր ամուսնացեալ, այլ ունէր ի մտի զբանն առաքելոյն Պօղոսի որ ասէր՝ եթէ «Ունիցիմք կանայս, որպէս թէ չունիցիմք»: Եւ յայնմ հետէ հոգս ի մտի եղեալ՝ ելանէր ի քաղաքէն իւրմէ և գնացեալ գաղարէր յարեւելս՝ յԱյրարատեան գաւառն՝ ի վանքն Վիրապի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ առ հոչակաւոր իմաստասէր վարդապետն հայոց Վարդան, որ և դպրոց կարգեալ էր նորա Խ աշակերտօք, զոր մինն սա դտանէր ի մէջ նոցա՝ փայլեալ շնորհօք և առաքինութեամբ: զի էր երիտասարդ հասակաւ, խարտեաշ և լուսափայլ դիմօք և խոնարհոգի, քաղցր և կակուղ ընութեամբ և սիրուն առ ամենայն ընկերուն իւր:

Եւ կացեալ անդ ամս Զ աքնութեամբ և աշխատութեամբ և մեծաւ ջանիւ նեղէր զանձն իւր յուսումն աստուածային գրոց: Եւ յետ Զ ամին անցելոյ՝ հաճեալ մեծ վարդապետն Վարդան ընդ շնորհս և ընդ գիտութիւն նորա, տուեալ նմա զաստուածային օրհնութիւնն և զգաւազանն վարդապետութեան, դրով և իշխանութեամբ առաքեաց զնա յաշխարհն իւր՝ քարոզել և աւետարանել զբանն կենաց ի լսելիս ամենեցուն:

Եւ եկեալ ի քաղաքն իւր՝ ընդ առաջ ելին նմա միահամուռ ողջադուրելսվ զնա, որպէս զերինաւոր վարդապետն Քրիստոս: Եւ գրով յանձնեցին ի նա զսուրբ Մեսարոպայ ազօթանոցն և կայարանն, որ կայ յանառիկ գվեակն, և զսուրբն Յակոբ օր էր յառաջի նորա: Զոր յանձն էառ և շինեաց վերստին գեկեղեցին և զվանքն, և կացոյց անդ կրօնաւորս և առաջնորդս, և գաղարումն անդ լինէր: Եւ գայր յամենայն ժամ ի քաղաքն և ժողով առնէր յեկեղեցիսն, յորդորէր և հաստատէր զժողովուրդն և զժամատեղիսն, քաջալերէր զքահանայս և մխիթարէր զամենեսեան քաղցրալուր վարդապետութեամբն իւրով, պատուիւ:

րէլ նոցա թսղուկ զմեզս և ատել զալունկութիւն, զագահութիւն, զգողութիւն, զմարդասպանութիւն, զոխակառութիւն, զարբեցութիւն, զստախօսութիւն և զայլն՝ որ սոցին նման են, և ամենեքեան լոօդ և հնազանդ լինէին քաղցրուսոյց վարդապետութեան նորաւ:

Արդ՝ ես ծառայս Աստուծոյ Դաւիթ երեց, քըւեր որդի նորա, աշակերտեի և սպասաւորէի նմա. զորոյ զսրբութեան, զպարկեշտութեան, զառաքինութեան և զհամբերութեան համբաւն բացայայտել կամի՞ լսողացդ։ Աչ թէ այլոց տեսութեամբ և յայլաց լսելով այլ ես ինձէն ականնատես և ականջարուր եղեալ՝ պատմեմ ձեզ զիսոնարա հութեան, զսրբակացութեան, զշնորհացն, զաղբատասիրութեան, զօտարսիրութեան զբարի նախանձն՝ զոր ունէր առ Աստուած և առ մարդիկը՝ որ անդադար խրատու օրինացն ուսուցանէր զամեննեսեան։ Զափւ և զգիշեր յԱստուածաշունչ Գրոց կարդարոյն ոչ խափանէր և զգիշերն՝ առանձնական ազօթիւք, յոտնակացութեամբ, աքնութեամբ և սաղմասերդութեամբ անցուցանէր։ Եւ զկարդ ժամատեղացն անխափան կատարէր ընդ նախատաւորս եկեղեցւոյն։ Եւ ելեալ քարոզէ՞ս ի տեղիս տեղիս և ուսուցանէր զբանն Աստուծոյ՝ բազում համարձակութեամբ։ Եւ գնացեալ յաշնանային ժամանակն ի Խարբերդ-քաղաք՝ քարոզէր և ուսուցանէր նոցա՝ զպահն սուրբ պահել, ի յաղօթոն ճղնել, որ յառաջն թոյլ և ծոյլ էին յաղօթից և ի պահոց և ոչ ունէին զմիաբանութիւն ժամատեղաց, և քահանային և ժողովուրդքն անհնազանդ էին միմեանց. իսկ ի դալ և ի գագարել վարդապետին անդը՝ թսղեալ ամենեցուն զսովուրական գնացս իւրեանց՝ զոր յառաջն ունէին. զի վարդապետն օր ըստ օրէ առողանէր զնոսա ջրովն կենդանարար, որպէս մարդարէն ասէ. «Հնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ»։ Եւ օր ըստ օրէ ժողովէր զնոսա յեւկեցին և պատուիրէր նոցա հաստատուն կալ ի հաւատս և հրաժարիլ ի մարմառաօք հեշտութեանց և յիշել զօր մահուն և զահեղ գատաստանին, զահ դժոխոցն և զփառք

և զհանդիստ արդարոցն։ Եւ զայս լուեալ գառնային աշմենեքեան ի չար գործոց իւրեանց՝ զոր յառաջն սովորեալ էին։

Եւ վարդապետն կեցեալ անդ ամիսս Եւ յօր ըստ օրէ յաւելոյր և աճեցուցանէր զբանն և զսէրն կենաց, և սերմաննէր յերկիր բանաւոր, և բերէր պտուղ հարիւրաւոր, իսկ բանսարկուն ստատանայ, որ ի սկզբանէ ճշմարտութեան հակառակ կայ՝ նախանձեցաւ ընդ բարի գործս նորա, շարժեաց ի չար նախանձ և գրգռեաց զազդն տաճկաց և զպարսկաց՝ որ էին ի քաղաքին, ի մեծամեծաց մինչև ի փոքրունս, ոխացեալ և չարացեալ ընդ միաբանութիւն ժողովրդեանն հետ վարդապետին և ընդ ժրութիւն ազօթից նոցա յեկեղեցին՝ արք և կանայք, և այս եղեւ ոկիպըն և պատճառ չար նախանձու նոցա։

Այր ոմն գլխաւոր ի նետողաց ազգէն և կամ ի Պարսից, ի մեծ տոհմէ, ընակէր ի Խարբերդ քաղաք, իշխեցող աշխարհացս այսոցիկ, անուն նորա՝ Խարպանդ աղայ։ Եւ յայնմ ժամանակին՝ ի ներքին աշխարհացն ի Պըմըշիոյ և ի Հաղպայ ժողովք արարեալ հեծելեաց՝ յարձակեցան ի վերայ աշխարհաց մերոց՝ գերել և տերել իսկ Խարպանդ աղան և այլ գլխաւորքն որ էին ի սահմանս մերոյ երկրին, ժողովք արարեալ զօրաց՝ ելին ընդդէմ նոցա ի պատեշ բազմ։ Եւ նորա յաղթեցին զօրս մեր, աւերեցին զերկիրս մեր և գերեցին և տարան զեղբայր Խարպանդ աղային գերի ի Մոլը քաղաք, և ջանայր գնել զեղբայրին ի գերութենէ։

Եւ յաւուրսն յայնոսիկ նստեալ գլխաւորաց քաղաքին ի գարպաս մի մեծ և խորհուրդ առնէին ընդ միմեանս՝ վասն գնելոյ զեղբայրն ի գերութենէ, և սահմանեալ հարակապահանջութիւն յաշխարհին՝ ժողովել գանձս ի մեծամեծաց մինչև ի փոքրունց և ի տնարդել աղջկանց։ Ի նոյն ժամանակի աստուածասաստ բարկութիւն եկն ի վերայ նոցա, զի ճայթեաց առեղ գարպասուն և կոտորեցաւ ընդ մէջն, և Դ որմունքն յիրեար դիսպան, և առաս-

տաղն նստաւ ի վերայ նոյցաւ Եւ ամենեքեան որ անդ կային՝  
չարաշար մահուամբ սատակեցան՝ ըստ բանի մարգարէին  
որ ասէ. «Դերեզմանք տունը նոցա եղիցին»։ Եւ չար խոր-  
հուրդն զոր խորհեցան՝ խափանեաց Տէր։ Եւ ամենեքեան  
որ լսէին՝ փառաւոր առնէին զԱստուած՝ որ փրկեաց զնոսա  
ի պատուհասէն՝ որ գալոցն էր։ Այս եղեւ ի նոյն ամին,  
յորժամ վարդապետն կայր անդ։ Եւ քրիստոնեայըն որ  
էին անդ՝ առաւել ևս ճգնէին ի պահս և յազօթս, օր  
ըստ օրէ գային առ վարդապետն, և նա բանիւք աստուա-  
ծային օրինացն խրատէր զնոսա, և նորա ևս քան զես  
ուրախանային ի սէրն Աստուծոյ։

Խոկ ազգն տաճկաց և պարսից՝ որ կային անդ՝ և  
խառնիճաղանճ ժողովուրդքն՝ որ կոչին Խօշամատիք և  
շներացն՝ և խորհեցան խորհուրդ չարեաց ի վերայ անմեղ  
քրիստոնէից. և ի գիշերի սպանին շուն մի և զշան դլուխն  
տարեալ եղին ի մեջրապն և զշունն կախեցին ի դուռն  
մզկիթին։ Եւ առաւօտուն միաբանեցան և գոչէին թէ  
«Եկայը տեսէք, ազգ և ազինք և գլխաւորք տաճկաց, թէ  
զինչ են արարեալ ժողովք վարդապետին ի մզկիթն մեր»։  
Եւ դրին խւրեանց արարեալ չարիսն ի վերայ մեր վարդա-  
պետին և անմեղ ժողովրդեանն և բորբոքեցան ի չարու-  
թիւն ի մեծամեծաց մինչև ցիոքուննն։

Եւ վարդապետն յեկեղեցին միաբանեալ զժողովուրդն  
յազօթս, զի էր պահը սուրբ Սարգսին, և յանկարծակի  
հասին շեխսերն և ժողովք Խօշամատեաց և մտեալ ի մէջ  
ժողովոց քրիստոնէիցն՝ արկին ձեռոս ի վարդապետն և  
քարշեցին ի դուրս ի հրապարակին, և նա ամենեին ոչ գի-  
տէր զպատճառնն Յայնժամ հասին զինուորք ի գլխաւորաց  
քաղաքին և տարան զՔրիտոր վարդապետն ի բանտն, և  
ԽԵ այր պատուաւոր ի քաղաքէն եղին ընդ նմա ի բան-  
տի, և էր օր պահոցն չորեքշաբաթի։ Եւ վարդապետն  
քարոզէր ժողովրդեանն ի բանտին զբանն կենաց և միսի-  
թարէր զնոսա և հաստատէր ի սէրն Աստուծոյ։  
Եւ տեսեալ վարդապետն յայնմ գիշերի տեսիլ՝ դկէտ

կատարման իւրոյ, և առաւօտուն ելեալ պատմէր բանատարգել քրիստոնէիցն և ասէր. «Ո՞վ քրիստոսաւէր եղաքարը, յայսմ գիշերի տեսի զհրաժարիլն իմ ի ձէնջ՝ որ յայսմաւուր կատարիմ նահատակութեամբ չարչարանոք մարմարյա և ելանեմ յաշխարհէս. բայց ձեզ և ոչ միոյ վիաս լինի ինչ, բայց երկուց արանցդ՝ որ ինձ սպասաւուրէին և առաջնորդէին ժողովելոցն և միաբանելոցն կոչել յեկեղեցին. Եւ ես ձեզ փոխան եղէց, բայց դուք հաստատուն կացէք ի սէրն Աստուծոյ՝ և յիշեցէք և զմտաւածէք զպատուիրանն և զզօրէնս Աստուծոյ, զոր ուսուցի ձեզ ի տուէ և ի գիշերի. Զի այսօր է իմ տեսանել զձեզ և առաջի ահեղ ատենին Քրիստոսի տեսոյտք զմիմեանս. և մի մոռանայք զիս յազօթից ձերոց, զի սէր ձեր և կատարումն իմ նեղէ զիս»: Եւ զոր սոցին նման է՝ բանիւք աստուածային խրատէր զնոսա, և ամենեքեան լային և յոտն անկանէին օրհնիլ ի նմանէ:

Յայնժամ հասին զինուորքն և բազմութիւն խառնին ճաղանձ ժողովոյն տաճկաց սուսերօք և բրօք և հանին զսուրբն ի բանտէն և զերկուս սպասաւորսն ընդ նմա՝ զՍիմէօն և զիկրակոս՝ և տարան ի քաղաքէն ի դուրս ի յարձակ տեղւոյ՝ ուր ժողովեալ էին բազմութիւնք տաճկաց անթիւ և անհամար:

Եւ զլխաւորք Ժ աթոռով՝ նստեալ ի քաղաքէն և յայլ քաղաքաց եկելոց, զորոց զանուանսն ծանր և անարժան համարեցայ գրել. Եւ կացուցին առաջի ատենին զվարշ դապետն Գրիգոր, և ի ժաման յայնմիկ ամեննեին մին քրիստոնեայ ոչ երեէր. զորս ի բանտի էին արգելեալք և զորս յահէ օրինացն փախուցեալք և թագուցեալք. Յայնժամ հարցանէին զնա ի ձեռն թարգմանին թէ «Զի մտեր դու ի քաղաքս մեր, և ժողովուրդք քո սպանին շուն մի, և ի գիշերի բերեալ կախեցին ի յազօթարանո մեր»: Եւ նա լի սրտիւ և պինդ հաւատով բացեալ զբերանն իւր՝ առնէր նոցա պատասխանի և ասէր. «Ամենայն ազգի և լեզուի ազօթք առ Աստուած ելանէ, և ամենայն տեղիս

ուր և ազօթեն՝ Աստուած անդ կայ՝ Զիարդ իշխէ մարդ այսպիսի չարիս գործել ի տուն ազօթից. զի թէ ես գիւտենայի զգործող չարեացդ այդ՝ ես ինքնին սպանանէի զնաւ. Ես ի քաղաքիս յայսմիկ ծածուկ ինչ ոչ խօսեցայ, այլ յայտնապէս ուսուցի ամենայն մարդոյ զբարիս գործել և ոչ զշարս»։ Ասեն, «Զինչ ուսուցեր»։ Ասէ վարդապետն Գրիգոր. «Սիրել զԱստուած և զընկերն, ի բաց կալ ի շնութենէ, ի գոզութենէ, ի սուտ վկայելոյ, ի մատնութենէ, յարբեցութենէ. զպահքն սուրբ պահել, զաղօթքն առ Աստուած՝ մաքուր մտօք առնել և աշխարհի խազազութիւնն ինդրել»։ Զայս ամենայն և որ սոցին նման են ասէր վարդապետն Գրիգոր ի ձեռն թարդմանին, զոր կացուցին ի միջիւ իսկ թարդմանն ոչ ըզորդ ասէր զբան վարդապետին, այլ զիւն սրեալ ի չարութիւն՝ խօսէր ըստ իւրօւմ չար սրտին. և յարուցանէր զարտմտութիւն բռնաւորացն ի վերայ անմեղ գառինն՝ որ եր ի մէջ արիւնարբու գայլոցն»։

Եւ յետ հարցմանցն և ի յատեան կալոյն՝ ապա յարուցեալ մի ի գլխաւորացն՝ խօսէր՝ ողոքանօք ընդ վարդապետին և ասէր. «Ո՛վ մահրասայ, դարձիր ի հաւատումբ և առ զիրօն առաջնորդին մերոյ. և տամք քեզ պարդես բազումն և իրեւ զառաջնորդն մեր պատուեմք զքեզ»։ Ասէ Գրիգոր. «Անմիտ և ամբարիշտ բռնաւոր, զիւարդ թոզում զիենդամնին Քրիստոս և պաշտեմ զմեռեալ առաջնորդն ձեր, որ կուրացեալ մտօք կորոյս զձեղ ի խաւարային նորա կամն. զիարդ թոզում զլոյսն և գնամ ի խաւարին, դու սպառնաս ինձ տանջանօք երկրաւորիս ելանել ի մարմնոյս՝ որ փոխանակ այս կենացս չարչարանացն համբերողացն պատրաստեալ է Աստուած զանմահական կեանսն և զանվախճան ուրախութիւնսն և զանթառամ պսակն»։ Եւ այլ բազում բանս խօսեցաւ առաջի նոցա համարձակութեամբ».

Յայնժամ ասէ դատաւորն. «Ալւար ծեր, ինայեա ի

ծերութիւնդ քո և ի յալխագ և մի մատներ զանձն քո ի տանջաննն և ի չարչարանս»։ Ասէ Գրիգոր. «Գրեալ կայ ի գրի՝ թէ բաղում նեզութեամբ և չարչարանօք պարտ է մոտանել յայն հանգիստն. զի նեղ է դուռն և դժուարին է ճանապարհն, որ տանի ի կեանս, և լայն է դուռն և արձակ ճանապարհ, որ տանի ի դժոխման. և բաղումք են որ գնան ընդ նա»։ Ասէ դատաւորն. «Ո՞ր մարդիկ գնան ընդ նա»։ Ասէ Գրիգորիս. «Որ հեշտութեան կամաց ծառայեն՝ ուտելով և ըմպելով, ադահելով և արբենալով, չնանալով և պոռնկելով, զրկելով և սպանանելով. այս է հեշտ, և լայն է ճանապարհն՝ որ տանի զմարդիկ ի կորուստ և ի դժոխմա»։

Յայնժամ բարկացեալ մերկացուցին զվարդապետն Գրիգորիս մինչև ի գոտին և տարածեցին ի գետինն փորիվեր և դալար փայտիւ Գ՛ձ անդամ զարկին զփորն և զկուրծան նորա՝ մինչև բացաւ փորն, և երեկը աղիք նորա. և նա ի գոհանալոյ և օրհնելոյ զԱստուած ոչ դադարէր, մինչև զարմանեալ ամենեցուն զհամբերութիւն նորա. զի վառեալ էր ի սէրն Քրիստոսի և զանտանելի տանշանմն ոչինչ համարէր։ Յայնժամ կացուցին առաջի բռնաւորացն զերկուս մանկադպոյն արսն՝ զՄիմէնն և զԿիրակսո՞որ էին նորա յառաջադէմ ի միաբանութիւն եղբարցն և հմուտ յաստուածային օրէնմն. և հարցափորձեալ զնոսա՞րանիւք ողոքանօք և սպառնալեօք կամէին հաւանեցուցանել զնոսա թողուլ զԲրիստոս և դառնալ ի հաւատուիրեանց իսկ նորա ուսեալք ի վարդապետէն՝ պատասխանի ետուն և ասեն. «Ո՞վ անիրաւ դատաւոր, մեք ուրախ եմք յելանել յաշխարհէս և տեսանել զթագաւորն մեր զԲրիստոս և հասանել փառաց սուրբ վկայիցն՝ որ յառաջ քան զմեղ՝ չարչարանաց և տանջանաց համբերեալ մեռան վասն անուանն Քրիստոսի ի ձեռաց ամբարշտացն՝ որ յառաջն քան զձեզդ էին»։

Յայնժամ անողորմ դատաւորն հրամայեաց բրօք չարդել զգուխ և զմարմինս նոցա և յերկիր ընկենուլ

Եւ Գրիգորիս ուժ առեալ՝ ձայնէր առ նոսա և ասէր։  
«Ով որդեակը իմ; մի խափեսցէ զձեղ խոստումն դոյցա և  
մի մեծութիւն աշխարհիս. զի անցաւոր է և սուտ է  
կեսանքս այս. համբերեցէք սակաւիկ մի՛ և տեսանիցէք  
զի՞րիստոս զփառաւորիչն ձեր. և մի զարհուրիք յայնցանէ,  
որ սպանանեն զմարմինս և հոդւոց ձերոց չունին իշխա-  
նութիւն։» Եւ այլ բազում բանս մխիթարականս խօսեցաւ  
վարդապետն՝ մինչև աւանդեցին Կիրակոս և Սիմէոն զհո-  
դիս իւրեանց առ Աստուած։

Յայնժամ հրամայեաց չար դատաւորն բերել զկա-  
պեալսն որ ի բանսին. և խորհէին զնոյն անցս չարչա-  
րանացն առնել ընդ նոսա։ Իսկ գլխաւոր ոմն՝ Թաթղարայ  
անուն, յազդէն նեառղաց, յոտն կացեալ և հեծեալ ձի՝  
զօրօքն իւրովք խլեալ զկապեալսն ի նոցանէ՝ և արձա-  
կեաց զնոսա խաղաղութեամբ և սպառնալով նոցա թէ  
«Զայսպիսի քաղաքացիսն կոտորէք, ես զինչ պատասխանի  
տաց աշխարհակալ խանին՝ որոյ ես ի նմանէ առաքեալ  
եմ աստ պահել զքաղաքո։» Եւ այսպիսի հնարինք թա-  
փեաց զկապեալսն։

Յայնժամ խառնիճաղանճ ժողովուրդն դիմեցին ի  
վերայ վարդապետին՝ քարամբք ջարգել զնաւ Եւ քարն  
գայր ի վերայ նորա որպէս զանձրե, մինչև քարակոյտ  
արարեալ ի վերայ նորա. և այնպիսի տանջանօք աւան-  
դեաց զհոդին իւր առ Աստուած՝ սուրբ վարդապետն  
Գրիգոր։ Իսկ դահճացն կարեալ զդլուխ նորա և կախեցին  
ի դրան քաղաքին՝ զպարսպէն։

Եւ ի լուսանալ շաբաթ առաւօտուն, հրաշալի երե-  
ւումն եղեւ. զի ծագեաց լոյս պայծառ յերկնից ի վերայ  
տեղւոյն՝ յորում չարչարեցան մարմինք նոցա։ Զոր տե-  
սեալ յառաջ աւագ մսւլրին, որ առաջնորդէր նոցա՝ զի  
ելանէր ընդ առաւօտուն ի մինարան՝ կոչել զժողովուրդն  
գալ ի յազօթու։ Եւ տեսեալ զլոյսն ահաւոր ի վերայ  
մարմիոյ վարդապետին Գրիգորի՝ ձայնէր ի բարձրութենէ  
ի քաղաքն. «Արիք, ելէք ի դուրս հայք և տաճիկը և

տեսէք զնուրն իջեալ ի վերայ մահրասային։ Վայ ձեզ որ  
անմեղ և անպարտ չարչարեցէք զնաւ Ահա պատուեաց  
Աստուած և փառաւորեաց զիւր սիրելին և զձեղ յամօթ  
և նախատինս արար։ Խոկ նոցա լուեալ զձայն մուղրոյն՝  
ընթանային ի տեսարանն և ապշեալք լինէին յանդիմա-  
նեալք ի լուսոյն։

Յայնժամ ժողովեալ քրիստոնէիցն հանդերձ քահա-  
նայիւք ի տեղին՝ զի մինչև ցայն ժամն թագուցեալ կային  
քրիստոնեայիցն ի յահէ բռնաւորացն՝ և ի յայտնել լուսոյն՝  
ուրախացան և միաբանեալ բարձին զսուրբ մարմին նորա  
և զգլուխն սազմոսիւք և օրհնութեամբ, թաղեցին ընդ-  
նմա զկիրակոս և զՍիմէռն՝ ի քաղաքէն ի դուրս՝ ի վանքն  
ուղղափառ Յակոբիկ Ասորոց՝ որ կոչի սուրբ Պարսամէի-  
եւ կան գերեզմանք նոցա ուրիշ ուրիշ ի միմեանց և աբե-  
զայք վանայն սպասաւորէն։ սուրբ գերեզմանք նոցա և  
հող գերեզմանաց նոցա առնեն բժշկութիւն ամենայն ցա-  
ւոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ որ է օրհնեալ  
յաւիտեանս ամէն։

Այս եզե ի թուականիս մերոյ ԶԼԹ, յամսեանն հոռի  
Դ և փետրվարի Ժ, օրն շաբաթ, ի տօնի սուրբ Արքունին,  
ի թագաւորութեան Հայոց Հեթմու, ի հայրապետութեան  
Տեառն Ստեփանոսի, ի բռնակալութեան ազգին Նետողաց  
Արզուն խանին ի Թավրէզ։



## 14.

ԿԻՐԵԱՆ ՄԻԾԱՅՑ

† 2 կ—1291

Զնորոգող սուրբ նահատակիս զհոգեորն Պէճոնց յա-  
զօթս յիշեցէք զկիրակոս միակեաց ի Քրիստոս Յիսուս





## I5.

ԶՈՒՅՑ ՄԵՆՈՒԿ

† 1317?

Եւ զարեամբ ներկեալ եղբայրն մեր Զուատն, որ  
ի տարաժամ հասակի սպանաւ յանօրինաց և խառնեցաւ  
ընդ մարտիրոսացն։





## I6.

ԳՐԻԳՈՐ ԵԳԻՍԿԱՊՈՅ ԿԸՐՆԵՑԻ

† 22 արաց իթ = 1321 յունիս 20 ըն.



Նու ժամանակս բանակալութեանն ազ  
գին նետողաց՝ կրկին զօրացեալ  
ազգն իսմայէլեան՝ յարուցանէին հա-  
լածանս ի վերայ ամենայն քրիստո-  
նէից, մանաւանդ ի վերայ աշխարհիս  
Հայոց եւ չար հողմունք հագարային  
հնեցին հանգոյնօրէն ամբարիշտ թա-  
գաւորացն Դեկոսի, Դիոկղետիաննոսի և Յուլիա-  
նոսի Ռւբացողին, քանզի ազգն նետողացն գառնային ի  
դին իսմայէլականաց և յաղադս մարմնականասէր կրօնից  
օրէնսդրին իւրեանց՝ յանձն առնուին դժբիատութիւն և

արբանեկութեամբ նոցին բազում չարիք անցուցանէին յեկեղեցիս քրիստոնէից և զպաշտօնեայս Աստուծոյ խափանել ջանային ի սուրբ եկեղեցեայցն Աստուծոյ եւ ի բազում տեղիս յաւարի առեալ քակէին, զոր Տէր Յիսուս խափանեաց հոգով զօրութեամբ իւրով և խափանեացէ զյարձակումն անօրինացն եւ ըմբռնեալ գքրիստոնեայմն դառն տանջանօք նեղէին ուրանալ զքրիստոսական հաւատն՝ որ ի Հայր և յԱրդի և յամենասուրբ Հոգիւ Դարձեալ տեղի ետուն և եղին հարկս ի վերայ քրիստոնէից և յամենայն գլխոյ առնուեին եօթն ութ դահեկան՝ յամենայն ամի, կամ ուրանալ զՔրիստոս, կամ տալ զդահեկանն՝ որ է խարաճ, զոր ոչ հնաղանդեցան քաջահաւատոքն և արիքն խարեբայ աղանդից նոցա, այլ յանձն առին տալ ըզ հարկն յամենայն ամին եւ մերային սեռս և քրիստոսադաւան քրիստոնեայք մտանէին ի լուծ հարկացն և գոհութեամբ տային զինչս և զստացուածս վաճառէին և տային յամենայն ամի և յերկոտասանամեայ մանկանէ առնուեին զհարկն, և բազումք տարագիրք եղեալ վասն հարկին, իսկ քրիստոնէիցն տալով զայս ամենայն՝ անվրդով կային ի հաւատո՞ որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Եւ արդ մինչ էր թուականն Հայոց Զ և Հ, ամբարիշտ ոմն յաղդէն նետողացն՝ որում անուն Դամուր Տաշասի, այս է ինքն Երկաթաքար, և անօրէնն դայ յաշխարհն Հոռոմոց և տեսեալ զերկիրն Հայոց ղկիլիկիա, զի որպէս ճիւղ մի Ճիթենւոյ մնացեալ դադարէին ի նեղ և անձուկ և ի խորշակահար Երկրին բազում տառապանօք, ի մէջ Երկուց անօրէն աղդացն այն՝ Եղիպտացոց և Արակը լիացոց:

Սրդ անօրէն Երկաթաքարն այն ի նախանձ մտեալ ընդ թագաւորն Հայոց վասն իրիք պատճառանաց և խորհէր աւարի առնուլ զերկիրն խրոխտանօք և մոմուայր իբրև զառիւծ, զօրս ժողովէր, հեծեալս կազմէր, գեսպանս առաքէր խարեբանօք, զի ըմբռնեացէ զթագաւորն Հայոց և զաշխարհս աւարի առցէ։ Զոր իմացեալ զչար խորհուրդն

Նենգաւորին՝ ոչ հնազանդեցան հրամանի նորա. այլ ամբացան յիւրաքանչիւր դպեակս և յամրոցս, ի քարանձաւս և այլ անառ կրանիս եւ անօրէն Երկաթաքարն այն մտեալ Երկիրն Հայոց բազում հետեակօք և ծիաւորօք և բազում աւերմունս արարին և զհրաշալիառ եկեղեցին Եջմիածինն այրեցին հրով, ընդ նմին և զիէս քաղաքին նաև զվաստակ Երկիրն այրեցին և անթիւ սպանին և գերի վարեցին եւ ելեալ անդրէն եկին ի Կեսարիա Կապագովկացւոց և զվասն Սերախայ տոեալ մանրեցին, քանզի Եր կաղմեալ յոսկոյ սրբոյ. և բազում քահանայս ի հռոմառ գաւան քրիստոնէիցն նահատակեցին. զոր Տէր Յիսուս հատուցէ նոյն զհատուցումն նոյն նոյին:

Եւ զայն տեսեալ անօրէն դատաւոր ոմն ի մոյրաքառ զպէն Կարնոյ, քանզի ունէր նախանձ ինչ ընդ եպիսկոպոս քաղաքին և առ քրիստոնեայս, գնաց առ չարիմաց Երկաթաքարն և առեալ հրամանս հրովարտակաց և զինւորս բազումս, գայ ի քաղաքն Կարնոյ։ Եւ ժողովեալ զբազմութիւն քաղաքին հանդերձ եպիսկոպոսաւն Տէր Դրիւ գորիսիւ և զանիրաւ հրովարտակս կարգայր առաջի ամենայն բազմութեանն. և ըմբռնեալ զեպիսկոպոսն, ընդ նմին և զնորին հօրեզրայրն զՏէր Պապն և ըմբռնութեամբ կապեալ թլփատեցին և դարձուցին ի պիղծ հաւատն իւրեանց։ Իսկ սուրբ եպիսկոպոսն առէ թէ «Մերկ եկին ամենայն ծնեալքն յաշխարհս և մերկ ելանելոց եմք յաշխարհէ, ըստ աստուածաբան առաքելոյն Պօղոսի՝ որ ասէ։ Չունիմք քաղաք որ աստէն մնալոց է»։ Իսկ անօրէն զինւորին և դատաւորն կապեցին զեպիսկոպոսն և նստեալ յատենի՝ կացուցին առաջի իւրեանց՝ ի հարցանել և ի դատել զնա, որպէս խաչանողքն զՏէրն։

Ասեն բռնաւորքն, «Ուր է խաչն քո՝ որ կաղմեալ է յոսկոյ, զոր դուք Աստուած պաշտէք և Երկրպագութիւն տայք. որպէս Աստուծոյ»։

Եպիսկոպոսն ասէ. «Մեք պատուէր ունիմք ի ծեառնէ մերմէ ոչ ստանալ ոսկի և ոչ արծաթ, ոչ ակունս, ոչ

մարդարիտս և ոչ հանդերձս վասփուկս. այլ զ՞րիստոսս  
միայն ստանալ, զի ի նորա յարքայութեանն վայելեմք:  
Իսկ խաչն զոր ասեք եթէ Աստուած պաշտէք, ոչ է նա  
մեր Աստուած, այլ զեն Աստուծոյ և մեզ պատճառ երկր-  
պագութեան»:

Յայնժամ լցան ցասմամբ և բարկութեամբ բռնաւ-  
ւորն և դատաւորն և հրամայեաց չար սպասաւորացն՝  
երկաթի բրօք հարկանել զկուրծմն և զթիկունս՝ մինչեւ  
բացան կողք և սակերք թիկանցն՝ զոր ասել ոմանց թէ  
մեռաւ: Իսկ նա ապրեալ լինէր զօրութեամբն Քրիստոսի:

Եւ թողեալ զեպիսկոպոսն կիսամահ անդէն ի տեղին,  
դիմեցին առ հասարակ անօրէնք քաղաքին բազում ամբու-  
խիւ ի վերայ եկեղեցոյ եպիսկոպոսին՝ որ յանուն սրբոյ  
Կարապետին. և զսուրբ սեղանն՝ յորմէ գողան հրեշտակըն,  
մանրեալ խորտակեցին և զսպաս սրբութեանն և զսուրբ  
Աւետարանն հանդերձ հին և նոր կտակարանօքն յափշ-  
տակեցին ի տունս իւրեանց ի վերայ եկեղեցւոյն: Ապա  
յայնժամ անօրէնքն ի խորհուրդ մտեալ զի առաքեցեն  
ի գպրաց իւրեանց և յաւագաց նոցա՝ զի գաւաճանոււ-  
թեամբ առ իւրեանց կրօնս դարձուցեն. դանձո ցուցա-  
նէին և խոստանային. գութս ցուցանէին մարդահաճու-  
թեամբ ըստ՝ օրինի մարդարէին Սարակինոսաց: Իսկ երա-  
նելի եպիսկոպոսն առ ոչինչ համարելով զպարգևս նոցա  
և զմեծութիւնս զոր խոստանային և ոչ զգառն տանջանսն  
զոր կտանօք չարչարէին՝ ասելով զբանս սուրբ առաքելոյն  
թէ՝ «Յոյս իմ ի Քրիստոսէ և ես պատրաստ եմ ի մեռա-  
նել վասն անուանն Քրիստոսի»:

Յայնժամ հրամայեաց անօրէն բռնաւորն հանդերձ  
դատաւորաւն անիրաւի պիղծ գահճացն՝ զի սրով ճեղ-  
քեցեն զչիլս երկուց ծնկացն և աղիւն լուսին զվերսն,  
նոյնակս զներբանս ոտիցն. և այնպէս սրբեալ կայր. բա-  
զում ժամս անմռունչ ի բազում ցաւոց՝ զոր իմացեալ  
անօրինացն թէ մեռաւ:

Ապա առեալ տարան ի տուն մի այլազգւոյ և վստա-

հայուցին առ ի պահել զնաւ Խսկ նա զօրութեամբն Քրիստոսի կայր կենդանիւ Ասէ այրն այն. «Քրիստոնէից եպիսկոպոս, բերից ջուր, զի արբցես»: Եւ նա ասէ. «Ոչ»:

Ասէ բանտապեան իբրև մարդասիրութիւն ցուցանելով. «Ճաց քեզ սակաւիկ մի կերակուր. զի այս քանի աւուրք են անսուազ կաս»:

Ասէ եպիսկոպոսն. «Կերակուր չէ ինչ պիտոյ, այլ ունիմ խնդիրս ի քէն, զի տացես ինձ սակաւիկ մի քարտէզ»: Եւ նորա բերեալ ետ ցեղիսկոպոսն. և առեալ մուր գրեաց ի ծածուկ առ քահանայս քաղաքին, զի տացեն մասն զի հազորդեսցի. ասելով թէ՝ «Իմ կերակուրն այն է»: Եւ առեալ տարան դժուղթն առ քահանայսն գաղտութեացին ի ձեռն պատանոյ միոյ և առեալ գոհացաւ և ճաշակեաց և համբարձեալ դձեռու իւր յերկինս՝ ասէ. «Գոհանամ զքէն Տէր»: Եւ զաւուրս քսան ոչ ճաշակեաց և ոչ էարք ջուր. այլ կերակուր և ըմպելի նորա չարչարանէքն եղեն. զի կերակրեալ լինէր նա ի չնորհացն Քրիստոսի:

Խսկ երանելի եպիսկոպոսն յայսպիսի մրցմունս և ի չարչարանս կայր քաջ հովիւն և զինւորն Քրիստոսի Տէր Դրիգորիոս համանուն իւր նմանին մենամարտիկ եղեալ ի մեծ պատերազմին ասպարիսի անօրինացն և ոչ ետ գերել զքաղաքն զայն, նա ևս առաւել զբազում տեղիս, այլ յաղթեաց զօրութեամբն Քրիստոսի Բելիարայ և զօրաց նորա. զի եթէ գտեալ էր տեղի չարն այն և քրիստոսաւտեաց գատաւորն, բազում չար խորհուրդս համբարեալ ունէին վարդապետաւն իւրեանց սատանայիւ, զի դքրիստոնեայս քաղաքին հրապուրէին յիւրեանց աղճատելի կրօնաշատարձեալ զոր օրինակ ի ճակատոյն պատերազմին Թողիաթու Դաւիթ մարդարէն զդիմի կալաւ երիս քարաւն հեղղաղատի և եհար զԹողիաթ և երարձ զնախատինս Խորայէլի, նմանապէս երանելի սուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս յերիս ահաւոր անուն յուսալով առաքեցաւ ընդդէմ աներեզյթ Գողիաթայ և ընդդիմացաւ անօրէն բռնաւորին

և դատաւորին, և եբարձ զնալսատինս հանուրց քրիստոնէից. քանզի ամենայն քահանայք քաղաքին և ճանաչ քրիստոնեային փախեալ կային ի մեծ վտանգէն ահիւ. զի հարին զհովիւն և հօան ցրուեցան: Յայնժամ հատին վճիռ ի վերայ նորա, զի սրով սպանցեն ղերանելին:

Ապա կապեցին կրկին կապանօք և տարան ի տեղի կատարմանն և նորա հայեցեալ այսր անգր և ոչ զոք տեսանէր ի քրիստոնէիցն. քանզի ամենեքեան ահիւ մեծաւ փախուցեալ կային: Ապա կնքեալ զինքն խաչիւն Քրիստոսի՝ յանձն արարեալ զհօտն իւր սեփհական ի ձեռն Տեառն, եկաց յազօթս ի սրտի իւրամ և ասէ. «Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, որ յազագս մեր հասարակաց բնութեանս խոնարհեցար յերկիր և առեր մարմին ի սուրբ կուսէն Մարիամայ՝ կրելով զմեր բնութիւնս բայց ի մեղաց, խաչեցար և եղար ի գերեզմանի և յարեար ի մեռելոց և համբարձար առ Հայր, ընկալ զհոգի ծառայիս քո Գրիգորիսի և խառնեան զարիւն իմ՝ որ վասն քո հեղու, ընդ սուրբ արեան վկայից քոց և չնորհեան եկեղեցեաց քրիստոնէից անդորրութիւն և երկրպագուաց սրբոյ երրորդութեանդ կեանս խաղաղականս ի կրկին ներհանկաց. հայրապետին մերոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց՝ համառօտել զբանն ծշմարտութեան, քահանայից՝ կատարողաց անմահ զենման պատարագին՝ մաքուր հոգով սպասուորել կենաց հացին, բարեպաշտ թագաւորաց և իշխանաց քրիստոնէից՝ յաղթող լինել ի պատերազմունս բարբարոսաց և համօրէն ամենայն հաւատացելոց՝ յիւրաքանչիւր վտանգից փրկութիւնն, ծառայից և գերեաց ազատութիւն և անմեղ արեանց դադարումն»: Եւ ապա խոնարհեցոյց զպարանոցն, և անօրէն դահիճն եհատ սուսերտ զգլուխ նորա՝ սուրբ և ընտրեալ նոր մարտիրոսին, արացի ի՛թ, յաւուր շաբաթի:


Եւ կին մի բարեպաշտ ձգեալ զվարշամակ գլխոյն առաջի սրբոյն և զարիւնն ոչ եթող հեղուլ յերկիր. այլ ամենայն մաքրեալ զկաթուած արեանն և առեալ տարաւ

ի տուն իւր մեծաւ յուսով։ Եւ հրամայեաց անօրէն բռնաւորն՝ զի զգուշութեամբ պահեսցեն զմարմինն, զի մի եկեալ ի դիշերի գողանայցեն հաւատացեալքն և զորս ըմբռնեսցեն, պատուհասակոծ արացեն, զի անդէն ի տեղւոյն կացցէ լինել կերակուր գաղանաց։

Իսկ յերրորդում դիշերի՝ մինչ պահէին պահապանկն զմարմին սրբոյն, էջ լոյս յերկնից ի վերայ պատուական մարմնոյն՝ զոր տեսեալ բազմութեան արանց հաւատացեւ լոյն և անհաւատիցն, տային փառս Աստուծոյ։

Եւ ապա հրաման տուեալ անօրէն դատաւորն՝ զի առնուն քրիստոնեայցն և ըստ օրինացն պահեսցեն զերկնային դանձն, զոր իբրև լուան քահանայցն և ժողովուրդքն, առ հասարակ ժողովեցան և առեալ զմարմինն տարան հանգուցին ի տաճար սրբոյն Սարգսի զօրավարին։

Ապա անօրէն դատաւորն ըմբռնեալ զքրիստոնեայմն և պատուհասակոծ արարին զբաղումս և առեալ զմարմին երանելոյն, տարան ընկեցին ի տեղի կատարմանն՝ խնդրեւ լով ի քրիստոնէիցն գանձա՝ մինչև տացեն զինդրելին իւրեանց։ Եւ ապա ետուն հրաման երթալ և առնուլ զմարմին սրբոյն, և եղին ի գերեզմանի ի սուրբ տաճարն որ յանունն սուրբ Կարապետին և սուրբ Գրիգոր Լուսաւորչին՝ մեծաւ պատուով ի փառս Քրիստոսի Աստուծոյ։





## ԵՇ.

ԸՄԵՆՑԻՑԻ ԳԵՐՁԱՆՑԻ

† 229=1335 մարտ 10, ուրա



Տրանելիս այս էր ի գաւառուն Դերջանու<sup>ւ</sup>  
ի գեղջէն Կառնըբերդակ՝ այր աշ-  
խարհիկ և երկրագործ, գեղեցիկ  
դիմօք և վայելուչ հասակաւ, ուժեղ  
և զօրաւոր մարմնով։ Եւ ինքն էր  
բարեպաշտ և երկիւզած յԱստուծոյ  
և բարի ծնողաց զաւակ, անուն  
հօր նորա էր թիմեր, և մօրն Զա-  
մէնտիկին։

Սա ունէր այլազգւոյ ումեմն սակաւ ինչ պարտու և  
նա եկեալ նեղէր զսուրբն, և զգրաստն բռնութեամբ քար-  
շեալ տանէր իբրև գրաւական։ Ասէ Ամէնաւագ ցեղայր  
իւր. «Մի թողուր տանել զգաստն, քեզ լիցի քան թէ այ-  
լազգւոյն»։ Ասէ եղբայրն. «Ոչ է ինձ պիտոյ»։ Եւ բարկա-

յեալ Ամէնաւագն՝ ասէ. «Ո՞րպիսի քրիստոնէութիւն է այդ՝ ես ոչ գիտեմ»:

Յայնժամ ասէ այլազգին ցԱմէնաւագն. «Ահա ոչ հաճեցար դու ընդ քրիստոնէութիւն, ապա ընկալար զայշազգութիւն»: Եւ կացին վկայը թէ ուրացաւ զՔրիստոս Զայս լուեալ երկեաւ և փախուցեալ թաքեաւ ժամանակս ինչ, և դարձեալ եկն ի գիւղն իւր Կառնբերդակ, և եկաց անդ աւուրս ինչ Եւ տեսեալ թէ այլազգիք ոչ դադարին ի խնդրելոյ՝ և ինքն ոչ կարէ մնալ թաքուն, գնաց առ քահանայն և խոստովան եղեւ զմեղս իւր, և դաւանեալ զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ, հազորդեցաւ ի մարմար և յարենէն Քրիստոսի, և զինեալ զինքն հոգեոր զինով պատրաստ եղեւ ի պատերազմ:

Ազգ եղեւ իշխանին՝ որոյ անուն էր Ամիրմահմուտ, և դատաւորին՝ որ կոչէր Ամիրհասան՝ որ ծարաւի էր արեան քրիստոնէից, և առաքեալ զօրականս և տարան ի գեղաքաղաքն և կացուցին յատեան առաջի իշխանին: Ասէ իշխանն. «Դու ընկալեալ ես զայլազգութիւն»: Եւ նա ասէ. «Ես քրիստոնեայ եմ»: Եւ վկայըն ասէին թէ՝ ուրացաւ զՔրիստոս:

Յայնժամ իշխանն առաքեաց առ դատաւորն. և նա ասէ. «Հաստատուն իցես ի խոստման քում»: Ասէ սուրբն. «Ոչ գիտեմ զինչ իցէ խոստումն իմ»: Ասէ դատաւորն. «Յանձն առեալ ես ընդունիլ զայլազգութիւն»: Եւ նա ասէ. «Հայ եմ ազգաւ և հաւատով քրիստոնեայ»: Եւ հրամայեաց և արկին ի բանտ. և զաւուրս երկուս ոչ ետուն նմա հաց և ջուր, և կայր անդադար յաղօթմ:

Եւ դարձեալ՝ յետ երկուց աւուրց կոշեաց զնա դատաւորն, և ասէ. «Ուրացիր զՔրիստոս, ապա թէ ոչ սպանանել տամ զքեզ և քարկոծել»: Եւ նա ասէ. «Ամենայն ազգն իմ քրիստոնեայ է, և ես զիմ հօրն և զմօրն հաւատոն ունիմ և քրիստոնեայ եմ»: Ասէ դատաւորն. «Դու դարձեալ ես յայլազգութիւն և ընդէր քրիստոնեայ կեաս»: Ասէ վկայըն Քրիստոսի. «Ես հայ եմ. զՀայըն հաւատամ և

զմրդին խոստովանիմ»։ Յայնժամ ասէ դատաւորն. «Հայն հոյեաց, ընդէր լսէք, խցէք զականջս ձեր և հարէք»։ Եւ ամբոխն ազաղակէք. «Հրաման է իշխանին՝ զի մահու մեռանիցի»։ և այլք ասէին թէ «Ուրացաւ զՔրիստոս առաջի իշխանին»։ և ջանային խախտել ի հաւատոցն Քրիստոսի։

Եւ դարձեալ ասէ դատաւորն. «Ուրացիք զՔրիստոս զի ապրեսցիս»։ և բազում պարգևս խոստանայք՝ երիվար, արծաթ և ոսկի և հանդերձու եւ այլազգիքն յամենայն կողմանէ խթէին և ասէին. «Միանդամ ասա դառնամ և ապրեաց. և յետոյ գքո հաւատոն պաշտեսչիր»։ Եւ բազում քաղցր և պատրողական բանիւք ջանային մօլորեցուցանել ի հաւատոցն Քրիստոսի։

Ասէ Ամենաւագ. «ԶՔրիստոս Աստուած պաշտեմ, զերս րորդութիւնն և զմի Աստուածութիւնն հաւատամ»։ Եւ յորժամ լուան զանունն Քրիստոսի, ամենէքեան վկայէին թէ՝ մահու արժանի է զի հայնոյեաց. և յորժամ դատաւորն վճռեաց թէ մոհապարտ է, յարուցեալ Ամենաւագն համբուրեաց զվկայսն և ասէ. «Ապանէք»։ Եւ պատեալ ամբոխն շուրջանակի՝ կալեալք զհերացն և զհանդերձիցն հարկանէին մեղմագոյն բռամք՝ և տանէին ի տեղի սպանմանն, զի յերկիւղէն զարհուրեալ ուրասցի. և զհանդերձն իւր զգլուսն արկանէին՝ և դարձեալ ազաղակէին առ դատաւորն և առ մեծամեծոն և ասէին. «Դարձաւ յայլազգութիւն. մի հարկանէք»։

Եւ ընթացեալ դատաւորն մերձ՝ ասէ. «Հաւատան և դառնամ յայլազգութիւն»։ Եւ ծառայն Քրիստոսի ազաղակեաց. «Քրիստոնեայ եմ և զՔրիստոս Աստուած հաւատամ»։ Եւ բարկացեալ դատաւորն խնդրեաց քար, և եհար ուժգին զգլուխն, և ասէ ամենեցուն. «Քարկոծեցէք», և սկսան քարկոծել. և ոմանք դաշնակաւ խոցեցին զկողմն. և այլ ոմն եհար ուժգին զգլուխն երկաթի ուռամբ և եհեղ զուղեղ գլխոյն. և ամենայն բազմութիւնն քարաձիգ լինէին՝ մինչեւ ծածկեցաւ մարմինն ի քարանցն։ Եւ այսպէս ճշմարիտ խոստովանութեամբ աւանդեաց զհոգին իւր առ

Աստուած՝ մարտի ժ, յուրը աթի օր՝ ի ժամ՝ խաչելութեանն  
Քրիստոսի և մինչև յիններորդ ժամն քարկոծեալ եղեւ:

Եւ հանեալ անտի մերկացուցին գհանդերձն և կապեալ պարան յոտս՝ քարշել տային քրիստոնէիցն բռնութեամբ յերկիր ի վերայ երեսաց. և ամբոխն զկնի ընթանային և ամենեքեան հարկանէին զմեռեալ մարմինն և «մեզ մասն լիցի» ասէին, որպէս ասէ Տէրն. «Եկեսցէ ժամանակ որ սպանանիցեն ի ձէնջ՝ համարիցին պաշտօն մատուցանել Աստուծոյ»: Որ և կատարեցաւ այս առ սուրբ վկայն Քրիստոսի Ամէնաւագ:

Եւ զերիս աւուրս կացեալ անթաղ՝ գաղանք կամ թուզունք ոչ մերձեցան առ սուրբ մարմինն. և այլազգիք կալեալ զշունսն՝ տանէին ի վերայ մարմնոյն, և տեսեալ զուրբը մարմինն յետս վազէին. և ոչ բնաւ նեխեցաւ՝ այլ բուրէր զանուշահոտութիւն: Եւ լոյս պայծառ ծագեցաւ ի գիշերին, և իրրե զամբար վառէր ի վերայ մարմնոյն. և ձայն երգոց և պաշտամանց լսէին իրրե զքահանայից: Եւ տեսեալ այլազգեցն՝ կարծելով թէ քահանայը երթեալ գիշերի՝ զի գաղտաբար գողասցին և թաղեսցեն, ընթացան առ մարմինն՝ զի կալցեն զքահանայսն, և ոչ զոք տեսին:

Եւ յետ երից աւուրց՝ յաւուր կիւրակէի՝ երթեալ հաւատացեալքն առին հրաման յիշսանէն և ի դատաւորէն՝ և եղին պատուով ի գերեզմանի: Եւ այս եղեւ ի թուին Հայոց եօթն հարիւր և ութսուն և չորս. յորում ժամանակի Յովհաննէս վարդապետ՝ այր բարեկրօն՝ դտեալ ի գաւառն՝ Դերջան՝ ականատես և ականջալուր լինելով գրեալ է զհանդէս վկայութեան սուրբ նահատակին: Եւ Կարապետ գրիչ անցուցեալ է ի կարգս գրչագիր Յայսամաւուրաց այնր ժամանակի. յորմէ բաց ի յառաջաբանութենէն որ սկսանի՝ «Հուր է սէրն Քրիստոսի և յոգիս մաքուրս բորբոքի», զայն ամենայն գրեթէ բառ առ բառ արձանագրեցաք աստ՝ ի փառս Քրիստոսի:



## 18.

Կիրակոս Վըբարգես

† 29.1. = 1348

Սայս է հանդիստ Կիրակոս վարդապետին, որ նաւ  
հատակեցաւ յանօրինաց. Յիշեցէք ի Քրիստոս. Ծուխն  
ԶԴէ դրեցաւ:





## Թ. 19.

### ԱՐՔԻՍ ՆԵՇԵՑՆ

ԺԴ. Դար

Չոռը և զանարատ զխաչս աստուածընկալ՝ որ  
քեւուեալ ի սմա անմահ մեռեալ Տէրն մեր Քրիստոս՝ որ  
մահուամբն իւրով անմահացոյց զմահացեալքս, արդ ես  
կազերս որդի Մեսնի կանդնեցի զսա կարողութեամբ բեռ  
ոին սորա յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ևս առաւել  
արիւնաթաթաւ . . . ա Սարգսի՝ որ յանօրէն թուրքաց  
նահատակ եղեւ յանմարդաձայն տեղիս՝ զօր ընդ ստիռք  
դիղաշխարհաւն դրելով զարեգակնանման եղբայրն իմ զոր  
դտի ի խորագոյն հորի քարաթաղ արարած. ի մաղորտնո  
արենաթաթախ մարմնոյն ոչ կարէի ծանել զնա. բազում  
աշխատութեամբ բերեալ եղի յայսմն տեղի. աղաչեմ յիւ  
շեցէք:





## 20.

ՎԵՐԵԿ ԵՊԻՍԿՈՊԱՄ ԲԺՇՈՑ

† Պ. 9 = 1387

Պաշտրեցին զօրքն Լանկթամուրայ և զԲջնի. և առաքալ զայն՝ կալան զբնակիչսն, և ստիպեցին զնոսա յուրացութիւն. և յընդդէմ դառնալ նոցա՝ զոմանս սրախող խող արարին, և զոմանս յերկիր բեեռեցին ցցովք. զոմանս կախեցին զլխիվայր, և զոմանս կապեցին ընդ փայտո և ընդ ծառս. սպանին չարաչար և զեպիսկոպոս քաղաքին՝ զոր վանակ կոչէին:





## 21.

ԱՏԵՓԵՆՈՍ ԵՐԵՎԱՊԻՍԿՈՎՈՍ ՍԵԲՈՒՑԻՑ

† Պ.Զ=1387



Ամի Պ.Զ թուականին Հայոց՝ այր ոմն  
ժանու և չարաբարոյ, գոռող և արիւ-  
նարբու, խիստ և գագանամիտ, անուն  
Բուրհանադին, որ էր ինքն դանիշման և  
զագի այլազգեացն՝ և եղե ի չար բարուցն  
և ի խիստ մտացն արբանեակն սատանայի  
և որդին կորսուեան՝ զագի Բուրհանադինն  
այն, որ գլուխ ամբարձ, եսպան զտէրն Սե-  
բաստիոյ և յինքն կորզեաց զիշխանութիւն նորա, և նստաւ  
սուլտան Սեբաստիոյ:

Եւ զի էր այրն յանդուգն և չարամիտ, որոյ ոչ կա-  
րացեալ տանել զօրացն խստասրտութեան և ամբարտա-  
ւանութեան նորա՝ վասն որոյ խորհեցան բառնալ զնա ի

միջոյ. զոր չարք ոմանք ազդեցին նմա, և նա կալեալ զշաւ  
րախօսան զայնոսիկ՝ եսպան անձինս ԺԴ: Եւ ապա ազդեց  
ցաւ նմա՝ թէ և եպիսկոպոսն սուրբ Նշանի վանաց՝ տէր  
Ատեհանսօն՝ նոյն խորհրդոցն խորհրդակից եղեալ է: Եւ  
նա արձակեաց արս խիստո և ժանտաբարոյս՝ տանել զեւ  
պիսկոպոսն ամենայն ուխտիւն առաջի նորա:

Եւ ի գալ գժնեայ կոչողացն ի տանել զեպիսկոպոսն  
ամենայն ուխտիւն, իսկ եպիսկոպոսն զայլ կրօնաւորսն  
աղաչանօք և կաշառօք զոր ետ զօրականացն՝ ետ արձակել  
և թողուլ ի վանան: Եւ ինքն առեալ ընդ իւր Բ ծերագոյն աբեղայ, որոց անուանքն՝ միոյն Աեզրեստրոս և  
միւսոյն թորոս, և գնացեալ առաջի գոռոզին վատահ և  
համարձակ, ոչինչ գիտելով խիղճ զանձնէ՝ զի անմեղ էր:

Եւ էր զադին հեռի ի քաղաքէն, իշեալ զօրօք իւր  
րովք ի լեառն Աղջարու ի հովանոց վասն ամառնային տօս  
թոյն: Եւ անդանօր տարան զեպիսկոպոսն առաջի պղծոյն.  
զոր հարցաքննեալ՝ և նա ուղիղ տայր զպատասխանին  
անխիղճ մտօք: Եւ զադին ոչ հաւատայր նմա, այլ հարկ  
ի վերայ եղեալ թէ ուրանան դՔրիստոս և ազատեսցին ի  
սպանմանէն: Եւ նոքա հաստատուն յուսով պինդ կացին  
ի գաւանութիւն հաւատոցն Քրիստոսի և խոստովան եղեն  
զանուն ամենասուրբ Երրորդութեանն՝ եպիսկոպոսն և  
աբեղայրն, ասելով այսպէս. «Հաւատամիք ի Հայր և յՈրդի  
և յամենասուրբ Հոգին՝ մի աստուածութիւն՝ Երեք ան-  
ձինք և մի բնութիւն: Խոստովանիմք և զՈրդին Աստուծոյ  
մարդ եղեալ ի սուրբ կուսէն Մարիամայ՝ կամաւ Հօր և  
հաճութեամբ Հոգեոյն Սրբոյ. աւետեօք հրեշտակապետին  
Գարբիէլի յղացաւ Բանն Աստուած յարգանդի կուսին, և  
ծնաւ ի նմանէ Աստուած և Որդի Աստուծոյ՝ մարդ և  
որդի մարդոյ: Հաւատամիք և զնոյն խաչեալ և մեռեալ,  
թաղեալ և յարտուցեալ վասն մերոյ փրկութեան, նոյն  
ինքն յերկինս համբարձեալ և ընդ աջմէ Հօր նստեալ: Եւ  
նա է գատաւոր կենդանեաց և մեռելոց ի միւս անդամ  
գալստեանն իւրոյ յերկնից փառօք Հօր և հրեշտակաց

սրբոց։ Ի վերայ այսր դաւանութեան՝ մեռանելն մեր շահ՝  
է և կեանք՝ Յիսուս Քրիստոս՝ հաւատացելոցս ի նա։ Այս  
ինչ յայտ լիցի քեզ՝ սուլտանն, զի պարգևաց քոց ոչ հաւ-  
անիմք և ի սպառնալեաց քոց ոչ երկնչիմք։ Եւ այդմ  
վնասու, զոր գուրք զմէնջ կարծէք՝ չեմք ինչ վնասապարտ-  
եւ գուր զոր ինչ առնելոց ես ընդ մեզ՝ արա վաղվաղակի։

Յայնժամ պիղծն այն ամիրայն հրաման ետ դահ-  
ճացն գլխատել զնոսաւ։ Եւ մատեան դահիճքն նախ առ-  
եպիսկոպոսն, և երկու անդամ հարին ուժդին զպարա-  
նոց եպիսկոպոսին սուր թրով, և ոչ եհատ սուրն զպա-  
րանոց նորաւ Ընդ որ բարկացեալ արիւնախանձն այն  
ամիրայն, կախարդինս իմն կարծեցեալ՝ և ետ ունել չորից  
արանց, երկուց՝ զոտսն եպիսկոպոսին և երկուց՝ զձեռուն-  
եւ ապա դահիճն եհար զմէնջն եպիսկոպոսին և յերկուս  
հերձեաց։ Եւ ապա մատեան առ աբեղայսն և զերկուսն  
գլխատեցին։ Եւ այնպէս կատարեցան ի Քրիստոս բարի  
խոստովանութեամբ տէր Ստեփանոս եպիսկոպոսն և երկու  
աբեղայըն իւր ընդ նմա՝ Սեղբեստրոս և Թէոդորոս։

Եւ արար Աստուած մեծ սքանչելիս, զոր ինքեանք  
խոկ տեսին աչօք իւրեանց այլազգիքն, և վկայեցին լուսոյն  
որ էջ ի վերայ մարմնոց սրբոցն։ Զի յայնմ տեղւոջ, ուր  
զժԴ Տաճիկսն սպանին՝ անդ և զեպիսկոպոսն և զարե-  
զայսն սպանին յետ երկու աւուրց, և ընկեցին խառն ի  
վերայ մարմնոց այլազգեացն։ Եւ ի ճառագայթել լուսոյն  
ի վերայ սրբոցն՝ ասաց անօրէն զագին, թէ այն վասն  
հաճի մըսըլմաներոյն եղեւ սքանչելիքն։ Եւ ետ ջոկել զե-  
պիսկոպոսի մարմինն և զարեղայիցն յայլազգեացն։ Եւ  
չնորհօքն Քրիստոսի լոյսն զհետ զնաց մարմնոց սրբոցն՝  
յամօթ այլազգեացն և ի պարծանս քրիստոնէից՝ վկայ  
անմեղութեան եպիսկոպոսին։


Եւ թողին զմարմինս սպանելոցն անդէն կերակուր լինել  
գաղանաց և հաւուց։ Բայց զեպիսկոպոսին գողացան քրիս-  
տոնեայըն և տարեալ եղին յեկեղեցի մի, և զարեղայիցն՝  
ի փուլ մի, և հողով ծածկեցին։ Խոկ անօրինացն անդէն ի

տեղին մաշեցան և կերակուր գաղանաց եղեն և թռչնոց օդոց:

Եւ անօրէն սուլուանն այն զադին սաստակոյց զհաւ-  
լածանս ի վերայ քրիստոնէից, առնլով յամենայն քահա-  
նայից զգինս արեան իւրեանց՝ յամէն գլխոյ Ու դեկան:  
Եւ զվանք սուրբ Նշանին կողոպտեաց. զիսաչ և զաւետա-  
րան և զայլ սպասք սրբութեան ընդ ձեռամբ անօրինացն  
դրաւեաց և պիղծ շեխեր ի վանքն ընակեցոյց և արար  
զեկա: Եւ փոխանակ արեան կարգաւորացն, որոց ամէն  
գլխոյ Ու դեկան գին առին՝ զուռի և զբարտի ծառերսն  
քան զհաղարսն աւելի հատին ի տակաց փոխանակ երի-  
ցանցն. թող զայլ տուգանսն որ առին:

Քակեաց և զսուրբ Քառասունն և այլ շատ եկեղե-  
ցիու: Եւ յառաջ քան զսպանութիւն եպիսկոպոսին՝ ժողովեաց  
յամենայն երկրէն զժամահարսն, և կոտորեաց զամենե-  
սեան: Եւ այլ բազում չարիս արար, զոր ոչ է ասելի՝  
անիծեալ զադին այն:

Բայց և ինքն յետոյ ըստ արժանեաց իւրոց չարու-  
թեանն կալեալ եղեւ ի թուրքմանէն, որում անուն էր  
Օթուն՝ և սպանաւ ի ձեռաց նորա: Եւ այնպէս բարձաւ  
չարն ի միջոյ:



## ՏԱՂ

Ի Տէր Ստեփանոս Ամաստակ Սեղաստիոյ

Ահա զգովքն ասեմ Տէր Ստեփանոսին։  
Թագաւոր նստէր նա ի մէջ Սեբաստ քաղաքին։  
Եկին սուսերօք զվանքըն պատեցին,  
Որպէս ի հընումըն Հըրեայք զծէրըն խաչեցին։  
Զհանդերձըն հանին զնա մերկացուցին,  
Մերկ ու բոլիկ ու գլխիբաց զնա չարչարեցին։  
Զայն գեղձան մազերն փունձ փունձ փետեցին,  
Զայն իւր ջախուջախ բազկըտիքն յերկաթ պնդեցին։  
Զայն կամար ուներն Տէր Ստեփանոսին,  
Հանց զինչ որ քաշած էր կամար աւագ խորանին,  
Զայն ծով ծով աչերն Տէր Ստեփանոսին  
Հանց զինչ որ յըրով աւազանն ի յեկեղեցին։  
Զայն վարդ վառեցեալ կարմիր երեսուն։  
Հանց զինչ նշխարքն ու բաժակն ի սուրբ սեղանին։  
Զայն մաքուր բերանն Տէր Ստեփանոսին,  
Ատամունկն ի միջին շարած էր զետ մարդարտին։  
Իւր բոլոր լեզուէն կանգնէր ի բեմին.  
Կարդալով պատմէր ըզբան Աւետարանին։  
Դաշըն եղեալ ըզսուրըն քաշեցին։  
Ասէ. «Դուք տըւէք զպատասխան այն ծածկադիտին»։  
Հեղեցին զարիւն Տէր Ստեփանոսին։  
Յայնժամ սար ու ձոր վայ կանչեց իւր ըսպանողին։  
Իւր հօրն ասացին. «Կուդայ քո որդին,

Արել ու սրբէ զքրտինքըն ճակտին՝ երեսին։  
Իւր հարն էր նստեր դէմ ճանապարհին,  
Գիտէր թէ կուգայ կարդալով իւր պարոն որդին։  
Յայն առաւօտին սև չորեքշաբաթին։  
Քերին արիւնով ըզզըլուխն ի գոգն ընկեցին։  
Լըցաւ արիւնով իւր սիրտն ի փորին,  
Լայր ողորմագին ու դընէր զերեսն երեսին։  
Մայրն եկեալ տեսաւ զորդին յայն հալին,  
Սակտայի ու խէվ դարձաւ ի յանվայր փայրին։  
Ծաղիկ էր քաղքին մանուշակ երկրին,  
Հանց եղ զինչ կու փայլէր այն կարմիր մորտւն յերեսին։  
Թոռմեցաւ ծաղիկ վարդն ի յիւր թըփին,  
Կարմիր ու ճերմակ երեսուին դարձաւ ի գեղին։  
Կայր տարեկուսած Սաղմոսն յատենին,  
Զիւր գրեանկն ամէն կուտեցին յեկեղեցին։  
Լոյսն երկնային քառաթև խաչին  
Յերկնից ի փայր ճառագայթեաց սուրբ գերեղմանին։







## 22.

ՄԵՐՏԻՐՈՍ ԿՈՊՐԻԳԻ

† Պ. 9—1387-ից յէսոյ

Յարձակեցան զօրքն Լանկթամուրայ ըստ մասին և  
ի գաւառն ձակատք, և առին զքաղաքն Մարի կոչեցեալ,  
և յաւար ետուն զամենայն շրջակայ գիւղօրէսն, և վարե-  
ցին ի գերութիւն զամենայն զոր գտին։ Իսկ իշխանաւոր  
ոմն ի Հայոց Մարտիրոս անուն Կողբացի՝ այր կորովի և  
բարեպաշտ, յառաջադոյն աճապարեալ, և առեալ ընդ իւր  
երիտասարդս քաջաբազուկս՝ ել ի լեառն Բարթող՝ որ կո-  
չիւր յայլազգեաց Թակալթու, ամրանալ անդ յապահովին  
Դիմեցին զհետ նորա բազմութիւնք ասպատակացն. բայց  
արին Մարտիրոս քաջութեամբ պատերազմեալ՝ վանեաց  
զնոսա, և ոչ եթող ելանել ի լեառն. որով և ապրեցոյց  
զորս ընդ իւր էին։ Եւ յետ ժամանակաց սա ինքն ար-  
ժանի եղեւ ըստ անուան իւրոյ առնուլ զպսակ մարտիրոս  
սութեան. քանզի կալեալ զնա իշխան ոմն Սահամֆ անուն  
ստիպեաց յուրացութիւն հաւատոյ. և իբրև ոչ էտ նա  
յանձն՝ ջրահեղձոյց արար զնա ի գետն երասխ։





## 23.

### ԵԿԵԿ ԱՅԼԵՐԸՍՏԵՅԻ

† Պլ.թ. մեհման ժ.է = 1390 դեկտում 23 դշ.



Կքննելի են խորք իմաստիցն Աստուծոյ  
և անզննելի՝ դատաստանք նորա,  
անչափ է բարերարութիւնն Աստու-  
ծոյ և անբաւ՝ գթութիւնն նորա,  
անհաս է մարդասիրութիւնն Աս-  
տուծոյ և անճառ՝ ողորմութիւնն նո-  
րա. զի արդար է ի դատել և քաղցր՝  
ի բարեգործել. ճշմարտութեամբ  
դատի, իրաւամբք ըննէ և ողորմութեամբ քաւէ. զի ի  
սիրոյ յաղթի և գթութեամբ արդարացուցանէ զսաեղծուածու  
իւր; զոր արար ըստ պատկերի. իւրում: Զի թէպէտ և ի  
կամն չարին խստորեցաւ, սակայն ոչ անտեսացաւ յառա-  
տաբաշխ ողորմութենէ բարերարին, այլ ի յայց ել, խնամով  
արդարութեամբ չափեաց, իրաւամբք կշռեաց, ճշմարտու-  
թեամբ դատեաց և մարդասիրութեամբ քաւեաց: Զի  
յիւրաքանչիւր դարս և ի ժամանակս ընտրեաց և ընկա-

լաւ երախայրեաց պտուղս ի մարդկայինս ազգէ՝ որպէս  
զապաշաւանս նախաստեղծիցն՝ և զարիւնն Արելի ընդ-  
հաճոյական պատարագին, զսրբութիւնն Սեթայ և զյու-  
սադրութիւնն Ենովսայ, զհաճելի պահսն Ենովքայ և զյու-  
սադրութիւնն Նոյի, զհաւատատն բարի գործովքն Արրահամու և  
զմաքրութիւնն Խսահակայ, զանարատ քահանայութիւնն  
Մելքիսեդեկի և զսրբութիւնն Յակոբայ Խսայեղի, զող-  
ջախոնութիւնն Յովսեփայ և զհամբերութիւնն արդարոյն  
Յուսայ, զհեզութիւնն Մովսեսի և զհնազանդութիւնն Ահա-  
րոնի, զանմեզութիւնն Յեսուայ և զարիութիւնն Փենե-  
հեսի, զուխտագրութիւնն Սամուելի և զզջումն արտա-  
ռուացն Դաւթի և զայլս իւրաքանչիւրոց մարդարէիցն՝  
յոմանց՝ զգործս ընդ հաւատոցն և յոմանց՝ զպահս ընդ-  
ազօթիցն, յայլոց՝ զկանիսումն ի գիշերի և զկիսոց՝ զյան-  
դիման լինելն յառաւօտու, իսկ ի յայլոց բազմաց՝ զմատ-  
նիլն տանջանաց և զմահն զլիսովին. որպէս զեսայեաս  
սզոցեցին և զերեմիսս քարկոծեցին, զԶաքարիաս սպանին  
և զԴանիել կեր գազանաց արկին. զերիս մանկունսն հրոյ  
մատնեցին և զՄակարայեցիսն որոյ ճարակ տուին. որ և  
զմայրն Շամունէ և որդւովքն սարսուելի չարչարանօք  
և կարծրագոյն տանջանօք մաշեցին, ընդ որս և ծեր քա-  
հանայն Եղիազար, որ վասն աստուածային սիրոյն և քա-  
ջայոյս հաւատոյն առ յոշինչ զիստագոյն տանջանսն հա-  
մարեցան. զորս թուէ Պօղոս ասելով. «Քարկոծեցան,  
սզոցեցան և սպանմամբ որոյ մեռան. շրջեցան լեաշկ մաշ-  
կօք և մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չար-  
չարեալք, յանապատի մնորեալք՝ ի լերինս, ի յայրս և ի  
վասպարս երկրիւ. Եւ սոքա նյը՝ այնք՝ զորս մի ի նոցանէ  
բոլոր աշխարհս ոչ արժէ. ամեներեան վկայեալք ի հաւա-  
տոցն և ի բարի գործոցն. վասն որոյ հոտոտեցաւ Տէր  
Աստուած ի հոտ անուշից. իսկ ի ծագման Բանին Աստու-  
ծոյ մարմնառիկ տնօրէնութեանն՝ որոց և ճանապարհ  
գործեաց փրկական չարչարանօք խաչին և կենարար մահ-  
ուամբն՝ ևս քանզես բորբոքեցան ի սէր Արարչին և յոր-

դորեալ փութացան ի յաղ չարչարանաց կենսատուին՝  
բիւրք բիւրուց և հազարք հազարաց, իրեն զաստեղս երկնից  
բազմութեամբ, որոց ոչ գոյ թիւ համարոյ։ Զխոստումն  
Աբրահամու լցեալ, զհաւատոյ որդիացեալսն բազմացու-  
ցեալ, և այսոցիկ զրաւ լեալ և կամ զգագարնումն առեալ,  
և ոչ բնաւ՝ զի գեռես երեխ փութալ ոմանց յաղ չարչա-  
րանաց կենսատու մահուն Քրիստոսի։ Ոմանք պահօք և  
ոմանք աղօթիւք, այլք յոտնակացութեամբ և կէսք գետ-  
նախշտութեամբ, ոմանք կուսութեամբ և ոմանք ողջախո-  
հութեամբ, ոմանք համբերութեամբ և այլք հնազանդու-  
թեամբ, ոմանք հեղութեամբ և այլք խոնարհութեամբ,  
ոմանք սիրով եղբարց և աղքատաց և կէսք ովորմածու-  
թեամբ տնանիկաց. և այս ամենայն՝ ի փառս Աստուծոյ և  
յամօթ ձաղանաց Բելիարայ։ Խոկ այլք ոմանք զմնոտի  
կենցազս արհամարհեալ՝ ընդդէմ մահու բռնացան՝ կե-  
նացն յաւիտենից փափագեալ, որպէս և սուրբս այս՝ փան  
որոյ հանդէս բանիցս է, զօր փոքր ի շատէ և սակաւ մի  
ի բազմացն ճառեսցուք վամն նորաւ

Այր մի քրիստոնեայ հաւատով, որոյ անունն էր Ս-  
ւագ, արուեստիւ քսակակար, լեալ երբեմն ի Սալամաստ  
քազաք ի տիս տղայութեան, ընդ արուեստապետին իւրոյ  
ումեմն Պարսկի և մահմետականի. ի տղայութեան ժա-  
մանակն ընդ նմին կեցեալ վասն օդտութեան արուեստին,  
բայց ի հաւատոցն ոչ ուրացեալ այլ ոմանց այսպէս կար-  
ծիս առեալ թէ տաճկացեալ էր:

Եւ եղել յետ ժամանակաց անցելոց երեսուն ամաց՝  
աւելի կամ պակաս՝ տեսեալ զնա այր ոմն Պարսիկ ի  
Բազեջ քազաք և ասաց նմա. «Դու երբեմն ի Սալամաստ  
Ժաճիկ էիր օրինօքն Մահմետի և աստ քրիստոնեայ եղեր»։  
Եւ նա ասաց. «Ես քրիստոնեայ էի և եմ և եղեց ժառայ  
Քրիստոսի Աստուծոյն խնոյ օրհնելոյն ի բարձունս»։

Եւ այրն Պարսիկ աղքեալ ի քազաքին այլ անօրի-  
նացն, և գրոհ տուեալ՝ ժողովեցան ի վերայ նորա բազ-  
մութիւն ուսմկաց քազաքին, և առեալ ածին զնա առաջի

ամիրային, որոյ անունն էր Ամիրշարաֆի Եւ հարցավորած քեալ գտին զնա հաստատուն ի հաւատս Քրիստոսի Եւ Ամիրշարաֆին կամէր արձակել զնա և ոչ կարաց ի բազմութենէ ռամկին։ Այլ նոցա շնորհուկս արարեալ՝ կամեցաւ զմիտս հաճել զամբոխին, և հրամայեաց տանել զնա առ զադին և անդ դատել զնա՝ որպէս և կամեսցին։ Բայց դատաստանու իրաւունս արար նմա ամիրայն և եհարց զնա թէ «Զի՞նչ ունիս և զի՞նչ պարտիս»։ Եւ ստուգեալ ի նմանէ՝ արար որպէս և պարտն պահանջէր յետ կատար մնան որբոյն։

Իսկ ի տանելն զնա առ դատաւոր քաղաքին՝ պաշարեալ պատեցին զնա որպէս գաղանք վայրենիք և շունք կատաղիք, արդարոյն արեան ծարաւիք։ Եւ նա էր ի մէջ նոցա լի հոգւովիս սրբով, եկեալ շնորհացն աստուածային ի վերայ նորա, և լուսափայլէր պատկեր նորա իրեն զհրեշտակի։ Զօրութիւնն Քրիստոսի բնակեալ էր ի նմա, և նովաւ պայծառանայր տեսիլ նորա ի մէջ շանցն սպաս նողաց։ Ոչ երկնչէր ի մահուանէ, և վկայէր լուսափայշ լութիւն երեսաց նորա։ Զի ունէր ի մոի եւ եղեալ և հաստատեալ էր ի սրտի զլան Սաղմոսին, զոր հոգենուագն երգէ՝ զփառս Տեառն տեսեալ և զհանգիստ սրբոցն յերկրին կենդանեաց՝ և ասէ, «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց»։ Ո՞վ համառօտ գովեստ ները բողական բանի, և զի՞նչ այլ բղձալի մարդկան քան զայն պիսի մահն, որ առաջի Աստուծոյ պատուական է։ «Մի գանդաղիք և գուք», ասէ, «առ գեղեցիկ նահատակութիւնս, մի զարհուրիք յերկիւղէ մահուն, զի ոչ է ապաշկանութիւն, այլ կենաց պատճառ և փոփոխումն ի փառաւ։ Վասն որոյ սրատես եղեալ մարդարէն Դաւիթ հոգւոյն աչօք՝ ասէ, «Հաւատացի՝ զոր և խօսեցայ» և յառաջաբառ նելով ի բանս իւր՝ ցուցանէ զքաջութիւն աստուածազօր վկայիցն՝ ասելով, «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց»։ Յամենայն արարածս Աստուծոյ գոյ պատուական և ազնիւ, ի հրեշտակու վերին դասք աժոռոցն

սերովքէիցն և քերովքէիցն, զի յերկինս՝ առաջին են նոքա  
տեղեաւ և փառօք, ի յերկինս՝ երկու լուսաւորքն՝ արեւ  
դակն և լուսինն, ի յաստեղս՝ արուսեակն առաւօտու, ի  
չորս կողմանս աշխարհի՝ արևելք, յերկրի՝ դրախտն Աղեւ  
նայ, ի լերինս՝ Սինեայ և Թարօր, ի գետս՝ Յորդանան,  
ի յուլիս՝ արաբացին, ի յակունս՝ ապազիոնն, ի կանայս՝  
Մարիամ Աստուածածինն, ի յարս՝ Բանն Աստուած մար-  
դացեալ, յանարդ մահուանէ՝ մահն որ ըստ Աստուծոյ  
լինի, զի քաղցրանայ գառնութիւն նորա ի սէրն Աստու-  
ծոյ, որպէս ասէ, «Պատուական է առաջի Տեառն մահ  
սրբոց իւրոց», Առաջի մարդկան յիմարութիւն և նախա-  
տինք թուէր մահ վկայիցն, իսկ առաջի Տեառն՝ պատ-  
ուական։ Զի ոչ որպէս տեսանէ մարդ՝ տեսանէ Աստուած։  
Զի մարդ յերեւլիս հայի, և Աստուած՝ յաներեւոյթսն.  
վասն որոյ յաջս տեսովութեանն Աստուծոյ պատուական է  
մահ սրբոցն, զի արդարքն՝ թէպէտ և մեռանին զգալի  
մահս, այլ կենդանի են առ Աստուած, որպէս ասէ իմաս-  
տունն Սոլոմոն, «Թէ և յաջս անզգամաց մեռեալ կարծին,  
այլ յոյս նոյցա լի է անմահութեամբ». վասն որոյ ասէ  
մարգարէն, «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց  
իւրոց», զի առաքինացան յուսով հանդերձեալ կենացն,  
զի յանցաւոր կենացս ի մշտնչենաւորն փոխեցան և ի նե-  
ղութենէս՝ ի հանգիստն, յեղկելի կենացս՝ յերանելին, յա-  
կամայ փորձանացս՝ որ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ ի  
յանդորր փոխեցան, ի ծերութենէս՝ ի տղայութիւնն ան-  
ծերանալի, ի տկարութենէս՝ ի զօրութիւնն անտկարանալի,  
ի հնութենէս՝ ի նորոգումն անփոփոխելի, յատելութենէս՝  
ի սէրն ժամանեցին. որով յաղթեցին ամենայն կրից  
մարմնոյ։ Եւ զի յայս կեանս մեռան՝ և ընդ Քրիստոսի  
կենդանացան։ Եւ յորժամ Քրիստոս յայտնեցի կեանքն  
սրբոց՝ յայնժամ և նոքա ընդ նմա յայտնեցին փառօք  
պսակեալ յամենասուրբ Երրորդունենէն յաղագս արդա-  
րութեան և սրբութեան իւրեանց, և վայելեն ի քաղաքն  
վերին՝ յաղատն յերուսաղէմ՝ ի մայրն ամենայն սրբոց»

Զայս ամենայն իմացեալ և ծանուցեալ սրբոյն Աւագու և  
զմտաւ ածեալ՝ արհամարհեաց զմահ և ընտրեաց զկեանս՝  
որ ի Քրիստոս է, ի էր հոգեօր ուրախութեամբ և արժան  
էր վկայ լինել որդւոյն Աստուծոյ պատուական մահուամբ,  
որպէս ասէ Դաւիթ. «Պատուական է առաջի Տեառն մահ  
սրբոց իւրոց»։ Զի ի հարցանելն զնա նոցա վասն Քրիս-  
տոսի լուսաւորեցաւ և պայծառացաւ տեսիլ նորա, խոս-  
տովան եղեւ և ոչ ուրացաւ, խոստովան եղեւ թէ «Ես  
քրիստոնեայ եմ և Քրիստոսի Աստուծոյն իմոյ ծառայ»։

Զայս լուեալ ի նմանէ անօրինացն՝ կրծտեցին զատա-  
մունս իւրեանց ի վերայ նորաւ եւ նա էր ի մէջ նոցա,  
իւրիւ զգառն ի մէջ արխանակեր գաղանաց գայլոց և որ-  
պէս զորո՞չ ի մէջ շանց կատաղելոց եւ մինչդեռ տանէին  
զնա ըստ հրամանաց ամիսային առ իւրեանց զադին՝ և  
նա երթայր ի մէջ նոցա ուրախ մոտք և լրջմիտ սրտիւ,  
զուարթ երեսօք և պայծառ դիմօք, ի բերան ունելով  
զիստովանութիւնն Աստուծոյ։ Եւ դաւանէր զՔրիստոս՝  
Տէր և Աստուած ամենայնի, Սքարիչ երկնի և երկրի՝  
Յայնժամ արբանեակը չարին՝ արք ժանտաբարոյք, խիստք  
և անագորոյնք՝ զարկին և հարին ի դլուխն զվկայն Քրիս-  
տոսի զԱւագ փայտեայ կոճիւ և այլք՝ սրով և քարիւ՝ բաղ-  
մութիւն ամբոխին։

Եւ նա այնպէս բարի հաւատավ կատարեցաւ ի Քրիս-  
տոս՝ սուրբն Աւագ, և աւանդեաց զհոգին իւր առ Աստ-  
ուած ի մեհեկի ի ժի, յաւուր չորեքշաբաթի, յերկրորդում  
շաբաթու քառասնորդաց պահոցն։

Այս եղեւ յամի Պլթ թուականիս Հայոց։





24.

ԵՂԻՍԵՐԵԹ Ի ԽԸՆՈՒԲԸՆՄԱՑԵՑ

† Պի = 1391 մարտ 9\*



արձեալ համառօտեցից զպատմութիւն  
միւս այլ կնոջ՝ Աւեր աղջկան, որ էր  
ի Խառաբաստաց՝ Եւ տաճկացեալ ի  
Բերկիք՝ նստաւ ի փողոցի, որ տախ  
Խարբաթ։ Եւ ամենայն ոք ի մոլի  
երիասարդաց և ի մեզսասիրաց մտա-  
նէին առ նա. մանաւանդ՝ այլազգիք  
և ոչ թէ քրիստոնեայք։

Եւ եղեւ գնալ նմա ի վան քաղաք  
վասն այնր գործոյ սպանկութեան, զի անցագ էր ի մեղա-  
եւ եղեւ նմա դաւ ինչ ընդ ումեք։ Եւ նու երդուեալ ասէր,  
«Այն սուրբ Առառածածինն, որ ոյս բանս այս է»։ Եւ

հասեալ ի վերայ բանին այլագգիք ոմանք և տսեն, «Ե՛  
մլուն, զի՞րդ իշխես զայդ ասել»։ Եւ նա համարձակեալ  
տասց յայտնապէս. «Ասեմ և ոչ ամաչեմ, զի ևս ծառոյ  
եմ սուրբ Աստուածածնին և հաւատամ յԱրդին նորա միւ  
ածին՝ Յիսուս Քրիստոս՝ ի խաչեալ թագաւորին վասն մեւ  
րոյ փրկութեան։ Եւ սասեալ անօրինացն ահացուցանէին  
զնա մի ասել զայն։ Եւ նա ևս վատահայեալ խոստվա-  
նէր զՔրիստոս՝ Աստուած և Որդի Աստուծոյ։

Զոր ասեալ տարան առաջի դատաւորաց. և անդ ևս  
վկայեաց թէ «զՔրիստոս Աստուած հաւատամ»։ Եւ առեալ  
տարան զնա առաջի նոյն Խալթունին, որ յետոյ զԳոհար  
Թամարն դատեաց։ Եւ նա ըազում խոստմամբ և սպառ-  
նալեօք ոչ կարաց հաւանեցուցանել զնա ուրանալ զՔրիս-  
տոս վասն որոյ բարկացեալ թագուհին հրամայեաց քար-  
կոծել զնա։ Եւ այնպէս կատարեցաւ ի Քրիստոս յաւուր  
տօնի սրբոց քառամնիցն։ Եւ եղե նոցա պսակակից՝ ըստ  
որում և մահուամբն հանդիսակից։

Այս եղե ի ՊԽ թուականիս Հայոց, յամս նոյն մելիք  
Ազգնին և իւր կնոջն։ Եր նա յերկրէն Արճիշոյ, ի գեղշէն  
Խառաբաստոյ, և անուն նորա՝ Եղիսաբեթ։





25.

ԶԵՐԵՐԻՑ ԿԸԹՈԳԻԿՈՑ ԱՎԹԵՄԵՐՑԻ

† Գին = 1393 յուեխս 25 դշ.



սրբազն հայրապետն մեր զտէր Զաքարիա տեսեալ նախաչարն սատանայ,  
որ մարդասպանն է ի սկզբանէ և հակառակ ճշմարտութեան, զի վտուեալ  
էր ի սէրն աստուածային և եղեալ  
յաշտանակն հաւատոյ ջահն պայծառ  
և լուսատու, ուստի փայլէր ի պատշ  
բոյգոն եօթն զճառագայթս նշուլից աստուածպաշտու-  
թեան իւրոյ, այսինքն զեօթն առաքինութիւն անձինն.  
նախ՝ զի կատարեալ էր ուզգափառ հաւատովն. երկրորդ՝  
զի հաստատուն էր յուսովին առ կեանսն հանգերձեալ յա-

ւիտենին, երբորդ՝ այլ և ջերմեռանդ անթերի սիրովն՝ զոր ուներ առ Աստուած և առ մարդիկը, իսկ և զարդարեալ էր խոհեմութեամբն, և հանդիսացեալ արիութեամբն, ողջախոհ էր ցանկութեամբն, և զուգակշիռ առդարութեամբն: Այսպիսի եօթնեալ լուսաւորութեամբ լուցեալ էր զճրագունս վիմին աշտանակի, ըստ իւրումհամանուն մարդարէին աստուածաբանութեան:

Զայսպիսի պայծառ ջահս շիջուցանել կամեցաւ սաւտանայ: Վասն որսյ ըստ բնածին չար բարուցն, զոր ուներ մախանս ընդ օրինացս ճշմարտութեան, յարսյց փորձանս քահանայապետին Աստուծոյ՝ զղատաւոր քաղաքին Ոստանայ՝ զայր ոմն չարաբարոյ և ժանդ, ազգաւ պարսիկ, որ եկեալ առ կաթուզիկոսն մթերեալ չարաւթեամբն՝ զոր ուներ ի սրտին, և պատճառանօք իմն կամէր պիղծն յայտնել զչարութիւն իւր տաելով. «Առ քեզ զմախաղն իմ յաւանդ պահեստի»:

Եւ Տէրն հեղաբար տուեալ պատասխանի և ասաց. «Տուն իմ չէ պատշաճաւոր տեղի պահեստի, մօնայ, այլ տեղ տեսցես յանկաւոր պահեստից քոյ»:

Յայնժամ սկսաւ պիղծն այն և ժանդն բարկութեամբ հայհոյել զնա, և ձգեալ զձեռն իւր ի հարկանել: Իսկ տէր Զաքարիայն կցեալ զձեռն իւր ի վերայ կրծից իւրոց, և յապտակել պղծոյն զծնօտ սրբոյն, ասէր. «Քաւ լիցի քեզ, մօնայ, առնել իրս անպատեհ: Անպատեհ է քեզ հարկանել զիս առանց պատճառանաց վիասու»:

Զայն տեսեալ ոմանց և ձայն տուեալ միմեանց և առժամայն կուտեցան անդ բազմութիւնք արանց և կանանց. զոր տեսեալ անօրինին և սասակացաւ ի բարկութիւնն. ձեռս յօձիսն ձգեալ՝ պատառեաց զպատմնանն իւր, և փետէր զմօրուան, մինչ զի արիւնաշաղախ լինէր պիղծ երես նորա: Եւ այնպիսի ձեռվ ել արտաքս յԱղթամարայ, և գնացեալ յ՛Ստան՝ առաջի ամիրային ի բազանիսն, չարախօսեաց զքրիստոնէիցն Աղթամարայ և զկաթուղիկոսէն:

Խոկ տէր Զաքարիայն ոչինչ գիտելով խիղճ զանձնէ, վասն որոյ փութացաւ և նա գնալ առաջի ամիրային ի բազանիսն եւ ի շարախօսելն Դանիշմանին զկաթուղիկոսէն, ասէ ամիրայն թէ՝ «Աւրացիր զՔրիստոս և դարձիր յօրէնս մեր, և ես չնորհեմ քեզ զվասպ»։

Ասէ Հայրապետն, «Ինձ մի լիցի ուրանալ զՔրիստոս Աստուածն իմ, այլ Հաւատամ զնա արարիչ ամենայն աշրաբածոց, էակից Հօր Համազօրի և փառակից Հոգւոյն ճշմարտի»։

Զոր լուեալ անօրինացն, ևս առաւել ի բարկութիւն ըսդեցան, և որպէս շունք կատաղիք արեան ծարաւիք կրծտեցին զատամունս իւրեանց ի վերայ սրբոյն եւ անդի բաղանիսն հարին զսուրբն ի մնակուշան սրով, և հանին արտաքս ի բաղանեացն ի քարշ, և հարին քարիւ զգլուխն, և մերկացուցեալ զնա, եղին չուան ի պարանոցն, և քարշեցին ընդ փողոց քաղաքին, և բազմութիւն տմբուխին զհետ երթային, և հարկանէին զնա քարիւ և փայտիւ և սրով։ Եւ նա ի քարշելն և ի հարկանէլն՝ մինչդեռ օրհնութիւնն ի բերանն էր, աւանդեաց զհոգին իւր առԱստուած՝ քարի խոստովանութեամբ, ըստ դրոյն որ ասէ, «Հոգիք արդարոց ի ձեռին Աստուածոյ են»։

Եւ իբրև չարութիւն նոցա ի գլուխ ել և յամօթ եղեւ սատանայ, զի ոչ եհաս ըզձիցն զոր ունէր, այլ իւր չարութեամբն պատարագ բոլորապառուղ ընծայեաց զհայլապետն մեր։ Եւ այնպէս տարեալ ի քարշ՝ ընկեցին արտաքոյ քաղաքին և կամէին այրել զսուրբ մարմինն, զոր ոչ ետ թոյլ ամիրապետ Աղդնին, այլ հրաման ետ բառնալ զնա քրիստոնէիցն և թաղել պատուով, որպէս և կամեսցին։ Զոր և արարին խակ։

Եւ ի խուռն քարանցն հարկանելոյ՝ գագաթն վերացեալ էր ի գլխոյն և ուղեղն ցնդեալ, մինչ զի նշմարանք երեսացն ոչ երեւէին։

Այս եղեւ ի թուականիս Հայոց ՊԽԲ ամին՝ յունիս

ամսոյ ի իե, յաւուր չորեքշաբաթի և ի մեհեկի ժե հանդիպեցաւ:

Իսկ ըրիստոնեայքն՝ որ ի քարկոծման ժամուն զօղեալ և թագուցեալ էին, հրամանաւ ամիսային յառաջ եկին և բարձեալ զտէրն՝ տարան յԱղթամար և պատուով թաղեացին զնա ըստ արժանեացն, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

---

## Գ Ա Ն Զ

ՏԵՍՈՒՆ ԶԱՔԱՐԻԱՅ ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻ ԱՂԹԱՄԱՐՈՑ

Ասացեալ ի Գրիգոր վարդապետ:

---

Գըթացեալ քոյին,  
Արքայդ երկնային,  
Եւ առեր մարմին,  
Ջմարդիկս երկլային,  
Առնել երկնային,  
Դեր քան զառաջին.  
Յետ կատարածին  
Այսըմ խորհրդին  
Տնօրինականին:

Ուրունն երկնային,  
Աստուած Առւրոք Հոգին,  
Իջեր ի ստորին:  
Առաքեալքն առին  
Ջըշմարիտ հոգին,  
Եւ յաշխարհո ելին  
Քարոզ քո բանին,  
Աւետարանին,  
Բղհամբաւ բարին:

Ամէլ որք լըսեցին  
Կենաց քարողին,  
Քեզ հաւատացին:  
Հաւատք ծաղկեցին  
Յոլորսո աշխարհին,  
Յընդհանուրո աղին:  
Հաղարք հաղարին  
Եւ բիւրք բիւրային  
Քեզ վիճակեցին:  
Որք վրկայեցին  
Եւ զարիւնս հեղին:  
Վասն անուան քոյին:  
Բնդ որս և արին  
Արհի պահծալին:  
Յաւուրս վերջին  
Արբեալ ըդհողին,  
Հետեւեալ նոցին,  
Սըրբոցն առաջին:  
Մաղթանօք նոցին ըգձալի  
Զմերս ընկալցիս պատարագ:

Գանձ սիրոյ քոյին  
Գանձեալ ի յողին  
Գերազով տիրին,  
Բաղձալի վեհին,  
Սուրբ գիտապետին,  
Կաթուղիկոսին  
Տէր Զաքարիին,  
Մեծ պատրիարքին,  
Որ յԱղթամարին:  
Բորբոքմամբ չարին  
Փորձ հասեալ նըմին  
Յայլասեռ բամին,  
Զոր սիրով քոյին

Զերմացեալ նորին,  
Վանեալ ըղնոսին  
Ի մէջ հանդիսին  
Բազմութեան ռամին,  
Որ պատեալ էին,  
Դաւանէր զնիրդին,  
Զբրիստոս կենդանին,  
Կոլ Հօր միածին.  
Փառակից նոցին  
Զճըշնարիտ Հոգին  
Մի աստուածութիւն  
Մազթեանօք նոցին ըղձալի  
Զմերս ընկալցիս պատարագ:

Որ յաւուրս յետին,  
Ի դարբս վերջին,  
Ժամանակ նեռին,  
Փըրկութեան քոյին  
Անցեալ համարին,  
Ամաց հազարին,  
Բամեալ ընդ նըմին  
Զորս հարիւր թըւին,  
Եօթն պակաս ամին,  
Յամսեան մեհեկին,  
Տամնուհինդ օրին,  
Զորեքշաբաթին,  
Զմեր հովիւր բարին  
Նահատակեցին.  
Վասն անուան քոյին  
Ասստիկ գանեցին,  
Յերեսըն թըքին,  
Եւ անարդեցին,  
Սըրով խոցեցին,  
Վիրաւորեցին,

Քարկոծ արարին,  
Խոլտակեալ հարին,  
Ջարդեալ մանրեցին,  
Ըղդըլուխ նորին,  
Ուրախ էր յոգին,  
Տարեալ ի յանձին  
Զչարչարանս ուժգին՝  
Վասն անուան քոյին,  
Ի անանց պլասկին,  
Որ գանձեալ պահին:  
Յիշէ, և ևս առաւ. . . .

Պամից բարերար,  
Սուրբ կոյս տիրամայր,  
Սուրբ Հոգւոյն տաճար,  
Աշտանակ դոհար,  
Աշխարհիս խաւար  
Լոյս և լուսարար,  
Սեղան սըրբարար  
Հացին կենարար,  
Միջնորդ հաշտարար,  
Մաղթանօք յարմար  
Ի քեզ զինահար  
Մեր կամակատար,  
Որ գու մեզ համար  
Հայցես անդադար  
ՅՈրդւոյդ բարերար.  
Հայցման քո յարմար  
Ըզսուրբն ընկալար,  
Զոտերն որ յԱղթամար,  
Մեզ միջնորդարար  
Եւ խաղաղարար  
Յուզմանց չարաչար  
Մատիր սիրաբար,

Բնդ մեղ մայրաբար.  
Եւ կըցորդաբար  
Տալ մեղ մըլսիթար  
Զհոգին կենարար,  
Եւ ազատարար,  
Պահել զմեղ անշար  
Եւ անպատահար՝  
Շատ ամօք յերկար։  
Ողորմ. . . .





## 26.

ՕՏԵՓԵՆՈՍ ՔԵՀԵՆԵՑ ԵՒ ՄՈՒՍԵՓԻՐ ՏԵՇԱՑԵՐ.

† 1395.



ահանայ մի Ստեփաննոս անուն, ի  
յերկրէն Ամկու, սակաւ աւուրբք  
եկեալ ընակեցաւ ի կղզին Լիմի  
կոչեցեալ, և անտի եկեալ ի քա-  
ղաքն Արծէշ, տեսեալ անտեսուչս  
և անառաջնորդ՝ ոչ հոգեոր առաջ-  
նորդ ունելով և ոչ մարմնաւոր,  
ոչ եպիսկոպոս և ոչ վարդապետ,  
ոչ ձեռնաւոր և ոչ տանուտէր՝ յափշտակեալ կին մի ի քա-  
ղաքացւոյն հրամանաւ և կաշառօր անհաւատից, և բա-  
զում ժամանակս եղեւ առաջնորդ քաղաքին:  
Եւ նենդեալ անօրինաց և ստախօս քրիստոնէից՝ մատ-  
նեն զնա քաղաքապետին Արծկոյ Սահանդ անուն, և զտա-  
նուտէր մի աստուածասէր Մուսեֆիր անուն. Եւ հեղին  
զարին նոցա, և զգլուխս ի պարսպէն ի վայր կախեցին:

Եւ այն թէպէտ և պատիժ էր ի Տեառնէ, զի ամենայն կարգաւոր յիւրում կարգի կացցէ. այլ անմեղ արեամբն իւրեանց լուացին զազտեզութիւն մեզաց իւրեանց. զի ասաի կենաց պատժս ազատէ ի պատժոց տանջանաց դժոխոց։ Եւ դարձեալ՝ եթէ ձեռօք անհաւատից մեռանէին քրիստոնեայքն այնպէս, որպէս Աբէլ մեռաւ ի Կայենէ, եւ Կայէն պատժեցաւ ի Տեառնէ. զի ասէ զլուխն հաւատոյ։ «Մ' ոք ի ձէնջ չարչարիցի իբրև զգող կամ իբրև զշարագործ կամ իբրև զօտարատեսուչ» այս ինքն է՝ կախարդ, «ապա եթէ իբրև զքրիստոնեայ՝ մի ամաչեսցէ»։ Նսյնպէս և սորտ մի ամաչեսցեն առաջի Քրիստոսի, այլ ընկալցին զանապական պսակն ըստ նմանութեան մարտիրոսական դասուցն, և թողութիւն մեզաց արասցէ սոցա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ամէն։ Եւ այս էր յ844 թուականիս մերս։





27.

### ԹԱՐՅԱ ՄՈԿԵՑԻ

† Պիոլ ամիկ մե = 13.97 սպրի 22 դշր.



բգ և յարկանել զհուր սիրոյն իւրոյ  
յերկիր Աստուած Բանն, որով և  
զբորբոքելն կամի, և թէ նա կամի՝  
ով հակառակի, բնաւ և ոչ ոք. բայց  
թէ իւրաքանչիւր ոք յիւրոյն շար-  
ժեալ կամաց թէ ի շարն և թէ ի  
բարին, անձնիշխան գոլով կամօք:  
Ծառ որում և ասէ Յակոբս թէ  
«Աստուած անփորձ է ի շարեաց. փորձէ նա և ոչ զոք,  
այլ իւրաքանչիւր ոք փորձի՝ յիւրոյն ցանկութեանց ձգեալ  
և պատրեալ»: Նոյնպէս և ի բարի կողմանն մասին վիճա-  
կեալքն, որք զհուր աստուածային սիրոյն յանձինս իւրեանց  
վառեալ բորբոքեցին՝ աստի հեշտութեանս բարեաւ մնալ  
ասացին: Եւ այնպէս իւրաքանչիւր ոք յիւրում ժամա-

նակի արխապէս քաջացան։ Զի ունակը սրբութեամբ զկուշ սութիւն ստացան և այլք ողջախոհութեան հանդիսպեցան։ բազումք զողորմութիւն ընտրեցին և զտալն ավքատաց սիրեցին, և կէսք՝ զպահս և զաղօթս որ առանձին, ոմանկք՝ զլսոնարհութիւն և այլք՝ զեզբայրսիրութիւն։ կէսք՝ զլուս թիւն և շատք՝ զլսուելն յօդուտ ընկերին և ի շահ լուս զին։ բազումք զարիւնս իւրեանց հեղին փոխանակ արեան կենարարին, յոլովք հրոյ մատնեցան և շատք ի ջուրս խեղադեցան։ բազումք ի գանս և ի բանտս, ի կապանս և ի քերանս, ի սովո և ի ծարաւս, ի մերկութիւնս և յաղքատութիւնս և յայլ ազգի ազգի և ի զանազան տանջանս և ի տառապանս մատնեցան և չարչարեցան։ Եւ այն ամեն նայն վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեանն որպէս և սազմոսերգուն վկայէ ասելով, «Վասն քո մեռամնիմք զօր հանապաղ»։

Իսկ ի նսեմացեալ և յերեկոյացեալ աւուրս, ի չարացեալ և ի դառնացեալ ժամանակիս մերում, որ սպառեալ եմք յամենայն բարեաց և վերջացեալք յամենայն գործոց առաքինութեանց, կին մի ի Մոկաց, քրիստոնեայ հաւատով, Հայ ազգաւ, զեզեցիկ եւ րեսօք և պայծառ գունով, Թամար անուն և փոխեալ ի Գոհար, առնակին ումեմն քրիստոնէի անուն Թումայի, և յաղգմանէ չարին ցանկացեալ չարաշար տրփանօք ի վայելուչ գեղ կնոջն Քուրդ մի ի նոյն գաւառէն Մոկաց՝ և կամէր խլել զիլինն յառնէն իւրմէ և սպանանել զայր կնոջն Զօր իմացեալ մեծահաւատ կինն Թամար՝ և ազգ արար առն իւրոյ։ Եւ յարուցեալ ի միասնին զաղայն իւրեանց, և գնացեալ փախատեամբ՝ մտին յամուր կզզին յԱղթամար։

Եւ յետ ամաց ինչ անցելոց՝ չորից կամ հնդից՝ տւելի կամ պակաս՝ յաւուր միում վասն կարեաց ինչ իրաց իւրեանց պիսոյից ելին արտաքս ի ծավէն, ի քաղաքն յՈստան՝ այրն և կինն ընդ իւր։ Զօր ուեսեալ ոմանց յահօսինացն Քրիտայ՝ ծանեան զնոսա և ձեռո արկեալ կարան

զկինն, և ձայն բարձեալ աղաղակեցին ասելով. «Աս երբ բեմն տաճկացեալ էր»: Եւ բերեալ սուտ և անիրաւ վկայս՝ կացուցին և տոեալ տարան տռաջի Ամիրադղնին և կնոջ նորա՝ Փաշախաժունին: Եւ Ամիրադղին անփոյթ արար զայնու: Բայց կինն նորա թուրքման էր և չար բնութեամբ, լիրը և յանդուգն, երկրորդ Շամիրամն այն, խոստանայր նմա բարիս առնել, եթէ դառնայ ի հաւատոցն Քրիստոսին եւ թէ ոչ սպառնայր նմա սաստիկ տանջանս ի վերայ ածել և կտտամահ առնել դնաւ:

Իսկ բարեսէր կինն թամար վառեալ էր աստուածային հրովը ի սէրն Քրիստոսին: Եւ բորբոքեալ քրիստոսական սիրովն՝ ոչ խոստանցն հաւանեցաւ և ոչ ի սպառնալեացն երկեաւ, այլ արիաբար, անահ և աներկիւդ, ամենայն համարձակութեամբ, պարզ դիմօք և լուրջ երեսօք տայր պատասխանի և ասէր, «Քաւ և մի լիցի բնաւթէ երբեք ես ուրացեալ լինիմ զՔրիստոս Աստուածն իմ, յոր հաւատացեալ եմ և հաւատամն Զի նա է Բան և Որդի Աստուածոյ, ծնեալ ի սուրբ Կուսէն Մարիամայ, ստեղծօգ ամենայն դոյլից՝ երեկելեաց և աներեւութից, Տէր և դատաւոր կենդանեաց և մեռելոց: Եւ ի կրկին սպառնալն թագուհոյն և ի խոստանալ պարզեացն՝ ասաց թամար. «Ընդէր յամես փաշայ և ոչ ածես ի վերայ իմ զոր սպառնասդ, զի ես պատրաստ եմ ի մեռանել փամն Քրիստոսի Աստուածոյն իմոյ, և թէ վասն մեծարանացդ զոր խոստանաս փաշայ՝ կարծես թէ հաւանիմ; և ոչ բնաւ. զի թէ զիս ի տեղի քո նստուցանես և զհուզմ իշխանութեանդքո՞ս և զտիկնութիւնդ զոր ունիս ինձ տաս և զիս գժխոյ աշխարհիս կացուցանես՝ չկարեմ փօխանակել սիրոյն Քրիստոսի՝ զոր ունիմ առ նաւ: Բայց սպառնալեացն՝ զոր ասացեր չարաշար տանջանօք մաշել զիս՝ արան ած զայն վաղվազակի ի վերայ իմ և մի յամեր, այլ փութա կատարել զոր սպառնասդ, զի ես զՔրիստոս ոչ ուրանամ»:

Եւ սրտմտեալ փաշայն ընդ բանս նորա՝ ետ հանել դնա յերեսաց իւրոց և արկանել ի բանտ և պահել ան-

սուաղ՝ մինչեւ հաւանեսցի ուրանալ զ՞րիստոս։ Եւ հանեալ զնա յերեսաց թագուհւոյն՝ և տարան առաջի դատաւորին։ Եւ ի հարցանել դատաւորին՝ նա համարձակ տայր պատասխանին։ Եւ ի սպառնալ դատաւորին՝ ասաց թաւմար. «Դիտացիր մօլիայ որ թէ զամենայն մարմինս իմ՝ մասն մասն կրատել տաս, որպէս զչամիչդ առաջի քո՝ ես զ՞րիստոս ոչ ուրանամ»։ Իսկ դատաւորն ըստ հրամանաց փաշային ասաց տանել զնա ի բանտ և թողուլ անսուաղ։ Եւ նա ուրախութեամբ տեեաց անսուաղ զաւուրս ժ։ Զի թէպէտ որք պահէին զնա տային և մատուցանէին նմահաց և ջուր, այլ նա ոչ առնոյր ընաւ։

Եւ եղեւ յետ Ժ աւուրցն՝ ժողովեցան տանուտեարքն ըրիստոնէից Աստանայ քաղաքին՝ և եկին առաջի թագուհոյն, զի ազատեալ թափեսցեն զնա։ Եղին և հազար դեկան առաջի նորա, և նա ոչ հաւանեցաւ. այլ մեծաւ սաստիւ հրամայեաց հանել զնա արտաքոյ քաղաքին և քարկոծել։

Եւ հանեալ տարան զնա ի տեղի կատարմանն և դարձեալ կրկին և բազում անգամ հարցին զնա, զի թերես հաւանեսցի ուրանալ զ՞րիստոս։ Եւ նա պնդագոյն տայր պատասխանի և դաւանէր զ՞րիստոս՝ Աստուած և Որդի Աստուծոյ։ Եւ մինչդեռ դաւանութիւնն ի բերանն էր՝ հարին զնա քարիւ մեծաւ ի դէմսն։ Իսկ նա զփանդամն իւր արկեալ զերեսօքն՝ և արար զգէմսն իւր յարելս։ Յայն ժամ բազմութիւն ամրոխին, որ գրոհ տուեալ էր և կուտեալ ի վերայ նորա՝ առեալ քարինս ձգէին ի նահատակն այն քան՝ մինչ զի ի բազմութենէ խուռն քարանցն ծածկեցաւ ակն պատուական Գաւհարն այն թամար, որ անուամբն Գաւհար էր, և ճշմարտեցաւ և Գաւհարակն եղեւ Աստուծոյ։

Եւ այնպիսի բարի հաւատով և պայծառ խօստովանութեամբ կատարեցաւ ի Քրիստոս կինն թամար, որ և Գաւհար անուանեցաւ, յահկի ամսոյ ի Ժէ, մերձ տօնի սրբոյն Գէորգեայ զօրավարին, յինաց միջնոցն, յերկուշարաթի աւուրն։

Եւ եղեւ այս ի թուականիս Հայոց ԲՃ և ԽԵ ամին։  
Խոկ անօրինացն խիստ փոշիմանեալ՝ տրտմեցան և  
յամօթ հարան։ Եւ ապա հրաման ետուն քրիստոնէիցն՝  
բառնալ և թաղել զնա պատուով, որպէս և կամեսցին։  
Եւ յամփոփելն զնա՝ տեսին զգաստութիւն կնոջն, որ զստու-  
րոտ շապկին իւրոյ կարեալ էր հնարիւ, որպէս զի մի երեւ-  
ւեսցին ոտք նորա ի քարշելն և ի քարկոծելն։ Նոյնպէս և  
զփողպատ շապկին ի փերթին էր կցեալ կարելով, զի մի  
ընաւ երեւեսցի տեղի ինչ ի մարմնոյն իւրոյ։ Այնպիսի  
հնարիւք զսպեալ էր զինքն ամենիմաստ և հանճարեղ կինն  
այն, մինչ զի տեսողացն հիացեալ՝ փառս ետուն Աստու-  
ծոյ, մանաւանդ՝ զի տեսին զերես նորա պայծառ՝ ըստ  
նմանութեան սրբոյն Ստեփանոսի նախավկային՝ հրեշտա-  
կակերպ տեսլեամբ։





28.

ՄԵԼՔԻՍԵԴ ԵՒ ԿԵՐՊԳԵՏ ՎԵՆԵՑԻ

+ ՊՄԲ=1403 յուլիս 10



Հրաման աստուածային Աւետարանին, զոր  
ասաց Տէրն, թէ նեղ և անձուկ է ճանա-  
պարհն՝ որ տանի ի կեանս, զոր բազումք ի մարդկանէ  
սիրեցին և զնիւթականս զայս կեանս ատեցին և զանան-  
ցականն սիրեցին, զկարիս մարմնոյ անփոյթ արարին և  
զցանկութիւն սորա ժուժկալութեամբ սանհահարեցին,  
ըստ ասելոյն Պօղոսի թէ՝ Որ քրիստոսեանքն են զմարմինս  
իւրեանց ի խաչ հանիցեն կարեօք և ցանկութեամբ, և  
թէ Որք կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիս-  
տոս Յիսուս՝ ի հալածանս կայցեն։ Որք առ նովաւ և յետ  
նորա և մինչեւ ցայսօր՝ բազումք եղեն հետեւողք այնմ նեղ  
և անձուկ ճանապարհին, որոյ սկիզբն և առաջնորդ նոյն  
ինքն Տէրն մեր եղեւ՝ աւանդող այսմ պատուիրանի, որ  
ասացն, թէ Որ ոչ առնու զիսաչ իւր հանապաղ և գայ  
զհետ իմ, չէ ինձ արժանի։ Որ և խրախոյս իսկ տայր իւ-  
րոց հետեւողացն՝ ասելով. «Քաջալերեցարուք, զի ես յաղ-  
թեցի աշխարհիւ։ Որոց և վարձս իսկ խոստանայր և պսակս  
յաղթանակաց, թէ «Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ  
եղիցի»։ և թէ «Ի սեղան հօր իմոյ բազմեցուցից և ես

անցեալ պաշտեցից զձեղու ևսկ որք անլուր եղեն այսմ՝  
աստուածային հրամանաց և ոչ հետևեցան հետոցն Քրիս-  
տոսի՝ նեղ և անձուր ճանապարհաւ, մարդասիրութիւնն  
Աստուծոյ իւր արժանիս համարի զնոսա և տայ նոցա ցաւս  
և չարչարանս, զի յակամայս և ի հարկէ վասն քրիստոսա-  
կան հաւատոցս տանին փորձանաց և համբերեն վշտաց.  
և այնու հաւասարին կամաւ յանձն առողացն զչարչարանս՝  
վասն անուանն Քրիստոսի, և վարձատրեալ պատկին ի Քրիս-  
տոսէ՝ ընդ կամարարաց նորա՝ որբոցն Աստուծոյ:

Ըստ որում և հանդիպեցաւ ի Վանքաղարի և յայտնի  
եղեն սիրողքն և սիրելիքն Քրիստոսի՝ Մելքիսէթն և Կա-  
րապետն, որք ի զուր մատնեցան ի ձեռս անօրինաց, թէ  
մեռեալ աղջիկ մի տաճիկ հանեալ են ի հոգէն վասն մե-  
զաց: Եւ զայն վասն արարեալ էին Հայդարի շեխերն, և  
աղդականիք մեռելոյն եղին ի վերայ քրիստոնէիցն. մանա-  
ւանդ զի ճոխ և համարձակ շրջէին: Եւ կալեալ ութ հոգի՝  
կրակեցին և զմինն ի գլխաւոր տանուտերացն հարեալ  
լոցեցին ի զլուխն և ի կուշան սրով:

Բայց մին ի յութից ըմբռնելոցն՝ Սիրանոս անուն, որ  
որդի սիրական Բելիարայ եղեւ, զՔրիստոս ուրացաւ և  
տաճկացաւ: Եւ ոչ թէ յոսի աղդաց կամ ի վատթարաց,  
այլ յոյժ գովկելոց, յընտրելոց, և յառաքինեաց, ի զարմէ  
բարի և պատուական երիցանց: Ըստ նմանութեանն Յու-  
դայի ի սուրբ գնդէն մերժեցաւ և վարատեցաւ, որպէս  
զմին ի սուրբ քառասնիցն: Եւ յառաջ մատուցեալ ասաց՝ թէ  
«Ես և իմ այլ երեք ընկերք արարաք զվնասն զայնու: Եւ  
զինքն արձակեալ ազատեցին, վասն զի ուրացաւ զՔրիս-  
տոս: Եւ մինն ի յերիցն իմացեալ փախեաւ և միւսն գնա-  
ցեալ էր ի ճանապարհ. իսկ միւսն յանմեղաց մատնելոցն  
ի զուր, էր ի տուն իւր ի Վանքաղար և էր անուն նորա  
Մելքիսէթ: Զոր կալեալ սպառնալեօք ահացուցանէին զնա-  
ուրանալ զՔրիստոս և ոչ կարացին, թէև բազում բանիւք  
ջանացին: Եւ ապա սկսան չարչարել զնա և հրացեալ  
շամիուրս երկաթի եղին ի վերայ մերկ և քնքուշ մարմա-

նոյնորա, ի քսան և վեց տեղիս Եւ նա միոյ միոյ ի դուռն  
մահու խոնարհէր և ի դաւանելոյ զ՞րիստոս Աստուած ոչ  
դադարէր:

Ո՞վ քաջութեան հաւատոյն, որ ոչ ի դուռն եկեղեցւ  
ոյ մնեալ և ոչ առ ոտս քահանայից կացեալ և ոչ ի լուր  
աստուածային գրոց պատուիրանացն սովորեալ, այլ ի տունս  
այլազգեաց մնեալ և ի վարս նոցին վարժեալ, առ ոտս  
անօրինաց կացեալ և նոցին օրինացն հմտացեալ: Բայց  
ի ծագմանէ աստուածային շնորհացն նշուլից ի սիրտ նու  
րա՝ այնքան պայծառացաւ հաւատովմն, մինչ զի ոչ վերա  
ջացաւ յառաջին սրբոց նահատակաց: Այլ ի նմանութիւն  
նոցին հանդիսացաւ և պսակաց նոցին արժանաւորեցաւ:

Եւ յետ այնքան այրեցմանն և սաստիկ տանջանացն՝  
կամէին դնել զնա ի կողով և հանել արտաքոյ քաղաքին,  
զի քարկոծեցեն: Իսկ նա իւրովի վազեաց, թէպէտ և  
կաղէր և զայնքան կարծրագոյն տանջանս չարչարանացն  
ի մարմնի իւրում տարեալ ունէր:

Եւ այնպէս ելեալ արտաքոյ քաղաքին, և անդ քարս  
կոծ արարին զնա, և հարեալ սրով կտրատեցին զմարմին  
նորտ և անդամ անդամ յօշեցին: և լուցեալ հուր այրեցին  
զմարմին նահատակին, մինչ զի և ոսկերքն ամենայն  
այրեցան:

Եւ այլազգիքն դափով և արտավանով շուրջ և բոլոր  
պարէին զգիշերն ամենայն և համարէին պաշտօն մատու  
ցանել Աստուծոյ: Եւ այնպէս կատարեցաւ սուրբ նահա  
տակն Քրիստոսի Մելքիսէթ, յուլիս ամսոյ ի տասն:

Իսկ զեարապեան գնացեալ կալան ի ճանապարհին և  
զերկու ականջմն հատին և սպառնալեօք երկեցուցանէին  
զնա, զի ուրասցի զ՞րիստոս: Եւ նա ոչ թուլացաւ ի հաւ  
տառոց Քրիստոսի, այլ արխաբար և նա մարտիրոսացաւ  
յնստան քաղաքի, և հրով այրեցաւ յետ կատարմանն, որ  
պէս և սուրբն Մելքիսէթ ի վահն:

Գործեցաւ այս ի թուականիս մերում ՊԵՐ ամին:





## 29.

ՅՈՎՀԵՆՆԵՍ ՔԵԶԵՆԵՅ ՀՄՅԿԵԺԵԴՅՅԻ

† ՊՄԲ=1403 սեպտ. 10.



ուրբ քահանային Յովհաննէս էր ի քառ  
զաքէն Յերապոլեայ, որ այժմ Զմշկա-  
ծագ կոչի, բարեյաղթ ծնողաց զաւակ-  
այլ և Երկիւղաձ Աստուծոյ, հեղ, խա-  
ղաղարար, խոնարհ, համբերօղ, Երկայ-  
նամիտ, ազօթասէր, ժիր, աղքատասէր,  
ողորմած, գթած ի վերայ տնանկաց,  
որբոց և այրեաց խնամածու։ Եւ ամուսնացեալ էր ի կարդ-  
աշխարհի. բայց այնպէս էր յաշխարհի, որպէս հրեշտակ ի  
մարմիի, և որպէս տաէ առաքեալն թէ «Ունիցիմք կանայս,

որպէս թէ ոչ ունիցիմք, զի անցեալ է վայելչութիւն աշ-  
խարհիսաւ Զի այնպէս սուրբ և մաքուր էր մարմնով, որպէս  
միշտ և հանապաղ զ՞րիստոս պատարագէր:

Եւ յազդմանէ չարին ոխացան այլ քահանայք քաղա-  
քին ընդնմա և զբազում ժամանակս հալածական պա-  
հէին զնա ժողովրդեամբ իւրովի Եւ սուրբն որտնեղեալ  
ի նոցանէ, առեալ զիւր ժողովուրդն՝ գնաց արտաքոյ պա-  
րսպին ի տեղին՝ որ կոչի Կարմիր Սարուկ: Հիմն էարկ մեծ  
և հրաշափառ եկեղեցւոյ և առեալ հրաման յամիրայէն՝  
որ կոչի մելիք Մահմուտ, շնեալ կատարեաց զեկեղեցին,  
բայց փայտաշէն:

Իսկ այլ քահանայք քաղաքին ոխացեալ էին ընդ բանս  
նորաւ Երթեալ չարախօսեցին զսուրբն մելիք Մահմուտին  
և Սայտի բէկին, որ նստեալ էին յ՛նչպակ բերդին՝ որ է  
յանդիման քաղաքին: Եւ յայնմ աւուր արքեալ էին, զի  
դինի ըմնպէին: Եւ բարկացեալ ամիրայն մելիք Մահմուտ  
և Սայտի բէկ՝ ամժուռակիցն իւր ետուն հրաման զօրացն  
իւրեանց երթալ քակել զեկեղեցին:

Եւ ի մի վայր ժողովեալ և գնացեալ արարին ըստ  
հրամանաց բոնաւորին և բորբոքեցին հրով, և զսուրբ  
քահանայն Յովհաննէս կապեալ ոտիւք և ձեռօք՝ արկին  
ի հուրն: Եւ այնպէս աւանդեաց ի մէջ հրոյն դհոգին ի  
ձեռն Աստուծոյ: Եւ մազ մի ի գլուոյն և ի մուրուացն ոչ  
էր կիղեալ: Եւ կարեալ զսուրբ աջն տարան ի բերդն առ  
ամիրայն: Եւ ի տանելն զսուրբ աջն՝ շնորհօքն Աստուծոյ  
և մատոնիքն՝ որպէս մոմ վառէին, քանդի գիշեր էր:

Իսկ ամիրայն տեսեալ զսուրբ աջն՝ զզչացեալ ար-  
տասուեաց: Եւ յառաւօտուն լոյս պայծառ ծագեաց յերկ-  
նից ի վերայ սուրբ մարմնոյ նորաւ Որոց ամենեցուն տեսեալ  
արք և կանայք՝ Հայք և Տաճիկք՝ հիացեալ փառս ետուն  
Աստուծոյ: Եւ ի վաղիւն հրաման առեալ յամիրայէն քրիս-  
տոնեայքն՝ երթեալ բարձին զսուրբ մարմինն հանդերձ  
աջուն և տարեալ թաղեցին յեկեղեցին՝ մեծաւ պատուով  
որ կոչի Աստուծածին՝ ի ներքս պարսպին:

Կատարեցաւ սուրբ քահանայն Յովհաննէս ի թուաւ  
կանիս մերում՝ Պ և Ծ՛Բ ամին, յամսեանն սեպտեմբերի  
ի Ժ. Եւ ևս նուաստ Դաւիթ եպիսկոպոս արարի զպատշ-  
մութիւնու:





## ՅՕ.

ԽՍՀՀԵԿ. (ՅԱՎԱՀԻՓ) ՊԱՐՄԱԿ ԹՇԻԹԻԺԵՑԻ

† ՊԿԶ = 1417 ապրիլ 18.

**Ո**ւ էր ի մայրաքաղաքէն Շահաստանայ, որ է  
թաւրէղ, ազգաւ Պարսիկ և հաւատով Տա-  
ճիկ, յոյժ չարաբարոյ և ժանտ, ի տիս մանկութեան ա-  
նառակ և վայրադնաց, լիրը և յանդուգն, հալածիչ քրիս-  
տոնէից, ոչ ունելով բնաւ պակասութիւն չարեաց. այլ էր  
բոլորովին կամաբար սատանայի և դիւաց նորա-  
ն. յաւուր միում ի տեսլեան երկեցաւ Քրիստոս նմին  
Ասհակայ, որպէս առաքելոյն Պօղոսի ի մուտն Դամաս-  
կոսի: Եւ զերիս աւուրս, որպէս մեռեալ՝ անկաւ յերկիր  
իսահակն այն: Եւ ապա ուշաբերեալ՝ զարթեաւ և պատ-  
մեաց հօրն իւրոյ և եղբարցն զտեսիլն և ասաց թէ «Ճշ-  
մարիտ Քրիստոս Աստուած է և Արդի Աստուծոյ»: Եւ եր-  
թեալ առքահանայսն Հայոց Ալրտեցաւ և փութապէս  
ուսաւ զգիրս Հայոց ի չնորհացն Աստուծոյ: Գիտէր և  
զջաճկաց գիրսն և էր յոյժ արագամիտ և տեսօղ, որով  
մեկնէր զամենայն գիրս աստուածային Հին և նոր Կոտա-

կարանաց և ի գլուխս բաժանէր եր և կարի տրամաբառնօդ ընդ ծաճկաց և ընդ երկարնակ հերձուածօդ քրիստոնէից և փոյթ՝ ի պատասխանիու Ուղղափառ մտօք քարոզէր անհաւատիցն զ՞րիստոս Աստուած և զբազում ածէր ի հաւատո ծմբարիտ և լուսաւորէր զնոսա վերստին ծննդեան չնորհօք՝ մկրտութեամբ սուրբ աւազանին ԶՔրիստոս Աստուած քարոզէր և զՄահմետ սուտ և խարերայ անուանէր՝ Կարապետ Նեռինն և մոլորեցուցիչ՝ մարդ անօրէնութեան և որդի կորստեան:

Զոր կալեալ Պարսիցն՝ կացուցին զնա յատենի և հարցանէին: Եւ նա յայտնապէս դաւանէր զ՞րիստոս Աստուած և հաստատէր վկայութեամբ գրոց ի Հայոց և ի Պարսից՝ ի սուրբ Աւետարանէն և ի Ղուրանէն: Եւ նորաշատ ջանացին ողոքանօք և սպառնալեօք, զի դարձցի յառաջին մոլորութեան հաւատոն իւր հայրենի՝ և ոչ կարացին, և սկսան գանել զնա և չարչարել ի քաղաքն Թաւրէզ: Եւ կիսամահ արարեալ՝ թողին, և նա ոչ դադարէր ի քարոզելոյ զ՞րիստոս Աստուած:

Եւ անտի գնաց ի Հէշատ, և անդ քարոզէր և զբազումն յանհաւատիցն ի հաւատոս ածէր և զհաւատացեալան ի զղջումն ածէր և ի խոստովանութիւնն շարժէր քարոզութեամբն իւրով: Զմեզս խոստովանել ուսուցանէր մարդկան և ուղիղ հաւատով զ՞րիստոս Աստուած պաշտել Եւ անդ ևս բազում չարչարանս անցուցին ընդ նա:

Եւ անտի գնաց ի քաղաքագիւր մի, որ կոչի Գուռննաւայ՝ և անդ ևս քարոզեաց զ՞րիստոս Աստուած, և չարչարեցաւ յանօրինաց:

Եւ անտի երթեալ ի քաղաքն Լայիլան ի քարոզել զ՞րիստոս Աստուած՝ և անդ կալան զնա և կամեցան այրել հրով, և ոչ այրեցաւ:

Եւ անտի գնաց ի Նախչուան: Եւ անդ կալան զնա վասն ի Քրիստոս հաւատոցն և ձգեցին ընդ պարիսպ քարին ի վայր, և ոչ վիասեցաւ:

Եւ անտի դարձեալ եկն ի Թաւրէզ և գնաց ի Մա-

բաղայ՝ ուր կալան և կախեցին զնա գլխիվայր դերիս տիւս-  
և զերիս գիշերս՝ վասն ի Քրիստոս հաւատոցն։ Եւ Աս-  
տուած պահեաց զնա անմնաս։

Եւ այնպէս չընագայեալ ի Քրդաստան, ի Պարսկաս-  
տան, ի Հայաստան, ի Վրաստան, յԱսորեստան, ի Բաղ-  
դատ և յայլ բազում տեղիս՝ քարոզութեամբ ածեալ զբա-  
զումն ի հաւատոս Քրիստոսի զամն բառասուն այնպէս ջա-  
նաց և ի նոյն ծերացաւ։

Եւ յետոյ երթեալ ի Շրուան ի քաղաքն Շամախի՝ և  
յօրդառատ վարդապետութեամբ քարոզեաց անդ զՔրիս-  
տոս, և զբազումն լուսաւորեաց ի լոյս աստուածդիտու-  
թեան։

Զոր կալեալ անօրինացն տարան առ դատաւորն ի հար-  
ցանել։ Եւ նա յայտնապէս խոստովանեցաւ զՔրիստոս  
Աստուած։ Եւ նոքա բազում ինչս խոստացան տալ նմա,  
թէ ուրանայ զՔրիստոս։ Եւ շատ ջանացին ողոքական  
բանիւք և դարձեալ սպառնալեօք ահացուցանել զնա, և  
ոչ կարացին խախտել զսուրբն ի հաւատոցս Քրիստոսի, զԵ-  
հաստատեալ էր հիմն ի վերայ վիմի։

Եւ ապա հատեալ ի վերայ նորա վճիռ սպանման՝  
իսկ նա զգեցեալ էր զՀոգին Սուրբ և լի էր շնորհօք, զօ-  
րութեամբ և հաւատով։ Ոչ երկնչէր ի շանցն, որ պատեալ  
էին զնա, և ոչ վախէր ի գայլոցն, որ ծարաւիք էին ար-  
եան նորա։

Եկեալ աստուածային չնորհացն և իջեալ ի վերայ նո-  
րա՝ և լուսափայլէր իբրև զհրեշտակի պատկեր նորա։ Զօ-  
րութիւնն Քրիստոսի բնակեալ էր ի նմա, և նովաւ պայ-  
ծառանայր ի մէջ սպանողացն տեսիլ նորա։ Ոչ երկնչէր  
ամենելին ի մահուանէ, և վկայէր լուսափայլութիւն երե-  
սաց նորա։ Լի էր հոգւովն սրբով և արժան էր վկայ լի-  
նել Որդւոյն Աստուածոյ։

Յայնժամ զօրացաւ վկայն Քրիստոսի ի մէջ անօրի-  
նացն և ասաց ցդատաւորն. «Խնդիր մի հայցեմ ի քէն.  
եթէ կատարես՝ ինձ մեծ երախտաւոր լինիս եւ քո հա-

լալն քեզ հարամ լինի, եթէ զայս ոչ առնես՝ որ զիս հրովարես ի նշանակ սիրոյն իմոյ, որ վառեալ եմ ի սէրն Քրիստոսին:

Երբեք հասին ի տեղի կատարմանն՝ մի ոմն յանհաւատիցն եհար ուժգին հաստ ըրով ի գլուխ սրբոյն, մինչ զի ուղեղն արիւնախառն յերեսն ի վայր թափեցաւ: Եւնա գոհանայր զԱստուծոյ, որ հասոյց զնա մարտիրոսական նահատակութեան:

Յայնժամ գրոհ տուեալ բազմութիւն ամբոխին քարկոծ արարին զնա և զմարմինն հրովարեցին: Եւ ի գիշերին յայնմիկ լոյս պայծառ ծագեաց ի տեղի կատարման սրբոյն, ի վերայ այրեցեալ մարմնոյն, զոր ակներեւ տեսին ամենայն այլազգիքն:

Կատարեցաւ սուրբ նահատակն իսահակ յապրիլ ի ժը, ի թուականիս մերում ՊիԶ ամին:





## 31.

Յ Ե Մ Ա Բ Պ Վ Ա Ն Ե Ց Ի

† Պիլ=1418

**Ս** կին էր ի Վանայ, աղքաւ հայ և հաւասով քրիստոնեայ, առնակին ըստ կարգի օրինաց Եւ ընդ այն ժամանակս եղեւ աստուածասատ բարկութիւնի վերայ աշխարհիս, մանաւանդ Հայոց աղքիս Յամի Պլ. Թուականիս, այր ոմն արեանարբու և դազանաբարոյ, աղքաւ Թաթար, Թամուր անուն, բազում հենիւ ել յԱրևելից՝ այլադէմ զօրօր, դառն և դժուար կերպարանօք, ի Սըմբրդանդայ և եկեալ կալաւ զիորասան և զբոլոր Պարսկաստան։ Եւ ի դուրս եկեալ տիրեաց բովանդակ տանս Հայոց և մասնաւորաբար այլոց բազմաց, շատ վնաս արար և բազում ոճիրս գործեաց և աւեր աշխարհիս անասելի, զոր մարդ ընդ դրով ոչ կարէ արկանել, որք ընդդիմանային նմա և ոչ հնազանդէին։

Յորոց և մի էր ի բազմացն Վան քաղաք, ուր զբազում կոտորեաց և քան զհինդ հազար անձինս աւելի

հայ և տաճիկ քարավէժ արար՝ և թէ ուրբան խեղճ և ոզորմ. զի յառաջ զիշսան տեղւոյն և զտէր բերդին զՓիւրիբէկ ամիրայն ձգեցին ի բերդէն և նա զայլս ի ձգողացն ի հետ քարչեաց յանբաւ բարձրութեանցն ի վայր։ Եւ մնամ թէ դեռ ի վայր չէին անկեալ, զինչ մեռան ի վայր անկանիլն։

Յայնժամ հնարս իմացան գաղանամիտ մարդիկըն և կապէին հինգ և վեց, եւթն և ութ ի մի և փայտիւ մղեալ՝ ի բարձրութենէն ի վայր հոսէին. և այնպէս զայնքան բաղմութիւն մարդկան քարավէժ մահացուցին։ Եւ այնչափ զմնադէզն բարձրացուցին, որ յանկանելն այլ ոչ մեռանէին, թող զայլսն որ ի չարչարանսն և սրով կոտորեցին և որք ի նղմունս և ի գարանս մտին և այլ ոչ ելին, այլ անդէն խեղդեալ հեղձամղձուկ եղեն։

Եւ զայս ի բազում տեղիս արարին՝ ընդ որ նոքա գնացին, ի Բաբելոն և յԱսորեստան, ի Շամատունն և ի Հոռոմն, մինչեւ ի ծովս Պոնտոսի և յՈվկիանու կոխեցին. և զկզզիսն ի մէջ ծովուն ահաբեկ արարին։ Եւ զերիս և զչորս անգամ զՎարացտունն քանդեցին և աւերեցին, դերեցին և կողոպտեցին և զթագաւոր նոցին ձերբակալ արարին։ ԶՄարայ Սուլտանն հարկատու արարին, զՀոռոմոց Սուլտանն գերեցին և մահացուցին. և այլ բաղում և անպատում աւերս արարին։

Յայնո՞ւ աւերմանն որ ի Վան եղեւ, սպանաւ այրն Յիշմարին, — քանդի այն էր անուն նորա, — և նա մնաց անտէր և անայցելու։ Եւ հանդիպեալ նմա քուրդ մի, ասէ ցնա. «Եկ ի տուն իմ և արա մեզ հաց, զի կերիցուք ի միասին»։ Եւ նա հաւանեալ գնաց ի տուն քրդոյն և եղեւ աղալսին կնոջ քրդոյն։ Եւ յետ աւուրց ինչ մեռաւ տիկինն։ Եւ քուրդն անկաւ ընդ Յիմարին և եղեն ի նմանէ որդի և գուստը քրդին։ Եւ տեսեալ աղգականաց քրդոյն, զի կինն քրիստոնեայ էր և ասեն ցնա. «Հաց քո չէ ուտելի, զի կինն քո քրիստոնեայ է. տաճկացն զնա»։

Ասէ քուրդն. «Ես ի նա հաւան եմ, նա զիւր հաւատն պաշտէ և ես զիմն»:

Ասեն այլազգիքն. «Ո՛չ այդպէս, այլ տաճկանալ պարտէ նմա, զի քո տղայոց մայր է»:

Եւ նա ասաց. «Դնուք դիտէք, եկայք, տաճկացուցէք զնա»:

Եւ զնացին մուզրիք և այլք ի Տաճկաց և ասեն ցկինն, թէ «Ուրացիր զ՞րիստոս և տաճկացիր»: Եւ նա ոչ կամէք ուրանալ զ՞րիստոս:

Եւ ի ստիպելն նոցա՝ ասաց Յիմարն. «Ես զ՞րիստոս ոչ ուրանամ, զի հայ եմ և քրիստոնեայ և զ՞րիստոս Աստուած հաւատամ»: Իսկ նոքա այլ հնաբս խմացան և ասեն ցնա, «Առ քարինս երեք և ձգեան յազօթարանն քրիստոնէից»: Եւ ի նեղելն նոցա զնա, էաու երեք քար և ձգեաց յազօթարանն իսկ անօրէնքն ծիծաղեցան և թողեալ զնա ի բաց զնացին: Եւ կինն եկաց մնաց ի տունն յայն, աւելի քան զքսան տարի: Եւ ապա զզջացաւ կինն այն և գնաց ի Մակու, վասն զ՞րիստոս համարձակ պաշտելոյ, զի տեղն ընդ իշխանութեամբ քրիստոնէից էր յայնոմ ժամանակի: Եւ լոււաւ անդ ի յոմանց, թէ ուր կարծիք ուրացութեան լինի, անդ և հաստատութիւն հաւատոցն երեեսցի: Վասն որոյ և դարձեալ ի Մակուայ, եկն ի վանքաղաք, առ քուրդ որդին իւր: Եւ ստէպ ստէպ երթայր յեկեղեցին, զոր տեսեալ անօրինացն միանդամ և երկիցս և ասեն ցքուրդն, թէ «Ծնդէլ թողուս զկին քո երթալ յեկեղեցին»:

Եւ նա ասէ ցնոսա, թէ «Ես զնա յիւր կամացն դարձուցանել ոչ կարեմ: դնուք դիտէք. թէ կամիք, հարցէք զնա»:

Եւ ի միում աւուր, մինչ նա ելեալ էր յեկեղեցւոյն և երթայր ի տուն, պատահեցաւ նմա մուզրի մի և երկու տաճիկ ընդ նմա, և ասեն ցնա ցասմամբ. «Ուստի դաս»:

Ասէ Յիմարն. «Յեկեղեցւոյն»:


Եւ նոքա ևս ի բարկութիւն շարժեալ առեն, «Վասն  
Էր երթաս յեկեղեցին»:


Ասէ Յիմարն, «Վասն այն երթամ՝ յեկեղեցին, որ  
զայն երեք քարինսն, որ յազօթարանն ձգեցի, ես ի կա-  
ռավիս իմ՝ առնում»:

Յայնժամ՝ եհար մուզրին զգլուխ նորա, և նա փախս  
տուեալ դէպ յարեւելս և ասաց, «Ի հետո եկեք և ի տե-  
ղիս երեւլիս քարկոծեցէք զիս»:

Եւ մուզրին այն ձայն տուեալ որոց մերձն կային  
ի քարափոսին, և դրոհ տուեալ ի հետ զնացին և զկինն  
Յիմար անդէն ի տեղին քարկոծ արարին, Եւ նա այնպէս  
բարի հաւատով կատարեցաւ ի Քրիստոս, կինն Յիմար, զի  
այս էր անուն նորա:

Գործեցաւ այս ի թուականիս Հայոց Պիլ ամին:





## 32.

ԶԵՔԵՐԻԿ ՏԵՂՈՒՑԷՐ

† ՊԿԹ=1420

Եւ յառաջ քան զայս (զՄուրատշահ) տանուտէր  
մի Զաքարիէ անուն ըմբռնեալ և ի պարանոց նորա պա-  
րան արկեալ՝ հեղձուցին զնա. որոյ յիշատակն օրհնու-  
թեամբ եղիցի, և ազօթիւք սորա Տէր Յիսուս Քրիստոս  
մեզ ողորմեսցի և ամենայն քրիստոնէլից. ամէն:






33.

ՄՈՒՐԱՑԵԱՀ ԱՐԺԿԵՑԻ

† Պիթ=1420

**Լ**ր ի քաղաքն Արծկէ այր մի բարեպաշտ և  
երկիւղած, աստուածասէր և սիրող սրբու-  
թեան, յոյժ խոնարհ և կարդաւորասէր և ամենայն չար-  
եաց ատեցող. և տիւ և գիշեր յազօթս կայր եզրարբք և  
որդւով և ամենայն ընտանեօք: Եւ էր անուն նորա Մու-  
րանցահ՝ պատկերով քաղցր և ողորմած: Եւ կոխեալ էր  
զամենայն անօրէնս քաղաքին, մինչ զի նոր հիմն եղ ի մէջ  
անօրէնաց խաչիւ և աւետարանաւ ջուր օրհնել ի Յայտ-  
նութեան Տեառն: Եւ էր իբրև թագաւոր քրիստոնէից  
ի մէջ ծովու բոլորիս: Եւ նախանձեալ սահտանայի և կա-  
մարարաց նորա չար աղբէն՝ մատնեցին զնա քաղաքապե-  
տին: և նոցա ոխ ունելով ընդ նմա՝ մատնեցին զնա քա-  
ղաքացիքն անօրէնք թոյլտուութեամբ մերոյ ազգիս պղծոյն  
և չարագործի Զենոն անուն: Եւ նորա եղեալ ի բանտի,  
նետալից արարեալ և ի գղեկէն ի վայր արկեալ՝ եհաս  
մարտիրոսութեան և անանց պսակացն:





## 34.

ՄԿՐՏԻՉ, ՅՈՎՀԵՆՆԵՍ, ԱՐԻՍՏՈՆԻՍ


ԵՒ ՅՅԼ ՈՒԹ ՎԿԵՑՔ

† ԳԿԹ = 1420.



այց և զայս գիտելի է, զի ի սոյն աւուրս  
պիղծ իշխանն Փիրալի անուն, որ նստեր  
ի քարն Ամկու, երեք անգամ՝ ի սոյն ամի զերկիրն Արծի-  
շու և Արծկու դերեաց և կողոսպտեաց և ի գիւղն Զերա-  
շատ զձեռնաւորն Մկրտիչ անուն ուժն մարդով ընտան-  
եօք տան իւրոյ ի հուրն այրեաց։ Եւ բարեպաշտ ձեռնա-  
ւոր մի Յովհաննէս սպան ի գիւղն Ասպիսնակ։ Եւ եղբայր մի  
ծառայիս (Թովմայ վարդապետի Մեծոփեցւոյ) Արիստակէս  
անուն ի հուրն խորովեցին իբրև զգառն անմեղ։ Եւ վասն  
Քրիստոսի սոքա այսպէս նահատակեալ ընկալան ի Քրիս-  
տոսէ զպսակն անապական, որ և գործեցեալ մեղաց նոցա  
թողութիւն առնէ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ամէն։





35.

ՎԵՐԴԱՆ ԲԱԳԻՇԵՑԻ

† Պ. 1421 յունուար 4 շբ.



Եծ և ահաւոր և սքանչելի է խորհուրդ Արարջին, և սէրն Քրիստոսի ի վեր քան զտեսութիւն մտաց և աչաց, որ յամենայն ժամանակի ընտրէ իւր արժանաւորս և անպատճմ փառացն հաղորդս. քանզի Տէր է ժամանակաց, և ամենայն արարածք նմա հնագանդին: Արդ՝ որպէս զանբան տունկս և զբոյս ի պատիւ մարդոյս զարդարեաց՝ այսպէս և զմարդս, որ է բանաւոր տունկ ի պատկեր իւրոյ բարերարութեանն և ի փառս տիրական իշխանութեանն շքեղազարդեաց: Եւ որպէս զմարդս ի վերայ բուսոց և անկոց զուարճացոյց՝ այսպէս և Աստուած ի բանաւոր տունկս եկեղեցւոյ փառաւորի, որպէս ասէ Սաղմոսն, «Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս որբոց իւրոց»: Եւ որպէս տունկն յիւրաքանչիւր սահմանեալ ժա-

մանակի տայ զպտուզս՝ այսպէս և սուրբք ի մարդկանէ յամենայն ժամանակի տան զպտուզս առաքինութեան բարերարին Աստուծոյ. ըստ այնմ որ զպտուզ իւր ի ժամու տացէ՝ տերեւ նորա մի թափեսցին Եւ քանզի յամենայն ժամանակի գեղեցիկ են պտուզք և ախորժելի մարդկան՝ այլեւ առաւել՝ փափագելի է, յորժամ նորահաս լինի և կամ յորժամ հատեալ լինի յամենայն ծառոց. ևս առաւել՝ ի ժամանակս ձմերան։ Այսպէս և ամենայն սուրբք հաճոյ են և ժառանգորդք արքայութեանն։ Այլ առաւել ընդունելի են առաջինքն, որք նախածաղիկք եղեն Աւետարանին Քրիստոսի, որպէս նախավկայն սուրբն Ստեփաննոս։

Եւ յերեկոյացեալ ձմերային եղանակ՝ յորում՝ հատեալ է պտուզ բարութեան յազգէ մարդկան՝ յայսմ սառուցեալ և ցամաքեալ բազմալիշտ և դժնեայ ժամանակիս՝ երեցաւ գեղեցկատիպ և առաքինասէր քրիստոսազգեաց և առտուածային խաչին հետեւօդն՝ մեծ և պատուական նահատակին՝ Վարդան վարդագոյն պատկերն։ Զորոյ հանդերձեալ եմ պատմել զքաջութիւն սորա, որ իւր կամաւ մատնեցաւ վասն սիրոյն Քրիստոսին Եւ քանզի ոչ արժէ բոլոր աշխարհս զմի ի սրբոցն Աստուծոյ ըստ բանի առաքելոյն Պօղոսի՝ այսպէս և ես մի եմ յաշխարհասէր անձանց մեզօք զառածեալ, հոգով մոլորեալ և մոօք ցնորեալ, ոչ եմ արժան պատմել զքաջցրութիւն սրբոցն Աստուծոյն Այլ սիրոյն ջերմութեամբ մոռանամ զազքատութիւն մտացս, յուսալով յԱստուած Սուրբ Հոգին, որ զազքատն մեծարէ և զտղէտն իմաստնացուցանէ, զի տացէ ինձ բան պատմել զքաջութիւն սրբոյ նահատակին Վարդագանայ՝ խօսել և ասել։

Երանելիս այս Վարդան էր յերկրէն Բաղիշոյ, ի գեղջէն Դատուանայ։ Ըստ կարգի աշխարհի ամսւանացեալ և կացեալ ժամանակս ինչ առ կինն և որդիսն, և ապա թողեալ զտունն իւր և զբնական տեղիսն՝ և զրջէր ի վանուրայս առ սուրբ հարս և առաքինասէր անձինս, հանապազ

աղօթս առնելով ի տուէ և ի գիշերիւ Եւ եկեալ յետոյ  
ի Բաղէշ քաղաք ըստ ամենագէտ յաջողելցյն Աստուծոյ+  
դոր յայնմ ժամանակի էր պարոն քաղաքին ոմն ազգաւ  
Քուրդ, Շամշադին անուն, և էր չարացեալ ի վերայ աղ+  
գիս Հայոց, և բռնադատէր զքրիստոնեայս՝ ուրանալ զՔրիս+  
տոս և դառնալ յօրէնս խւրեանց Եւ զայս օրէն եղեալ  
անձին իւրոյ երկրորդն Յուրիանոս, զի զամենայն զոր տե+  
սանէր ի քրիստոնէիցն՝ զայն ասէր դառնալ յօրէնս իւր:

Զոր տեսեալ զայն երանելի և հաւատարիմ ծառայն  
Աստուծոյ սուրբն Վարդան՝ ողբայր և հառաչէր ընդդէմ  
տարակուսանաց քրիստոնէից: Ապա ի միտ ածեալ զբան  
մարդարէին որ ասէ. «Խօսէի զվկայութիւնս քո առաջի  
թագաւորաց և ոչ ամաչէի»: Եւ զբան ծեան որ ասէ.  
«Յորժամ տանիցեն զձեղ առաջի դատաւորաց և թագաւ+  
որաց՝ մի հոգայցէք, զի ես տաց ձեղ բերան և իմաս+  
տութիւն, որում ոչ կարացցեն կալ հակառակ և կամ տար  
պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր»:

Յայնժամ զօրացեալ հոգւովն Աստուծոյ սուրբն Վար+  
դան՝ աղաշէր զմի ոմն ի քահանայիցն և ասէր. «Եկայք,  
ցուցէք ինձ զճանապարհ բերդին և զդուռն պարոնին, զի  
երթայց և խօսեցայց ընդ նմա դէմ յանդիման և տեսից,  
եթէ վասն էր նախատէ զազդս Հայոց և զգնեալքս ար+  
եամբ Որդւոյն Աստուծոյ՝ զպատուական վիճակ սուրբ Լու+  
սաւորչին մերոյ Դրիգորինա»:

Եւ ծազր թուէր բանս նորա յաջս ամենեցուն և ոչ  
գիտէին, թէ վառեալ էր նա ի սէրն աստուածային և կա+  
մէր չարչարիլ վասն Քրիստոսի և մտանել յառագաստն  
լուսոյ և խառնիլ յերամն սրբոցն:

Յայնժամ ելեալ կաման խրով՝ և առաջնորդէր նմա  
խաչեալն Քրիստոս, գնաց ի գուռն ամիբային և ոչ կարէր  
տեսանել զնա: Ապա աղաչեաց զոմանս ի ծառայիցն և  
ի վերակացուաց դրան նորա և ասէ. «Կամիմ զամիրայն  
տեսանել և ունիմ բան ինչ ասել նմա:

Եւ նոքա հրաման տուեալ ի պարոնէն՝ մուծին զՎար-

դան առ նաւ եւ ուրախացեալ ամիրայն՝ կարծէր թէ ի հաւատն իւր դառնայ: Յայնժամ ասէ Վարդան, «Բան ինչ ունիմ ասել քեզ»: Ասէ ամիրայն, «Խօսիր»: Ասէ Վարդան, «Ես և դու միոյ Արարի ստեղծուածք եմք և ի միոյ ծնուզաց յառաջ եկեալ՝ յԱղամայ և յԵւայէ, և մարդ մի դու ես և մին մարդ ես եմ: Եւ դու ի՞նչ աւելի ես քան զիս, որ նախատես զիս թէ Աստուած քեզ թագաւորութիւն է տուել և ինձ աղքատութիւն: Դու ընդէր հպարտանաս ի վերայ մեր»: Ասէ ամիրայն, «Զի օրէնքն մեր լաւ է քան զձերն»: Ասէ Վարդան, «Դու ասես զայդ, այլ ամենայն աղքի օրէնք իւրն լաւ թուի, քան զմիւսոյն: Աստուած եւթանատն և երկու լեզու է քաժանել, և ամենեցուն օրէնք կայ: Միթէ հրամանքդ քո աւելի է քան զԱստուծոյն, որ կամենաս զամենեսեան ի քո օրէնքդ փոխել: Եւ եթէ առաջնորդն ձեր ոչ կարաց հաւանեցուցանել զազդս Հայոց՝ միթէ դու աւելի ես քան զնա»: Ասէ ամիրայն, «Յիշեա զանուն առաջնորդին մերոյ և գարձիր յօրէնս մեր, և բազում պարզես տամ քեզ»: Ասէ Վարդան, «Ես ոչ եմ սովորել յիշել զանուն առաջնորդին ձերոյ, այլ Յիսուս Քրիստոս է առաջնորդն իմ և է Աստուած ամենայնի, որ իջեալ յերկնից յերկիր՝ լոյն ի Հօրէն լուսոյ, և մարմնացաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, չարչարեալ և խաչեալ, թաղեալ և յարուցեալ ի մեռելոց, համբարձեալ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր: Նա է Աստուած իմ և պարզեատու: Եւ ես վամն էր թողում զկենդանին և մեռելոյն հնազանդիմ»:

Յայնժամ բարկացեալ ամիրայն և եհար երկոքին ձեռոքն զգլուխն Վարդանայ: Եւ նա ասէ, «Ո՛վ ամիրայ, եթէ երկնէի ես ի հարկաներոյդ քո՝ ոչ գայի առ քեզ: Այլ վասն սիրոյն Քրիստոսի Աստուծոյն իմոյ զման յանձն առնում: զի զնա տեսանել արժանանամ, յորժամ փոխիմ յաշխարհէս»:

Յայնժամ հրամայեաց ամիրայն տանել զնա ի բանս և չարչարել ասելով. «Մի թէ հաւանի կամաց մերոց»: Եւ

առեալ զսուրբն Վարդան՝ տարան ի բանտ Եւ նա ուրած խութեամբ երթայր և դոհանայր զԱստուծոյ: Եւ տարեալ զնա ի բանտ մերկ և բոկ և գլխիբաց: Եւ էր աւուրբն ձմեռնային Յայննութեան պահոցն: Եւ եղին զնա ի կունեղս և չարչարէին: Եւ նա ի փառաւորելոյ զԱստուած ոչ դադարէր, այլ ասէր. «Գոհանամ՝ զքէն Քրիստոս Աստուած իմ, որ արժանի արարեր զծառայս քո լինել՝ քեզ չարչարակից: Ազաշեմ զքեղ Տէր, առուր համբերութիւն ծառայիս քո, զի կարօղ լիցիմ տեել տանջանացս և դալ առ քեղ»:

Եւ զերիս աւուրս ոչ դադարէին ի չարչարէլոյ զսուրբն Վարդան: Ապա հրամայեաց ամիրայն կրկին տանել զնա առաջի իւր: Ասէ Վարդան, «Ղամն ինչ պատճառի տաս զիս չարչարել. վասն գողութեան թէ վասն չնութեան և թէ վասն այլ իրիք անիրաւութեան: Եթէ զծմարիտն ասեմ և զհաւատոյ դաւանութիւնս յայնեմ քեզ ինչ է»: Ասէ ամիրայն. «Եկեալ ես նախատել զօրէնս մեր, և զօրէնըն քո ճշմարիտ տոնես և զՔրիստոս՝ Աստուած ասես՝ վասն այն չարչարէմ զքեղ»: Ասէ Վարդան. «Ո՛վ ամիրայ, ես և դու դատաստանօք խօսիմք: Յօրէնըն ձեր երկու և երեք մարդ, որ ի վերայ մի բանի վկայեն՝ սուտ է բանն այն թէ ճշմարիտ»: Ասէ ամիրայն. «Ճշմարիտ»: Ասէ Վարդան. «Քրիստոսի աստուածութեանն երկոտասան ազգք վկայեն: Եւ ի գիրս ձեր գրեալ է Յիսա ոռոհ ալլահ, որ ասէ Աստուծոյ հոգի: Ես զնա Աստուած հաւատամ»: Ասէ ամիրայն, «Զառաջնորդն մեր ընդէր ոչ յիշես»: Ասէ քաջն Վարդան. «Քո հայրն ամիրայ էր և մեռաւ, և դու ամիրայ ես և կենդանի: Արդ այս մարդիկս քեզ հնազանդ կենան և թէ քո հօրն»: Ասէ ամիրայն. «Ինձ»: Ասէ Վարդան. «Ապա ես վասն էր թողում զկենդանի Քրիստոս Աստուածն իմ և մեռելոյն հնազանդիմ»:

Եւ այլ բազում բանս խօսեցաւ սուրբն Վարդան և յանդիմանէր զնա: Եւ ամիրայն և մեծամեծքն իւր զարմացան ընդ համարձակ խօսս նորա: Քանզի ոչ թէ նա էր

որ խօսէր, այլ Հոգին Աստուած խօսէր ընդ քերան նորա  
ըստ վկայութեան Աւետարանին՝ զոր խօսեցաւ Քրիս-  
տոս:

Յայնժամ բարկացեալ ամիրայն ասէ. «Տարէք զգա  
առ դատաւորն մեր, զինչ հրամայէ՝ զայն արարէք»: Եւ  
առեալ տարան զնա առ դատաւորն: Եւ ասէ դատաւորն.  
«Զի՞ է զի առաջի ամիրային դարձեալ ես յօրէնսն մեր և  
յետոյ փոշիմանեալ»: Ասէ Վարդան. «Ես ոչ եմ խախտեալ  
յօրինացն իմոց, այլ քրիստոնեայ եմ ծնեալ և եմ ընդ  
Քրիստոսի Աստուծոյն իմոյ, և կամիմ քրիստոնեայ մեռա-  
նելու Ասէ դատաւորն. «Դիտացիր որ թէ ոչ դառնաս յօ-  
րէնսն մեր՝ տամ սպանանել զբեղ»: Ասէ Վարդան. «Եթէ  
զմարմինս իմ սպանանես, ապա հոգիս կենդանացնայ»:

Յայնժամ բարկացեալ դատաւորն՝ ետ հրաման սպա-  
նանել զնա: Եւ առեալ տարան զնա արտաքոյ քաղաքին:  
Եւ սուրբն Վարդան ինքնին ուրախութեամբ երթայր ա-  
ռաջի նոցա, որպէս թէ ոք ի մեծարանս թագաւորի ըն-  
թանայ: Եւ ճշմարիտ մեծարանք էր նմա յերկնաւոր թա-  
գաւորէն Քրիստոսէ: Զի թէպէտ մարմնով չարչարեալ և  
տանջեալ. այլ հոգւով փարթամացեալ և զնացեալ ի հար-  
սանիսն անսպական: Եւ էր կոչնական հարսանեացն նա-  
խավկայն Ստեփաննոս՝ առաջին նահատակն:

Յայնժամ ժողովեցան բազմութիւնք այլազդեացն ի վե-  
րայ նորա, որպէս չար դազանք արեան ծարաւիք: Եւ ասէ  
Վարդան. «Հաւատացեալ եմ և հաւատամ զՀայրն ան-  
ծին և զՈրդին միածին, զմարմնացեալն Աստուած և զհո-  
գին ճշմարիտ, Երրորդութիւն և մի Աստուածութիւն՝ դա-  
ւանութեամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Քրիս-  
տոնեայ եմ և անարդեմ զօրէնքն և զառաջնորդն ձեր  
խարերայ և սուտու: Եւ բազմութիւն ամբոխին դիմեցին  
ի վերայ նորա և սրով և բրով և քարամիք սահատակե-  
ցին զնա:

Եւ աւանդեաց զմաքուր հոգին իւր առ Աստուած՝  
Երանելին Վարդան ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Յայնժամ՝ գնացին քրիստոնեայթն և բարձին զնա պատուով  
և տարեալ եղին ի տապանի սաղմոսիւք և օրհնութեամբ  
և երգովք հոգեորօք:

Կատարեցաւ սուրբ նահատակն Վարդան ի թուակա-  
նութեանս Հայոց Պէ, յունվար ամսոյ ի ՚Ի, ծննդեան պա-  
հոցն, յաւուր շաբաթու, ի մետասան ժամու, և առնէ-  
բժշկութիւն բազում ցաւոց նշխար ոսկերաց սրբոյն:





## 36.

ՀԵՊԵՑ ՔԱՀԱՆԱՑՔ

† Պ.Հ=1421

Վանքն Բարիձոր՝ որ է յանուն սրբուհւոյ Աստուածածնին, ուր էին մարմինք սուրբ նահատակացն Հապաշեց քահանայիցն, որք առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն և սիրով Որդւոյն միածնի և նախախմնամութեամբ Հօրն երկնաւորի ելեալ յաշխարհէն իւրեանց և եկին ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ և կատարեցին զուխտս իւրեանց և հասեալ յԵրկիրս Հայոց և Մըջէին ի վանորայս Եւ յետոյ եկեալ ի քաղաքն Խիզան և անդ նահատակեցան ի ձեռաց այլազգեացն։ Զոր եկեալ քրիստոնէիցն բարձին զմարմին երկուց սուրբ քահանայիցն Հապաշ մարտիրոսացն։ և տարեալ ամիսովիեցին ի վանքն Բարեձորի, Պ և Հ թուականին Հայոց։





37.

ԱՏԵՓԵՆՆՈՑ ՎԵՐՊԵԳԵՑ ԵՒ ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԵՑ ԽԻԶԱՆՑԻՑ

† ՊՀՂ=1424 յութիւն 2 ուր.

և ԱՏԵՓԵՆՆՈՑ ՈՒՐԱՅՑ կ ՍՈՐԲ ԴԵՊՁԻ

† ՊՀՂ=1424 յութիւն 11 եկտ.



ստուածային առաքեալն և աւետարանին Քրիստոսի՝ մեծն Յովհաննէս՝  
որդին Որոտման և սիրելի աշակերտն Քրիստոսի հրամայէ ի գիրս  
կաթուղիկէիցն՝ թէ «Երկիւղ ոչ գոյ  
ի սէրն, վասն զի սէր կատարեալ  
ի բաց մերժէ զերկիւղն»։ Եւ գարձեալ՝ թէ «Աստուած սէր է և որ  
կայ ի սէրն՝ յԱստուած բնակէ, և Աստուած ի նմա»։

Արդ՝ որովհետեւ գիտացաք եթէ Աստուած սէր է,  
վասն որոյ ուր Աստուած է՝ չնորհօք փախուցեալ է անտի  
երկիւղ։ Քանզի ուր թագաւորն վառեալ է զինօք և անդ  
շրջակայք նորա ոչ երկնչին ի սպառնալեաց թշնամնոյն։  
Այսպէս և ուր Աստուած է զօրաւիգ՝ անդ է և զօրք նուրա՝  
որ են դասք սրբոյն, ոչ երկնչել ի սպառնալեաց  
թշնամեաց յերևելեաց և յաներեսութից։ Որպէս և ասաց  
ինքն Որդին Աստուծոյ, եթէ «Քաջալերացարուք, զի ես

յաղթեցի աշխարհի»։ Եւ քան սիրոյ զօրութիւնն գերազանց է քան զբնութիւն, զի մոռացումն առն է չարչարելի և եղծանելի ընութեանս և միաւորէ յուսով ընդ անեղին Աստուծոյ։ Վասն որոյ որբ սիրով հաստատեցան ի խաչել եալն Աստուած, ոչինչ ի տարրականաց կարացին բաժանել զնոսա ի Նմանէ, ոչ հուր և ոչ ջուր և ոչ այլ ինչ յերկրաւորացս Որպէս ասէ անօթն ընտրութեան, փողն տարանացին, առաքեալն Քրիստոսի Պօղոս, եթէ «Ո՞վ մեկնեսցէ զմեղ ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւն թէ անձկութիւն», և այլն որ ի կարգին է։

Որպէս եղեւ այս և արեամբ ներկեալ նահատակացս սրբոց, որք կոխեցին զհուր մարմնոյն չարչարանօք և շիշուցանէին ինքեանք զբոցն ցանկութեան և վառէին զլապտեր հոգւոյ իւրեանց անշիջանելի հրովիս աստուածային։ Անցանէին ի ջուրս յորձանաց ըստ բանի մարդարէին և ցամաքեցուցանէին յինքեանց զախտն մեղաց ցանկութեանց։ Եւ առոգանէին զոգիս իւրեանց ջրովիս անհիւժական, այսինքն շնորհօք Որդւոյն Աստուծոյ։

Այդ յերմութիւն արեգականն և լուսաւորութիւնն ոչ շիջանի և ստուերանայ, թէպէտ և լինիցի ժամանակ՝ զի ամպով ծածկի ի մէնջ, այլ ինքն ըստ ինքեան ներգործէ զլոյն և զյերմութիւնն։ Այսպէս և իմանալի Արեգակն արդարութեան Քրիստոս միշտ և հանապազ ծագէ զլոյս շնորհաց և գիտութեան յոգիս ընդունողացն կամօք և բորբոքէ ի սէրն վերին։ Ըստ որում ասաց թէ «Հուր եկի արկանել յերկեր», և թէ «Ես լոյս յաշխարհ եկի, որ հաւատայ յիս ի խաւար մի մնացէ»։

Զոր և այժմ ի վերջին աւուրքս և յերեկոյացեալ ժամուս ի ձմեռնային եղանակս բորբոքեաց զհուր շնորհաց և զլոյս գիտութեան Որդւոյն Աստուծոյ ի սիրտ ցանկալի նահատակացն և աստուածընկալ քահանայիցն՝ Ստեփանոս վարդապետին և Պետրոս քահանայիցն՝ զորոց հանգերձեալ եմք պատմել զքաջութիւն արխութեան սոյա, որք որպէս զվարդս դարնանային վիթթեցան ի մէջ Հաւ-

յաստան աշխարհիս և լցին հոտով անուշութեան զեկե~  
ղեցիս քրիստոնէից։ Զի թէպէտ և անկան ի փորձութիւն,  
այլ օդնութեամբն Աստուծոյ յաղթեցին սատանայի։ թէ~  
պէտ և անկան ի հուր մեղաց, այլ կարողութեամբն Աս~  
տուծոյ շինութիւն զգօրութիւն հրոյ ցանկութեանց, ըստ  
ասելոյ մեծին Պօղոսի. թէպէտ և սխալեցան և անկան  
յախտ ուրացութեան, այլ յետոյ կանգնեցին արձան դա~  
ւանութեան, թէպէտ և ըմբռնեցան ի ժանիս վիշապին,  
այլ փշութիւն զծամելիս և զգլուխ նորին. թէպէտ և հնա~  
զանդեցան կարեաց մարմնոյ, այլ ոչ վերջացան ի սիրոյն  
Աստուծոյ. թէպէտ գլորեցան ի վիճն չարեաց, այլ դար~  
ձեալ հաստատեցան հեղմամբ սուրբ արեան իւրեանց։

Երանելիքս այս կրկին լուսաւորքս և ծաղկունք Հա~  
յաստանեաց և պարծանքս քրիստոնէիցս, վարդապետն  
Տէր Ստեփաննոս և ցանկալի քահանայն Պետրոս, էին ի  
Խիզան քաղաքէ. վարդապետն էր ի վանացն, որ յանուն  
սուրբ Գամազիելի առաքելոյն Քրիստոսի, և քահանայն  
Պետրոս էր աշխարհական երէց որդի քահանայի։ Եւ յազդ~  
մանէ չարին անկան յուրացութիւն և սուդ ածին ազգիս  
Հայոց. զի յորժամ լսեցին զանցս աղէտիս այսորիկ տա~  
ռապեալ և գերի անկեալ ազգս քրիստոնէից, ամենեքեան  
ի սուդ մոին՝ քաղաք և գիւղ, վանք և անապատ, վար~  
դապետք և եպիսկոպոսք, քահանայք և սարկաւագունք,  
կուսակրօն և ամուսնացեալք, այր և կին, ծեր և տղայ  
ամենեքեան աշխարհին և լային զմոլորութիւն նոցա~  
շատք ի թուլամորթաց գայթակղեցան և անկան յուրացու~  
թիւն և մեծ տրամութիւն ածին ազգիս Հայոց։

Այլ նա՛ որ տէրն է ամենայնի՝ Յիսուս Քրիստոս Որ~  
դին Աստուծոյ ոչ անտես արար զարեամբ գնեալ ժողո~  
վուրդս իւր մնալ ի գուբն գայթակղութեան, այլ էած  
զղջումն ի սիրտս նոցա՝ վարդապետին Ստեփաննոսի և  
քահանային Պետրոսի, որք մոռացան զոկարութիւն մարմ~  
նոյ և զինեցան հոգւովն Աստուծոյ և մատնեցին զանձինս  
իւրեանց տանջանաց և մահու, զի որք գայթակղեցան

ի նոսա, դարձեալ ևս առաւել հաստատեցան ի հաւասա  
Քրիստոսի՝ արիոթեամբ նոցա, ըստ առաքելոյն բանին՝  
որ ասէ. «Ուր առաւել եղեն մեղք, անդ ևս առաւել յաւ-  
ւելան չնորհըն»։ Եկեալ ի միտս խրեանց վարդապետն  
Ստեփաննոս և քահանայն Պետրոս ասեն ընդ միմեանս  
զբանս անառակին՝ որ կայ յաւետարանին՝ եթէ «Քանի՛  
վարձկանք են ի տան հօր իմոյ հացալիցք, այսինքն ի մէջ  
եկեղեցւոյ քահանայք և ժողովուրդք և վայելեն յանմա-  
հական սեղանոյն և ի չնորհացն Աստուծոյ։ Եւ մեք զրկեալք  
ի քահանայութենէ և ի քրիստոնէութենէ։ Վայ է մեզ և  
եղուկ մոլորելոցս թէ յորպիսի՛ մեծութեանց՝ յորքան աղ-  
քատութիւն անկաք, յորպիսի՛ վարժամնութեանց յորչափ  
անսարդութիւն հասաք. յորդիութենէ Հօրն երկնաւորի  
զրկեցաք և ի մէջ այլազգեաց խոզարածք պանդխտեցաք,  
այսինքն մեզաց և աղտեղի գործոց։ Արդ երթիցուք առ  
Հայրն երկնաւոր, ոչ եթէ աղօթիւք կամ պահօք կամ  
տքնութեամբ, այլ արեամբ նահատակութեան, զի թերես  
ընկալցի զմեզ և թողութիւն չնորհեսցէ յանցանաց մե-  
րոց։ Քանզի մեծ են յանցանք մեր, զի զրադումն գայ-  
թակղեցուցաք։ Եւ այս ցաւս այլ իւկիք ոչ բժշկի, բայց  
միայն հեղմամբ արեան մերոյ. զի մի ժառանդիցեմք զպա-  
տուհասն տէրունական հրամանին, որք զմի ի փոքրկանց  
գայթակղեցուցանեն։ Այլ որպէս տրամեցուցաք զեկեղեցի  
Աստուծոյ, դարձեալ ուրախացուցանեմք չարչարանօք մարմ-  
նոյս մերոյ։ Զի որք սուդ զդեցան յուրացութիւն մեր,  
դարձեալ բերկրին ի նահատակութիւն մեր։

Յայնժամ արիացեալք ի չնորհաց Սուրբ Հոգւոյն վար-  
դապետն Ստեփաննոս և քահանայն Պետրոս՝ զմիմեանս  
քաջալերէին անխախտելի մնալ ի սիրոյն և ի հաւատոցն  
Քրիստոսի և ոչ երկնչել ի մահուանէ։ Այլ որպէս միմեանց  
պատճառ ասեն գայթակղութեան, նոյնպէս լիցուք և  
փրկութեան. որպէս ասէ Սողոմոն՝ «Եղբայր յեղբօրէ օգ-  
նեալ որպէս զքաղաք ամուր»։

Նստան երկոքեան ի քաղաքն Բաղէշ և գրեցին բանս

հաւատոյ դաւանութեան ի սուրբ Երրորդութիւնն և ի մի աստուածութիւնն, այլ և ի մարդեղութիւնն Քրիստոսի Աստուծոյ և նախատինս ազգին Տաճկաց և օրինաց նոցա և առաջնորդին իւրեանց և ասէին թէ «Բեղար եմք յօւրինաց ձերոց և ի կրօնից, և զ՞Յրիստոս ճշմարիտ Աստուծած դաւանիմք» Եւ դուք սուտ էք և խարելայ և առաջնորդն ձեր որդի սատանայի և կարապետ Նեռինն, որ ինքն մոլորեցաւ և զձեզ մոլորեցոյց»:

Եւ յուզարկեցին զմուզզմն ի Խիզան՝ մօտ ի դատաւոր քաղաքին, ապա և ինքեանք վարդապետն Ատեփաննոս և քահանայն Պետրոս Ելեալ ի քաղաքէն Բաղէշու և մտեալ ի ճանապարհ՝ գնացին ի Խիզան, զերկիւղ մահու ի բաց եղին և օգնականութեամբ Որդւոյն Աստուծոյ՝ որպէս զանդամանդեայ վէմ հաստատեցան։ Եւ զմիմեանս քաջալերէին և յորդորէին ի ճանապարհին։ «Երթամք, ասեն, գտանել զմարդարիտն մեր, զոր կորուսաք ի բաղաքին Խիզան։ Գնամք վառել զճրադն հաւատոյ՝ զոր շիջուցաք ուրացութեամբ։ Երթեալ գնեսցուք զանդին մարդարիտն, զակն պատուական, զի ծախեցաք ուրացութեամբ։ Երթիցուք գտանել զարծաթն հաւատոյ՝ զոր թաղեցաք ի հող անօրէնութեան։ Երթեալ կանգնեսցուք արձան հաստատութեան՝ զոր խախտեցաք դործով դայթակղութեան։ Գնամք ծածկել զհոտն գարշութեան՝ զոր սփուցաք ի հոտոտելիս քրիստոնէից և փոխանակ նմին բուրեսցուք հոտանմահութեան զբանս դաւանութեան՝ որ Ելեալ տարածեսցի յոլորտս տիեզերաց։ Մի Երկիցուք ի մահուանէ՝ որ կենդանութիւն բերէ։ մի զարհութեսցուք ի տանջանացն՝ որ զպսակն պարզեէ։ մի Երկմուեսցուք ի յուսոյն՝ որ առ Աստուած վերացուցանէ»։

Յայնժամ գնացեալ մտին ի վանքն Բարիձոր՝ որ է յանուն սրբուհւոյ Աստուածածնին, ուր էին մարմինք սուրբ նահատակացն Հապաշից քահանայիցն, որք առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն և սիրով Որդւոյն միաձնի և նախախանամութեամբ Հօրն Երկնաւորի Ելեալ յաշխարհէն

իւրեանց և եկին ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ և կատարեցին զուխտ իւրեանց և հասեալ յԵրկիրս Հայոց և շրջէին ի վանորայու եւ յետոյ եկեալ ի քաղաքն Խիզան և անդ նահատակեցան ի ձեռաց այլազգեացն։ Զօր եկեալ քրիստոնէիցն բարձին զմարմին երկուց սուրբ քահանայիցն Հապաշ մարտիրոսացն։ և տարեալ ամիսիեցին ի վանքն Բարեծորի, Պ և Հ թուականին Հայոց։

Իսկ վարդապետն Ատեփաննոս և քահանայն Պետրոս երկլապետ սրբուհւոյ Աստուածածնին և նշխարաց մարտիրոսաց՝ որ ասացաք, և մնացեալ անդ աւուրս երեք և մեծաւ զզջմամբ և լալով խոստովանեցան և հաղորդեցան ի կենարար մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ, յաւուր մեծի համբարձմանն Քրիստոսի։

Ապա ասեն միաբանիցն՝ որ անդ էին, եթէ «Գնամք մեք ի տեղի նահատակութեան, ի յասպարէզն կատարման, ի հանդէսն քաջութեան, ի թէտրոնն արխութեան. զի ուր մերկացաք զգեսան պայծառութեան և զգեցաք զհանգերձն անօրէնութեան, դարձեալ անդ թօթափեմք զարդն աղտեղութեան և զգենումք զպատմուծանն որ առանց ապականութեան, զոր արեամք մերով զարդարեմք ի գոյն վարդի։ Մէք եղաք պատճառ գայթակղութեան բազմաց, մեք լիցուք առիթ հաստատութեան ըրիստոնէից։ Զի որք տրամեալ էին վասն մեր ուրախացին ազգքրիստոնէից, և որք ուրախացեալ էին ի վերայ մեր սատանայ և կամարաքն իւր արտմեսցին։ Այլ և դուք, հոգեւոր եղբարք մեր, աղօթս արարէք վասն մեր և աղաչեցէք զԱստուած, զի տացէ մեղ կարողութիւն համբերել չարչարանացն և արժան լինել ողորմութեան նորա. քանզի դժար է կամաւ զմահ յանձն առնուլ։ Այլ դուք աղօթիւք օգնական լիրուք մեղ, և մեք յուսալով ի խաչելեալն Քրիստոս և յանձն առնեմք ի նա զանձինս մեր։ Եւ գնամք առաջի այլազգեացն և խոստովանիմք ի մէջ նոցա դՔրիստոս Աստուած և Որդի Աստուծոյ։ Զի և նա խոստովանեսցի զմեղ առաջի Հօր և հրեշտակաց սրբոց»։

Յայնժամ՝ ելեալ ի վանացն և միաբանքն ամենայն լոյին գհետ նոցա, և բազում ողբովիք և արտասառօք աշղաչելին զԱստուած՝ օգնական լինել նոցա և տալ համբեռութիւն։ Եւ մտին երկուքն՝ Ստեփաննոս և Պետրոս ի քաղաքն Խիզան և գնացեալ ի դուռն եկեղեցւոյն երկրպագեցին անդ և արտասուօք՝ ազօթս մատուցանէին առաջի Աստուծոյ։ Եւ օրն էր ուրբաթ՝ ի Յ ժամու աւուրն։

Յայնժամ՝ ելեալ գնացին ի մէջ քաղաքին, համարձակ և բարձրաձայն աղաղակէին և տաէին։ «Քրիստոս Աստուած է ճշմարիտ, լոյս ի լուսոյ, և Աստուած յԱստուծոյ, ծնեալ ի սուրբ կուսէն Մարիամայ, խաչեալ և թաղեալ և յարուցեալ ի մեռելոց և համբարձեալ փառօք յերկինս, նստեալ ընդ աջմէ Հօր, և դարձեալ դալոց է ի դատել զերկիլու։ Ով ոք զնա Աստուած դաւանէ, զկեանսն յաւիտենականն ժառանգեսցէ, և որք ոչ դաւանեն՝ զտանշանսն յաւիտենականն ժառանգեսցն։ Բայց դուք, ով անօրէնք, որդիք խաւարի և կորստեան, դուք և մոլորեցուցիչ առաջնորդն ձեր, զայս յայտնի դիտասնիք՝ զի դուք սուտ էք և մոլորեալ և մեք հրաժարեալ և բեզար եմք յօրինաց ձերոց, զոր խարեաց զմեզ սատանայ։ Այժմ դարձեալ հաւատասարք բոլորով սրտիւ ի Քրիստոս Աստուածն մեր, զի նա է ստեղծօղ ամենայն արարածոց երկնի և երկիր, երեելեաց և աներեւութից, տէր կենաց և մահուց Զոր և այսօր մեք զանձինս մեր ի մահ մտանեմք վասն սիրոց նորա, զի արժանի լինիցիմք զնա տեսանել, զի ով ոք զնա տեսանէ, ոչ է մեռեալ, այլ է միշտ կենդանին Զի և ինքն Քրիստոս Աստուած մեր թէպէտ և խաչեցաւ և թաղեցաւ, այլ յարեաւ ի մեռելոց և է կենդանի յերկինս։ Եւ զդաւանող խւր կենդանացուցանէ՝ ասա յուսով և արդարութեամբ, և անդ հոգւով և մարմնով և անձառ փառօք։ Իսկ մոլորեալ և մոլորեցուցիչ առաջնորդն ձեր ինքն մեռեալ է մեղօք և մարմնով և հոգւով ի յաւիտենից տանշանսն կայ և հետեւողը նորանման նմա լինելոց են, որպէս և Քրիստոսի հետեւողըն Աստուծոյն մերոյ՝ նման նորա»։

Եւ դարձեալ ի քրիստոնեայն ասեն. «Լալի և եղալի էաք ի մէջ աշխարհի և ոչ գիտէաք, այլ իբրև դարձրեալ շրջէաք ի մէջ մարդկան կուրացեալ մտօք և գործով անօրէնութեան, այլ այժմ թափեցաք ի մէնջ զարբեցութիւնն զայն որ զեղսութիւն էր և անմտութիւնն Եւ այսոր արբեալ սիրածին Քրիստոսի և մոռացեալ զսէր աշխարհիս և զոր ի ամա, այլ և զմարմինս մեր, զի ինքն Քրիստոս սիրեաց զմեզ և պարզեեաց զցանկալի օրս այս մեղ՝ որ է մեծ աւետիս հոգւոց մերոց։ Զի այսօր ուրախութիւն է և ի յերկինս վասն մեր մօլորելոց»։

Զոր յայնժամ դարձեալ ասեն քրիստոնէիցն. «Դնացէր ի մէնջ ի զատ, զի մի յորժամ զմեզ սպանցեն, զմազձ գաւնութեան չարեաց իւրեանց ի ձեղ թափեցեն և ձեղ վնաս տծեն։ Այլ դուք ազաշեցէք զԱստուած, զի տացէ մեզ կարողութիւնն համբերել չարչարանաց»։

Ապա երկոքեանն իրբեւ ի միօնէ բերանոյ վարդապետն Ստեփաննոս և քահանայն Պետրոս ազաշէին զԱստուած և ասէին. «Ո՞վ Տէր Յիսուս խաչեալ թագաւոր, մի յիշեր զմեզս մեր զառաջինս։ Այլ որպէս ընկալար կրկին զզջումն Պետրոսի, որ գաւնապէս արտասուեաց, ընկալ և այժմ զապաշխարութիւնս մեր որ զարիւնս հեղումք վասն Քուեւ որպէս խաչակցին քում աւազակին ի մեծի ուրբաթին բացեր զգուռն գրախանին, վասն զի խոստովանեցաւ դքեզ արքայ և Տէր, եգիտ հովիւն քաջ Որդին Աստուծոյ և արժանաւորեաց այսմ հանդիսի և նահատակութեան զմեզ։ Այսօր լուանամք զպատմուճանս հոգւոց մերոց արեամբ մերով յառաջին յանցանացն, զի արժանի լիցիմք զՔրիստոսս զգենուլ։ Այսօր զարդարեմք զմարմինս մեր կարմրագոյն արեամբ մեր, հարմնացուցանել վեսային երկնաւորի Քրիստոսի։ Այսօր աւետիս է մեղ, զի չարչարակից եղաք նահատակացն առաջին, մտցուք ընդհոսա ի յառազաստ մերին։ Այսօր ցնծութիւն և ուրախութիւն է մեզ, զի առ զատիմք ի վշտաց աշխարհիս և մտանեմք ի խորանն երկնային։ Այսօր առաւել խնդութիւն եղեւ մեղ քան զամեւ

նայն ժամանակս կենաց մերոց, զոր ապրեցաք յերկրի, զի գծմարիտ կեանիքն Քրիստոս տեսանեմբ։ Բաց և մեղ յաւուր ուրբաթուս զդուռն ողորմաւթեան քո, որ չարչաւ ըսկից քեզ լինիցիմք, զի և փառաց քոց հազորդս արաւացես, վասն զի դաւանեմք զքեզ Տէր և Աստուած, ի յալում տտենիսու Ո՞վ Տէր, դու լեր մեզ պարխստ և ապաւէն և ընկալ զոգիս մեր ի խորանս երկնից։ Զի ի քեզ յաւացաք և վասն անուան քո մեռանիմք»։

Յայնժամ դասք քրիստոնէիցն փախսեան յահէ անօրին նայն։ և բաղմութիւն այլազգեացն դիմեցին առ հասարակի վերայ նոյսա, և առեալ կացուցին զնոսա ի մէջ իւրեանց բաղմութիւն դայլոց զերկուս դառնիսն՝ զՍտեփաննսս և զՊետրոս, որ հանդերձեալ էին զինքեանս պատարագ մատուցանել Աստուծոյ։ Խօսել սկսան առ նոսա ազդ աշորինացն և ասեն։ «Միթէ արբեալ էք կամ խելադարեալ, որ այլպիսի բանս խօսիք և նախստեք զմեզ և զօրէնս մեր և զառ աջնորդն և ձեր անձինդ մահ կամենայք»։

Յայնժամ պատասխանեալ սուրբքն ասեն։ «Ո՞վ անըզգամք և անմիտք որդիք կորստեան և զաւակք սատանայի, դուք էք խելադար և արբեալ անօրէնութեամբ։ Մեք այժմ թափեցաք ի մէնջ զարբեցութիւն մեղաց և իմաստնացաք ի խելադարութենէ։ Եւ դարձեալ նոր զինի եմք արբեալ և սարխօչացեալ սիրով Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, զոր կորուսեալ էաք զսովորական զինին մեր զբաժակն անմահութեան և այսօր գտեալ արշաք, էնց որ այլ ոչ լըջանամք։ Եւ մինչեւ ցայսօր թէպէտ և կենդանի էաք մարմնով, այլ մեռեալ էաք հոգւով։ Այլ այժմ թէպէտ և մեռանիմք մարմնով, այլ հոգւով և արշաքարութեամբ կենդանամամք ընդ կենդանւոյն Քրիստոսի Աստուծոյն մերոյ։ Այլ գուք թէպէտ և մարմնով կենդանի երեխք, այլ աստ հոգւով էք մեռեալ և անդ հոգւով և մարմնով զգժոխքն յաւիտենից ժառանդէք և զթանձրամած խաւարն և զանքուն որդն և զտարտարսոն և զլատ աչացն և զկրծտել ատամանցն Եւ մեք ոչ երկնչիմք ի յահէ

ձերմէ, և ի սրոյ տանջանացն՝ զի էնց հալաւ էնք հագել  
ի հոգիս մեր՝ զոէրն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ ոչ  
ի սրոյ վախենամք և ոչ ի քարէ և ոչ ի հրոյ և ոչ ի մահ-  
ուանէ։ Այլ և զայս գիտասջիք զի Մաշային լաւ է մեր  
քան զօրէնքն ձեր և դիսաբերայ առաջնորդն, զի նա կոր-  
եաւ և զձեղ կորոյս»։

Եւ առեալ զդօտիս խրեանց ընկեցին առաջի նոցա  
և դհանդերձն հանեալ և առեն, «Այս է օրէնքն ձեր  
մնատի. առէք ի ձեզ, զի օրէնքդ ձեր այդ հանդերձիդ  
նման է, որ պիտի հնանայ և առականի»։

Յայնժամ մումոեալ նոցա որպէս զարիւնարբու դաշ-  
գան և դիմեցին ի վերայ Պետրոս քահանային ըրով և  
հարեալ կոտորեցին զբազուկս նորա և ընկեցին ուշաթափ.  
և նա զօրացեալ չնորհօքն Աստուծոյ՝ ելեալ կանգնեցաւ  
ի վերայ ոտից խրոց և բարձրաձայն առաց. «Ո՞վ վար-  
դապետ, զի յապազես, տես զի ահա Քրիստոս եկեալ  
կոչէ զմեզ»։ Եւ վարդապետն ևս առաւել զօրացաւ ի պա-  
տասխանիսն։ Եւ նոյն ժամայն սրով և փայտիւ զՊետրոս  
քահանայն նահատակեցին ի նոյն տեղին և ի վարդապետն  
խնայեցին, զի թերես երկնչի և թուլանայ ի հաւատոցն։  
Եսկ վարդապետ պատկեր վարդապետին պայծառացաւ  
սրով զանուանակցին խրոյ նախավիճային և սկսու յան-  
դիմանել զմոլորութիւն նոցա և զանօրէնութիւն, սրով և  
նախավիճայն զագգին Հրէից։

Յայնժամ եհար դատաւորն ապտակ ի գլուխ վար-  
դապետին։ Եւ վարդապետն ոյժ առեալ յԱստուծոյ և  
ախնդեալ զսիրտն՝ եհար ուժգնակի ձեռամբն յերեսս դա-  
տաւորին։ Եսկ բազմութիւն Արագնոյն դիմեցին ի վերայ  
կայնով և թրով, քարիւ և փայտիւ. անդ կատարեցին  
զնոսա զերկսաեանն, պատուական քահանայն զԱտեփան-  
նոս և զՊետրոս, զնորաբոզբոջ ծաղկունքն, զլուսափայլ  
աստղունքն, որ նոր լուսաւորեցին զեկեղեցիս Հայաստան-  
եաց, զանշիջանելի ճրագունքն որ բարձրացան յաշտա-  
նակի ի մէջ քրիստոնէից, զբաղյրահամ աղբերակուն».

որք կակզացուցին բղխմամբ արեան իւրեանց զիսրագացեալ և զչորացեալ միտս ըազմաց և պազարերեցին յաստուածպաշտութիւն:

Ընդ որս և մի ոմն Ստեփաննոս անուն, որ և նա տաճկացեալ էր, յորժամ լուսւ զնահատակութիւն անսոււանակցին իւրոյ՝ զՍտեփաննոս վարդապետին և դՊետրոս քահանային, և նա հաստատեցաւ կրկին յառաջին հաւատն իւր՝ ի քրիստոնէութիւնն: Զոր կալեալ անօրինացն յետինն աւուր նահատակութեանն սոցա՝ յերկիրն Խորձայ՝ ի գեօդն որ կոչի Սորբ և շատ ողոքեցին սիրով՝ ոչ դառնալ ի տաճկութենէ և ոչ կարացին խախտել զնա ի հաւատոցն Քրիստոսի, զցանկալի վկայն զՍտեփաննոս:

Ապա սկսան ի չարչարել և նա ասէ. «Ես քրիստոնեայ եմ և զՔրիստոս Աստուած հաւատամ, զի նա է արարիչ երկնի և երկրի: Եւ ես ի մահուանէ ոչ երկնչիմ, զի զիենագանին Քրիստոս տեսանեմ»:

Եւ մայր նորա՝ քաջահաւատ և երկիւզած յԱստուծոյ՝ ի բաց եղեալ զկանացի տկարութիւնն, եկեալ դէմ որդււոյն և ասէր. «Սիրելի և քազցրիկ որդեակ իմ, սակաւ մի համբերէ և հասանես անճառ փառացն և աստուածային տեսոյն. ի յաշխարհո բարի անուն ժառանգես և յուրացութենէ աղատիս, ի մարտիրոսաց դամն խառնիս և յերկնից արքայութիւնն մտանես»:

Այս բարեպաշտ կինս նման եղեւ նախնոյն Շամսունէի, կիոջն պատուական և աստուածասիրին, որ զեօթն որդիսն յորդորեաց ի չարչարանս, ոչ ելանել յօրինացն Մովսէսի: Եւ մօրն Կիւրզի հայրապետին՝ Սրբուհւոյն Սննայի և ողջախոհութեանց ծնողին մեծին Գայիսանեայ, որ զՀռիփսիմէ խրատէր պինդ կենալ և ոչ լսել կամաց թագաւորին: Այլ և մօրն Մելիտոնի, որ էր ի քառամնիցն: Նոյնպէս և հաւատարիմ կինս մայրն Ստեփաննոսի խրատէր զորդին անսխախտելի մնալ ի քրիստոնէութեան հաւատոցն:

Իսկ բազմութիւն այլազգեացն յորժամ տեսին թէ ոչ կարացին դարձուցանել զնա ի հաւատոցն Քրիստոսի, յայնա-

ժամ՝ որպէս գաղան յարձակեցան ի վերայ Ստեփաննոսին և նահատակեցին:

Եւ եկեալ քրիստոնէիցն բարձին զպատուական մարմինն հրաշագեղ և քաջ նահատակին նոր վկային Ստեփանն նոսի և եղին ի գերեզմանի ի գեօղն Սորբ, ի փառո Քրիստոսի Աստուծոյ մերայ:

Իսկ զցանկալի վկայքն Քրիստոսի՝ զվարդապետն Ստեփաննոս և զքահանայն Պետրոս յորժամ նահատակեցին ի Խիզան քաղաքին, առեալ անօրինացն զպատուական մարմինս նոցա և հանեալ ի քաղաքէն ի գուրո առ ի յայրել:


Եւ քրիստոնեային 15,000 դրամ տուին կաշառ և ոչ կարացին առնուլ զպատուական մարմինս նոցա:

Ապա ժողովեցին այլազգիքն շատ փայտ և վառեցին հուր, և արկին զսուրբան անդ, և այրեցաւ փայտն և շինահուրն և ոչ այրեցան մարմինք նոցա: Յայնժամ հանին ի հրոյն և մասն մասն կտրատեցին և ընկեցին ի կրակն, և ժողովեցին այլ փայտ և այրեցին: Իսկ մաքուր հոգիք նոցա վերացան յերկինս և խառնեցան ի գունդո հրեշտակաց, անդ ուր ժողովը մարտիրոսացն են և խումբ նահատակացն: Եւ բուրեաց հոս անօւշութեան նոցա յոլորտս տիեզերաց, քանզի հոգեար վարդ փթթեցան նորա ի մէջ Հայատան աշխարհիս: Զի որպէս վարդն ի վշոց մէջ կարմրանայ, նոյնպէս և սորա կարմրացան ձեռամբ անօրինացն, որը փուջը և խոյսոտիջը են քրիստոնէից: Եւ որպէս վարդն ի ցած տեղ բուսանի և ոչ ի բարձր ծառ, այսպէս և սուրբքս Աստուծոյ և ցանկալի վկայքս խոնարհեցան ի չարչարանս և զմահ յանձն առին և տպա պայծառադոյն երեկցան: Եւ որպէս գոյն վարդին սպիտակ լինի, կարմիր և գեղին, այսպէս սորա կարմրացան մարմնով չարչարան նոր, այլ և վառեցան սիրով Աստուծոյ և տղեղացեալ գեղնեցան յոյժ վշտալից նահատակութեամբ, և սպիտակ կացեալ պայծառացան հոգիք նոցա անձառ լուսով և յանձնամ պատկացն: Եւ գարձեալ վարդն թէպէտ և ի տե-

ղացն պակասի, հոտն ի տեղն կու մնայ, այսպէս և սուրբքս  
թէպէտ և մարմնով ի մէնջ բաժանեցան, այլ հոտ չնորհաց  
և քաջութեան սոցա ելից զՀայաստան աշխարհաւ Եւ որ-  
պէս վարդն մաղճուն և շարպաթ լինի հիւանդաց, այսպէս  
և նահատակութեամբ հեղումն արեան սոցա գեղ և բժշկու-  
թիւն է մեզ տօնողաց զօր յիշատակի սոցա ի փառո  
Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Կատարեցան քաջ նահատակըն Քրիստոսի՝ վարդա-  
պետն Ստեփաննոս և քահանայն Պետրոս՝ ի թուականիս  
Հայոց Պ և ՀԳ, յունիս ամսոյ 2, յաւուր համբարձմանն  
ուրբաթու, զի կատարումն սոցա եղեւ աստ Եւ մեք գրե-  
ցաք յահեկի ի 4, յաղագս լսելոյ քրիստոնէից:

Արդ՝ որբ կարդայք յիշեցէք յաղօթո ձեր զԱռաքել  
վարդապետ՝ զյարմարող ճառիս և զծնօղմն իմ:





## 38.

ԹԱՂ. ՄԸ Ի ՊՈՒՏԾԻԿ ՎԱՆԵՑ

† 1423 մինչեւ 1425 (?).

**Ե**ւ յառաջ քան զայս (=յառաջ հան զնահատակութիւնն Դազարայ վարդապետի Բաղիւու) երկոց և չորսոց ամաց վարդապետ մի Թովմա անուն՝ աշակերտ Ախմէոնի վարդապետին Ռշտունեաց, գիտակ Մանր ուսմանց, սիրող սրբութեան եւ ազօթից՝ ի սուրբ ուխտէն Պուտլիկ Վահաց, նետիւ հարեալ սպանին։





## Յ 9.

Գ Ր Ի Գ Ո Ւ Խ Լ Ե Թ Ե Ց Ի

† Պ Հ Պ = 1425



յ ս երջանիկ և երանելի, աստուածաւ  
հաճոյ և աստուածապարփակ, երա-  
նաշնորհ քարոզմ կենաց և կենդանի  
նահատակս՝ սուրբ վարդապետս  
Գրիգորիսս, էր անեալ և վարժեալ  
ի գործ քահանայութեան առ սուրբ  
ճղնաւորի միոյ վարդան կոչեցեալ՝  
որ հնգետասան ամ յահապատի էր  
ընակեալ առ մեծ վարժապետն Տիրատուր։ Եւ յետոյ  
եկեալ էր ընակել ի հոչակաւոր ուխտն սրբոյն Ստեփան-  
նոսի՝ Յիողնավանիք կոչեցեալ՝ յերկիրն Արծկոյ քաղաքին։  
Առ որ գնացեալ երջանիկս Գրիգոր և ցանկացեալ առա-  
քինասէր վարտոց նորա և առ նմա կեցեալ ամս վեց և  
սովաստորեալ նմա և օրհնութիւն ի նմանէ լնկալեալ իրրե-  
զուհնութիւն Աստուծոյ։ Եւ էջ հանդեռու ի վերայ նորտ

Հոգին Սուրբ, հոգին հեղութեան և խոնարհութեան, մինչ  
զի լուսաւորէր զամենայն բնակիչս գաւառին իմաստու-  
թեամբ և ուսմամբ՝ իբրև զկատարեալ վարդապետ։ Եւ  
հարկեալ յուսումնասէր եղբարց երթալ առ մեծ վարդա-  
պեան Յոհաննէս Որոտնեցի՝ մականուն Կախիկ՝ կախեալ  
ի սէրն Յիսուսի, և ութն ամ վարժեալ և սիրեցեալ ի նմա-  
նէ ուսումնակից իւր ունելով զհամանունն Գրիգոր և զերի-  
բորդ լուսաւորիչն Հայոց սուրբ առաքելոյն Ստաթէոսի։

Եւ յետ մահուան մեծին Յոհաննու Որոտնեցւոյն  
և աւերման վերին աշխարհին ի չար բռնաւորէն Թամուր  
կոչեցեալ, եկն գարձեալ ի ընիկ գաւառն իւր՝ առ մեծ  
վարժապետն Սարդիս՝ յերկիրն Քաջըերունեաց՝ ի հռչակա-  
ւոր և յաստուածաբնակ ուխտն Աստուածածնի՝ որ Սու-  
խարավանիք վերակոչի։ Եւ անդ վարժեալ և բազում աշ-  
խասութեամբ դեգերեալ՝ ընկերակից իւր ունելով զմեծ  
ճգնաւոր վարդապետն Վարդան Հոգեաց Վանացն, որ  
յետոյ յաջորդեաց զաթոռ վարդապետութեան երանելոյն  
Սարդսի։

Եւ տասն ամ առ նմա յամեալ՝ ընկալեալ ի նմանէ  
զաստիճան վարդապետութեան և լուսաւորէր առհասարակ  
զամենեսեան իմաստութեամբ և ընթերցմամբ, զրելով  
և կարդարով, գանձով և տաղով, մինչ զի ոչ երեկը թէ  
երկրաւոր էր ատեանն, այլ զերկնայնոցն նմանութիւն  
յինքեան ունէր։ Եւ առեալ հրաման ի վարժապետն իւրմէ  
դաս ասել և աշակերտ ժողովել, և նա եկեալ բնակեցաւ  
յերկիրն Բղնունեաց՝ ի քաղաքն Արծկէ, ի սուրբ ուխտն  
Ստեփաննոսի նախավկային, ի վանան Յիսուսի, յառաջին  
տեղին իւր։

Եւ ժողովեցան առ նո բազումք ի կրօնաւորաց և  
յուսումնասէր եղբարց, և միսիթարէր զնոսա անձառելի  
և անպատմելի միսիթարութեամբ, Աստուածաշունչ դրոց  
դիսութեամբ և հնոց և նորոց իմաստութեամբ, յորդորե-  
լով զամենեսեան ի ճշմարիս հաւասար ուղղափառութեան  
և ի գործո առաքինութեան։ Այլ և դյիմարս իմաստնա-

ցուցանէր, զտղէտս ի գիտութիւն Տեառն կոչէր, զգերիս  
ազատէր, զմերկս զգեցուցանէր, զհիւանդս հոգւով և մար-  
մնով սփոփէր, զսդաւորս միսիթարէր, զալքատս կերակրէր,  
և անհանդիստ տքնութեամբ ի գիշերի և ի տուընչեան  
ձեռօք խւրովք վաստակէր ի գիրս գրչութեան, և ի տնանկո  
կարկառէր և ամենեցուն բաղծալի լինէր՝ Աստուծոյ, հրեշ-  
տակաց և մարդկան, հաւատացելոց և անհաւատից, մինչ  
զի երանի տային տեսողքն ի յայլազգեաց ազգիս մեր  
Հայոց՝ որ այնպիսի առաջնորդ ունին:

Այլ և Երկրորդ Վկայասէր անուանեցաւ ի վերջին  
ժամանակիս և յետին գարուս. զի ժողովեաց գիրս բա-  
զումս ի մերոց և յօտարաց, զհնացեալս և զեղծեալս, և  
զծածուկ և զանյայտ պատմութիւնս ամենայն սրբոց ի խա-  
ւարէ ի լոյս ածեալ և արար զգիրս Յայսմաւուրաց:

Այլ և ժողովեալ զյառաջասացեալ գանձերսն յառաջին  
վարդապետացն՝ զոր անընդունակ և անսպէտս անկեալ  
կայր, և սրբագրեալ ճարտարաբանեաց և արար զգիրս  
Գանձարանին, տաղով և մեղեգով, յուրախութիւն և ի ցըն-  
ծութիւն մանկանց եկեղեցւոյ, և այնպիսի անուշածայն  
եղանակաւ. պայծառացոյց զգրունս ոուրբ եկեղեցեաց, մինչ  
զի լուսեղէն զուարթնոցն պարակցութիւն ի յերկրի երե-  
ւիւր, և զի ոչ էր եղեալ այնպիսի ուրախութիւն հոգեոր  
եկեղեցեացս հայստանեայց յաւուրս մերոց իշխանացն  
և թագաւորացն: Եւ զամենայն խորին և զանհասկանալի  
բանս քերթեալ Եհան ի միջոյ. և պարզ և յստակ գրեաց  
դպատմութիւնս սրբոց. և զամենայն աստուածաշունչ  
գրեանս զթարգմանեալսն ի սրբոց թարգմանչայն կրկին  
յղկեաց և երաց զմիտս գրոց սրբոց, առ ի հասկանալ  
ամենայն ումեք: Եւ այնպէս փոյթ էր ի գրչութիւնն, մինչ  
զի ի գիշերի և ի տուընչեան անխափան էր ձեռն նորտ  
ի գրելոյ. և անչափ և անհամար գրեանս գրեաց և բաշ-  
խեաց ի գրունս եկեղեցեաց, և զորս վաճառէր, առեալ  
զգինսն բաշխէր աղքատաց և կարօտելոց: Զմերկսն զգե-  
ցուցանէր, սրբոց և այրեաց խնամք ածէր, զգերիսն ազա-

տէր և զտնանկան լցուցաներ։ Եւ այնպէս էր սովորութիւնն նորա՝ որ համարով ոչ տայր զողորմութիւն, այլ զոր ինչ առ ինքն ժողովէր՝ ի մի տեղ լնոյր, և յորժամ աղքատի հանդիպէր՝ առանց համարի ի միատեղով ի նա տայր։ Եւ այնպէս բուսաւորեաց զվերին և զներքին կողմանս դրելով և կարգերով, և ողորմութեան օրինակ լինելով։

Եւ հասեալ ի բարիոք ծերութիւն՝ աւելի քան զեօթանասուն ամ, կամեցաւ դնալ ի առը քաղաքն Երուսաղէմ, վարդապետօք և աշակերտօք, միսիթարել զհոգեար և զմարմնաւոր աղքատսն՝ որ անդ կային՝ տրօք և իմաստութեամբ։ Եւ երկու ամ յամեալ յԵրուսաղէմ, և ապա անոտի Եկեալ ուրախութեամբ և ցնծութեամբ ի լնիկ դաւան իւր՝ զամենեսեան ուրախ առներ։

Եւ ի վերայ այսր ամենայնի սուրբ վարուցի առաքինութեան, ցանկայր մարտիրոսութեան հասանել և վկայից պատկացն ժամանել։ Եւ որ գկամս երկիւղածաց խւրոց առնէ և աղօթից նոցա լսէ, կատարեաց զինոգրուածս նորաւ Զիմինչեռ յուրախութեան և ի խաղաղութեան վայելէաք և ի քաղցրուայց վարդապետութեան նորա պարէաք, ահա յանկարծակի եկն եհաս մրրիկ թշուասութեան ի նենդաժետ և յանհաւատ աղդէն Մարաց, զի հասին սուսերօք և տիգօք ի վերայ Արծկէ քաղաքին և զբաղումս սովանին։ Եւ այլը ի նոցանէ երթեալ գաղտագողի յաստուածտրնակ ուխան Յիսոնայ, կամէին զբնակեալ սուրբ Եղլարսն ի նման որոյ ճարակ տալ։ Եւ նոցա դիտացեալ վախսատական եղեն ի տեղւոջէն։

Իսկ զերջանիկ և զերանելի այրն Աստուծոյ զմեծն Դրիգօրիս վարդապետն ոչ կարացին հանել ի վանացն. քանդի ասէր, «Աստ կեցից և աստ մեռայց, զի թէ ի նոցանէ մեռանիցիմ, հաւատամ ի Տէր իմ՝ Յիսուս Քրիստոս. զի ընդ վկայիցն Աստուծոյ անապական և անթառամ ժառանդութեանն արժանաւոր դատայց։»

Եւ մինչնա յայսպիսի խորհրդեան էր, հասին ի վերայ նորա բաղմութիւնք անօրինացն՝ ծարաւիք արեան իրբե զուն կա-

տաղի և իբրև զգազան ազտեղի միւսնեցին զնա իբրև զոչխար անմառնչ և ասեն եթէ «Դու ես որ իսայուն Աստուած ասես» Եւ նա ասէ. «Այն, ես եմ որ իսայուն Աստուած ասեմ, զի ճշմարիտ Աստուած է» Եւ ապա որպէս ոչխար զենին և հեղին զարին նորա՝ իբրև զգառին անմեղին Եւ նա աղօթիւը կարգայր առ Աստուած, ասելով. «Ճէր Յիսուս, ընկալ զհոդի իմ ընդ անմեղ վկայիցն քոց և խառնեա զմահս իմ ընդ երանելի որբոցն զնդից» Եւ օրհնութեամբ և ճշմարիտ դաւանութեամբ աւանդեաց զհոդին իւր ի փառս հօր և Որդւոյ և Հոգւոյն Արքոյ

Խոկ յետոյ եկեալ հրեղեն լեզուն Յակով ճգնաւոր վարդապետն Դրիմեցին աշակերտօք իւրովք և ազգականօք և բաղում ժաղսվրդօք, և արարին կոծ մեծ ի վերայ նորա և եղին սաղմոսիւը և օրհնութեամբ ի տապանի ի փոքր ըլլին, որ է հանդէս վանացն յարեւմտեան կուտէն:

Այլ վայ և եղուկ է մեզ՝ հոգեսոր որդիք հօրն մերս խրառեալք, եկայք ի միասին ողբասցուք զհօրն զվանզ։ Ոչ թէ հեռացաւ նա ի դառն ծովու աշխարհիս, այլ զի մեք հեռացաք ի նորա քաղցր և վայելուչ տեսութեանցն, մերժեցաք ի քրիստոսանման խոնարհութեանցն, ծարաւ գտաք յանուշահամ բաժակէ դեղեցիկ վարդապետութեանցն, քաղցեալ եղաք ի հոգեսոր գիտութեանցն, օտարացաք յատուածանման և ի քրիստոսատեսակ աւաքինութեանցն, և խաւար տարածեցաւ ի վերայ հայաստանեաց, զի սուդ անմիթար մեղ պատահեաց, ձայն հոգեսոր երկոց պակասեաց ի դրանէ սուրբ տաճարաց, եկեղեցիք անշրեշտացան և մանկունքն ցրուեցան։ Բայց գոհութիւն տացուք Աստուծոյ հօրն երկնաւորին զի այսօր ուրախութիւն է երկնաւորաց և երկրաւորաց, զի հայրն մեր հոգեսոր ժամանեաց հօրն դթութեան, որդիացեալն Աստուծոյ ետես զՄրդին Միածին յաթոռ փառաց, ընակարանն Հոգւոյն սրբայ եհաս Հոգւոյն պարգեաց, հրեշտակացեալն ի մարմնի խառնեցաւ ի դասս հրեշտակաց, աստուածաբանն միաւորեցաւ ընդ աստուածաբանիցն պարակցութեանց, քահաւ

նայն սուրբ քահանայագործեաց ընդ քսան ու չորս երիշանցն, տօնասէրն և մարտիրոսասէրն շարադրեցաւ ընդ մարտիրոսացն բազմութեանց, վարդապետն ճշմարտութեան՝ հիմնագիր ուսման ընդ երամս վարդապետաց, վկայն սուրբ՝ ընդ վկայիցն գնդից՝ դՔրիստոս Աստուած և Տէր դաւանեաց, ներկեալն արեամբ՝ ընդ արիւնաների սրբազնիցն, և կենդանի նահատակին՝ ընդ նահատական, ճգնասէրն ընդ ճգնազգեացն, կուսանն առ կուսանն վերացաւ, և թաղաւորեալն ի վերայ ախախց մեղաց՝ ի յերկինո թաղաւորեաց, և Տէր Յիսուս բազմութեամբ հրեշտակաց ընդ առաջ ընթացաւ նմու, ձայն ետ ընդելական թէ՝ «Աղնիւ, ծառա բարի և հաւատարիմ, եկ մուտ յուրախութիւն իմ՝ որ ոչ արտմենցիս, բազմեցուցանեմ՝ ի սեղան հօր իմոյ և զգեց ցուցանեմ՝ քեզ զգեստ փառաց՝ որ ոչ մաշի, աղուցանեմ՝ քեզ պատմուճան՝ որ ոչ աղտեղանայ, մուծանեմ՝ յառագաստն իմ՝ որ ոչ լուծանի, ուրախ արարից զքեզ ի պարզես իմ՝ որ ոչ աղքատանայ, թագաւորեցաւցից զքեզ ի վերայ տասն քաղաքաց, փախանակ տասն քանքարացն, որ ոչ ծրարեցեր ի վարչամալս ծուլութեան, օրհնեցից զքեզ ի կեանս անվախճանս, և ուրախ լեր ի տեսութիւնս իմ անդրաւ յաւիտեանս, քաջ մշակ իմ և արթուն անուն նահատակ Գրիգորիս մեծ վկայ և հրամանակատար իմ՝ ծառայ, լեր առ իս բարեխօս և միջնորդ հաշտութեան ամենայն աղդաց, որ կան ի յերկրի ի մէջ ամենայն վըշտաց, և անդառնալի լիցին ամենայն խնդրուածք քո առաջի ամենայն դասուց հրեղինայ, այս քեզ յինէն պարզեր խոստմանց ի փառս Հօր և Հոգւոյն իմոյ՝ յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

Կատարեցաւ նահատակութեամբ մեծ վարդապետն Դրիգորիս՝ ի Պէտր թուականիս հայոց, ի մայիս ամսոյ ինն՝ յաւուր կերակէի մեծի պենտէկոստէին գալստեան Հոգւոյն Աստուծոյ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Որոյ յիշատակին օրհնութեամբ եղիցի և աղօթք նորա ի վերայ ամենայն աշխարհի, և մազմանօք նորա Տէր մեզ ողորմեսցի՝ խնդրու-

զացս բանիցս այս՝ երկու Կարապետի ի թումայ հռետորէ,  
որ և դայսչափ գիծս շարագրեաց. որ և նորին յիշատակն  
օրհնութեամբ եղիցի։ Այս գրեցաւ ի Բաղէջ քաղաքի ի  
վանքս Գոմաց սուրբ Աստուածածնի և սուրբ Գէորգեայ  
զօրավարի. որը հանգիսլիք սմա՝ յիշեսչիք ի մաքրափայլ  
յաղօթս ձեր։

Եղերերգութիւն իւ մսին ամսառուկութեամ  
Ծերեաց Գրիգոր մարդապետի Խրաթեցոյ։

**Գորսվագութ ձայն կականի,**  
**Աղաղակեմ արտասուալի.**  
**Շարժեմ ի կոծս զազգս Արամի,**  
**Զապանապեան Հայկայ տահմի։**

**Բաբունք համայն որ յաշխարհի,**  
**Լացէք զչայոցս եկեղեցի։**  
**Որ մերկացաւ յանկարծակի,**  
**Զլոյն պայծառ յաշտանակի։**

**Ինձ վայ եղուկ տիսմար գրչի,**  
**Յակոբ անուն գրող բանի,**  
**Հոգւոյ ծնունդ հօրն մեծի,**  
**Քաջ բաբունւոյն իմ Գրիգորի։**

**Գանձ մերկացայ ես եղկելի,**  
**Որ արտասուաց եմ արժանի,**  
**Զրաբունապետն իմ բաղձալի,**  
**Որ և Գրիգոր անուն կոչի։**

**Ոչ հանգուրժեմ այսմ աղտի,**  
**Այլ յօժարիմ կոծ սխրալի.**  
**Քանզի տեսի զհայրն բարի,**  
**Ներկեալ արեամբ այսօր յերկրի։**

Պարագ հոգիս մեղօք ի լի,  
Զունիմ իմաստ բանականի.  
Զի՞նչ ասիցեմ ես արժանի,  
Մեծ բարունուոյն իմ Գրիգորի:

Վ արդապետաց էր ցանկալի,  
Խրատիչ, քանոն ամենայնի.  
Վարդ անթառամ յեկեղեցի,  
Հոտով լցեալ զտունս Արամի:

Արթուն անուն այն ըղձալի,  
Գրիգորիոսն երանելի.  
Արեգական նման յերկրի,  
Լուսաւորէր զեկեղեցի:

Պամից Հայոց որ յաշխարհի,  
Լուսաւորիչ էր նա յայտնի.  
Մեղուցելոց մարդկան աղդի,  
Մաքրիչ մեղաց ամենայնի:

Դիմախտ բազմազան պտղովք ի լի,  
Անուշահամ անծախելի,  
Սուրբ վարդապետն հոգելի,  
Գրիգորիոսն որդին Ծերի:

Անձամբ առնէր զգործս բարի,  
Նման Փրկչին Տեառն Յիսուսի.  
Եւ քարոզէր ամենայնի,  
Խափանեցաւ այսօր յերկրի:

Պատուէր զվկայմն Քրիստոսի,  
Եւ յօրինէր ճառս ցանկալի.  
Վկայասէրն բազձալի,  
Անուանակից նախնոյն մեծի:

Եհաս անանցն պսակի,  
Որուն ցանկայր տենչմամբ սրտի,  
Բարունապետն հրաշալի,  
Սպանեալ ձեռամբն անօրինի:

Տանս Հայոց գերեալ աղդի,  
Էած կոկիծ անբուժելի.  
Ամենագով հայրն բարի,  
Գրիգորիոսն Բղնունի:

Ի նեղութեան ժամանակի,  
Եր օդնական ամենայնի.  
Միշտ կերակրող էր աղքատի,  
Զգեցուցանող մարմնոյ մերկի:

Աման նախնոյն այն Ներսեսի,  
Եղբօրն մեծի տէր Գրիգորի,  
Նոր զարդարեաց զեկեղեցի,  
Գանձ և տաղիւ բաղմագունի:

Յոյժ քաղցրախօս էր աղքատի,  
Հեղ և խոնարհ յամենայնի.  
Ոչ էր սիրող նա արծաթի,  
Ունէր զպատուէրն Քրիստոնի:

Արթուն հսկող անձանձրալի,  
Հանգսյն Մաշտոց Մեսրովըի,  
Եւ Գրիգորին Լուսաւորչի,

• • • • •  
Ուտին բաշխէր մարդկան աղդի,  
Զբանս դրոց պատուիրանի,  
Մատամբ իւրով անխոնջելի,  
Դպիր վերին Տեսան արքայի:

Այսօր եթող զմեղ որբ յերկրի,  
Ամենագութ Հայրն բարի,  
Հաւասարեալ երկնից զնդի,  
Ժառանդ անանցն պսակի:

• • • • •  
Պուրձ զգեցիր, եկեղեցի,  
Այրի եղեր յանկարծակի,  
Փեսայն բարձաւ քո ի միջի  
Յառագաստէ քում խորանի:

Եկեալ հասին վաղվաղակի  
Ազգն Մարաց, որ Քիւրտ կոչի,  
Սպանին զհայրն ցանկալի,  
Ի ծիպնավանկն երևելի:

Լուսոյ ծնունդք աւազանի,  
Դառն ողբացէք զանցս աղէտի,  
Խաւարեցաւ լոյսն արփենի,  
Զահն շիջաւ նոր Սիսմի:

Եհաս ինձ սուգ անբուժելի,  
Լալով կոչեմ անլուելի.  
Զի խրատատուն իմ ըղձալի՝  
Այսօր թողեալ զիս ամայի:

Կոր ձայն երգեմ ի յատենի,  
Ներբողական ի չափ տաղի.  
Առ քեզ խօսիմ, հայր ըաբունի,  
Միթէ հոգիս միսիթարի:

Ո՞վ ցանկալիդ ամենայնի,  
Բաբունապետ Հայոց աղդի,  
Մտօք մաքուր, պայծառ հոգի,  
Մարմնովդ կոյս և առաքինի:

Ռոտեալ սիրովս Քրիստոսի,  
Հովիւդ քաջ նորին հօտի,  
Վանիչ դայլուն իմանալի,  
Եւ արածօղ ի դալարի:

Իմաստութիւն Հօրն յերկնի  
Զքեզ զարդարեաց իւրն տեղի.  
Յորս և հոգւով Հայրն հանդչի,  
Երրորդութիւնն անտրոհելի:

Կաւ ի ծովու այսմ աշխարհի,  
Ուռկան մեծին այն որսորդի,  
Որ որսացեր զծնունդս ախտի,  
Հաներ իջևանս որ մահ չունի:

Աղբիւր ջրոյն այն կենդանի,  
Բղխեալ հոգւովն Քրիստոսի,  
Որ ծարաւեալ մարդկան ազգի  
Միշտ արբուցեր անսպառելի:

Շնորհազարդ տանն Յիսուսի  
Դու գանձապետ իմաստիւք լի,  
Միշտ բաշլէիր յեկեղեցի  
Զգանձ հին և նոր կտակարանի:

Ամենիմաստ գլուխ բարի,  
Խոնարհեցար ի տապանի.  
Ակն պայծառ առատալի,  
Ծածկեալ հողով այսօր յերկրի:

Կարօտելոցն աղաղակի,  
Ունկդ որ լոօզ էր ամենի՝  
Խափանեցաւ յանկարծակի,  
Թողեր մեզ սուդ անբուժելի:

Եւ երգարանդ հոգւոյն մեծի,  
Որ միշտ հնչէր յեկեղեցի,  
Խոցեալ սրով անօրինի,  
Որ խօսակից էր աղքատի:

Ռամից որբոց և անանկի,  
Աջդ որ չնորհէր տուրս ամէնի,  
Կապեալ եղաւ իսկ ի շիրմի,  
Որ միշտ կրէր զբանս տէրունի:

Տարակուսիմ յամենայնի,  
Քանզի չունիմ իմաստ բանի,  
Զքեղ ներբողել ըստ արժանի,  
Երախտաւոր Հայր հոգելի:

Եին տացուք փառք ի յերկրի,  
Հօր և Հոգւոյն ընդ Միածնի,  
Որ գասակցեաց հրաբուն սեռի,  
Այսօր զքեղ Տէր բարունի:



## 40.

ՅԵԿՈՒՅ ԱՎԱԾԵՆՆԵՑԻ

† 1427—1428

Եւ յետ այսորիկ (=յետ նահատակութեան Գրիգորի Խլաքեցւոյ) յետ երկու ամի նոյն Քուրդն յազգէն Մարաց ի Բաղիշու գնաց յերկիրն Ոշտունեաց, և զերջանիկ և զտօռ նասէր աղօթարար վարդապետն Յակոբ Ովաննացի ի յԱնծղնապատի ուխտէն նահատակեալ՝ եղին զնա մերձ գերեզմանին Գրիգորի նարեկայ վանից:





## 41.

ՂԱԶԱՐ ՎԵՐԴԻՆՊԵՏ ԲԵՂԵՑՈՒ

† 1427—1428

Եւ ի նոյն ամի (—յամի նահատակութեան Յակոբայ Ռվասաննացլոյ) վարդապետն Բաղիչու Ղաղար յոյժ հոչաւ կաւոր և բանիբուն, ազօթարար և ճգնաւոր փախեալ ի յանօրինաց և գնաց ի լեառն Սասնոյ։ Եւ գտեալ զնա անօրէն ազգին Մարաց՝ ասեն՝ «Դու ասես թէ Քրիստոս Աստուած է»։ Եւ նա ասէ՝ «Ես ասեմ և ուսուցանեմ, և այն որ ոչ ասէ և ուսուցանէ, գնայ ի կորուստն յաւիտեանական»։ Եւ նոքա հարեալ սրով սպանին զնա, և եհաս մարտիրոսական պսակաց։





## 42.

ՅՈՒՅՆԻՑ ՄԵՆՈՒԿ ԽԱԹԹԵՑԻ.

† 1438 դեկտ. 22, առ.



ատուական և պանծալի վկայս այս Յօհաննէսէս էր ի Բղնունեաց գաւառէն ի Խլաթ քաղաքէ, բարեպաշտ և առտուածասէր ծնօղաց զաւակ, ի ՊԶԶ թուականութեանս մերում, մնեալ և վարժեալ ի յարուեստս երաժշտական գուսանական երգոց, մինչ զի զարմանալի էր տեսողացն և լսողաց՝ հաւատացելոց և անհաւատիցն։ Եւ սիրեցեալ եղել յաջս ամիրապետէն Սևդին կոչեցեալ։ Եւ հանապաղ կայրառաջի նորա ի գինարբունս և յամենայն տեղիս։ Էրե ի նոյն քաղաքին կին մի զաւալ և երգիչ եւ յորժամ գային առաջի նորա առ ի յերգել զարուեստս ուշ

նայնութեան անպիտան և վրասակար գործոյն՝ յաղթեալ լինէր պիզճն այն առաջի ամենայն հրապարակին։ Եւ յորժամ զՔրիստոսէ ճառէր և զամենասուրբ Երբորդութիւնն օրհնաբանէր, և զերգս հրեշտակացն զՓառս ի բարձունան ի ձայն և ի յերգս արուեստին խառնեալ՝ համարձակ վստահութեամբ առաջի ամենեցուն երգէր։

Իսկ բանարկուն սատանայ, որ ի սկզբանէ մարդասպանն է և ուսուցիչ չարին՝ արկեալնախանն և ատելութիւն ի սիրո օձաբարու և նենդժոտ աղգին Մարաց՝ չարախոսեն զնա առ որդի ամիրային, զի գաղտաբար կորուսցէ զնա։

Յաւուր միում կոչեալ զնա առ ինքն ի կլայն՝ և հարցանէր նենդութեամբ։ Ասէ. «Դու լեալ ես երբեմն մեղօք ընդ ծանիկ զաւալին։ Օրէնքն մեր ուսուցանեն մեղ այնպիսոյն յօրէնքն մեր գալ և զօրէնքն մեր կատարել կամ մեռանիլ»։ Իսկ ծառայն Քրիստոսի համարձակութեամբ ետ պատասխանի և ասէ. «Քաւ և մի լիցի, որդի ամիրայի, այն գործ ձեր է և առաջնորդին ձերոյ։ Իսկ ես ծառայ Քրիստոսի եմ. Քրիստոս մեր սուրբ է և զսուրբն սիրէ։ Ոչ է պարտ ծառայիցն Քրիստոսի ի պիզճս մերձենալ, այլ օրինօքն Քրիստոսի կեալ՝ մինչ զի զօրհնութեան պսակն առնուլ քահանայիւք ի գուռն եկեղեցեաց մերոց»։

Յայնժամ բարկութեամբ լցեալ անօրինին և իբրև գհուր վառեալ ասէ. «Լեր գու յօրէնս մեր, ապա թէ ոչ ի սոյն ժամու դառն և չարաչար մահուամբ կորուսանեմ զքեզ»։ Եւ նոյն ժամայն հրամայեաց չորս արանց ի բերդէն ի վայր արկանել զնա և մեռանել։ Եւ ոչ կարացին անօրէնքն յաղթել նմա, զի աներևոյթ օգնութիւնն Աստուծոյ յաղթեաց նոցա։ Եւ նոքա բրածեծ արարեալ զնա դառն և խիստ դանիւք և կապեալ ոտիւք և ձեռօք՝ եղին ի բանտի, և զգիշերն ողոքելով և պատիւ խոստանալով՝ տկարացուցին զնա։ Եւ նա խարեաց զնոսա և ասէ. «Թող այդպէս եղիցի», զի մի կորուսանիցին զնա ի գիշերի».

Եւ այգուցն յորժամ լուսացաւ՝ հանեալ տարան առ ամիրայն, և բռնութեամբ եղեալ ի ձիո՞ց շուրջ ածին

ի քաղաքին և ուրախութեամբ տօն մեծ կատարէին:

Իսկ ոզորմելի մանուկն ի ամեայ գոլով ի տխս հասակի, ի նոյն օրն զզջացեալ՝ փոշիմանեցաւ և կամէր մեռանիլ վասն անուանն Քրիստոսի: Յգեաց առ քահանայս զոմն քրիստոնեայ թէ «Ճուք ինձ զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, զի այսօր և վաղիւն մեռանիմ վասն անուան նորա»: Եւ նոցա անփոյթ արարեալ, յոյժ անարգելով անհաւատ և ուրացող կոչելով զնա, այլ նա հալիւր և մաշէր յանձն իւր, լալով և ոզբալով ամօթղածութեամբ և երկիւղիւ, գոտելոյծ և միաձորձ ի շուրջ դպյր ի քաղաքին, վայ և եղուկ կարգայր անձին իւրոյ. «Պայ քեզ ուրացող Յօհաննէս, զքահանայսն տրտմեցուցեր և զծնօղսն քո ի սուր սգաւորութեան նստուցեր, զսիրելի եղբարսն քո և զընկերսն դառնացուցեր, և Քրիստոսի Աստուծոյն քոյ զինչ տայցես պատասխանի յաւուրն դատաստանի, որ ասաց ի սուրբ Աւետարանին թէ «Որ ուրացի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօրիմոյ, որ յերկինս է»: Այլ և զինչ տացես պատասխանի լալի և ոզորմելի ծնողացն քոց և քահանայից և ուահապան հրեշտակացն քոյ, որ զիս օրինաքն Քրիստոսի անուցին, և ես զօրէնքն Քրիստոսի անարգեցի: Աւաղ և վայ զիս՝ Աստուծոյ եմ ես ծառայ և ստեղծուած և եղէ տատուածուրաց. մոռացայ զՅւետարանն սուրբ որ ծնաւ զիս որդի Աստուծոյ. առ ոտն կոխեցի զատուած արեալ մարմինն և արիւն որդւոյն Աստուծոյ, որ ուրեացն զիս. թշնամանեցի զԱստուած Հոգին որ լնակեացն յիս: Լաւ երկին և որ ի քեզ զօրութիւնք դասք հրեշտակաց, հոգիք արդարոց և լուսաւորք: Ունկն զիք երկիք և որ ի քեզ կենդանիք և բոյսք դալարիք: Եկայը ոզբացուք զանձն իմ եղկելի. քանզի ոչ փոքր ինչ է կորուստ, այլ մեծ և սարսափելի. վասն զի զպատկերն Աստուծոյ անարգեցի, զհոգիս իմ կորուսի, և յետ հոգւոյս իմ կորուսեան՝ զՅւրարիչն իմ Աստուած ի բաց թողիք վայ է ինձ և աւուրն իմ ծննդեան. վայ է ինձ յաւուրն դատաստանի:

Եւ զայս ասացեալ զամենայն քաղաքացիքն յոզք շարշէր։ Եւ զաճառեաց զամենայն ինչս իւր աղքատաց և կարօտելոց, և երթեալ առաջի սուրբ եկեղեցւոյն՝ դաւանեաց զամենասուրբ Երրորդութիւնն և զմի Աստուածութիւնն և զսուրբ մարդեղութիւնն Քրիստոսի, և մեղայ ետ առաջի քահանայիցն, զամենայն մեզս իւր լալով և ողբալով։ Եւ եցոյց զդերեղմանն իւր առաջի սուրբ սեղանոյն և առէ. «Աստ թաղեցէք զիս»։ Եւ յանձն արար զինքն Աստուծոյ և սուրբ եկեղեցոյն և պատրաստեաց զինքն ամենայն սրբութեամբ։ Եւ հասեալ ի պահըն առաջաւորքն՝ անսուազութեամբ անցուցանէր զաւուրսն Եւ։

Եւ եկեալ արք երկու զլխաւորք օրինացն և ասեն ցնա, «Ե՛կ դնասցուք յազօթանոցն մեր և կերիցուք. ապա թէ ոչ և վաղիւն կորուսանեմք զքեղ»։

Եւ նա ասէ, «Խստին սրբոյն եմ՝ խստացեալ զայս քան աւուրբս և ոչ կարեմ՝ դալ»։

Եւ նոքա չարութեամբ լցեալ՝ երթեալ առ զատին՝ չարախօսեն և ասեն զնմանէ, եթէ ճշմարիս քրիստոնեայ է և խարեաց զմեզ և զօրէնս մեր։

Եւ նոքա ասեն. «Լուռ լիրուք մինչեւ ի պահըն մեր և ի նոյն օրն թլփատեմք զնա. և թէ ոչ կամի՝ չարաչար մահուամբ կորուսանեմք զնա»։

Եւ նոցա լուեալ մինչեւ ի վերջին օր շաբաթու Բարեկենդանին և նոյն օրն երթեալ՝ ըմբոնեցին զնա և տանէին հարկանելով։

Եւ տեսեալ ծնօղացն՝ աղիողորմ կոկծանօք և մեծական ողբով երթային զհետ նորաւ Յետս գարձեալ ետես զնոսա և առէ. «Աստուածադադութ ծնօղ իմ մարմնաւոր, մի լայք ի վերայ մահուան իմոյ, այլ լացէք ի վերայ կորստեան իմոյ։ Բայց աղաչեմ զձեզ, հալալ արարէք զաշնաւտանս ծնօղութեան ձերոյ և օրհնեցէք զիս, զի ես այսօր առ Քրիստոս կամիմ երթալ և իբրև զթակովիկ կոմիմ Քրիստոսի վկայ լինիլ. փոխադարձ արարից նմա, զի Քրիստոս վասն մեր չարչարեցաւ՝ ես վասն նորա չարչարիմ։

Քրիստոս վասն իմ՝ անարգեցաւ՝ ես վասն նորա անարդիմ։  
Անմահ Բանն Աստուած վասն իմ՝ մեռաւ՝ ես վասն նորա  
միռանիմ։

Եւ տարածեալ ծնօղացն զձեռոս խրեանց՝ խաչակնքեալ  
օրհնեցին և ասեն, «Զօրացուցիչն երկնաւորաց և երկրաւ  
որաց Քրիստոս Աստուած ամենակարսղ զօրութեամբն  
զօրացուցանէ դքեզ Ե՛րթ ի խաղաղութիւն և ինքն ընդ-  
քեզ եղիցի»։

Եւ տարեալ զնա անօրինացն առ զատին և նա յղեաց  
առ ամիրայն և ասէ, «Կրկին ուրացուցէք և ժլփատեցէք  
զնա»։

Եւ հասեալ ի դուռն բերդին՝ զտեղի առեալ կանգ-  
նեցաւ և ասէ, «Ո՞ւր տանիք զիս, աստ ուրացեալ եմ՝ աստ  
մեռայց»։

Եւ յանկարծակի զպսակ անձինն զգլուխն ի վեր ամ-  
բարձեալ՝ ետես իմանալի մոտացն հայեցողութեամբ զամե-  
նասուրբ երրորդութիւնն՝ զնախնի նահատակն համբերու-  
թեամբ վկայիցն և զհանդիսագիրն ամենեցուն զՔրիստոս  
Աստուած, զի եկեալ յօդնութիւն զտկարսն զօրացուցանէր։  
Վասն որոյ զգասս հրեշտակացն յառաջ կոչէր, զպարտս  
արգարոցն մեծարէր և զվկայիցն քաջալեր տայր գալ տե-  
սանել զարի և զբաջ վկայն ի հանդիսական ատենին և  
ինքն զպսակն հիւսէր, զթագն կազմէր, զտեղի հանգստեան  
պատրաստէր, զօթեանն ցուցանէր։

Եւ տեսեալ անօրինացն, զի տիպ պատկերին գեղեց-  
կանայր այտ երեսացն իբրև հրով վառեալ, տեսութիւն  
աչացն պայծառացեալ, և ոնդունկըն էառ զհոտ անու-  
շութեան անմահ թագաւորին Քրիստոսի, եղ ծունը և  
ձգեաց զձեռն իւր յերկինս, աղաղակեաց ի ձայն մեծ և  
ասէ, «Քրիստոս է արարիչ իմ և ես հաւատամ զնա։ Պիղծ է  
առաջնորդն ձեր և ամենայն մանկունք նորա։ Նզովեալ է  
սատանայ և ամենայն սլոռնկասէր դեր նորա։ Եւ վազեալ  
ի մէջ ամբոխին՝ անկաւ յերկիր և հողն խաչեալ ի բերանն  
արկանէր և ասէր, «Ահա սպանէք զիս վասն Քրիստոսի»։

Յայնժամ բազմութիւն անօրինացն իբրև զշուն կատաղի խումբ արարեալ՝ դիմեցին ի վերայ նորա և քարիւ և փայտիւ և սրով հարին զգլուխ նորա, մինչ զի ուղեղ գլխոյն ի վայր թափեցաւ, և նա անկեալ ի մէջ նոցա, մինչ զի բազմաց ասել թէ մեռաւ, Եւ նա ուշաբերեալ յանկարծակի ելեալ նստաւ և արեամբն օծանէր զերեսն իւր և ասէր. «Ահա բաժակ զոր ճաշակեցի և յօշարակ նուան՝ յորմէ ըմպեցի և մահ պատուական, որ այսօր հասի»:

Եւ տեսեալ անօրինացն ասեն. «Մի երկնչիր. միայն ըան մի խօսեաց և մեք դեզօք բժշկեմք զքեղ»: Եւ նա դարձեալ դաւանեաց զ՞րիստոս Աստուած և կրկին խաչիւ զրոշմեալ՝ զհողն ի բերանն արկանէր և զձեռուն խաչակնաքեալ ի վերայ սրտին՝ դոչէր մեծաձայն և ասէր. «Հարեք զիս և սպանէք, զի ես ծառայ Քրիստոսի եմ»:

Եւ տեսեալ անօրինացն զհամբերութիւն քաջ վկային՝ զարմացեալ գնացին առ զատին և ասեն. «զ՞րիստոս ճշմարիտ Աստուած դաւանեաց խարերայն այն»: Եւ նա ասէր. «Ենդէր ոչ սպանիր»: Եւ ասեն. «Սպանաք զնա և նա նոր կենդանացաւ»: Եւ հրամայեաց զատին երթալ քարկոծել զնա. Եւ նոցա երթեալ խրատ տային նմա ողոքանօք՝ առնել զկամս դատաւորին: Եւ նա ասէ. «Երթայց առ դատաւորն»: Եւ նոցա ուրախացեալ՝ առեալ տանէին առ դատաւորն»:

Իսկ զօրեղ զօրականն Քրիստոսի և քաջ մենամարտիկն զտկարութիւն և զցաւ անձինն ի բաց բարձեալ, եկեալ ի նոյն տեղին, որ զուրացութեան ձին հեծեալ էր՝ ձայնեաց մերձաւոր քրիստոնէիցն թէ. «Աստ հեծայ զաւ ձին, աստ մեռայց վասն իմ Քրիստոսին»:

Եւ տեսեալ անօրինացն զծմարիտ հաւատ նորին՝ քարիւ և փայտիւ հարեալ ջարդեցին զամենայն մարմինս նորա:

Եւ նա քաղցրութեամբ աւանդեաց զհոդին իւր առ Աստուած ի ձեռս հրեշտակաց: Եւ առեալ անօրինացն զպատուական նշխարք երանելի մանկան տղային՝ հրովարեցին ի մէջ քաղաքին:

Եւ ի գիշերին յայնմիկ լոյս սաստիկ ծագեալ ի վերայ նորա և անօրինացն ահարեկ եղեալ՝ յամօթ լինէին։ Եւ յետ երից աւուրց հրաման ետ ամիրայն քրիստոնէիցն գնալ թաղել զմնացեալ ոսկերս նորա։ Իսկ քրիստոնէիցն, որք յահէ անօրինացն փախուցեալը էին՝ այգուցն ժողովեալ՝ եկին ի միասին, և բարեպաշտ ծնօղք նորա ընդ նոսա՝ զսեացեալ հանդերձս ի բաց արկեալ սպիտակաղդեստք եղեն՝ եկին ի տեղի նահատակութեան պատուական վկային և օրհնութեամբ և գոհութեամբ փառս Աստուծոյ տային և գովէին մեծաձայն բարբառով. «Օր է հարսանեաց մեր զաւակին։ Եկայք ուրախասցուք սրբազան քահանայք և բազմութիւն ամենայն եղբարց ի միասին. զի որդեակս մեր զհոգեսոր բաժակն ճաշակեաց՝ մեք զմարմնաւոր բաժակն ըմպեսցուք»։ Եւ եթէ ոք լայր ի վերայ նորա՝ ծնօղք նորա սաստէին ի բաց կալ ի լալոյ և յողբոց մեծի ինսդութենէ նոցին։

Եւ առեալ զմնացեալ մասն նշխարաց նորա սրբազան արհեպիսկոպոսն տէր Ստեփանոսն և պատուական քահանայըն հանդերձ ամենայն բազմութեամբ քաղաքին՝ ցնծութեամբ և ուրախութեամբ օրհնելով զամենասուրբ Երրորդութիւնն, որ ի սառուցեալ և ի ցրտացեալ ժամանակիս ոչ յամօթ արար զմեզ առաջի ազգաց անհաւատից՝ տարեալ եղին ի սուրբ Եկեղեցին ի ներքոյ աստիճանի բեմըին, յորում ինքն դրոշմեալ էր զտեղի գերեզմանին։

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յամսեանն ի փետրուարի ին, ի տօնի ձօն հայրապետացն Կոստանդինուալուսի, յետի Բարեկենդանի շաբաթ օրն, ի վեց ժամուաւուրին։



## 43.

ՅԱՎՀԵՆՆԵՍ ԵԳԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՈՆՈՅ

† Զմբ=1463 ապրիլ 19 զշ.



սուրբ եպիսկոպոսն Յոհաննէս ի  
տղայութենէ մնեալ և վարժեալ  
ի վանս սուրբ Կարապետին, ի գառ  
ւառին Տարօնոյ, կրթեալ ի վարս  
պարկեցաւթեան՝ կրօնաւրական  
ժուժկալութեամբ եւ հասեալ ի  
չափ հասակի, արժանացաւ ձեռա  
նադրիլ յաթոռ եպիսկոպոսութ  
եան նոյն աստուածարեալ տեղւոյն իննակնեան, որ է  
աթոռ սրբոյն Յովհաննու Կարապետին՝ ձեռնադրողին  
Քրիստոսի, ըստ տեսչութեան Հոգոյն Աստուծոյ։ Որ և ա-  
ռաքելաբար հովուէր զժողովուրդն Քրիստոսի, ուղիղ վե-  
րակացութեամբ, ոչ որպէս տիրելով վիճակին, այլ զանձն  
օրինակ կացուցեալ՝ առնելով և ուսուցանելով։ Եւ այնպէս  
փայլէր որպէս զջահ լուսաւոր ի մէջ ազգիս Հայոց։

Եւ ըստ բարւոք յօժարութեան իւրոյ՝ զոր ունէր եպիսկոպոսն Յօհաննէս՝ ձեռնարկեաց առ ի նորոգել վերսախն զոտաճարն սուրբ Կարապետին և յօրինեաց զնա գեղեցիկ շինուածով Եւ ապա ձեռնարկեաց ի մեծ կաթուղիկէն, ի վկայարան որպոյն Սահմանոսի Նախավկային; Եւ այնպէս կային և գործէին մեծաւ ուրախութեամբ: Զոր տեսեալ վիշապն անօքէն, օձն կամակոր, թշնամին արդարութեան սատանայ, զայնպիսի յառաջադիմութիւն եպիսկոպոսին, ոչ կարաց ժուժել ցաւոցն. այլ տուտն շարժեալ զջախջախեալ գլուխոյն և յարոյց պատերազմ ընդդէմ նորա:

Եւ գտեալ ազգ մի խուժագուժ լեզուաւ և ազգաւ, որ կոչիւր Դմիթ, որք տեղի առեալ ընակէին ի նոյն գաւառն Տարօնոյ, առ ստորոտաւ լերինն այնմիկ Տօրոսի, ի մերձակայ գեօղսն. որք դնացեալ եղին բարուրս ի վերայ նորա, եթէ «Բակեաց զքարինս մղկթին և տարեալ շինեաց զեկեղեցին իւր»: Եւ այսպէս արկին զնա յորսայս մահու:

Եւ ծանուցեալ զայս գաւառապետին Խալիլի՝ ետ ունել զեպիսկոպոսն և կապեալ զնա յուղարկեաց ի Բաղէշ քառար՝ առ ամիրապետն Շարափ: Եւ նա ոչինչ քննեալ զպատճառութիւնանց, այլ վազիվազակի ետ ի ձեռս դահնացն և հրամայեաց հանել արտաքս յատենէն, ի տեսութիւն հրապարակի քաղաքին:

Որ և անդէն մերկացուցին զնա և արկին չուան ի պարանոցն և հանեալ ի բարձր տեղի մի, որ կոչի շահնշահ, առ ի տեսանել զելս իրացն թէ զի՞նչ հրամայեսցէ ամիւրայն:

Իսկ եպիսկոպոսն ել ի միջոյ նոցա և կոչեաց առ ինքն զմի ոմն ի քահանայից քաղաքին՝ որ անդն կային, և կատարեալ զդաւանութիւն ուղափառ հաւատոյս ճշմարիտ խոստովանութեամբ ի ծածուկ և հաղորդեցաւ ի փրկական մարմնոյ և յարենէն Քրիստոսի, զոր յառաջադոյն բերեալ էր ընդ իւրն և ասացեալ զգոհացողական աղօթմն, գարձաւ անդքէն առ զինուորան: Եւ նոցա բազում հարց և փորձ արարեալ ընդ նմա նենդութեամբ, զի թերես կարացեն

պատրել զնա բանիւք և ոչ կարացին։ Եւ ապա սուսերամերկ խծծէին զնա ընդ երեսս և ընդ թիկունսն, մահ սպառնալով՝ եթէ ոչ լուիցէ և դարձի յօրէնս նոցա։

Իսկ նորա ոչինչ զանդիտեալ ի նոցանէ ամենելին, այլ տայր համարձակ զպատասխանին և յանդիմանէր զանաստուած մոլորութիւն նոցա։ Եւ ապա քարշեալ զնա անտի բոնութեամբ ընդ քաղաքամէջն և տարեալ կացուցին զնա առաջի գրան բերդին և կուտեցաւ ամբոխ յոյժ ի տեղւոջն, մինչեւ կոխել զմիմեանս։ Եւ բորբոքեցին հուր, զի այրեսցեն զնա. և ասեն թէ «Ուրացիր զՔրիստոս և դարձիր յօրէնս մեր և զերծիր ի մահուանէ և բազում պատիւս և պարզես ընկալցիս ի մէջ. և զմնասն զոր արարեր, շնորհեմք քեզ»։

Իսկ նա պատասխանի տուեալ ասէ ցնոսա. «Խոստումդ ձեր ընդ ձեզ ի կորուստ լիցի. մինչեւ ցայժմ քրիստոնեայ կեցեալ եմ ոչինչ խիզճ գիտելով զանձնէ իմմէ և այժմ անկանիլ յանաստուածութիւն որպէս զանուղղայ աղդդ ձեր վասն առօրեայ ժամանակիս և սուտակայ փափկութեանս՝ անհնար է ինձ այդմ լինել»։

Եւ նոքա եւս ստիպէին զնա և ասէին, «Ասա բան ինչ և ազատիր ի մահուանէ և կաց պատուով»։

Իսկ նա ի պատասխանելոյ և ի յանդիմանելոյ զնոսա՝ ոչ գաղարէր իբրև տեսին նորա թէ ոչինչ օգտեցան ի խոստմանցն, կրծտեցին զատամունս իւրեանց ի վերայ նորա և ասեն. «Ե՛ մեղսուն, որպէս իշխեցեր քակել զմզկիթն և շինել եկեղեցի»։

Իսկ նա կայր անմոռնջ ի մէջ նոցա, որպէս գառն անմեղ մատնեալ անողորմ գայլոց, որք սուսերամերկ պատեցին զնա, որպէս գաղան կատաղի՝ արդարոյն արեան ծարաւի և մրմռեալ խածատէին զնա բանիւք՝ առաւել քան թէ որով։ Իսկ նորա դարձուցեալ զերեսս իւր ի նոցանէ, դիմեաց ինքնին ի հուրն, եկաց ի մէջ բոցոյն և ասէ ցնոսա. «Արդարե ասեմ ձեզ, զի տոչօրումն հրոյս կակզագոյն է քան զմստութիւն որտից ձերոց»։

Եւ նորա եւս բորբոքէին զհուրն փքով դարբնաց. խալ նա կայր ի մէջ հրոյն և ի փառաւորելոյ զԱստուած ոչ դադարէր. իբրև տեսին թէ այսու ևս ոչ կասեցաւ սուրբն, կամեցան ձեռնամուխ լինել ի նա ամենեքեան, որպէս և օրէն է այս նոցա չարութեանն, զի ամենեքեան ողորմութիւն գտցեն քարաձգութեամբն ի նա: Եւ դրո՛ տուեալ ի վերայ նորա՝ քարշեցին զնա արտաքս ի հրոյն, և եհար մի ոմն ի նոցանէ ուժդին որով զկողս եպիսկոպոսին, վասն որոյ յոյժ նուաղեցաւ: Եւ ապա բազմութեան հարեալ զնա քարիւ և փայտիւ. և գայր ի վերայ նորա բազմութիւն քարանցն՝ որպէս տարափս կարկտի, մինչեւ անդէն ի տեղւ ողն ծածկեցաւ մարմին երանելոյն ի քարանցն: Եւ այն պէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած սուրբ եպիսկոպոսն Յոհաննէս, որպէս խունկ անոյշ:

Եւ ապա հրաման ետ ամիրապետն նարաֆ քրիստոնէիցն ի նմին աւուր բառնալ զնա և թաղել: Զոր և յառ ուղագոյն հաճուկս արար արձակել զնա, վասն քրիստոնէից քաղաքին: Խակ բազմութիւն ամբոխին ոչ անսացին հրամանաց ամիրային, այլ փութապէս զկամս որտից իւրեանց կատարեցին, որք հանապաղ ծարաւիք էին արեան քրիստոնէից:

Առ որ եկեալ արքեպիսկոպոս քաղաքին Տէր Յովաննէս ամենայն ուխտիւ և ժողովրդով, բարձին զպատուական մարմին երանելի եպիսկոպոսին. և տարեալ յաւադեկեղեցին՝ ի վկայարան սրբոյն Սարգսի զօրավարին և կատարեալ զպաշտօն գիշերոյն հսկմամբ յերեկօրեայ մինչև ցառաւոսն և մատուցեալ զխորհուրդ փրկարան սուրբ պատարագին, եղին զնա ի տապանի առաջի սրբոյ սեղանոյն՝ սաղմոսիւք և օրհնութեամբ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Կատարեցաւ սուրբ եպիսկոպոսն Յոհաննէս ի ապրիլի մթ, յետ սրբոյ Զատկին, զկնի նոր Կիրակէին՝ յերկրորդումն շաբաթու երեքշաբաթին:



## 44.

ԱՏԵՓԵՆՆՈՍ ՄԸՆԹԻԿ ԿՈՍՏԵՆԴՎՈՒՊԻԳՈԼՈՅԵՑԻ

† Զի=1471

Ի թուին Հայոց Զի նահատակեցաւ ի կոստանդինուպօլիս Ստեփաննոս մանուկ, զորոյ զներբող մահուն ասի թէ գրեաց մի ուն յականատեսից հանդերձ պատմութեամբն, այլ մեք չունիմք ի ձեռին:





45.

ԳԵՐԻՄ ԽԵԲԵՐԴՅՈՒ

† ԶԻԴ=1474 յունի. 16 կիր.

**Ս** էր յերկրէն Խարբերդու որդի քառանայի Գրիգոր կոչեցելոյ. և էր սորաքեռայրն տաճկացեալ Եւ յաւուր միում հանդիպեցաւ սմա երթալ յայլ գեօղ ի հարսանիս Եւ տեսեալ զիեսայն իւր անդ՝ դարձոյց զերեսն իւր ի նմանէ, անհաւատ և ուրացող ասելով նմա: Զոր եկեալ պիղծն այն ի քաղաքն առ դատաւորն և առէ թէ «Դաւիթ որդին աներոյ իմոյ անարդեաց զիս և զբերանս իմ և զհաւատս և զառաջնորդն մեր»:

Եւ առաքեալ դատաւորն տարաւ զԴաւիթ և կապեալ էարկ ի բանտ աւուրս ի: Եւ յամենայն օր երբեմն ողոքանօք և երբեմն սպառնալեօք կամէին թուլացուցանել զնա

ի հաւատոցս Քրիստոսի և ոչ կարացին խախտել։ Եւ յետ քսան աւուրն վճիռ հատին նմա՝ զի հրով այրեսցի։

Եւ հանեալ ի բանտէն՝ սկսան չարչարել զնա ամենայն բաղմութիւն քաղաքին, սրով խոցուտեցին և փայտիւ ձաւ դեցին, ապտակեցին զերեսս նորա և թքին և անողորմ վիրաւորեցին։

Եւ հայրն Դաւթի՝ Գրիգոր քահանայն լալով յորդորէր զմանուկն. «Որդեակ, որդեակ հօրս ցանկալի և փափագելի, մի երկնչիր ի յայս չարչարանացս, որ զմարմինդ միայն ապականէ և զհոգիդ ոչ։ Այլ ուրախացիր որ յաւիտենից և անմահ կենացն ես ժառանգործ և անպատում ուրախութեանն»։ Եւ Դաւիթ ցնծալի հոգւով ասէր. «Մի միարինձ փրկութեան, հայր իմ, զի այսօր ինձ օր փեսայութեան է և օր ուրախութեան, և ակն ունիմ առնուլ հանգերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան և փոխանակ չարչարանացս՝ ակն ունիմ առնուլ զհանդիսան յաւիտենից»։

Եւ յորժամ՝ լուսն զայս բան ի բերանոյ Դաւթի ազգն անօրէն՝ բորբոքեցին հուր և առեալ զԴաւիթ՝ տարան յայրել. և փայլեցին երեսը նորա՝ որպէս զՍտեփանոսին, և ընկեցին զԴաւիթ ի մէջ հրոյն՝ և ոչ այրեցաւ սուրբն առժամայն. այլ հուրն ի լոյս դարձաւ և ծիրանագոյն եղեւ։ Եւ անօրէնքն հանեալ զԴաւիթ ի հրոյն և սրախողխող կարեվէր խոցուտեցին զբոլոր մարմինն, մինչև ի սպառել չնշոյն։ և ապա կրկն արկին ի հուրն»։


Եւ եղեւ նշան պանչելի, զի սիրան և գլուխն ոչ այրեցաւ. և զայլ մասսունք մարմնոյն այնչափ այրեցին, որ փոշի եղեն և զփոշին հողմով հոսեցին և արարին կոխան։ Եւ զսիրան տարեալ ընկեցին ի հրայրս բաղանեացն և բորբոքեցին հրով. և ոչ այրեցաւ ամենին իբրև զպողովասիկ երկաթ։ Եւ բաղանիքն և պղինձ բաղանեացն հերձան յերկուս. որ և յահէն սասանեցան անօրէնքն և երկեան երկիւղ մեծ։

Եւ մինչդեռ քրիստոնեակըն ի սուգ էին և յերկիւղի կային, և հայրն Դաւթի մօրմօքայր կսկծագին՝ յանկար-

ծակի ճառագայթեցաւ լոյս պայծառ ակներեւ ամենեցուն  
ի վերայ նշխարաց սրբոյն Դաւթի խաչանման զաւուրս  
հնգետասան յամենայն գիշերին Եւ ուր տարեալ եղեւ նշխար  
սրբոյն Դաւթին ի տուն և յեկեղեցին փայլէր և շողայր  
լուսով։ Եւ ի լրման աւուրն երեսնին՝ կրկին ճառագայթեցաց  
լոյս ի վերայ տեղեաց նահատակութեան սրբոյն Դաւթի,  
և աղանիք լուսափայլք երամօք տեսեալ հաւատացելոցն՝  
որք խաղային ի վերայ նահատակութեան տեղեացն և երաւ  
մօք թռչէին ընդ արևելս. որ և ի սրանչելի հրաշիցն հիա-  
ցեալ քրիստոնէիցն՝ գոհութիւնն մատուցանէին Աստուծոյ։  
Եւ հայր և մայր մանկանն և ամենայն աղդայինքն սփո-  
փեալ միսիթարեցան ի մեծ սկզբն և ուրախութեամբ գո-  
հանային զԱստուծ։

Կատարեցաւ երանելի վկայն Քրիստոսի Դաւիթի թուա-  
կանիս Հայոց Թօնիկ ամին, յունվար ամսոյ ՓԶ, յաւուր  
կերակէի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

---



## 46.

Սիրոկն Հիջնըզի

† Զիե=1476 յունիս 14 կիր.



ա էր ի քաղաքէն Հիդնայ, հայ աղաւ, մնեալ ուղղափառ հաւատով քրիստոնէութեան, երիտասարդ հասակաւ և վայելուչ տեսլեամբ, իեւ ամաց: Եւ մայր սորա տաճկացաւ յաղդմանէ չարին: Վասն որոյ առաքեաց գատաւոր քաղաքին բերել զսուրբն Սիրուն, զի թերեւս և զնակարացէ գարձուցանել ի մոլար օրէնսն իւր: Իսկ սիրեւլեաց սրբոյն աղդ արարեալ նմա զի փախիցէ: Եւ նա ոչ փախեաւ, այլ գնացեալ առ աղդականսն իւր, և արար զկտակն մահուան իւրոյ՝ որպէս պարտն պահանջէր:

Եւ գնացեալ ինքնակամ եկաց առաջի գատաւորին և ասաց համարձակ. «Թիտացիր, մօլնայ, զի ես քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ»:

Ասէ զադէն. «Դարձիր ի Քրիստոսէ, և լեր տաճիկ՝ որպէս զմայրն քո. զի չէ պատեհ բաժանիլ քեզ ի մօրէն

քումմէ, այլ պարտ է քեզ կեալ ընդ ծնօղին քո, և պաշտել ընդ նմա գհաւատ նորա»

Ասէ սուրբն. «Մինչի յայն էր նա ինձ ծնօղ՝ որքան և ինքն հոգեոր ծնունդ էր սուրբ աւազանին, և երկրապատու խաչին Քրիստոսի հակ յորժամ մերկացաւ նա զշնորհը սուրբ աւազանին՝ որ է վերստին ծնօղ մեր, և ուրացաւ զիաչելեալն, այսուհետեւ ոչ է ինձ մայր, այլ թշնամի և առելի»

Եւ դատաւորն սղոք անկեալ խոստացաւ տալ նմա ինչո բազում, այդիս և դրախտու և աղջիկս գեղեցիկս, զոր և ինքն կամեսցի տալ նմա ի կնութիւն»

Ասէ սուրբն. «Մի կարծեր զիս որպէս պակասախելքս և կարճամիտ, որ պատրեալ ձգեսցես յօրէնսն քու այլ յո՞ւ հաւատ որ ծնեալ եմես, ի նոյն մեռանելոց եմ»

Վասն որոյ բարկացեալ զադին հրամայեաց հանել զնա ի բաց, և տանել չարչարելց Եւ չար սպասաւորքն անդէն խոցեցին զնա խանջարով. և քարշեալ զնա ի վերայ երես սաց՝ իջուցին զնա ի վերնատանէն ի վայր։ Եւ տարեալ եղին խիճո հեղեղատի ի ներքս նորա, և յօյժ պնդեցին փոկով. և ապա խիստ գանեալ՝ կոտորեցին քարիւ զատաւ մունս նորա։ Եւ այնպէս տարեալ արկին ի բանդ, և թողին զաւուրս երկու։ Եւ ապա հանեալ ի բանտէն՝ հարցանէին. և գտին հաստատուն ի հաւատս Քրիստոսի։ Եւ ժողովեցին փայտ՝ զի այրեսցին զսուրբն, և ոչ այրեցին, այլ ահացուցանէին զնա։ Եւ բերեալ կայծ կրակ լցին ի հողաթափս նորա, և աղուցին յոտոն։ Եւ հրախառն մօխիր հնոյի արկին ի ծոց նորա. և նա կայր անկիպելի՝ շնորհօքն Քրիստոսի»

Իբրև տեսին անօրէնքն եթէ ոչ կարացին խախտել զերանելի մանուկն, առեալ՝ ածին զնա ի ձիատուն մի. և կապեցին զնա ընդ յետս ի սիւն մի. և տարեալ զերկու ձեռուն ի յետոյ՝ պատեցին ի բոլոր սեանն։ Եւ պատաժեցին զբոլոր մարմինն բարակ չուանով ընդ սիւնն. և ամենեան եկեալ թքանէին յերես նորա և ապտակէին, որպէս

Հրէայքն զկենարարին։ Եւ ծակոտեցին զամենայն մարմին նորա սրով, և լցեալ ի վերայ վիրացն աղ՝ կսկծեցուցանէին։ Եւ ծակեցին զերկու թաթո ձեռինն՝ ըստ նմանութեան Տեառն ի խաչին, և ընդ արեանն հոսէին ի նմանէ քրտունքն։ Եւ առեալ անօրինացն ջուր՝ մատուցին նմա և ասեն, «Ու պէս սակաւ մի, զի զովասցի լեզու քո» Խոկ նա ոչ էառ առելով. «Ես ակն ունի՛ անմահական ջրայն Քրիստոսի» Եւ թողին զնա այնպէս՝ պնդեալ ընդ սիւնն զգիշերն առ բողջ։

Եւ նա ի նոյն տանջանսն ննջեաց, Եւ ետես ի տեսլեան զսուրբն Սարգիս՝ Մարտիրոս որդւովն իւրով եկեալ յերկնից բերեալ նմա պսակ լուսեղէն։ Եւ նա զարթուցեալ ուրախութեամբ օրհնէր զԱստուած։

Եւ ընդ լուսանալ առաւօտին՝ ժողովեցան այլազգիքն ի վերայ նորա, արձակեալ հանին արտաքս՝ և հարցանէին։ Եւ նա խնդութեամբ ետ պատասխանի, և դաւանեաց զՔրիստոս Աստուած՝ զուարթ երեսօք, և անարգեաց զՄահմէտ, և զամենայն հետեւողը նորա։ Խոկ նոյցա բարկութեամբ լցեալ կրծտեցին զատամունս իւրեանց ի վերայ նորա, և առեալ քարշեցին զնա տանել ի տեղի կատարմանն։

Եւ ի հասանել հանդէպ մեծ շուկային, ելին մեծատունը քաղաքին ընդ առաջ նորա, և բերին ի խանութս իւրեանց խումաշ բաղումս, և մատուցին նմա, զի թերես դառնայ ի հաւատոցն իւրոց։

Եւ սրբոյն պատասխանեալ ասաց. «Ամենայն մարդ զլաւն իւր կամենայ, եթէ ձեր հաւատդ լաւ է, նա ընդէր ձդէք կաշառօք ի վերայ քրիստոնէից, ապա յայտ է թէ ոչինչ է»։

Եւ դարձեալ զերեսն իւր յարեելս՝ խաչակնքեաց զդէմս իւր, և առժամայն հարեալ անօրինացն՝ կտրեցին զձեռօսն իւր, և պատեալ շուրջ զնովաւ՝ մերկացուցին զնա, և քարշեալ զսուրս իւրեանց, ազաղակեցին միաբան ամեներեան, և դիւմեալ ի վերայ նորա, միւեցին առհասարակ զսուրս իւրեանց յարիւն նորա։ Եւ նա կացր ի մէջ նոյցա՝ որպէս զգառն անմեղ՝

մատնեալ անողորմ գայլոցն Եւ ամենեին ոչ մնաց տեղի ողջ  
ի մարմին նորաւ Եւ այնպէս կատարեցաւ սուրբն Սիրուն, որ  
գործովն զանունն ելից, և եղեւ սիրելի որդի Հօրն երկ-  
նաւորի, և անուանակից սէր անուանն Յիսուսի, և սիրուն  
անօթ Հոգւոյն ճշմարտութեան:

Եւ ժողովեալ բազում ցաւագարաց, և առեալ յարեա-  
նէն ամբիծ սուրբ նահատակին, օծանէին զինքեանս և  
առժամայն առողջանային շնորհօքն Քրիստոսի:

Եւ տեսեալ Տաճկացն զբժկութիւնն որ լինէին ի սրբոյն,  
խորհուրդ արարին զի այրեսցեն զնա հրով: Իսկ ամիրայ  
քաղաքին ոչ եթող, այլ հրաման ետ քրիստոնէիցն՝ բառ-  
նալ և թաղել զնա՝ որպէս և կամեսցին:

Եւ երթեալ բազմութեան քահանայիցն և ժողովրդոցն՝  
բարձին պատուսի զալատուական մարմին սուրբ վկային  
Քրիստոսի: Եւ եգին ի տապանի՝ առաջի Յարութենին՝  
սաղմոսիւք և օրհնութեամբ և երդօք հոգեորօք:

Կատարեցաւ սուրբ մանուկին Սիրուն՝ ի թուականիս  
մերում Զ և ի իւ ամին՝ յունուար ամսոյ և մ՛Դ, ի փառս  
Քրիստոսի Աստուծոյ մերոյ:





## 47.

ԱՅԵՓԱՆՆՈՍ ԽՈԽՈՎՈՎԵՆՅԱԼ ԱՐՁԵՊԻՄԿՈՎՈՍ ՏԵԹԵՒԹԻ  
ՔԵԹՈՐԴԻ ԻՒՐ ԵՒ ՄՈՐԵՎԲՈՐՈՐԴԻ ՆՈՐԻՆ

† 21.6=1483



ը էր եղբօրորդի մեծ վարդապետին Շմաւ-  
լոնի և յազատ տանէ և ի մեծ ազգէ.  
որ և յետ հօրեղբօրն իւրոյ կալաւ զաթոռ  
մեծափառ ուխտին Տաթեոյ։ Ի սորա  
յաւուրսն աբեղայ մի շարժեալ ի սատա-  
նայէ չար ցանկութեամբ ի սէր աղջկան  
միոյ։ Եւ եղբարցն բազում անդամ իւրա-  
տեալ զնա և նա ոչ լոււաւ նոցա, այլ գործակցութեամբն  
սատանայի՝ այլ մեծագոյն չարի գիտեցաւ, զի առեալ  
զաղջիկն և գնացեալ ի գեօղ մի այլազգեաց և մտեալ  
ի տուն դատաւորին՝ տաճկացաւ։

Իսկ աղասորդին Տէր Ստեփաննոս՝ քանդի ուներ բազում ճորտու այլազգիս, հեծեալ նոքօք ի ձի և գնացեալ ի դեօդն յայն, քարշեաց զարեղայն և զաղջիկն ըոնուածեամբ և քերեալ զարեղայն՝ կացոյց ի տեղի իւր, և զաղջիկն եմոյծ ի կուսանոցն և յանձնեաց ի հաւատաւոր կանայսն Եւ այնպէս արժանացոյց զերկոսինն ապաշշարութեան:

Իսկ յետ այնորիկ՝ ի ժամանակս Եազուալ փատշահին, անցելաց ամաց ի վերայ, ի Թաւրէզ, տեղի գտեալ անօրինացն և կամեցան վրէժինդիր լինել և մատնեալ չարաշխոսեցին զնա առ իշխան այնմ կողմանն՝ որ էր աթարակի և հայրագլուխ որդւոց փատշահին, որոյ անունն էր Սօֆի Խալիք. Որ յղեալ կոչեաց զեպիսկոպոսն սիրով ի պատիւ նենդութեամբ. Եւ ելեալ գնաց միամտութեամբ. տարաւընդ իւր և զքուերորդին իւր՝ որ էր եպիսկոպոս, և քեռորդին իւր՝ որ էր արեղայ:

Իսկ իբրև եմուտ նոքօք առ իշխանն՝ կանդնեցաւ իշխանն ի վերայ ոտից իւրոց և եկն ընդ առաջ եպիսկոպոսին և կալաւ զձեռանէ նորա և տարաւ զի նստուցէ ի տեղին իւր: Իսկ նա յետս կացեալ՝ ասէ. «Վասն Աստուծոյ, մի ամաչեցուցաներ զիս, զի չեմ արժանի նստել ի բազմոցի քում»:

Իսկ նա ասէ. «Վասն այնորիկ նստուցանեմ զքեղ ի բարձի իմում, զի գիտացես զկատարեալ սէլն իմ զոր ունեմ առ քեզ»:

Եւ եպիսկոպոսն ոչ լուաւ նմա, այլ նստաւ յաջմէ նորա, որպէս և սովոր էր յաւաջմէ:

Ասէ իշխանն. «Վասն սիրոյ քո, երդուեալ է իմ, զի զքեղ ինձ երկրորդ արարից և զամենայն հուքմ՝ իշխանութեան իմոյ տաց ի ձեռս քո և կացուցից զքեղ վերակացու տան իմոյ և ընտանեաց և տիրեսցես դանձուց իմոց և ստացուածոց, և քսան և երկու որդիքն իմ և ես հեծելովք մերովք հնաղանդ լինիմք քեզ. և քո այսն այս լինի ի վերայ մեր և ոչն ոչ Եւ տաց զդուստրն իմ՝ քեզ ի կնու-

թեան և լինիս ինձ ի փեսայ, գերագոյն ամենայն իշխանաց, ի գրան վատչահին։ Զայս ամենայն և առաւել քան զայս արարից քեղ, միայն թէ լուիցես ինձ և գայցես յօրէնսն մեր։»

Ասէ եպիսկոպոսն Ատեփաննոս. «Այդ որպիսի ինչ է. միթէ բան ինչ լուեալ է քո ի բերանոյ իմմէ վասն այդմիկ կամ ի համբաւց ուրուք լուեալ է քո։»

Ասէ իշխանն. «Ո՛չ, այլ ես ինձէն հրամայեմ քեզ կատարել զայդ, զոր խօսեցայ։»

Ասէ եպիսկոպոսն. «Քաւ լիցի. մի ասասցես ընդ իսպայդ։»

Ասէ իշխանն. «Իմ երկոտասան կինն յիսնէ թողած լինի թէ այդ բանիդ այլ ճար կայ. կամ պիտի քեզ իմ բանիս հաւանել և կամ չարաչար տանջանօք մեռանել։»

Եւ ասաց բերել առաջի նորա ազնիւ հանգերծս ոսկեանկարս, ընդ նմին և անօժս տանջանաց և ասէ ցնա. «Զոր և կամիս ընտրեամ։»

Ասէ եպիսկոպոսն. «Ես պատրաստ եմ ի մեռանել վասն անուանն Քրիստոսի։»

Եւ հրամայեաց արկանել ի բանտ ընկերօն և թողին անսուազ զաւուրս ութ, և ապա բերեալ առաջի իւր, հարցանէր, և նա անվեհէր տայր պատասխանի և դաւանէր զՔրիստոս Աստուած։ Եւ դարձեալ էարկ ի բանտ և եթող անսուազ այլ ևս աւուրս երկոտասան, և սուրբքն տանէին ուրախ մտօք նեղութեանն, և ի փառարանութենէն Աստուծոյ ոչ դադարէին։

Եւ դարձեալ կրկին բերեալ առաջի իւր, հարցանէր, և եղիտ զնոսա հաստատուն ի հաւասս Քրիստոսի։ Եւ ապա հրամայեաց եռացուցանել լի ջրով կատայ և ի միւս կողմն հուր բորբոքել ուժգին. և ետ կապել զնորբնծայ եպիսկոպոսն՝ զքուերորդի Տէր Ատեփաննոսին՝ պարակօրէն զերկուս ոտսն ի մի և զերկուս ձեւսն ի մի և անցուցանել զկապ ոտից ի պարանոյն և այնպէս՝ որպէս զկծիկ արարին յեռանդս ջուրցն ի մէջ պղնձին։ Եւ զարեղայն որ էր քե-

ոորդի Տէր Ստեփաննոսին, նոյնպէս կապեցին և անցուցին երկայն ձող մի յոտան և ի ձեռոն ընդ ողն և կալեալ զնա երկու արանց ընդդէմ կրակին: Եւ այնպէս առաջի Տէր Ստեփաննոսին՝ զեպիսկոպոսն խարշեցին և զարեղայն խորովեցին. որ մատուցան սուրբ ողջակեզ և զոհ ընդունելի և խունկ անոյշ Տեառն Առուռծոյ, իբրև զպատարագն Արելի, զնոյի և զԱրքահամուն, որ հոտուեցաւ Տէր Աստուած ի հոտ անուշից: Եւ նորա այնպէս կատարեցան ի Քրիստոս:

Իսկ զՏէր Ստեփաննոսն դարձեալ արկին ի բանտ. և տային նմա հաց և ջուր հոգեպահ, յետ երկուց և երից աւուրց: Եւ զմարմինս սրբոց վկայիցն առեալ ազգականացն բազում կաշառուութեամբ և տարեալ թաղեցին ի մեծափառ վանս իւրեանց ի Տաթեւ: Եւ վասն արհեպիսկոպոսին ցրուեցին բազում գանձս ի գուռն փատշահին, աւելի քան զերկու հազար դեկան կարմիր, և ոչ կարաց փատշահն ազատել զնա ի ձեռուց նորա. զի ասէր թէ՝ «Երդուեալ եմ և ոչ կարեմ զիմ հալալն հարամ անել և զկանայսն իմ թողուլ, որ են մարք որդւոցն իմոց, վասն արեղայի միոյ» Եւ յետ տարւոյ միոյ՝ հանեալ զեպիսկոպոսն ի բանտէն, տարեալ առաջի իւր, հարցանէր ողպանօք և սպառնալեօք: Եւ նա զօրութեամբ Հոգւոյն Արքոյ՝ զոր ունէր յինքեան, համարձակ խոստովանէր զՔրիստոս Աստուած: Ծնդ որ բարկացեալ իշխանն և ետ բերել ատամնահանս և քարչեալ զերեսուն և երկու ատամնենս նորա, և հարին շուրջանակի ի գլուխ նորա կուսնով որպէս զպսակ, և տարեալ արկին ի բանտ: Եւ եկաց այնչափ ի բանդին, մինչեւ ողջացաւ ատամնահար վէրք գլխոյ նորա: Եւ դարձեալ կոչեաց առաջի իւր, հարցանէր, և նա զնոյն գաւանութիւն հաւատոյ գարձեալ երկրորդէր առաջի նորա: Եւ նա ետ բերել բեեռաքարշ և քարչեալ զմիս ոսկերաց նորա, ի վաթսուն տեղաց. և այնպէս վիրաւորեալ մարմնով տարեալ արկին ի բանտ: Եւ կացեալ այնքան, մինչեւ ողջացաւ ամենայն վէրք ոսկերացն. և դարձեալ ածին զնա յատենի

և հարցանէին, և նա ևս պնդագոյն դաւանէր զբրիստոս Աստուած և ասէր ցիշխանն, «Զի որպէս սալն դարձնաց ոչ հոգայ ի կռանաւորաց, նոյնպէս և ես անհոգս եմ ի չարչարանաց, արա զի՞նչ և կամիս»:

Եւ որտամտեալ անիծեալն՝ ետ հուր բորբոքել և կապեալ ըստ նմանութեան արեղային, կալեալ ի վերայ կրակին, խորովեցին զամենայն ոսկերս նորա, և նա գեռ ևս կայր կենդանի զօրութեամբն Քրիստոսի: Եւ այնպէս խորովեալ անդամօք տարեալ արկին ի բանտ, և կացեալ այնչափ ի բանտին, մինչ որ ողջացաւ ամենայն հրայրեաց վերը մարմնոյն, բայց այնքան այլագունեցաւ մարմին նորա յազդի աղդի չարչարանացն, մինչ զի ոչ բաւէր ակն մարդոյ, հայել ի մարմին նորա:

Եւ այնպէս հինգ ամ բոլոր ի չարչարանս և ի բանտ կացեալ կապանօք, սովով և ծարաւով, տեսեաց այնքան տանջանացն: Եւ ասլա բերեալ իշխանն առաջի իւր և ասէ ողոքանօք. «Զանձրացաք և նեղեցաք ի տանջելոյ զքեզ և ի տեսանելոյ զազիողորմ խորովումն մարմնոյ քո. և դու ընդէ՞ր ոչ ողումիս անձին քում. մին բան խօսեաց առաջի մեր և զերծեալ ի մէնջ դնա ի տուն քո և պաշտեա զհաւասու քո»:

Ասէ սուրբն. «Անհնար է այդմ լինել, մինչ շունչս իսմառ իս է»:

Եւ նա հիացեալ զարմացաւ և ասէ. «Միթէ վիմաց է զօրութիւն սորա»:

Եւ կոշեալ զմօլայն իւր և ասէ. «Ե՛կ, դանիշման, և ի գրոց պատմեա մեզ նորագոյն տանջանս, զոր արարեալ են առաջին թագաւորքն»:

Եւ մօլայն հրամայեաց գերծուլ զգլուխ նորա և օծանել մեղրով, և բերեալ զնստակլորն՝ որ է սեաւ բգէզն, և եղին յեօթն տեղի ի վերայ դլխոյ նորա և պորեալ զընկոյզն, կործեցին զկորճն ի վերայ նորա և պատեալ ծրարեցին: Եւ նոքա փորեցին յիւրաքանչիւր դիմաց և ծակեալ մտին, ի գաղաթ նորա, և յայնմանէ խիստ նուազեցաւ սուրբն,

զի քան զամենայն տանջանսն խիստ և դժողակ էր. մինչ զի քաղեցաւ հոգի նորա և ոչ մնաց ի նմա շունչ կենդանութեան, և այնպէս անկաւ յերկիր՝ իբրև զմեռեալ, մինչև բազմաց ասել թէ մեռաւ:

Իսկ նա յետ պահու միոյ ուշաբերեալ դարձաւ ի հոգի։ Եւ ընթացեալ քոյր սրբոյն՝ մեծաւ հառաջանօք և պաղատանօք անկաւ յոսս մօր փատշահին՝ ասելով. «Թէ անպարտ իցէ եղբայրն իմ, ընդէր չարչարի զանազան տանջանօք՝ իբրև զպարտական. և եթէ ինչ մնասակար է կամ պարտական, աղաչեմ՝ զքեզ, վասն կենաց և յաջողութեան փատշահին, հրամայեան փութով սպանանել զնա, զի աղատի յանհնարին տանջանացն»։

Եւ յուղարկեալ Բակումն՝ զվերակացու տանն իւրոյ տո Սօֆի Խալիլն, լի բարկութեամբ և ասէ. «Քանի՛ անէծաշահիս մեղ և զաւակաց մերոց և թեթևութիւն հաւատոց մերոց. արձակեան զայրդ անմեղ. զի զի՞նչ շահ է մեղի հեղմանէ արեան դորաւ»։

Եւ նա ասէ. «Ո՛չ կարեմ՝ թողուլ վասն երդմանն իմոյ. այլ դու առաքեան և հան զնա բոնութեամբ ի ձեռաց իմոց. զի անպարտ մնամ ես յերդմանէն»։

Եւ այնպէս արարեալ՝ ազատեաց զնա ի ձեռաց նորա. և յուղարկեաց ի վանս իւր։ Իսկ նա յոյժ արտմեցաւ և մեղադրեաց քուելն իւրոյ՝ վասն խափան առնելոյն նմա զասպարէղ նահատակութեանն իւրոյ։

Եւ ապա յետ տարւոյ միոյ, զնաց փափագանօք յերուասազէմ և երկրպագեաց անօրինական տեղեացն Քրիստոսի։ Եւ դարձեալ ելն ի սեպհական աթոռն իւր ի Տաթեւ և բարեձեռութեամբ և ճգնաւոր առաքինութեամբ վճարեալ զմնացեալ ժամանակս կենաց իւրոց, փոխեցաւ յերկիրն կենդանեաց ի վերինն երուսաղէմ, ի կարգս նահատակացն և ի համարս հայրապետացն»։

Գործեցաւ այս ի ԶԼՌ թուականիս մերում, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։



## ՄՈՒՐԵՑ Վ. Ե. Ե ՑԻ

† 21.Դ մարգար ձ.Գ = 1485

Առաջ հայրն տաճկացեալ էր. վասն որոյ ըմբանեցին զնա այլազգիքն, և առեալ ածին առաջի Սուլէյման իշխանին, որ էր աթաբակ և հայրագլուխ եաղուազ փառաշահին:

Ասէ ցնա իշխանն Սուլէյման. «Դարձիր ի հաւատս հօրքո և ես մեծամեծ պարդեաց արժան առնեմ դքեզ, և թէ նչ լսես ինձ, չարաչար սպանանեմ դքեզ»

Իսկ նա յայտնապէս անարգեաց զհաւատս հօրն իւրոյ և զօրէնս նոցաւ Վասն որոյ հրամանաւ իշխանին հարին զնա սրով ի կուշտն և քարշեցին ընդ երկիր հարկանելով ազցի և բռնցի՛ Եւ նա բարձրաձայն դաւանէր զի՞րիստոս Աստուած և փառաբանութիւն մատուցանէր ամենասուրբ Երրորդութեամնն, որքան շունչն ի մարմնի էր. և անդէն արտաքոյ քաղաքին քարկոծ արարին զնա բազմութիւն Տաճկացն:

Եւ այնպէս ըստի գաւանութեամբ կատարեցաւ ի Քրիստոս սուրբն Մուրատ զօր Եկեղել յետոյ քրիստոնէիցն բարձին պատուով զսուրբ մարմինն և տարեալ եղին ի տապանի՝ առ զրան Եկեղեցւոյն սրբոյն Պօղոսի. յորմէ բազում բժշկութիւնք կատարին ամենայն ցաւոց, ևս առաւել ամենդից և չերմոց։

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Մուրատ ի թուականիս հայոց Զ և ԼԴ, ի մարդաց ի ՃԴ, ի փառս Քրիստոսի։

## ՎԵՐՋ


ԱԹԱԶԻՆ ՀԱՏՈՒՔԻ

# ՑԱՆԿ

## Ա. ՀԱՏՈՐԻ

1.	Թէոդորոս արեղայ Սեբաստացի	.	.	.	.	.	Էջ 3
2.	Գոհարինէ Սեբաստացի	.	.	.	.	.	6
3.	Խոսրով Դանձակեցի	.	.	.	.	.	10
4.	Յովսէփ Դունեցի	.	.	.	.	.	26
5.	Սարգիս իշխան Խաչենեցի	.	.	.	.	.	44
6.	Յորդանան վկայ թուրք	.	.	.	.	.	45
7.	Թէոդորոս Կեսարացի	.	.	.	.	.	46
8.	Տէր Առաքել քահանայ Կեչըռըցի	.	.	.	.	.	66
9.	Գրիգոր Կեչըռըցի	.	.	.	.	.	67
10.	Գրիգոր Հաղպակեան Խաչենեցի	.	.	.	.	.	68
11.	Սահմանոս Վահանայը	.	.	.	.	.	70
12.	Զալալ իշխան և տէր Խաչենոյ	.	.	.	.	.	73
13.	Գրիգոր Բալուեցի, Ախմէն և Կիրակոս	.	.	.	.	.	75
14.	Կիրակոս Միակեաց	.	.	.	.	.	85
15.	Զուտատ մանուկ	.	.	.	.	.	86
16.	Գրիգոր եպիսկոպոս Կարճեցի	.	.	.	.	.	87
17.	Ամէնաւագ Դերջանեցի	.	.	.	.	.	94
18.	Կիրակոս Վարդապետ	.	.	.	.	.	98
19.	Սարգիս նահատակ	.	.	.	.	.	99
20.	Վահակ եպիսկոպոս Բջնոյ	.	.	.	.	.	100
21.	Ստեփանոս արքեպիսկոպոս Սեբաստիոյ	.	.	.	.	.	101
22.	Մարտիրոս Կողբացի	.	.	.	.	.	107
23.	Աւագ Սալմաստեցի	.	.	.	.	.	108
24.	Եղիսարեթ ի Խառաբասասայ	.	.	.	.	.	114
25.	Զաքարիա կաթողիկոս Աղթամարցի	.	.	.	.	.	116
26.	Ստեփանոս քահանայ և Մուսեֆիր տանուտէր	.	.	.	.	.	124
27.	Թամար Մոկացի	.	.	.	.	.	126
28.	Մելքիսէթ և Կարապետ Վանեցի	.	.	.	.	.	131
29.	Յովհաննէս քահանայ Զմշկածաղցի	.	.	.	.	.	134
30.	Խահանակ պարսիկ Թաուրիժեցի	.	.	.	.	.	137
31.	Յիմար Վանեցի	.	.	.	.	.	141

32. Զարարիէ տանուտէր	.	.	.	.	.	b 145
33. Մուրատշահ Արծկեցի	.	.	.	.	.	146
34. Մկրտիչ, Յովհաննէս, Արիստակէս և այլ ութ վկայք	.	.	.	.	.	147
35. Վարդան Բաղիշեցի	.	.	.	.	.	148
36. Հազար քահանաբք	.	.	.	.	.	155
37. Ստեփաննոս վարդապետ, Պետրոս քհ. Խիզանցիք և Ստեփաննոս ուրացող ի Սորբ գեղջէ	.	.	.	.	.	156
38. Թուլմա ի Պուտիկ Վահաց	.	.	.	.	.	169
39. Գրիգոր Խլաթեցի	.	.	.	.	.	170
40. Յակոբ Ովսաննացի	.	.	.	.	.	181
41. Պազար վարդապետ Բաղիշու	.	.	.	.	.	182
42. Յովհաննէս մանուկ Խլաթեցի	.	.	.	.	.	183
43. Յովհաննէս Խափիսկոպոս Տարօնոյ	.	.	.	.	.	190
44. Ստեփաննոս մանուկ Կոստանդինուպօլսեցի	.	.	.	.	.	194
45. Դաւիթ Խարբերդցի	.	.	.	.	.	195
46. Սիրուն Հիզնացի	.	.	.	.	.	198
47. Ստեփաննոս Խոստովանող արքեպիսկոպոս Տաթեու	.	.	.	.	.	202
48. Մուլատ Վանեցի	.	.	.	.	.	208







Քրիստոնէութեան էւ Ս. Էջմիածնի հաստատութեան 16<sup>րդ</sup>  
էւ Գրեգի զիսի 15<sup>րդ</sup> դարադարձի առքին

Հայութակուն և Մայր Արոնի սպառանուն

աճխատութեանը

Յ. ՍԱՆԱԴԵԱՆԻ ԵՒ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ

## ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

(1155—1843)

(Գիտական Հրատարակութիւն)

Հաւաքումն հարիւր քսանից աւելի հայ նոր նահատակների  
վերաբերեալ յիսաւն անտիպ և եօթանասունից աւելի  
հրատարակեալ վկայաբանական գրութիւնների—վկա-  
յաբանութիւններ, տաղեր, ներըողեաններ, տապա-  
նագըեր, արձանագըութիւններ, յիշատակու-  
թիւններ են, բաղմաթիւ ձեռագըաց համեմա-  
տութիւններով, ընդարձակ տեղեկութիւն-  
ներով և ժանօթութիւններով:



Նոյնը ժողովրդական հրատարակութ. Ա. հաս. գին 50 կ.  
— Հատոր Բ. (մամուլի տակ) . . . . . գին 50 կ.





